Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

2605

491.79-5
Р-79

2010

# ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

## Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՃՈԽ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԱՄՓՈՓ ՁԵՒՈՎ

ՅՕՐԻՆԵՑ

Հ. ԹԱԴԷՈՍ Վ. ԹՈՎՄԱՃԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՅ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1921

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ. — Հայ. նոր տպագր. պատկերազարդ, տպ. 1819, գին ֆր. 0,50,

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ. — Ընթերցման տղայոց աշխարհ, պատկերազարդ. հեղ. Հ. Անանիա Գոնտարճեան, տպ. 1906. գին ֆր. 1,

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ. — Ի գրոց բարբառ. գործնական քերականութիւն. հեղ. Հ. Թադէոս Թովմաճեան, տպ. 1894, 1909, 1921. էջ 346, գին ֆր. 10,

ԱՌՁԵՌՆ ԱՏԼԱՍ. — Աշխ. համառօտ աշխարհագրութիւն, պատկերազարդ. հեղ. Հ. Մեսրոպ Սահակեան, տպ. 1910, գին ֆր. 10,

ԱՌՁԵՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ. — Գրաբ. Հ. Եղ. Հիւրմիւզ, տպ. 1867, գին ֆր. 2,

ԲԱՌԱՐԱՆ ԱՌՁԵՌՆ. — Լիակատար և համառօտ բառգիրք հայերէն գրաբար լեզուի՝ աշխարհաբար բացատրութեամբ. հեղ. Մխիթ. Հարք, տպ. 1865. էջ 849, գին ֆր. 25,

ԲԱՌԳԻՐՔ ԱՆԳԼԻԵՐԷՆ. — 2 հատ. ընդարձակ, Ա. Անգղ.–հայ, Բ. հայ–Անգղ, գին ֆր. 70,

ԲԱՌԳԻՐՔ. — Գաղղ.–հայ. աշխարհաբար. հեղ. Հ. Սամուէլ Գանթարեան, Տպ. 1885, 1912, էջ 1572, գին ֆր. 20,

ԲԱՌԳԻՐՔ ԳՐՊԱՆԻ. — 2 հատոր Գաղղ.–հայ, հայ–Գաղղ. հեղ. Հ. Անանիա Գոնտարճեան, տպ. 1914, գին ֆր. 6,50,

ԲԱՌԳԻՐՔ. — Իտալ–հայ–աշխարհաբար. դպրոցաց համար, հեղ. Հ. Սամուէլ Գանթարեան, տպ. 1909, գին ֆր. 10,

ԲԱՌԳԻՐՔ. — Հայ–իտալ. ընդարձակ և ընտիր աշխատութիւն. հեղ. Հ. Մ. Ջախջախեան, տպ. 1837, էջ 1508, եռասիւն, գին ֆր. 100,

ԲԱՌԳԻՐՔ. — Աշխարհաբարէ–Գրաբար. հեղ. Գերպ. Եղ. Հիւրմիւզեան, տպ. 1879, գին ֆր. 10,

ԲԱՌԳԻՐՔ ՆՈՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ. — 2 հատ. մեծադիր, տպ. 1836-37, էջ 2207, եռասիւն, գին. ֆր. 1000,

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ կամ ՖԻԶԻՔԱ. — Աշխ. 2 հատոր պատկերներով կամ ձևերով. հեղ. Հ. Մ. Քաջունի. տպ. 1871, էջ 863, գին ֆր. 10,

ԳՐԱՀԱՇԻՒ. — Որ է Ալճէպրա. գրաբ. դասագիրք. հեղ. Հ. Հմայեակ Պապիկեան, տպ. 1858, գին ֆր. 5,

— ՆՈՅՆՆ, Աշխ. ընդարձակ. դպրոցաց համար. հեղ. Հ. Հմայեակ Պապիկեան, տպ. 1875, գին ֆր. 5,

ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Գրաբ. դասագիրք. հեղ. Գերպ. Եղուարդ Հիւրմիւզեան, տպ. 1840, 1867, 1885, էջ 138, գին ֆր. 1,50,

ԵՌԱՆԿԻՒՆԱՉԱՓՈՒԹԻՒՆ. — Գրաբ. երկու մասերու բաժնուած, հեղ. Հ. Սահակ Պռոնեան, տպ. 1810, էջ 104, գին ֆր. 2,

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ. — Գրաբ. երեք գիրք բաժնուած. հեղ. Հ. Սահակ Պռոնեան, տպ. 1794, էջ 423, գին ֆր. 2,50,

— ՆՈՅՆՆ. աշխ. դասագիրք. հեղ. Հ. Մեսրոպ Սահակեան, տպ. 1886, էջ 103, գին ֆր. 2,50,

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔ. — Իրաւագիտութեան. քաղաքագիտութեան և օրէնսգիտութեան. 4 հատոր, տպ. Ա. Բ. Գ. 1902. — Դ. 1908, գին ֆր. 5,

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Աշխ. բարձրագոյն դասու աշակերտաց համար. հեղ. Հ. Հմ. Պապիկեան, տպ. 1863, էջ 682, գին ֆր. 6,


ԸՆԹԱՑՔ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

# ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

## Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

491.99-5
Բ-79

# ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

## Ի ԳՐՈՅ ԲԱՐԲԱՌ

379

ՆՈՐ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ

ՅՕՐԻՆԵՑ

Հ. ԹԱԴԷՈՍ ԹՈՎՄԱՃԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՑ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1921

491.99-5
Բ-79

41025-ա.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ - АрмССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24554-61
2001

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

## ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԱՌԹԻՒ

ԱԶԳԱՅԻՆ վարժարանաց համար յօրինուած այս դասագիրքը՝ կրկնակ արդիւնաբեր շըրջաններ բոլորելէ ետքը՝ ահա՛ նորէն հրապարակ կուգայ, արդարացնելով մեր համեստ ակնկալութիւնը՝ զոր ունէինք ի սկզբան անդ։

Յարգելի Ուսուցիչներն այս անգամ տեսնելով ինչ ինչ ձեւական նորութիւններ՝ աշխարհիկ լեզուին ներկայ պահանջներու համաձայն, գուցէ յօժարին աւելի լայն չափով մը գնահատել արժէքը մեր մեթոտին՝ որ նպատակ ունի նորը հինով զարգացնելու գաղափարը։

Ընտելարանս իր պարզ եւ կարգաւոր ոճովն ու բառարար ծաւալով այնքան դիւրամատչելի եղած է արդէն որ հարկ չենք տեսներ բառ մ՚իսկ աւելցնել գործածութեանը մասին, անկասկած՝ թէ նաեւ դպրոցական յարկերէ դուրս պիտի շարունակէ օժանդակ ըլլալ հին հայերէնն ինքնօգնութեամբ ուսումնասիրողներու։

Հրահանգներուն առատութիւնը տեղի տալու չէ ո՛ եւ է առարկութեան։ Դասերուն մէն մի գործնական բա-

ժինն՝ իր պէսպիսութեամբն ու որոշ բաժանումներով՝ առձեռնպատրաստ մթերք մըն է դասատուին համար, որ ազատ է թէ՛ նոյնութեամբ հետեւելու եւ թէ՛ մաս մը անկէ զեղչելու, սաներու հասկացողութեան համեմատ։ Ածականի՝ Գոյականի եւ նման տարրական կանոններու աւանդումներն ալ աննպատակ չեն. ատոնք ունին գրաբարի յատուկ կիրառման ձեւեր՝ որոնց տակաւին անգէտ է աշակերտը, եւ պիտի վարժի նոյն լեզուին շարքով ներկայացնելու աշխարհաբար բանաձեւերը։

Իսկ գործնական մասերուն վերջի հատուածները «Ծաղկաքաղ» խորագրին տակ ներկայացուած՝ քերականական մարմնոյն չեն վերաբերիր, այլ Ս. Գրքին ամենապարզ կտորներէն առնուած ու աստիճանաբար զետեղուած ծաղկափունջեր են՝ սահմանուած ոտն առ ոտն աշակերտը գրաբարին ընտելացնելու ընթերցման, բառագիտութեան եւ թարգմանութեան կրթութիւններով։

Մտադիր էինք ի սկզբան պատրաստել նաեւ բարձրագոյն դասընթացք մը՝ իբր լրացուցիչ մեր այս *Առաջին Քայլին*. սակայն ետ կեցանք նկատելով որ նախակրթարաններու համար անոր պէտքը տակաւին զգալի չէ ; եւ գրաբարին հմտանալ ուզողն ալ, յետ մերինը աւարտելու, պիտի կարենայ հին եւ ընդարձակ Քերականութիւններէն օգտուիլ։

Ինչպէս մինչեւ հիմա, հաճութեամբ ողջունենք պիտի լուրջ գնահատումներ ու թելադրութիւններ ձեռնհասներու կողմէն, առանց կարեւորութիւն ընծայելու շահադիտական կամաւոր թիւրիմացութեանց։

Հ. Թ. Թ.

## ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1. *Ազգի մը լեզուին քերականութիւնը կը սորվեցընէ նոյն լեզուով ուղիղ գրել և խօսիլ։*

2. *Գրելու և խօսելու համար՝ գլխաւոր երկու բան կը գործածենք, Գիր և Բառ։*

3. *Մեր հայերէն այբուբենը կը բաղկանայ երեսուն և ութ գրերէ իրենց սովորական ձեւերով՝ որ կ՚ըսուին բոլորգիր, գլխագիր, շեղագիր, նօտրագիր, տպագիր, ձեռագիր են։*

Ծանօթութիւն. — Օ և Ֆ գրերն հին ատեն մեր այբուբենին մէջ չկային, յետոյ ուրիշ ազգերէ առնուած են. նախնիք օ գրին տեղ աւ կը գրէին և ֆ ին տեղ փ։

4. *Ձայնաւոր կ՚ըսուին ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ. որոնք առանց ուրիշ գրի օգնութեան՝ կը հնչուին։ Մնացած բոլոր գրերը բաղաձայն կ՚ըսուին, և չեն հնչուիր առանց ձայնաւոր գրերու։*

5. *Երկբարբառ կ՚ըսուի երկու կամ աւելի ձայնաւոր գրերով եղած մէկ հնչումը։ Օրինակ. աւ, եա, իւ, ու, ուա, ուէ, ուի։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչ կը սորվեցընէ լեզուի մը քերականութիւնը. — 2. Գրելու և խօսելու համար ի՞նչ կը գործածենք. — 3. Հայերէն լեզուն քանի՞ գիր ունի և որո՞նք են սովորական ձեւերը. — 4. Գրերէն ոմանք ինչո՞ւ ձայնաւոր կ՚ըսուին և այլք բաղաձայն. — 5. Ի՞նչ է երկբարբառը։

6. *Ձայնաւոր գրի մը կամ ձայնաւոր ու բաղաձայն գրերու մէկ հնչումը վանկ կ'ըսուի։ Մէկ կամ աւելի քովէ քով եկած վանկեր եթէ նշանակութիւն մ'ունենան՝ կը ձեւացնեն բառը։ Օրինակ. Զարդ ե-րի-տա-սար-դաց ի-մաս-տու-թիւն։*

*Առաջին բառը միավանկ է, երկրորդը՝ հնգավանկ, իսկ երրորդը քառավանկ։*

7. *Մեր լեզուին հազարաւոր բառերը քերականութեան մէջ ութ խումբերու կը վերածուին, և են. Անուն, Դերանուն, Բայ, Դերբայ, Նախդիր, Մակբայ, Շաղկապ, Ձայնարկութիւն։ Ասոնք Մասունք բանի կ'ըսուին, որ ըսել է խօսքի մասեր։*

8. *Հայերէնն այսօր երկու գլխաւոր բաժանում ունի. Գրաբար կամ Հին հայերէն և Աշխարհաբար կամ Արդի հայերէն։*

*Առաջինը՝ որ մեր նախահարց լեզուն է, գրելու միայն կը ծառայէ և չի խօսուիր։ Իսկ Աշխարհաբարը թէ՛ գրելու և թէ խօսելու յատկացուած մեր ժողովրդական լեզուն է։*

9. *Կրկին պատճառներ կը հաստատեն գրաբարի ուսման կարեւորութիւնը։*

*Նախ՝ որ մեր երանաշնորհ նախնիք իբրև գրական լեզու ընտրեր և ծաղկեցուցեր են զայն, ու կտակելով իբր նուիրական աւանդ՝ անով կը խօսին մեզի հետ դարերու հեռաւորութեան մէջէն։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 6. *Վանկն ի՞նչ է և ի՞նչպէս կը ձեւանայ բառը.* — 7. *Մեր լեզուին բառերը քանի՞ խումբերու կը վերածուին և ի՞նչ կ'ըսուին քերականութեան մէջ.* — 8. *Հայերէն լեզուն քանի՞ բաժանում ունի և ի՞նչ բանի կը ծառայէ իւրաքանչիւրը.* — 9. *Արդեօք կարեւո՞ր է մեզի գրաբար լեզուի ուսումն և ի՞նչ պատճառաւ։*



*Երկրորդ՝ Աշխարհաբարի զարգացումն իսկ կը պահանջէ Հին Հայերէնի ուսումը. այսօր առածի կարգ անցած է սա հեղինակաւոր խօսքը. Եթէ աշխարհաբար լաւ կ'ուզես գրել՝ գրաբար պէտք է գիտնաս։ Հակառակ ճիգեր ապարդիւն մնացեր են ամէն անգամ։*

10. *Մեր դասընթացքի նպատակն է ծանօթացնել Հին Հայերէնն իր պարզութեան մէջ. այսինքն ի բաց թողլով քերականական բարձր ձեւեր, ասով պիտի սորվինք գրաբար հասկնալ ու թարգմանել։*

11. *Քերականական լուծում կ'ըսուի իմաստ կազմող բառերու մասին եղած պատճառաբանութիւնը։ Խօսք մը քերականօրէն լուծել՝ ըսել է ցոյց տալ բառերուն տեսակը, ձեւը, և բացատրել իւրաքանչիւրին բռնած դիրքը կամ պաշտօնը։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 10. *Ուրեմն ի՞նչ է այս դասագրքի նպատակը.* — 11. *Ի՞նչ է քերականական լուծումը։*



Պարթեւազն Ոգի, Դէտ, Վարիչ արդար – Աթենավարժից Մարգողըդ ճարտար,
Հոգւոյն պատգամաց Ջուլիչ ոսկեռառ –՛ Ջահ լուսափողփող յիմաստնաճեմ դար,
Օ՜ն կաթեսցէ՛ շող մ'ի Տեսոյդ փարփառ – Յայս Առաջին Բայլ ի Գըրոց Բարբառ։

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ԲԱՆԻ

## ԱՆՈՒՆ

---

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

Յատուկ եւ հասարակ անուններ

12. *Անուն կ'ըսուի այն ամէն բառ որ անձ կամ կենդանի և կամ իր մը կը նշանակէ։ Ինչպէս. Մարդ, առիւծ, պարտէզ։*

13. *Անունը գլխաւորապէս երկու տեսակ է. յատուկ և հասարակ։ Յատուկ կ'ըսուին անունք որ միայն մէկ անձի կամ մէկ իրի համար կ'ըսուին։ Հասարակ անունք՝ որ ամէն նման անձերու կամ ամէն նոյն տեսակ իրերու կը պատշաճին։ Օրինակ. Գրիգոր, Երևան, Տիգրիս – մարդ, ոչխար, գրիչ։*

*Ծանօթ. — Ինչպէս յայտնի է, յատուկ անունները միշտ գլխագրով պէտք է սկսիլ։*

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

**Ա.**

Գրաբարէ աշխարհաբար

*Բառերուն շարքը փոխել ու թարգմանել։*

*Որդի Դաւթի։ Դուստր (աղջիկ) Երուսաղեմի։ Իմաստութիւնն Սողոմոնի։ Քաղաքն Աթէնք։ Եսայի մարգարէն։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 12. *Անունն ի՞նչ է. — 13. Քանի՞ տեսակ անուն կայ և ի՞նչ կ'ըսուին։*

Զաւակ Իսրայելի։ Որդիք Աստուծոյ։ Բնակիչք Եւրոպայ։ Պետրոս և Յովհաննէս ելին ի տաճարն (տաճարը գնացին)։ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ էր որդի Անակայ։ Արքայն Պարսից Կիւրոս։ Տնկեաց (տնկեց) Աստուած զդրախտն (դրախտը)։ Աստեղազարդ (աստղերով զարդարուն) են երկինք Իտալիոյ։ Կայէն սպան (սպաննեց) զեղբայր իւր զԱբէլ (իր Աբէլ եղբայրը)։ Յովսէփ վաճառեցաւ Իսմայելացւոց։ Քրիստոս եկն (եկաւ) յաշխարհ։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

*Ծայրայանց ընթերցուն տեղ նու պիտի դրուի։*

Բաբելացւոց քաղաքը։ Հռոմուլոս և Հռեմոս եղբարքը։ Կիւրոս Պարսից Թագաւորը։ Զաքարիա մարգարէն։ Պետրոս առաքեալը։ Տիմոթէոս Պօղոսի աշակերտը։ Սուրբն Օգոստինոս եկեղեցւոյ մեծ վարդապետը։ Սուրբն Յակոբ Մծբնայ հայրապետը։ Սոկրատ իմաստասէրը։ Աննիբալ Կարքեդոնացւոց զօրավարը։ Սողոմոնի պալատը։ Յովհաննէս Մկրտիչը գլխատուեցաւ (գլխատեցաւ)։

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

*Թզենին անպտուղ*

Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և եկն խնդրել պտուղ ի նմանէ. և ոչ եգիտ։ Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են՝ յորմէհետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ և ոչ գտանեմ. արդ՝ կոտեա զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ։ Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, թող զդա այս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ, թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա։



*Բառագիտութիւն*

Թզենի անպտուղ – Պտուղ չի տուող թուզի ծառ
Էր ուրումն տնկեալ – Մէկը տընկած էր
Յայգւոջ իւրում – Իր այգիին մէջ
Եկն – Եկաւ
Ոչ եգիտ – Չըգտաւ
Այգեգործ – Մշակ, այգիի պահապան կամ բանող
Ընդէ՞ր – Ինչո՞ւ համար
Խափանէ – Արգելք կ'ըլլայ
Պատասխանի ետ – Պատասխան տուաւ
Այս ամ ևս – Այս տարի ալ
Շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ – Անոր չորս կողմը փորեմ ու աղբ դնեմ
Արասցէ պտուղ – Պտուղ տայ
Յամէ ևս հատցես – Տարիէ մը կտրէ։

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

### Գոյական եւ Ածական

14. Շատ անգամ խօսքի մէջ հասարակ անուան քով մէկ կամ աւելի բառեր կը դրուին՝ զայն բացատրելու համար, և ածական կ'ըսուին։ Գոյական է այն անունն որ բանի մը ինչ ըլլալը կը ցուցնէ։ Ինչպէս. Գարուն, մեղր, ուսումն։ Ածական է այն անունը որ գոյականին որպիսութիւնը կամ ինչպէս ըլլալը կը ցուցնէ։ Ինչպէս. Գեղեցիկ, անոյշ, օգտակար։ Ուստի վերի գոյականներուն ինչպէս ըլլալն իմանալու համար, այս բառերը քովերնին կը դնենք ու կ'ըսենք. գեղեցիկ գարուն, անոյշ մեղր, օգտակար ուսումն։

15. Գոյականին քով ածականի տեղ՝ երբեմն ուրիշ մէկ կամ աւելի գոյականներ ալ կը

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 14. Ածականը ի՞նչ է և անուն մը ե՞րբ գոյական կ'ըսուի և ե՞րբ ածական. — 15. Գոյական անուններն ալ քովէ քով կրնա՞ն դրուիլ, և ի՞նչ կ'ըսուին նկատմամբ իրարու։

դրուին ու կը բացայայտեն զայն, այսինքն իմաց կու տան թէ նոյն գոյական բառին նշանակածն ո՞վ է կամ ի՞նչ։ Զոր օրինակ, եթէ պարզապէս ըսենք քաղաք, զօրավար, ամիս, գետ, չիմացուիր թէ ո՞ր քաղաքին, ո՞ր զօրավարին, ո՞ր ամսոյն և կամ ո՞ր գետին վրայ է խօսքը. ուստի, քովերնին մէկմէկ գոյական դնելով կ՚ըսենք. քաղաքն Հռոմ, զօրավարն Աննիբաղ, ամիսն Յունուար, գետն Եփրատ։ Ասանկ քովէքով եկած գոյական անուններէն այն՝ որ միւսը կը բացայայտէ կամ կ՚իմացընէ թէ ինչ է, բացայայտիչ կ՚ըսուի. իսկ քովինը՝ բացայայտելի կամ բացայայտեալ։ Այսպէս՝ վերի բառերուն մէջ Հռոմ բացայայտիչ է քաղաք բառին՝ որ կ՚ըսուի բացայայտեալ։ Աննիբաղ բացայայտիչ է զօրավար բառին՝ որ կ՚ըսուի բացայայտեալ, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Թարգմանել՝ բառերուն շարքը փոխելով։*

Որդի իմաստուն։ Բուրաստան (պարտէզ) ծաղկալից։ Մեծ է զօրութիւն աղօթից (աղօթքի)։ Են մեր (ունինք) գեղեցիկ վարդենիք (վարդի թուփեր)։ Շուշան է ծաղիկ սպիտակ (ճերմակ)։ Մանուկ մտավարժ (մտաբաց) սիրելի է վարժապետին։ Որդի հնազանդ հաճոյ է ծնողաց իւրոց։ Գետն Եփրատ թափի ի Ծոցն Պարսից։ Յիսուս Որդին Աստուծոյ եկն ի փրկել զմեզ (զմեզ ազատելու եկաւ)։ Մանկունք ստահակք (չար) արժանի են գանից (ծեծի)։ Աստուած է ճարտարապետն երկնից և երկրի։



### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

*Գոյականները ածականներէն առաջ պիտի դրուին։*

Գեղեցիկ տաճար։ Բարձր տուն։ Մեծ քաղաք։ Հասուն պտուղ։ Մեծ պարտէզ մը (մի)։ Բարի մարդ մը (այր ոմն)։ Շուներն հաւատարիմ են։ Իմ եղբայրս (եղբայր իմ) հիւանդ է։ Հարուստը ագահ է։ Տղան փութաջան է։ Խնձորն ու տանձը անոյշ են։ Այս հրահանգը դժուարին չէ (ոչ է)։ Մրջիւնն աշխատասէր է։ Թռչուններն (հաւք) երգող են։ Պալատականները (պալատականք) շողոքորթ են։ Առիւծը զօրաւոր է։ Երկաթն օգտակար է։ Կարիճը թունաւոր է։ Ժամանակը թանկագին է։ Դպրոցի աշակերտ։ Երկայն նիզակ։ Ալպեան լեռները (լերինք)։ Երկայն սուր։ Կարմիր վարդ։ Իմաստուն մարդ։

| | | |
|---|---|---|
| Հասուն – Հասունացեալ | Տղայ – Մանուկ | Երգող – Երգեցիկ |
| Հիւանդ – Խօթացեալ | Անոյշ – Համեղ | Զօրաւոր – Հզօր |
| Հարուստ – Մեծատուն | Դժուար – Դժուարին | Սուր – Սուսեր |

### Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Մկրտութիւն Տեառն*

Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել և դու առ իս գաս։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա։ Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. և ապա թոյլ ետ նմա։ Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ի վերայ Նորա։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։

### Բառագիտութիւն

Յայնժամ – Այն ատեն
Ինձ պիտոյ է ի քէն մկրտել – Ինծի պէտք է քեզմէ մկրտուիլ
Ա՞ռ իս գաս – Ինծի՞ կու գաս
Թոյլ տուր այժմ – Թող տուր հիմա
Լնուլ զամենայն արդարութիւն – Ամէն արդարութիւն կատարել
Եւ վաղվաղակի – Ելաւ շուտով
Բացան – Բացուեցան
Իբրեւ զաղաւնի – Աղաւնիի նման
Ընդ որ հաճեցայ – Որուն հաւնեցայ

## ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

### Եզակի եւ Յոգնակի

16. **Գրաբարի մէջ եզակի բառ մը յոգնակի ընելու համար՝ ծայրը ք մը պէտք է դնել։ Օրինակ. մարդ՝ մարդք. ընկեր՝ ընկերք. աշակերտ՝ աշակերտք. մեղու՝ մեղուք. այգի՝ այգիք։**

**Ծանօթ.** — Յոգնակիի նշան են նաեւ ս եւ ց գրերը։

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Հետեւեալ հրահանգի շեղագիր եզակիները յոգնակի դարձնել եւ յոգնակիները եզակի։*

Որդի եմք առն հզօրի (ուժով մարդու)։ Ծառք պարտիզին մերոյ է անպտուղք (պտուղ չի բերեր)։ Գնեցի պատուա-

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 16. Եզակի բառ մը ինչպէս յոգնակի կ'ըլլայ սովորաբար։



կան մարգարիտս։ Ընթերցայ (կարդացի) գլուխ մի ի գրոց (գիրքէն)։ Գետք քաղաքիս մերոյ է փոքր։ Ծովք ալէկոծ է միշտ։ Նետ թշնամւոյն անզօր են (զօրութիւն չունին)։ Իմաստութիւնք ոչ վաճառի (չի ծախուիր)։ Ծուլութիւնք է մայր չարեաց։ Դատաւոր երկրի, սիրեցէք զարդարութիւն։ Աստուած երկրի սուտ են։ Հիւանդութիւն կարճեն զկեանս մարդոյ (մարդոց կեանքը կը կարճեցնեն)։ Օդ, հող, հուր, ջուր, սոքա (ասոնք) են տարերք (տարրեր) աշխարհիս։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Գեղեցիկ պարտէզ։ Թանկագին մարգարիտներ։ Անտառի թռչուն։ Տանձի ծառեր։ Աղուեսի բոյն։ Պաշտօնէի որդիներ։ Աշակերտաց գրքեր։ Դաշտերը կանաչազարդ են։ Վարդն անուշահոտ է։ Օձերը թունաւոր են։ Աշխատութիւնն օգտակար է։ Երկիւղած եւ զուարթ աշակերտներ։ Առիւծները կը մռնչեն (մռնչեն)։ Գառնուկները կը մայեն։ Աղուէսները խորամանկ են։ Ծովու ջուրն աղի է։

Թանկագին – Պատուական
Անուշահոտ – Անուշաբոյր
Տանձի ծառ – Տանձենի
Մարգարիտներ – Ակունք
Խորամանկ – Նենգամիտ
Բոյն – Որջ

### Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Վաճառէ Եսաւ զանդրանկութիւն իւր*

Էր Եսաւ հմուտ որսոյ վայրագ. եւ Յակոբ այր առանց պաճուճանաց ընդաստան։ Եւ էր եփեալ Յակոբայ թան։ Եկն Եսաւ ի դաշտէ նքթեալ, եւ ասէ ցՅակոբ. Տուր ինձ ճաշակել ի շիկաթանէդ յայդմանէ։ Ասէ Յակոբ ցԵսաւ. Վաճառեա ինձ այսօր զանդրանկութիւն քո։ Եւ ասէ Եսաւ. Ահաւասիկ ես երթամ ի վախճանել, եւ առ իմէ՞ իցեն ինձ այն անդրանկութիւնք։ Եւ ասէ ցնա Յակոբ. Երդուիր ինձ։ Եւ երդուաւ նմա։ Եւ վաճառեաց Եսաւ զանդրան-



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍԽ-ՀМ.ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
24554-61

կութիւնս իւր Յակոբայ, և Յակոբ ետ Եսաւայ հաց և թան ոսպնեայ։ Կերաւ և արբ և յարեաւ գնաց. և անարգեաց Եսաւ զանդրանկութիւնն։

### Բառագիտութիւն

Վաճառէ – Կը ծախէ
Անդրանկութիւն – Առջինեկ ըլլալը
Վայրագ – Վայրենի, դուրս տեղ կեցող
Առանց պաճուճանաց – Առանց զարդարանքի, պարզ
Ընդաստն – Ընտանի, տունը կեցող
Էր եփեալ Յակոբայ թան – Յակոբ ապուր եփած էր
Նքթեալ – Սաստիկ անօթեցած
Շիկաթան – Ոսպէ ապուր
Առ իմէ՞ – Ի՞նչ բանի համար
Երդուիր ինձ – Երդում ըրէ ինծի
Արբ – Խմեց
Յարեաւ գնաց – Ելաւ գնաց։

## ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

### Անուններու հոլովները

17. Գոյական և ածական անուններուն խօսքի մէջ առած կերպ կերպ ձևերն հոլով կ'ըսուի։ Բառ մը հոլովել ըսել է անոր այլևայլ ձևերը ցուցնել, առջևը կամ վերջը գիր դնելով։

18. Գրաբարի մէջ բուն հինգ հոլով կայ. Սեռական, Տրական, Գործիական, Բացառական, Հայցական։ Բայց չփոխուած անունն ալ հոլովի տեղ կը դրուի և կ'ըսուի Ուղղական. ասով հոլովներու թիւը վեց կ'ըլլայ։

19. Այն հոլովներն որ ուղղականին սկիզբը գիր մը դրուելով կը ձևանան՝ կ'ըսուին նախդրիւ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 17. Հոլովը ի՞նչ է. — 18. Գրաբարի մէջ քանի՞ հոլով կայ և որո՞նք են. — 19. Հոլովներու մէջ որո՞նք նախդրիւ կ'ըսուին և որո՞նք վերջահոլով։



հոլով. իսկ անոնք որ ուղղականին ծայրը մէկ կամ աւելի գրեր դրուելով կը ձևանան՝ վերջահոլով կ'ըսուին։ Օրինակ. Մարդ բառը վերջահոլով ըլլալու համար կ'ըսենք. մարդոյ, մարդով. Նախդրիւ ըլլալու համար կ'ըսենք. զմարդ, ի մարդ։ Ի և զ գրերը Նախդիր կ'ըսուին։

20. Հասարակ անունները թէ եզակի հոլով ունին և թէ յոգնակի. իսկ յատուկ անուններն ընդհանրապէս միայն եզակի կը հոլովին։

21. Կան հասարակ անուններ որ միայն եզակի կը գործածուին ինչպէս՝ աէր, լոյս, խաւար, հարաւ։ Կան ալ որ միայն յոգնակի են, եզակի չունին. ինչպէս՝ աչք, միտք, կամք, կառք, փառք, դժոխք, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Հետևեալ շեղագիրներուն նախդրիւն ու վերջահոլովն որոշել։*

Որդեակ, զօրէնս իմ մի մոռանար։ Պատուեա զհայր քո և զմայր։ Երթ ի ճանապարհս բարիս (լաւ ճամբաներուն մէջ քալէ)։ Ի մարդոյ չարէ փրկեա զիս։ Հաց տուր քաղցելոց (անօթիներուն)։ Ամպարիշտք գնան ի դժոխս։ Են ծաղկունք ի պարտիզի։ Եկ երթիցուք ի դաշտ։ Լուաք ի մարգարէէն եթէ Քրիստոս գալոց է (պիտի գայ)։ Լուսոյ յաջորդէ խաւար։ Մի խնդրեր զփառս։ Աստուած արար

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 20. Հոլովները միայն եզակի՞ են թէ նաև յոգնակի. — 21. Հասարակ բառեր չկա՞ն որ միայն եզակի կամ միայն յոգնակի գործածուին։

զաշխարհս յուշընէ։ Նոյ շինեաց զտապանն հրամանաւ Աստուծոյ։ Եղիսէէ անէծ զմանկտին անզգամ։ Արկին զՅովսէփ ի գուբ (հորի մէջ)։ Մանկունք դուն ուրեք (քիչ անգամ) ձանձրանան ի խաղալոյ (խաղալէն)։ Ամենայն մարդիկ հացիւ և ջրով կեան (կ'ապրին)։

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Առիւծը վեհանձն է։ Թռչունները գեղեցիկ են։ Արջերը վայրենի են։ Ժամերը կարճ և արագ են։ Սողոմոն շատ իմաստուն էր։ Տէրը ողորմած և գթած է։ Աստուծոյ որդիներ ենք (եմք)։ Յիսուս Քրիստոս փրկեց (փրկեաց) զմեզ։ Երկայն սրունքով կենդանիներ։ Մաքուր աղաւնիներ։ Բարձր լեռ (լեառն)։ Յակոբ նահապետն հեզ էր։ Ադամ և Եւա Աստուծոյ չը (ոչ) հնազանդեցան։ Հրեայք Յիսուսը խաչեցին (ի խաչ հանին)։ Հերովդեսի անգթութիւնները բազմաթիւ եղան (եղեն)։

| | |
|---|---|
| Վայրենի – Վայրագ | Արագ – Արագընթաց |
| Կարճ – Սուղ | Շատ – Յոյժ |

Երկայն սրունքով – Երկայնասրուն

## Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

*Երկու լումայք կնոջն այրւոյ*

Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի և արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի։

Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան որ արկին ի գանձանակն։ Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ի չքաւորութենէ իւրմէ, զամենայն ինչ զոր ունէր՝ արկ գոյիւ չափ զկեանս իւր։



### *Բառագիտութիւն*

| | |
|---|---|
| Այրի – Որբևարի կին | Չքաւորութիւն – Աղքատութիւն |
| Գանձանակ – Ստակի սնտուկ | Մեծատուն – Հարուստ |
| Զիա՞րդ – Ի՞նչպէս | Լումայ – Մանր ստակ |
| Արկին բազում ինչ – Շատ բան ձգեցին | Նաքարակիտ – Երկու լումայ |
| Ամէն ասեմ ձեզ – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի | Կոչեցեալ առ ինքն – Իրեն կանչելով |
| Տառապեալ – Խեղճ | Գոյիւ չափ – Բոլոր ունեցածը |
| | Կեանք – Ինչք, ստացուածք։ |

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

### Սեռականի կազմութիւն

22. *Եզակի և յոգնակի ամէն հոլովները կը ձևանան եզակի ուղղականէն և սեռականէն։ Ուղղականէն կը կազմուին նախդրիւ հոլովները, և սեռականէն վերջաւորով բառածները։*

23. *Թէպէտ ամէն բառերու սեռականը մէկէն դիւրին չէ գտնալ, բայց շատերու վերջաւորութենէն կրնանք իրենց սեռականը գտնել։*

24. *Յատուկ անուանց մեծագոյն մասին սեռականը կը շինուի ծայրերնին այ աւելցնելով։ Օրինակ. Յակոբ կ'ըլլայ Յակոբայ, Եզեմ՝ Եզեմայ, Անտիոք՝ Անտիոքայ, Եփրատ՝ Եփրատայ։*

*Ծանօթ.* — Կան ուրիշ յատուկ անուններ ալ՝ որոնց սեռականները տարբեր ըլլալով, պէտք է վարժութեամբ սորվիլ։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 22. Որոնցմէ՞ կը ձեւանան ամէն հոլովները. — 23. Բառի մը սեռականն արդեօք կարելի՞ է գտնալ. — 24. Յատուկ անուններու սեռականն ի՞նչպէս կ'ըլլայ։

25. Ըն, իւն, ուստ և իկ վերջացող բառերը՝ սեռական ան կամ եան կ'ըլլան: Օրինակ. Շուրթն՝ շրթան. դուռն՝ դրան. անկիւն՝ անկեան. զօրութիւն՝ զօրութեան. կորուստ՝ կորստեան. փախուստ՝ փախստեան. ծաղիկ՝ ծաղկան. աղջիկ՝ աղջկան, և այլն:

Խոտորում. — Ըն վերջացող բառերէն ոմանք սեռական ին կ'ըլլան, զոր յետոյ պիտի տեսնենք:

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

Այս խօսքերուն մէջ բառերու ուղղականներն ու սեռականները որոշել. նշանակել ուղղականներուն սեռականները և միւս հոլովներուն ուղղականները:

Յակոբայ եղեն երկոտասան որդիք (12 որդի ունեցաւ): Յովնաթան էր որդի Սաւուղայ: Լոյս արեգական լուսաւորէ զաշխարհ: Մարտիրոսք ոչ երկնչէին (չէին վախնար) ի մահուանէ: Գեդէոն անուամբ Տեառն յաղթէր թշնամեաց: Տասն կուսանքն սպասէին գալստեան երկնաւոր փեսային: Մեղուք ի հիւթոյ ծաղկանց յօրինեն (կը շինեն) մեղր անոյշ: Յուդա մին յԱռաքելոց անուանեցաւ որդի կորըստեան: Զիք հնար (կարելի չէ) փախստեամբ զերծանել ի ցասմանէն Աստուծոյ: Յանկեան ուրեք տանն (տանը մէկ անկիւնը) անկեալ լայր դառնապէս: Աստուած բազում անգամ երեւէր Աբրահամու ի տեսլեան: Քրիստոս ասէր վասն Հրէից եթէ ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս:

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 25. Ի՞նչ վերջաւորութեամբ բառեր սեռականի մէջ ան կամ եան կ'ըլլան:



### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ադամայ որդիները: Անահիտին տաճարը: Դաւթի թագաւորութիւնը: Զաքարիա մարգարէին որդին: Քրիստոսի գալու (գալուստ) օրը: Յիսուսի անունին ամէն ծունր պիտի կրկնուի (կրկնեսցի): Զինուորները տան առջև էին: Արիւնին գոյնը կարմիր է: Այսօր Հոգեգալստի տօն է: Շան հաւատարմութիւնը մեծ է: Ձիւնին գոյնը ճերմակ է: Աստուծոյ պաշտօնին զօրութիւնը զարմանալի է: Ամառուան ժամերն աւելի զուարթ են: Նուռին հատիկները մարգարտի պէս շարուած են: Աչք՝ աչքի տեղ, և ակռայ՝ ակռայի տեղ:

| | |
|---|---|
| Առջև – Առաջի | Պաշտօն – Պաշտումն |
| Ճերմակ – Սպիտակ | Աչք – Ակն |
| Աւելի – Առաւել | Ակռայ – Ատամն |
| Մարգարտի պէս շարուած – Մարգարտաշար | Տեղ – Ընդ |

### Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Նախանձ տան Տեառն

Եւ էր մերձ զատիկն Հրէից, և ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ եգիտ ի տաճարին, զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւնիս. և զլումայափոխսն որ նստէին: Եւ արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին ի տաճարէն՝ զոչխարսն և զարջառս. և զպղինձս հատավաճառացն ցրուեաց և զսեղանսն կործանեաց. և որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, և մի առնէք զտուն հօր իմոյ տուն վաճառի: Ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս:

Բառացիութիւն

| | |
|---|---|
| Մերձ – Մօտ | Հատավաճառ – Ստակ փոխող |
| Եգիտ – Գտաւ | Վաճառ – Առուտուր |
| Արջառ – Եզն ու կով | Տուն վաճառի – Վաճառատուն |

Լումայափոխ – Ստակ փոխող
Արար խարազան չուանեայ – Չուանէ խարազան շինեց
Եհան – Հանեց
Ասէք զայդ – Մէկզի տարէք ասիկա
Աստի – Ասկէ
Կերիցէ – Պիտի ուտէ։

## ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախընթաց դասին

26. *Սեռականը անձի կամ իրի մը յատկացումը կը ցուցնէ և կ'ըսուի յատկացուցիչ, իսկ իրեն վերաբերող բառը՝ յատկացեալ։ Ինչպէս. կամք Աստուծոյ, խիղճ անձերի, պատմութիւն ազգաց։ Այս զուգադրութեանց մէջ Աստուծոյ, անձերի և ազգաց յատկացուցիչ են և կամք, խիղճ ու պատմութիւն՝ յատկացեալ։*

27. *Ըր և Ըղ վերջացող բառերն (որոնց ը գիրն առանց գրուելու՝ միայն կը հնչուի) սեռական եր, եղ կ'ըլլան։ Ինչպէս. Համր՝ համեր, տարր՝ տարեր, աստղ՝ աստեղ, արկղ՝ արկեղ։*

Խոտորում. — Ըր վերջացող բառերէն մաս մը սեռական ու ալ կ'ըլլայ ինչպէս. մեղր՝ մեղու, քաղցր՝ քաղցու։

28. *Ակ, ան, իճ, իչ, ող, որդ, ոց, ու վերջացող բառերու ձայնն ի գիրն աւելցնելով սեռական կ'ըլլան։ Ինչպէս. Ագարակ՝ ագարակի,*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 26. Սեռականն ի՞նչ կը նշանակէ և ո՞ր բառերը կը կոչուին յատկացուցիչ ու յատկացեալ. — 27. Ըր և ըղ վերջացող բառերուն սեռականն ի՞նչպէս կ'ըլլայ. — 28. Ի՞նչ վերջաւորութեամբ բառեր ձայներնին ի մը դնելով սեռական կ'ըլլան։



*ժամանակ՝ ժամանակի, դահիճ՝ դահճի, մկրտիչ՝ մկրտչի, չինող՝ չինողի, խարտոց՝ խարտոցի, խորոց՝ խորոցի, մեղու՝ մեղուի, արու՝ արուի։*

29. *Ամէն ի վերջացող բառերու սեռականը ւոյ կ'ըլլայ։ Օրինակ. Բարի՝ բարւոյ, բանալի՝ բանալւոյ, սիրելի՝ սիրելւոյ, մատանի՝ մատանւոյ, պատանի՝ պատանւոյ, փայլենի՝ փայլենւոյ։*

30. *Ալ, ած, ին, ուն վերջացողներն ընդհանրապէս սեռական ոյ կ'առնեն։ Օրինակ. Բառնալ՝ բառնալոյ, սրբեալ՝ սրբելոյ, արարած՝ արարածոյ, առաջին՝ առաջնոյ, մարդկային՝ մարդկայնոյ, անասուն՝ անասնոյ, քուն՝ քնոյ, և այլն։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիր հոլովածներուն ուղղականները և ուղղականներուն սեռականները։*

Համերք (համրերը) բժշկէին ի Քրիստոսէ։ Ո՞չ են բարեկամ կայսեր։ Մեծատունք (հարուստները) զարծաթ իւրեանց և զգանձ թագուցանեն յարկեղ (սնտուկի մէջ կը պահեն)։ Աստղ քան զաստղ առաւել է փառօք։ Արծուիք և անգեղք են թռչունք գիշակեր (դիակեր)։ Խոնեալ (դիզուած) էր ամբոխ (բազմութիւն) ի հրապարակին։ Դաւիթ եհար (զարկաւ) զբանակ թշնամեաց։ Որ ոչ լսէ (ով որ չի լսեր) բանին՝ լուիցէ (պիտի լսէ) գանին (ծեծ)։ Թագաւորն հրաման ետ (տուաւ) դահճին հատանել (կտրել) զգլուխ երանելւոյն։ Ընթեռնույր զվարս Աբրահամու խոստովանողի որ սպանաւ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 29. Ի՞նչպէս կ'ըլլայ ի վերջացող բառերուն սեռականը. — 30. Ի՞նչպէս սեռական կ'ըլլան ալ, ած, ին, ուն վերջացող բառերը։

(սպանուեցաւ) ի Պարսից։ Յիսուս Քրիստոս պատուիրէ հետեւողաց իւրոց՝ սիրել զթշնամիս և օրհնել զհալածիչս (հալածողները)։ Կենդանի բանական՝ որ է մարդ, յօդանայ (կը ձևանայ) ի մարմնոյ և ի հոգւոյ։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Աստղին լոյսը նուազ է։ Կայսրին պալատը շքեղ է։ Կարիճին թոյնը մահացու է։ Համրի որդի է։ Քաղաքը շինողին շատ ստակ տուին (ետուն)։ Յիսուս Յովհաննու Մկրտչին պատասխան տուաւ (պատասխանի ետ)։ Արտին գինը բարձրացաւ։ Դահճի պաշտօն կատարեց (կատարեաց)։ Ժամանակի յարգը գին չունի (անգին է)։ Տղայ, աղէկին հետևէ (հետևեա՛ց) և ոչ ատելին։ Մեղուին աշխատութիւնն օգտակար է մարդկան։ Ճամբորդի զգեստ հագած (զգեցեալ) էր։ Այս է դպրոցական ուսումին ընթացքը։

| | |
|---|---|
| Նուազ – Աղօտ | Արտ – Ագարակ |
| Աղէկ – Բարի | Տղայ – Մանուկ դու |
| Շատ – Բազում | Օգտակար – Պիտանացու |
| Ստակ – Արծաթ | Զգեստ – Հանդերձ |

### Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Ստեղծումն և անկումն Ադամայ*

Ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցեն ձկանց ծովու և թռչնոց, և անասնոց և ամենայն երկրի։

Ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի։ Եւ տնկեաց զդրախտն և եդ անդ զմարդն՝ գործել զնա և պահել։ Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ և ասէ. Յամենայն ծառոց՝ որ է ի դրախտիդ, կերիցես. բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛ ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մեռանիցիք։



### *Բառագիտութիւն*

| | |
|---|---|
| Անկումն – Իյնալը, մեղանչելը | Ստեղծ – Ստեղծեց |
| Արասցուք – Ընենք, ստեղծենք | Շունչ – Կեանք, հոգի |
| Ըստ պատկերի մերում – Մեր պատկերին պէս | Շունչ կենդանի – Կեանք, ողջութիւն |
| Գործել (զերկիր) – Վարել, հերկել | Եղև մարդն յոգի կենդանի – Մարդն ողջութիւն կամ կեանք ունեցաւ |
| Յորում աւուր ուտիցէք ի նմանէ – Որ օրն որ անկէ ուտէք։ | |

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Տրականի կազմութիւն

31. *Տրական հոլովը գրաբարի մէջ երկու ձև ունի վերջահոլով և նախդրիւ։ վերջահոլով տրականն իր արտաքին ձևովը սեռականէն տարբերութիւն մը չունի. միայն իմաստով կը տարբերի։*

32. *Վերջահոլով տրականը դէպ ի մէկը կամ դէպ ի բան մը անցում կը նշանակէ. և պատասխան է ո՞ւմ կամ ինչ բանի հարցման։ Օրինակ. Զգիրս իմ ետու Պաւղոսի, իմ գիրքս տուի. որո՞ւն – Պաւղոսի. ուրեմն այս նունը՝ հոս տրական է, վասն զի կը ցուցնէ թէ գիրքը ինձմէ ելաւ և իրեն տրուեցաւ։*

*Ծանօթ.* — Ոյ վերջացող տրականները երբեմն ում ալ կ'ըլլան։ Ինչպէս, մարդ, մարդում. առաջին, առաջնում. սուրբ, սրբում։ Իսկ ւոյ վերջացողները կ'ըլլան ւոջ։ Օրինակ. Տեղի, տեղւոջ. այգի այգւոջ. եկեղեցի, եկեղեցւոջ, և այլն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 31. Տրական հոլովը քանի՞ տեսակ է և վերջահոլով տրականը սեռականէն տարբերութիւն մ'ունի՞. — 32. Վերջահոլով տրականն ի՞նչ կը նշանակէ։

33. *Բառի մը նախդրիւ տրականը կը կազմուի ուղղական հոլովի սկիզբն ի դնելով եթէ բառը բաղաձայն գրով սկսի, և յ՝ եթէ ձայնաւոր գրով սկսի: Օրինակ.*

| Ուղղական | | Նախդրիւ տրական |
|---|---|---|
| Մարդ | կ'ըլլայ | ի մարդ |
| Պարգև | » | ի պարգև |
| Առիւծ | » | յառիւծ |
| Որդի | » | յորդի |

34. *Նախդրիւ տրականը դէպ ի կամ վրայ կը նշանակէ: Զոր օրինակ. ի նաւ, դէպ ի նաւ, ի քաղաք, դէպ ի քաղաք, ի լեառն, լերան վրայ, և այլն:*

Ծանօթ. — Շատ անգամ նախդրիւ տրականի տեղ վերջահոլով տրականը կը գործածուի ի կամ յ նախդիրով, և կ'ըսուի Նախդրիւ վերջահոլով տրական, որ հոլովներու կարգէն դուրս է: Այսպէս.

| | | |
|---|---|---|
| Ի նաւի | ըսել է | նաւի մէջ |
| Ի քաղաքի | » » | քաղաքի մէջ |
| Ի տան | » » | տան մէջ |
| Յագարակի | » » | արտի կամ դաշտի մէջ, և այլն: |

Ասոր վրայ առանձին պիտի խօսինք յետոյ:

35. *Երբեմն ի կամ յ գրերուն տեղ նախդրիւ տրականի համար ց կը գործածուի ասել (ըսել), ու հարցանել (հարցընել) բայերուն առջև: Ուստի այս խօսքերս. Յիսուս անոր ըսաւ. Պետրոսին հարցուց. — Գրաբար փոխանակ ըսելու. Յիսուս ասէ նմա, եհարց Պետրոսի, այսպէս կ'ըսենք. Յիսուս ասէ ցնա, եհարց ցՊետրոս:*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 33. Ի՞նչպէս կը կազմուի բառի մը նախդրիւ տրականը. — 34. Նախդրիւ տրականն ի՞նչ կը նշանակէ. — 35. Նախդրիւ տրականը միշտ ի կամ յ գրերո՞վ կ'ըլլայ:



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Շեղագիր բառերուն նախդր. և վերջ. տրականները նշանակել:*

Ետու (տուի) զգիրն իմ Պաւղոսի: Չոգաք (գացինք) ի պարտէզ մեր: Հրաման ետ Աստուած Աբրահամու գնալ յերկիրն Քանանացւոց: Մտին Յիսուս և աշակերտք նորա ի նաւ: Ասէ Աստուած ցՆոյ. Մուտ (մտիր) դու և որդիք քո ի տապանն: Որ ողորմի աղքատին փոխ տայ Աստուծոյ: Հայեաց (նայէ) յարեգակն և ի լուսին և յաստեղս, և ուսանիցես եթէ գոյ (կայ) Աստուած յերկինս: Ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ (գնա), և որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ (թող ըլլայ): Ել (ելաւ) Յիսուս ի լեառն մի բարձր: Հինգ զգայարանք են ի մարդում: Խնայեա յորդիդ քո (որդւոյդ): Բարկացայ առն առաջնում: Մտին (մտան) ի քաղաքն սուրբ և երևեցան բազմաց: Շրջէր Յիսուս ի սրահին Սողոմոնի: Ամբոխ մեծ խռնեալ էր յեկեղեցւոջ:

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Թշնամիները քաղաք եկան (եկին): Յիսուս հարիւրապետին ըսաւ (ասէ): Հայրը տուն եկաւ (եկն): Եկեղեցի գնացինք (չոգաք): Աւազակները բանտ տարուեցան (տարան): Բռնաւորին ըսաւ: Պատերազմի մէջ մտաւ (եմուտ): Զօրքը դէպ ի (առ) թագաւորը դարձաւ: Լուսինը գիշերուան մէջ կը տեսնուի (տեսանի): Քաղաքին մէջ խռովութիւն ելաւ (ել): Եղիա Եղիսէին ըսաւ: Քու հայրդ տան մէջ կ'աշխատի (գործէ): Բազմութիւնը եկեղեցին վազեց (ընթացաւ): Անոր մեծ որդին ագարակն էր: Յովսէփ Եգիպտացւոց երկրին տէր եղաւ (եղև): Պետրոս բանտին

մէջ էր։ Աբրահամ Քանանացւոց երկիրը գնաց։ Աստուծոյ հրեշտակը տեսիլքի մէջ Յակոբին երեցաւ (երեւեցաւ)։

Թագաւոր – Արքայ | Մեծ – Երէց | Տեսիլք – Տեսիլ

### Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

## *Ստեղծումն և անկումն Ադամայ*

(Շարայարութիւն)

Եւ ասէ օձն ցկինն. Գիտէր Աստուած թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր ճանաչել զբարի և զչար։ Ետես կինն զի բարի էր ծառն ի կերակուր, առ ի պտղոյ նորա, եկեր և ետ առն իւրում, և կերան։ Եւ լուան զձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ ի դրախտի անդ, և թաքեան ի մէջ ծառոց դրախտին . . .։ Եւ ասէ Տէր Աստուած ցկինն. Տրտմութեամբ ծնցես որդիս, և այր քո տիրեսցէ քեզ։ Եւ ցԱդամ ասէ. Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր՝ ուստի առար, զի հող էիր և ի հող դարձցիս։ Եւ եհան արձակեաց զնա ի դրախտէ անտի, գործել զերկիր ուստի առաւ։

### Բառագիտութիւն

Յորում աւուր – Այն օրն որ
Ետես – Տեսաւ
Զի բարի էր ծառն ի կերակուր – Որ ծառը ուտելիքի համար աղէկ էր
Եկեր – Կերաւ
Ետ առն իւրում – Տուաւ իր այրին
Լուան – Լսեցին
Զայն զգնալոյ Տեառն Աստուծոյ – Աստուծոյ քալելուն ձայնը
Թաքեան – Պահուըտեցան
Այր քո տիրեսցէ քեզ – Այրդ քու վրադ պիտի իշխէ
Ուստի առար – Ուսկից առնուեցար։



## ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

### Գործիականի կազմութիւն

36. *Գործիական հոլովը կը նշանակէ մէկու մը կամ բանի մը հետ, մէկու մը կամ բանի մը ձեռքով, ու կը կազմուի՝ սեռականին ծայրն աւելցնելով այս երեք գրերէն մէկը, բ, վ, ւ։*

37. *Երբ սեռական բառ մը բաղաձայն գրով վերջանայ, բ մը աւելցնելով գործիական կ'ըլլայ։ Ինչպէս.*

| Սեռական | | Գործիական |
|---|---|---|
| Համեր | կ'ըլլայ | համերբ |
| Ոսկեր | » | ոսկերբ |
| Աստեղ | » | աստեղբ |
| Ծաղկան | » | ծաղկամբ, և այլն։ |

*Ծանօթ. — Մեր մէջ ն գիրը բ գրին առջև գալու ատեն՝ մ կը փոխուի. ասոր համար ն վերջացող սեռականներուն գործիականը մբ կ'ըլլայ։*

38. *Սեռականին ծայրը վ կը դրուի գործիական ըլլալու համար, երբ ոյ վերջանայ։*

| Սեռական | | Գործիական |
|---|---|---|
| Մարդոյ | կ'ըլլայ | մարդով |
| Ամպոյ | » | ամպով |
| Երազոյ | » | երազով |
| Բոցոյ | » | բոցով, և այլն։ |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 36. *Գործիական հոլովն ի՞նչ կը նշանակէ և ո՞ր հոլովէն կը ձևանայ.* — 37. *Ե՞րբ սեռականին ծայրը բ կը դրուի գործիական ըլլալու համար.* — 38. *Ե՞րբ սեռականի մը ծայրը վ կը դրուի գործիական ըլլալու համար։*

39. *Սեռականին ծայրն ւ կը դրուի գործիական ընելու համար, երբ ձայնաւոր գրով կամ անձայն յ գրով վերջանայ։*

| Սեռական | | Գործիական |
|---|---|---|
| Բանտի | կ'ըլլայ | Բանտիւ |
| Ախտի | » | Ախտիւ |
| Ադամայ | » | Ադամաւ |
| Յակոբայ | » | Յակոբաւ |
| Սահակայ | » | Սահակաւ, և այլն։ |

40. *Ու վերջացող սեռականներու գործիականը անփոփոխ կը մնայ։ Այսպէս.*

| Սեռական | | Գործիական |
|---|---|---|
| Զարդու | կ'ըլլայ | զարդու |
| Խրատու | » | խրատու |
| Մահու | » | մահու, և այլն։ |

*Ծանօթ.* — Ի և ո ձայնաւորներով վերջացող սեռականներէն ոմանք՝ գործիականի և յոգնակի վերջաւորութիւններու մէջ ա կը փոխուին, զոր յետոյ պիտի տեսնենք։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիր սեռականներու գործիականները և գործիականներու սեռականները։*

Ընդ տարբեր (տարբերուն ներքև) աշխարհիս ի ծառայութեան կայաք։ Փունջս այս կազմեալ է (շինուած է)

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 39. Ե՞րբ սեռականի մը ծայրն ւ կը դնենք գործիական ընելու համար. — 40. Ի՞նչպէս գործիական կ'ըլլան ու վերջացող սեռականներ։



ծաղկամբ։ Աստուծով յաղթեցից քեզ։ Քաղցրաձայն երգով երգէին։ Բանիւ բերանոյ իմոյ։ Հացիւ և ջրով սնանի մարդ։ Մարգարէիւ և առաքելով խօսեցաւ Աստուած։ Կորուսի զբանալիս արկեղ (սնտուկ)։ Յիսուս Քրիստոս էր որդի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ։ Երագ են ոտք ձեր յընթանալ (վազելու)։ Սողոմոն էր որդի Դաւթայ արքայի։ Յովսէփ՝ որդի Յակովբայ անմեղութեամբ իւրով արկաւ (ձգուեցաւ) ի գուբ։ Որդեակ, ոչ բանիւ է ստացումն (ստանալն) առաքինութեան, այլ գործով և արդեամբ։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Գերեզմանը լեցուն է ոսկրով։ Սուրով սպաննեցին (սպանին)։ Գաւազանով ծեծեց (եհար)։ Տէգով ծակեցին։ Հրեշտակին խօսքովը ուրախացաւ։ Հանդէսով թաղեցին։ Զուանով խղդուեցաւ (խեղդեցաւ)։ Պատերազմով յաղթեցին։ Քաղաքը պատով ամրացաւ։ Ուրիշ լեզուով կը խօսէր (բարբառէր)։ Նաւով համբորդութիւն ըրի (ճանապարհորդեցի)։ Լաթով ծածկեցին։ Սակով գնեցին։ Դատաստանով թագաւորը մեռաւ։ Գաւաթով ջուր խմեց (էարբ)։ Մարտիրոսաց ոսկրները (ոսկերք) կրակով այրեցան։ Դաշտը խոտով լեցուն է։

| | |
|---|---|
| Լեցուն – Լի | Ուրիշ – Այլ |
| Տէգ – Գեղարդն | Սակ – Արծաթ |
| Զուան – Պարան | Գաւաթ – Բաժակ |
| Պատ – Պարիսպ | Կրակ – Հուր |
| Դատաստան – Հարցափորձ | Լաթ – Զորձ։ |

### Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Երեքին բարեկամք Յոբայ*

Լուեալ երից բարեկամացն Յոբայ զչարիսն ամենայն՝ որ հասին ի վերայ նորա, եկին յիւրաքանչիւր աշխարհէ առ նա միաբան, մխիթարել և սփոփել զնա։ Եւ տեսեալ

զնա ի բացուստ՝ ոչ ծանեան, և բարբառեալ մեծաձայն լացին, և պատառեցին իւրաքանչիւր զպատմուճան իւր, և ցանեցին հող ի վերայ գլխոց իւրեանց ընդ երկինս հայելով։ Եւ նստան շուրջ զնովաւ յերկրի զեօթն օր և զեօթն գիշեր. և ոչ ոք ի նոցանէ խօսեցաւ ընդ նմա բան, քանզի տեսանէին զանհնարին հարուածն և զմեծամեծս յոյժ։

### Բառագիտութիւն

- Լուեալ երից բարեկամացն Յոբայ — Յոբայ երեք բարեկամները լսելով
- Սփոփել — Ցաւը թեթեւցընել, մխիթարել
- Ի բացուստ — Հեռուէն
- Ոչ ծանեան — Չճանչցան
- Անհնարին հարուած — Անհնարին տանջանք, ձախորդութիւն
- Բարբառեալ — Խօսելով, ձայն տալով
- Մեծաձայն լացին — Բարձր ձայնով լացին
- Ընդ երկինս հայելով — Դէպի երկինք նայելով
- Շուրջ զնովաւ յերկրի — Անոր չորս կողմը գետնի վրայ.

## ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Բացառականի կազմութիւն

41. **Բացառական հոլովն անձէ կամ բանէ առաջ գալ կամ հեռանալ կը նշանակէ. և պատասխան է ուստի՞ կամ ինչ բանէ հարցման։ Օր. Ուստի՞ — ի Յակոբայ, ի Մովսիսէ, յԱդամայ. ինչ բանէ — ի խնձորոյ, ի գրչէ, և այլն։ Այս հոլովը թէ նախդիր ունի և թէ վերջահոլով է. իր նախդիրն է ի կամ յ և սեռականէն կը ձևանայ։**

42. **Երբ բառի մը սեռականը բաղաձայն գրով**





**վերջանայ, բացառական ընելու համար՝ ծայրը է մը կ'աւելցընենք։ Զոր օրինակ.**

| Սեռական | | Բացառական |
|---|---|---|
| Մանկան | կ'ըլլայ | ի մանկանէ |
| Համեր | » | ի համերէ |
| Անուան | » | յանուանէ |
| Ոսկեր | » | յոսկերէ |
| Ատեղ | » | յատեղէ, և այլն։ |

43. **Երբ բառի մը սեռականը ձայնաւոր գրով վերջանայ, բացառական ընելու համար այս ձայնաւորը կը վերցընենք և տեղն է գիրը կը դնենք։ Զոր օրինակ.**

| Սեռական | | Բացառական |
|---|---|---|
| Բանի | կ'ըլլայ | ի բանէ |
| Կարգի | » | ի կարգէ |
| Բանտի | » | ի բանտէ |
| Ժամու | » | ի ժամէ |
| Արուեստի | » | յարուեստէ |
| Արեւու | » | յարեւէ, և այլն։ |

*Խոտորում.* — Սեռականի մէջ ու վերջացող բառերէ մէկ քանին բացառականի մէջ նոյն գրերը կը պահեն։ Զոր օրինակ.

| Սեռական | | Բացառական |
|---|---|---|
| Զարդու | կ'ըլլայ | ի զարդուէ |
| Խրատու | » | ի խրատուէ |
| Փոքու | » | ի փոքուէ |
| Առու | » | յառուէ |

44. **Այն բառերը որ սեռականի մէջ յ գրով**

կը վերջանան, բացառականի մէջ անփոփոխ կը մնան, կը բաւէ միայն բառին սկիզբն ի կամ յ նախդիրը դնել։ Օրինակ.

| Սեռական | | Բացառական |
|---|---|---|
| Յակոբայ | կ'ըլլայ | ի Յակոբայ |
| Մեսրոպայ | » | ի Մեսրոպայ |
| Բերանոյ | » | ի բերանոյ |
| Երկաթոյ | » | յերկաթոյ, և այլն։ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիր ուղղականներուն բացառականները, և բացառականներուն ուղղականները։*

Բարձրութիւն սեանն էր հինգ կանգուն։ Երկիրս ընդունի ջերմութիւն յարեգակնէ։ Անպարտ եմ յարենէ դորա (ատոր արիւնը թափուելէն)։ Ել ի համրէն այսն չար (չար դևը)։ Խռովեցան ի բանէ նորա։ Եկին երկու զինուորք ի քաղաքէ անտի (այն)։ Ի ժամէ (ժամը մէկէն սկսեալ) աւուրն խաւարեցաւ արեգակն։ Քուրմք Բահաղու կարդային (կը կանչէին) յառաւօտէ մինչև ցօր հասարակ (կէս օր)։ Քիրտն կաթեսցէ (պիտի կաթէ) ի ճակատուէ մարդոյ։ Հրաման առեալ (առնելով) ի կայսերէ կախեցին զաւազակն։ Իմաստութիւնն ասէ. Ունկն դիր (մտիկ ըրէ) խրատու հօր քոյ։ Նստաւ տապանն ի լերինս (լերանց վրայ) Արարատայ։ Աստուած ստեղծ զԱդամ ի հողոյ երկրի։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Յովսէփ բանտէն ազատեցաւ (զերծաւ)։ Ինչու քաջութենէ կը փախչիս։ Դաւիթ Սաւուղէն հալածուեցաւ



(հալածեցաւ)։ Փարաւոն քունէն արթնցաւ (զարթեաւ)։ Յիսուս Պիղատոսէն դատապարտուեցաւ (դատապարտեցաւ)։ Թշնամիները քաղաքէն ելան (ելին)։ Լացէն դադրեցաւ (դադարեաց)։ Արևուն տաքութենէն այրեցաւ (կիզաւ)։ Քարէն ջուր բխեցաւ (բխեաց)։ Աստուծոյ օրհնութենէն զրկուեցաւ (զրկեցաւ)։ Յիսուս ծառայէն ապտակեցաւ։ Առիւծէն փարատեցաւ։ Կայէն Աստուծմէ անիծուեցաւ (անիծաւ)։ Իսրայելացիք Մովսէսէն ջուր խնդրեցին։ Աստուծմէ կը վախնանք (երկնչիմք)։ Սամփսոն Դալիլայէն խաբուեցաւ (պատրեցաւ)։ Այս (աստի) գրքէս օգտուեցայ (օգտեցայ)։

Ինչու – Ընդէ՞ր
Գիրք – Մատեան
Տաքութիւն – Ջերմութիւն
Քար – Վէմ

### Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Աշտարակաշինութիւն և խառնակութիւն լեզուաց*

Եւ էր ամենայն երկիր՝ լեզու մի, և բարբառ մի ամենեցուն։ Եւ եղև ի խաղալն նոցա յարևելից, գտին դաշտ մի յերկրին Սենաար, և բնակեցան անդ։ Եւ ասեն այր ցընկեր իւր. Եկայք արկցուք աղիւս և թրծեսցուք զայն հրով։ Եւ եղև նոցա աղիւսն ի տեղի քարի, և կուպր ի տեղի շաղախոյ։ Եւ ասեն. Եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչև յերկինս. և արասցուք մեզ անուն յառաջ քան զփռել ի վերայ երեսաց ամենայն երկրի։

*Բառագիտութիւն*

Եւ եղև – Եղաւ որ
Ի խաղալն նոցա – Երթալու ատեն, երբոր գնացին
Յարևելից – Արևելքէն
Արկցուք աղիւս – Աղիւս շինենք
Թրծել – Կաւէ ամանները կրակով պնդացընել
Կուպր – Սև ձիւթ
Շաղախ – Շաղուած հողակիր
Սփռել – Ցրուել, տարածուիլ։

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Հայցականի կազմութիւն

45. *Հայցական հոլովը գործողութեան մը առարկան կը ցուցնէ, այսինքն այն անձը կամ իրը՝ որուն վրայ գործողութիւնը կը կատարուի. և պատասխան է զո՞վ կամ զի՞նչ հարցման։ Օրինակ. Զո՞վ տեսեր. — ԶԳրիգոր, զՅակոբ, զեղբայրիմ։ Ես ուսանիմ զի՞նչ — Ուսանիմ զքերականութիւն։ Հայցականը նախդրիւ հոլով է, և իր նախդիրն է զ։*

46. *Հայցական հոլովը կը շինուի՝ ուղղականին սկիզբը զ գիրը դնելով։ Զոր օրինակ.*

| *Ուղղական* | | *Հայցական* |
|---|---|---|
| Յակոբ | կ՚ըսայ | զՅակոբ |
| Պարտէզ | » | զպարտէզ |
| Երկաթ | » | զերկաթ |
| Արև | » | զարև, և այլն։ |

47. *Զ նախդիրը երբեմն հայցականին սկիզբը չի դրուիր։ Հետևաբար հայցական հոլովը երկու ձև ունի, նախդրիւ և աննախդիր. առաջինը կ՚ըսուի որոշեալ հայցական, և երկրորդն՝ անորոշ հայցական։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 45. Հայցական հոլովն ի՞նչ կը նշանակէ. և ի՞նչ տեսակ հոլով է. — 46. Հայցական հոլովն ի՞նչպէս կը շինուի ուղղականէն. — 47. Ամէն անգամ զ նախդիրը կը դրուի՞ հայցականի սկիզբը. և ի՞նչ կը հասկցուի որոշեալ և անորոշ հայցական ըսելով։



48. *Եզակի անորոշ հայցականն արտաքապէս նոյն է ուղղականին հետ, միայն իմաստով կը տարբերի անկէ։ Յատուկ անունները անորոշ հայցականի ձև չունին, միշտ որոշեալ հայցականով կը գործածուին։*

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

#### Ա

#### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիր հայցականներու և միւս հոլովներու ձևերը։*

Զինուորքն կալան (բռնեցին) և կապեցին զՅիսուս։ Զանօրէնութիւնս իմ քուեա յինէն (մաքրէ ջնջէ ինծմէ)։ Յիշեա Տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա։ Աստեղք լուսաւորեն զերկինս։ Մանուկ զգօն սիրէ զուսումն։ Ետուն (տուին) զօրականացն արծաթ բազում։ Գրեաց թուղթ և արդարացոյց զանձն։ Որ փորէ խորխորատ, ի նոյն անկցի (պիտի իյնայ)։ Տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ (ինչքերէդ)։ Առաքինութեան նշանակ ոչ կարացաք (չկրցանք) ցուցանել։ Փոխեցին զցորեանն ի շտեմարանս։ Առեալ հաց եբեկ (կոտրեց) և ետ աշակերտացն։ Յովսէփ առեալ զմանուկն Յիսուս և զմայր նորա գնաց յԵգիպտոս։

#### Բ

#### Աշխարհաբարէ գրաբար

Մարդը սպաննեցին (սպանին)։ Թշնամին քաղաքն առաւ (էառ)։ Սիրտը պնդացուց։ Երկիր կը գործէր (գործէր)։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 48. Եզակի անորոշ հայցականն ուղղականէն ինչո՞վ կը տարբերի. և յատուկ անուններն անորոշ հայցական ունի՞ն։

Աստուած օգնութեան կանչեց (կոչեաց յօգնութիւն): Զգեստը հագաւ (զգեցաւ): Որդին լեռը ձգեց (եթող): Աշակերտը խրատեց (խրատեաց): Քերականութիւնը կը սորվիմ (ուսանիմ): Ծոյլ տղան կ'ատեմ (ատեամ): Գիրք շինեց (յօրինեաց): Այբբենարանը սորվեցայ (ուսայ): Գեղեցիկ պարտէզ ունիմ: Հռովմայեցիք Կարքեդոնացւոց բանակն առին: Յովաբ Աբիսողոմը սպաննեց (սպան): Յիսուս տղան գիրկն առաւ (էառ):

Մարդ – Այր | Զգեստ – Հանդերձ
Ցորեն – Ցորեան | Տղայ – Մանուկ
Ընծայ – Պարգև.

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

## *Աշտարակաշինութիւն և խառնակութիւն լեզուաց*

*(Շարայարութիւն)*

*Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն և զաշտարակն՝ զոր շինէին որդիք մարդկան, և ասէ Տէր. Ահա ազգ մի և լեզու մի ամենեցուն, և զայդ սկսան գործել. ոչինչ պակասի ի նոցանէ, զամենայն զոր ինչ յօժարեսցին գործել. եկայք իջցուք և խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, և դադարեցին ի շինելոյ զքաղաքն և զաշտարակն:*

*Բառագիտութիւն*

Էջ – Իջաւ
Խառնակեսցուք – Շփոթենք
Անտի – Անկէ
Զի մի՛ լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ – Որպէս զի ամէն մէկն իր ընկերոջ ըսածը չի հասկընայ
Դադարեցին – Ետ կեցան.



# ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

## Յոգնակի ուղղականի կազմութիւն

49. *Յոգնակի ուղղականն ընդհանրապէս կը ձևանայ եզակի ուղղականին ծայրը ք մը դնելով, ինչպէս վերը տեսանք եզակի բառ մը յոգնակի ընելու համար: Այս ընդհանուր կանոնին համեմատ չըլլար միայն յոգնակի ուղղականն այն բառերուն՝ որոնց վերջի վանկին ձայնաւոր գիրն ը է, (թէպէտև ներգործութեամբ չի գրուիր) ինչպէս են* Համր, սերմն, անձն, տարր, արկղ, աստղ *բառերը:*

50. *Այս տեսակ բառեր յոգնակի ուղղական ընելու համար՝ ք գիրն եզակի սեռականին ծայրը պէտք է դնել: Զոր օրինակ.*

| Եզակի ուղղական | Սեռական | | Յոգնակի ուղղական |
|---|---|---|---|
| Սերմն | սերման | կ'ըլլայ | սերմանք |
| Կողմն | կողման | » | կողմանք |
| Անձն | անձին | » | անձինք |
| Գառն | գառին | » | գառինք |
| Համր | համեր | » | համերք |
| Տարր | տարեր | » | տարերք |
| Արկղ | արկեղ | » | արկեղք |
| Աստղ | աստեղ | » | աստեղք |

*Խոտորում.* — Այս ըն և ըր վերջացող բառերէն ոմանք յոգնակի ուղղական ունք կ'ըլլան, զոր վերջը պիտի տեսնենք:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 49. Ի՞նչ տեսակ բառերու յոգնակի ուղղականն ընդհանուր կանոնին համեմատ չէ. — 50. Այս տեսակ բառերն յոգնակի ուղղական ընելու համար ի՞նչ պէտք է ընել:

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Շեղագիր եզակի ուղղականներուն յոգնակին և յոգնակիներուն եզակին նշանակել։*

*Որդի իմաստուն ուրախութիւն է ծնողաց։ Սերմն բարի՝ պտուղ բարի տանէ։ Անձն որ գնայ արդարութեամբ՝ ընկալցի (պիտի ընդունի) վարձս յԱստուծոյ։ Աստղ քան զաստղ առաւել փառաւոր է ի հաստատութեան երկնից։ Մանուկ մտավարժ սիրելի է վարժապետին։ Հաւերք երկու երթային ընդ միմեանս (մէկտեղ)։ Արկեղք մեծատանց (հարուստներուն) լի են արծաթովք։ Ուղղութիւն (առաքինութիւն) արդարոյ ոչ անցանէ անվարձ։ Գառինք հեզք և խոնարհք են։ Ծառ չար՝ պտուղ բարի ոչ տանէ։ Դրունք տանց աղխեալ են (կղպուած են) ի գիշերի։ Ամենայն հեթանոսք տեսցեն (պիտի տեսնեն) զարդարութիւնն Աստուծոյ։ Սիրտ մարդոյ լի է ըղձիւք (փափաքներով)։*

### Բ

Աշխարհաբարէ գրաբար

*Մեռեալներն յարութիւն պիտի առնեն (յարիցեն)։ Ծաղիկները գարնան զարդ են։ Նոճիները բարձր են։ Փութաջան տղաք կը գովուին (գովին)։ Հռոմուլոսի բարեկամներն աւազակներ էին։ Աստղերը պայծառ են։ Շատ իմաստալից գրքեր կան (են)։ Դրախտին մէջ ծառեր կային (էին)։ Աբրահամ էշեր և ուղտեր ունեցաւ (եղեն Աբրահամու)։ Հրեաները զՅիսուս բռնելով (կալեալ) Պիղատոսին տարին (ածին առ Պիղատոս)։ Ջարագործներն Աստուծմէ պիտի պատժուին (պատժեսցին)։ Յովհաննու աշակերտներն Յիսուսի հարցուցին (հարցին)։ Սրտով խոնարհներն արքայութիւնը պիտի ժառանգեն (ժառանգեսցեն)։ Քաղաքին դռները գոցուեցան (փակեցան)։ Երկրիս վրայ մեծամեծ լեռներ կան։ Շատ ձմեռներ վրայէս անցան (անցին զինև)։*



### Գ.

ԾԱՂԿԱՔԱՂ

*Մանուկն Սամուէլ*

*Մանուկն Սամուէլ կայր ի սպասու Տեառն առաջի Հեղեայ քահանայի և ննջէր ի տաճարին Տեառն, ուր էր տապանակն Աստուծոյ։ Եւ կոչեաց Տէր և ասէ. Սամուէլ, Սամուէլ։ Եւ ասէ. Աւասիկ եմ։ Եւ ընթացաւ առ Հեղի և ասէ. Աւասիկ եմ ես. զի՞ կոչեցեր զիս։ Եւ ասէ. Ոչ կոչեցի զքեզ. դարձիր անդրէն՝ և ննջեա։ Յաւել Տէր միւսանգամ կոչել, և յարեաւ Սամուէլ չոգաւ առ Հեղի երկրորդ անգամ։ Եւ ասէ. Ոչ կոչեցի զքեզ, որդեակ. դարձիր անդրէն և ննջեա։ Եւ յաւել Տէր կոչել զՍամուէլ յերրորդում նուագին, և յարեաւ չոգաւ առ Հեղի, և ասէ. Աւասիկ եմ ես, զի՞ կոչեցեր զիս։*

*Բառագիտութիւն*

- Կայր ի սպասու Տեառն – Աստուծոյ կը ծառայէր
- Ննջել – Քուն ըլլալ, քնանալ
- Աւասիկ եմ – Պատրաստ եմ, հրամմէ
- Միւսանգամ – Ուրիշ անգամ, նորէն
- Չոգաւ – Գնաց
- Յերրորդում նուագին – Երրորդ անգամին։

## ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Յոգնակի սեռականի, տրականի եւ գործիականի կազմութիւն

51. *Յոգնակի սեռականը կը կազմուի ց մ'աւելցընելով եզակի սեռականին ծայրը, որ եթէ*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 51. Ի՞նչպէս կը շինուի յոգնակի սեռականը։

անձայն յ վերջանայ՝ ց գիրն առոր տեղը պէտք է դնել։ Զոր օրինակ.

| Եզ. սեռական | | Յոգն. սեռական |
|---|---|---|
| Բանի | կ'ըլլայ | բանից |
| Արքայի | » | արքայից |
| Կողման | » | կողմանց |
| Դրան | » | դրանց |
| Համեր | » | համերց |
| Տարեր | » | տարերց |
| Աստեղ | » | աստեղց |
| Մարդոյ | » | մարդոց |
| Երկաթոյ | » | երկաթոց |

52. Յոգնակի տրականն եզակի տրականին պէս երկու կերպ է. վերջաւորով և նախդրիւ։ Յոգնակի վերջաւորով տրականն իր արտաքին ձեւովը յոգնակի սեռականին յար և նման է։ Իսկ յոգն. նախդրիւ տրականը կը ձեւանայ յոգնակի ուղղականի սկիզբն ի կամ յ նախդիրը դնելով, և վերջի ք գիրը ս փոխելով։ Զոր օրինակ.

| Յոգնակի ուղղական | | Յոգնակի նախդրիւ տրական |
|---|---|---|
| Զօրութիւնք | կ'ըլլայ | ի զօրութիւնս |
| Մարգարէք | » | ի մարգարէս |
| Սերմանք | » | ի սերմանս |
| Գառինք | » | ի գառինս |
| Համերք | » | ի համերս |
| Արքայք | » | յարքայս |
| Աստեղք | » | յաստեղս, և այլն։ |

53. Յոգնակի գործիականը կը շինուի միշտ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 52. Յոգնակի տրականը քանի՞ կերպ է. և ի՞նչպէս կը շինուի յոգնակի նախդրիւ տրականը. — 53. Յոգնակի գործիականն ի՞նչպէս կը շինուի։



եզակի գործիականին ծայրը ք մը դնելով։ Զոր օրինակ.

| Եզ. գործիական | | Յոգն. գործիական |
|---|---|---|
| Բանիւ | կ'ըլլայ | բանիւք |
| Սրտիւ | » | սրտիւք, |
| Զօրութեամբ | » | զօրութեամբք |
| Սերմամբ | » | սերմամբք |
| Մարդով | » | մարդովք |
| Աստեղբ | » | աստեղբք |
| Առիւծու | » | առիւծուք |
| Սակաւու | » | սակաւուք և այլն։ |

Ծանօթ. — Միայն եզակի ու վերջացող գործիականներն յոգնակի գործիականի մէջ ուք ըսելու տեղ՝ արդի սովորութեամբ օք կամ եօք կ'ըսուի, որ նոյն բանն է։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

Գրաբարէ աշխարհաբար

Նշանակել հետեւեալ շեղագիրներուն

1. Յոգնակի սեռականը։

Ջուրք ծովու աղի են։ Պտուղք ծառոյ հասանեն (կը հասուննան) արեգակամբ։ Նման է սա մանկան տղայոյ անմեղի։ Շող (Նշոյլ) աստեղ ոչ է պայծառ քան զլոյս լուսնի։

2. Յոգն. վերջաւորով տրականը։

Արդար եղիցիս (պիտի ըլլաս) ի բանս քո։ Պետրոս եղաւ (դրուեցաւ) գլխաւոր ի դասս Առաքելոց։ Զգաւ (գնաց) ի տուն իւր։ Ջուրք գնան ի ծով, և ծով ոչ լնու (չի լեցուիր)։

3. Յոգնակի նախդրիւ տրականը։

Ամենայն իշխանաց աւագ (մեծ) դու էիր։ Աստուած հրամայեաց Ադամայ և որդւոց նորա իշխել ամենայն կեն-

ղանեաց, ձկանց ծովու և թռչնոց երկնից։ Յովհաննէս Մկրտիչ էր մարգարէից գերագոյն։

4. *Յոգնակի գործիականը։*

Հաստատեցից (պիտի պնդեմ) բանիւ բերանոյ իմոյ։ Եհան (հանեց) Տէր զձեզ զօրութեամբ և բարձր բազկաւ։ Խօսեցաւ Աստուած մարգարէիւ։ Հրով և սրով աւերեցից զԲաբելոն։ Երկաթով պատառեն զփայտ։ Քաղաքաւ և ազգաւ ժողովեցան առ նոսա (անոնց քով)։

Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Աստղաբաշխն աստղերուն ընթացքը (զընթացս) կը դիտէ։ Առաքեալներն ապշած (պշուցեալ) երկինք կը նայէին (հայէին)։ Խրատն անխելքներու օգուտ չըներ (ոչ օգտէ)։ Յիսուս հրեշտակներով պիտի գայ (եկեսցէ)։ Սրտերով ինծմէ (յինէն) հեռու են։ Յիսուս թագաւորներու թագաւորն է։ Քաղաքին աշտարակներուն վրայ կեցեր էին (կային ի վերայ)։ Լանկթիմուր քաղաքացիներուն վրայ ողորմեցաւ և ուրացողները (զուրացեալսն) սպաննեց (սպան)։ Մարդիկ Աստուծոյ ձեռքին գործն են։ Մովսէս Աստուծմէ փրկիչ ղրկուեցաւ (առաքեցաւ) իսրայելացիներուն։ Քահանայապետներն Յիսուսի գերեզմանը կնիքներով գոցեցին (փակեցին)։ Անապատականներն ընդեղէններով գոհ կ'ըլլային (շատանային)։

Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Մանուկն Սամուէլ*

(*Շարայարութիւն*)

Իմացաւ Հեղի թէ Տէր կոչէ զմանուկն, և ասէ ցՍամուէլ. Դարձիր անդրէն և ննջեա, որդեակ. և եթէ կոչեսցէ զքեզ, ասասցես. Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո։ Գնաց Սամուէլ և ննջեաց ի տեղւոջ իւրում. և Տէր կոչեաց



զնա որպէս միանգամ և միւսանգամ. Սամուէլ։ Եւ ասէ Սամուէլ. Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո։ Ասէ Տէր ցՍամուէլ. Ահա ես առնեմ զբանս իմ ի մէջ Իսրայելի, որպէս զի ամենայնի՝ որ լուիցէ զնոսա, հնչեսցեն երկոքին ականջք նորա։ Յարուցից ի վերայ Հեղեայ զամենայն ինչ՝ զոր խօսեցայ ի վերայ տան նորա, վասն անօրէնութեան որդւոց նորա, զի հայհոյէին զԱստուած որդիք նորա, և նա ոչ խրատէր զնոսա։

*Բառագիտութիւն*

Ասասցես — Ըսէ
Խօսեաց, Տէր — Խօսէ, Տէր
Ամենայնի — Ամէն մարդու
Հնչեսցեն — Զայն տան
Յարուցից — Պիտի հանեմ, պիտի բերեմ (գլխուն)։

## ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Յոգնակի բացառականի եւ հայցականի կազմութիւն

54. *Յոգնակի բացառականը կը ձեւանայ յոգնակի սեռականի սկիզբն ի կամ յ նախդիրը դնելով։ Զոր օրինակ.*

| *Յոգն. սեռական* | | *Յոգն. բացառական* |
|---|---|---|
| Զօրութեանց | կ'ըլլայ | ի զօրութեանց |
| Մարդոց | » | ի մարդոց |
| Սրտից | » | ի սրտից |
| Անօթոց | » | յանօթոց |
| Աստեղց | » | յաստեղց, և այլն։ |

55. *Յոգնակի հայցականը կը ձեւանայ յոգնակի ուղղականին սկիզբը զ նախդիրը դնելով և ծայրի ք գիրը ս փոխելով։ Զոր օրինակ.*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 54. Ի՞նչպէս կը ձեւանայ յոգնակի բացառականը. — 55. Ի՞նչպէս կը ձեւանայ յոգնակի հայցականը։

| Յոգնակի ուղղական | | Յոգնակի հայցական |
| --- | --- | --- |
| Բանք | կ՚ըլլայ | զբանս |
| Զօրութիւնք | » | զզօրութիւնս |
| Բերանք | » | զբերանս |
| Աղօթք | » | զաղօթս |
| Աստեղք | » | զաստեղս, և այլն։ |

56. ***Եթէ յոգնակի ուղղականին սկիզբը զ չդնենք, այլ միայն ծայրի ք գիրը ս փոխենք, կ՚ունենանք Յոգնակի անորոշ հայցական։ Օրինակ. Բանք՝ բանս, գիրք՝ գիրս, աղօթք՝ աղօթս, սիրելիք՝ սիրելիս և այլն։***

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

1. *Նշանակել շեղագիրներուն յոգնակի բացառականը։*

Գնալ զօրութենէ ի զօրութիւն։ Ի մարդոյ չարէ փրկեա զիս։ Պարտ է (պէտք է) փախչել յընկերութենէ չարաց։ Կենդանիք երկնչին յառիւծոյ և ի վագերէ։ Քակեցին զտունն ի հիմանէ։ Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ լցուցեր (լեցուցիր) զնոսա։

2. *Յոգնակի հայցականի վերածել։*

Երկինք և երկիր ստեղծ Աստուած։ Մի խնդրեր փառք և պատիւ։ Գր. Լուսաւորիչ դարձոյց հայք ի հաւատք քրիստոնէութեան։ Կիւրոս փրկեաց հրեայք ի գերութենէ։ Օրհնեմք զանուն Աստուծոյ և մեծարեմք նշխարք սրբոց Նորա։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 56. Եթէ յոգնակի ուղղականի սկիզբն առանց զ դնելու՝ ծայրի ք գիրը ս փոխենք, ի՞նչ կերպ հայցական կ՚ունենանք։



3. *Յոգնակի անորոշ հայցական ընել։*

Եթէ պղնձի մարմինք ունէին։ Այն մարդիկ բազում օգնականք իւրեանց։ Հեղին (Թափեցին) բազում արտասուք։ Ետուն նմա իրաւունք։ Աբրահամ ունէր ծառայք և աղախնայք։ Ողբք ինձ կարդացէք։

4. *Յոգնակի ուղղականի վերածել։*

Աստուածս բազումս եղեն Իսրայելացւոց։ Զմեղս և զհայհոյութիւնս բարկացուցանեն զԱստուած։ Օրէնս արդարութեան բնութիւն մեր եղիցի։ Փառս տան Աստուծոյ զերկինս, զաստեղս և զամենայն արարածս։ Զհռովմայեցիս յաղթեցին Կարքեդոնացւոց։ Աչս և ականջս են կարևոր զգայարանս։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Աշխարհ չորս տարրերէ շինուած է (հաստատեալ է)։ Աստուած ողորմածները ամէն վիշտերէ կ՚ազատէ (փրկէ)։ Բարկացող մարդը կենդանիներէ տարբերութիւն չունի (ոչ ինչ ընդհատ է)։ Արևելքէն երեք մոգեր եկան (եկին)։ Սուրբն Ամբրոսիոս զԹէոդոս եկեղեցիէն դուրս ըրաւ (արտաքսեաց)։ Աղեքսանդրոսի զգեստներէն անուշահոտութիւն կը բուրէր։ Յիսուս հինգ հացերով հինգ հազար հոգի կերակրեց (կերակրեաց)։ Ղովտ հրեշտակներուն ոտքը լուաց։ Աշխարհիս ծայրերէն պիտի գան (եկեսցեն)։ Ձեր պարտիզէն քաղեցի այս խնձորը։ Զինուորները քաղաքին դռներուն պահպանութիւն կ՚ընէին (պահէին զ....)։

| | |
| --- | --- |
| Ամէն – Ամենայն | Հոգի – Անձն |
| Անուշահոտութիւն – Հոտ անոյշ | Ծայր – Ծագ։ |

### Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Ջրհեղեղ

Իբրև ետես Տէր Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, զղջացաւ զի արար զմարդն

և ասէ. Ջնջեցից զամենայն մարմին՝ զոր արարի. մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայսմիկ, վասն լինելոյ դոցա մարմին։ Բայց Նոյ՝ այր արդար կատարեալ հաճոյ եղև Աստուծոյ։ Ասէ Տէր Աստուած ցՆոյ. Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է, զի լցաւ երկիր ապականութեամբք ի նոցանէ. և ահա ես ապականեցից զնոսա և զերկիր։ Արդ, արա դու քեզ տապան ի չորեքկուսի փայտից։ Եւ մտցես ի տապանն, դու և որդիք քո և կին քո և կանայք որդւոց քոց ընդ քեզ։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Զղջացաւ — Զղջաց | Արա — Ըրէ, շինէ |
| Լցաւ երկիր ապականութեամբք — Աշխարհս ապականութեամբ լեցուեցաւ | Ի չորեքկուսի փայտից — Չորս անկիւնով փայտերէ |
| Ապականեցից զնոսա — Զանոնք պիտի փճացընեմ, կորսնցընեմ | Մտցես ի տապանն — Մտիր տապանին մէջ։ |

## ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Հոլովելու միջոց մէկ երկու ձայնաւորներու փոփոխութիւնները

57. *Թէ եզակի և թէ յոգնակի վերջահոլովներուն մէջ ծայրայանգի ձայնաւորներէ ոմանք կը զեղչուին և ոմանք ուրիշ ձայնաւորի կը փոխուին։ Վերջահոլովներուն մէջ կը զեղչուին ի և ու։ Զոր օրինակ. Գիր՝ գ—րոյ, գ—րով. միս՝ մ—սոյ, մ—սով. սիրտ՝ ս—րտի, ս—րտիւ. մարմին՝ մարմ—նոյ, նով. գլուխ՝ գլ—խոյ, խով. բազուկ՝ բազ—կի, կաւ. խունկ՝ խ—նկոյ կով. ծուխ՝ ծխոյ, ծխով։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 57. Թէ եզակի և թէ յոգնակի վերջահոլովներուն վրայ ուրիշ ի՞նչ գիտելիք կայ, և ո՞ր ձայնաւորները վերջահոլովներու մէջ կը զեղչուին։



*Խոտորում.* — Ի և ու քանի մը միավանկ բառերու սկիզբն անհետ ըլլալու տեղ՝ ը կը փոխուին, և երբեմն անփոփոխ կը մնան։ Զոր օրինակ.

| Ը. փոխուած | | | Անփոփոխ | | |
|---|---|---|---|---|---|
| Ինձ | սեռ. կ'ըլլայ | ընձու | Իժ | սեռ. կ'ըլլայ | իժի |
| Ինչք | » » | ընչից | Իր | » » | իրի |
| Ունչք | » » | ընչաց | Ուխտ | » » | ուխտի |

58. *Վերջահոլովներու մէջ ուրիշ ձայնաւորի կը փոխուին է, եա, ոյ և իւ։ Է գիրն հոլովելու ատեն ի կը փոխուի։ Օրինակ. — Սէր՝ սիրոյ. մէգ՝ միգի. պարտէզ՝ պարտիզի. հովեղէն՝ հովեղինի. հանդէս՝ հանդիսի. և այլն։*

*Եա՝ կ'ըլլայ ե կամ է։ — Մատեան՝ մատենի, որդեակ՝ որդեկի, առաքեալ՝ առաքելոյ, լեառն՝ լերին, կեանք՝ կենաց, միջօրեայ՝ միջօրէի. քրիստոնեայ՝ քրիստոնէի, հրեայ՝ հրէի։*

*Ոյ՝ կ'ըլլայ ու։ — Բոյս՝ բուսոյ, լոյս՝ լուսոյ, ծոյլ՝ ծուլի, ողջոյն՝ ողջունի, կոյր՝ կուրի, դոյն՝ դունոյ, և այլն։*

*Իւ՝ կ'ըլլայ ու։ — Հովիւ՝ հովուի, պատիւ՝ պատուոյ, տիւ՝ տուընջեան, և այլն։*

Ա. Ծանօթ. — Է, ոյ և ու եթէ բառի մը վերջին գրերն ըլլան, չեն փոխուիր։ Աշտէ՝ աշտէի, բազէ՝ բազէի, դշխոյ՝ դշխոյի, խոյ՝ խոյոյ, մեղու՝ մեղուի, կատու՝ կատուի, ևն.։

Բ. Ծանօթ. — Այս յիշեալ վերածումներն ալ աւելի սովորական են ածանցումներու և բարդութեանց մէջ՝ աշխարհաբար թէ գրաբար։ Օրինակ. Գրիչ՝ գրչական, գրչագիր.

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 58. Ո՞ր գրերը վերջահոլովներու մէջ ուրիշ ձայնաւորի կը փոխուին։

մարմին՝ մարմնաւոր, մարմնասէր. գլուխ՝ գլխանոց, գլխագիր։ — Սէր՝ սիրային, սիրասուն. ատեան՝ ատենական, ատենակալ. քրիստոնեայ՝ քրիստոնէական, քրիստոնէավայել. գոյն՝ գունաւոր, գունագեղ. պատիւ՝ պատուական, պատուաբեր, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Որոշել շեղագիրներուն հոլովները և իւրաքանչիւրին եզակի ուղղականը։*

*Յարիցեն* (յարութիւն պիտի առնեն) *մեռեալք* ի գալըստեան Փրկչին։ *Հռեգուղոս* եկաց (կեցաւ) յատենի ծերակուտին (ծերոց ժողով)։ Մարտիրոսք սիրով *նմանողք* եղեն *Յիսուսի*։ *Յիմար* կուսանքն *մնացին* արտաքոյ դրան։ *Աստուած* ի սկզբանէ արար *զաշխարհ*։ *Պարտիմք* քրտամբք երեսաց *անցուցանել* զժամանակ կենաց *մերոց*։ *Ասէր Յիսուս* առաքելոց. *Թոյլ տուք* մանկանցդ *գալ առ իս* (ինծի)։ Ի մատենից պատմագրաց (*պատմութիւն գրող*) *ուսանիմք* *զպատմութիւնս* ազգաց և ժողովրդոց։ Ցորենով լի են ամբարք *մեր*։ *Ամովս էր* հովիւ անդէոց և *խաշանց* (*կովերու և ոչխարներու*)։ *Հոգիք* երանելեաց *հրճուին* (*կը ցնծան*) յերկինս լուսով *փառացն Աստուծոյ*։ *Գաբրիէլ* և *Միքայէլ* *են պետք* (*գլխաւոր*) հոգեղինացն *դասուց*։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

*Թագաւորին ծննդեան օրն էր*։ *Մարդոց չարիքը սրտերէն առաջ կու գան* (*յառաջ գան*)։ *Քաղաքին աշտարակներուն դռները բացուեցան* (*բացան*)։ *Յոյսին ճրագը կեանքի մթութիւնը կը լուսաւորէ*։ *Փախուստով ազատեցաւ* (*զերծաւ*) *դահիճներուն ձեռքէն*։



*Յուդա պագնելով* (*համբուրելով*) *զՅիսուս մատնեց* (*մատնեաց*)։ *Առաքեալներուն և ուրիշ սուրբերուն վարքը զարմանալի են*։ *Աշխարհս անէծքի ու վշտերու տեղ է*։ *Ծոյլերուն ու կոյրերուն շատ գութ կը ցուցընէր* (*ցուցանէր*)։ *Գրքերէն կը սորվինք մեծ մարդոց* (*վեհից արանց*) *վարքն ու քաջութիւնը*։ *Տղոց հարկաւոր է ծնողական կրթութիւնը*։ *Օձերու և կարիճներու թոյնը մահաբեր է*։ *Պէտք է* (*պարտ է*) *զգուշանալ անզգամ մարդերէ*։ *Հրեաներէն շատերն այն օրը Յիսուսի* (*նախդր. տրական*) *հաւատացին*։

| | |
|---|---|
| Ծնունդ – Ծնունդք | Տեղ – Տեղի |
| Ուրիշ – Այլ | Գութ – Մարդասիրութիւն |
| Անզգամ մարդ – Ամբարիշտ | Այն օրը – Յայնմ աւուր։ |

### Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Ջրհեղեղ*

(Շարայարութիւն)

*Արար Նոյ զամենայն՝ զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստուած. և եմուտ ի տապան վասն ջուրցն հեղեղի։ Եւ յետ եօթն աւուրց սահանք երկնից բացան, և եղև անձրև ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. և բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն. և շրջէր տապանն ի վերայ ջրոց, և սաստկանայր ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի և ծածկէր զամենայն լերինս բարձունս։ Եւ մեռաւ ամենայն մարդ և ամենայն՝ որ ունէր շունչ կենդանի յռնգունս իւր։ Եւ մնաց միայն Նոյ և որ ընդ նմա էին ի տապանի անդ։*

### *Բառագիտութիւն*

| | |
|---|---|
| Վասն ջուրցն հեղեղի – Ջրհեղեղին կոխելուն կամ շատնալուն համար | Սահանք երկնից բացան – Երկինքի ջրոց ճամբաները կամ ջրամբարները բացուեցան |
| Մարմին շարժուն – Շարժող մարմին | Որ ընդ նմա էին – Որոնք որ իրեն հետ էին |
| Ռունգն – քիթ | Յռնգունս իւր – Իր ռնգաց մէջ։ |

## ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Պարզ կամ կանոնաւոր հոլովմունք

59. *Ամէն բառ մէկ կերպով չի հոլովիր, և հոլովման երեք ձեւ կայ գրաբարի մէջ, Պարզ, Խառն և Անկանոն կամ Զարտուղի։*

60. *Պարզ հոլովման կը վերաբերին այն բառերը՝ որոնց սեռականին վերջին վանկն ա, ե, ի, ո, ու ձայնաւորներէն մէկով կը վերջանայ, և նշանագիր կ'ըսուին։ Հինգ են այս հոլովման ձեւերը և իրարմէ կը տարբերին այսպէս.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| ա | նշանագիր է | Ա. | ձեւին. | օր. Տիտան՝ Տիտանայ. |
| ե | » | Բ. | » | » Համր՝ Համեր. |
| ի | » | Գ. | » | » Բան՝ Բանի. |
| ո | » | Դ. | » | » Մարդ՝ Մարդոյ. |
| ու | » | Ե. | » | » Զարդ՝ Զարդու։ |

61. *Առաջին ձեւին կը վերաբերին յատուկ անուններուն մեծ մասը, և ըն կամ իւն վերջացող բառերը։ Առաջին օրինակ՝ Տիտան.*

Եզակի

| | |
|---|---|
| Ո. Տիտան | տիտան (հսկայ մարդ) |
| Ս. Տիտան-այ | տիտանին |
| Տ. Տիտան-այ, ի Տիտան | տիտանին, – վրայ |
| Գ. Տիտանա-ւ | տիտանով |
| Բ. ի Տիտան-այ | տիտանէն |
| Հ. զՏիտան | տիտանը։ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 59. Ամէն բառ միևնոյն կերպո՞վ կը հոլովի արդեօք, և հոլովման քանի՞ ձև կայ գրաբարի մէջ. — 60. Ո՞ր բառերը պարզ հոլովման կը վերաբերին և քանի՞ են ասոր ձևերը. -- 61. Ըսէ թէ ի՞նչ տեսակ բառեր առաջին ձևին կը վերաբերին, ու մէկ մէկ օրինակ տուր։



Յոգնակի

| | |
|---|---|
| Ո. Տիտան-ք | տիտաններ |
| Ս. Տիտանա-ց | տիտաններուն |
| Տ. Տիտանա-ց, ի Տիտանս | տիտաններուն, – վրայ |
| Գ. Տիտանօ-ք (աւ-ք) | տիտաններով |
| Բ. ի Տիտանա-ց | տիտաններէն |
| Հ. զՏիտան-ս | տիտանները |

*Երկրորդ օրինակ՝ Սերմն.*

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Ո. Սերմն | հունտ | Սերման-ք | հունտեր |
| Ս. Սերմ-ան | հունտի | Սերման-ց | հունտերու |
| Տ. Սերմ-ան | հունտի | Սերման-ց | հունտերու |
| ի Սերմն | – մէջ | ի Սերմանս | – մէջ |
| Գ. Սերմամ-բ | հունտով | Սերմամբ-ք | հունտերով |
| Բ. ի Սերման-է | հունտէ | ի Սերման-ց | հունտերէ |
| Հ. զՍերմն | հունտը | զՍերման-ս | հունտերը |

*Ծանօթ.* — Կան մէկ քանի բառեր ալ՝ որ թէպէտ ըն կամ իւն չեն վերջանար, բայց այս առաջին ձեւին կը հետեւին։ Անուն՝ անուան, մանուկ՝ մանկան, տուն՝ տան, տեսիլ՝ տեսլեան, գալուստ՝ գալստեան, և այլն։

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիրներուն հոլովն ու հոլովման ձեւը։*

Աղբիւր *ելանէր* յԵդեմայ։ *Անուան* Աստուծոյ վայելեն *փառք*։ Ասաց Յիսուս ցՓարիսեցիս. *Երթայք* տուք (տուէք) զկայսերն կայսեր։ *Հեթանոսք* զուստերս և զդստերս (մանչ ու աղջիկ զաւակները) իւրեանց զոհէին կռոց (կուռքերու)։ *Ոչ* միայն հացիւ կեցցէ (պիտի ապրի) մարդ, այլ և բանիւ Աստուծոյ։ *Թոյնք* իժից էին ի ներքոյ (տակ) շրթանց նոցա։ Սեամբ ամպոյ առաջնորդէր *Աստուած* *Հրէից*։ Քաղցր են բանք քո ի քիմս իմ իբրև զխորիսխ մեղու (մեղրի բջիջ)։

Ի ժամու մահուան վիշտք արդարոց փոխակերպին (կը փոխուին) ի խնդութիւն (ուրախութիւն)։ Արիւն զուարակացն երընջոց (եզ, հորթ) և ցլուց սրբէր զորդիսն Իսրայելի։ Կենդանիք յաղթանդամք (խոշոր) և մանունք (մանր) են ի վերայ երկրի՝ անթիւք ի բազմութենէ։ Ոսկերք ցամաքեալք, լուարուք (լսեցէք) զպատգամս Տեառն։ Զխոնարհութիւն սրտի սիրէ Աստուած առաւել քան զմատուցումն զոհից և պատարագաց։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Օգոստոս կայսեր աւուրն Յիսուս ծնաւ։ Աթէնքի մեհեանները շատ զարդարուն էին։ Սինա լերան վրայ Աստուած Մովսէսի երեցաւ (երեւեցաւ)։ Աստուծոյ հրեշտակը Կոռնելիոսի երեւցաւ։ Արիւնին կաթիլները կը վազէին (հեղուին)։ Գարնան ծաղիկները գեղեցիկ են։ Ժողովուրդին մէջ խռովութիւն կար (էր)։ Խոյին եղջիւրին վրայ (ի վերայ) երկու մարդիկ նստած էին (արք երկու նստեալ էին)։ Տղուն անունը Յովսէփ էր։ Մեսրոպ վարդապետը տեսիլքով մեր գրերը գտաւ (եգիտ)։ Աղբիւրին ջուրը շատ զով էր։ Հայրն իր որդին ծեծեց (եհար)։ Աղօթքին զօրութիւնը մեծ է։ Թագաւորին պալատէն ելաւ (ել)։ Յիսուս բարձր լերան վրայ ելաւ։ Ուսերուն վրայ բեռ դրին (եդին)։ Ծովին մէջ ձուկեր կան (են)։

| | |
|---|---|
| Աւուրն – Ի ժամանակի | Առջև – Առաջի |
| Շատ – Յոյժ, Կարի | Զով – Ցուրտ |
| Զարդարուն – Յարդարեալ | Պալատ – Ապարանք |
| Կաթիլ – Շիթ | Ուս – Թիկունք |

Գ.

ԾԱՂԿԱՔԱՂ

*Որդին անառակ*

Առն միոջ էին երկու որդիք։ Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. Հայր, տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ. և



նա բաժանեաց նոցա զկեանսն։ Յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսերոյն, գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։

Իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ. և սկսաւ ինքն չքաւորել, և յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս։ Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. Քանի՜ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ։

*Բառացիութիւն*

| | |
|---|---|
| Առն միոջ էին երկու որդիք – Մարդ մը երկու որդի ունէր | Ոչ բազում – Ոչ շատ, քիչ |
| Կրտսեր – Պզտիկ (տարիքով) | Վատնել – Ուտելով խմելով փճացընել, մսխել |
| Յընչիցդ – Ինչքերէդ, ստացուածքէդ | Կեայր անառակութեամբ – Անկարգութեամբ կ՚ապրէր |
| Յարիմ – Յարուիլ, դիմել (մէկու մը) | Սպառել – Լմնցնել, հատցընել |
| | Վարձկան – Ստակով բռնած ծառայ |

Եկեալ ի միտս իւր – Ինքն իրեն գալով, զգաստանալով։

## ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Պարզ հոլովման երկրորդ եւ երրորդ ձեւերը

62. *Պարզ հոլովման երկրորդ ձեւին կը վերաբերին ըր և ըղ վերջացող բառերը։ Առաջին օրինակ՝ Համր.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Համր | մունջ | Համեր-ք | մունջեր |
| Ս. | Համ-եր | մունջի | Համեր-ց | մունջերու |
| Տ. | Համ-եր | մունջի | Համեր-ց | մունջերու |
| | ի Համր | – վրայ | ի Համեր-ս | – վրայ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 62. Ի՞նչ տեսակ բառեր Պարզ հոլովման երկրորդ ձեւին կը վերաբերին. մէկ մէկ օրինակ տուր և հոլովէ։

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Գ. | Համեր-բ | մունջով | Համերբ-ք | մունջերով |
| Բ. | ի Համեր-է | մունջէ | ի Համեր-ց | մունջերէ |
| Հ. | զ Համր | մունջը | զ Համեր-ս | մունջերը |

*Ծանօթ. — Այս օրինակին պէս կը հոլովին նաև քանի մը իւր վերջացող բառեր։ Օրինակ. Ալիւր՝ ալեր, աղբիւր՝ աղբեր, եղջիւր՝ եղջեր, և այլն։*

**Երկրորդ օրինակ՝ Աստղ։**

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Աստղ | աստղ | Աստեղ-ք | աստղեր |
| Ս. | Աստ-եղ | աստղի | Աստեղ-ց | աստղերու |
| Տ. | Աստ-եղ | աստղի | Աստեղ-աց | աստղերու |
| | յԱստղ | – մէջ | յԱստեղ-ս | – մէջ |
| Գ. | Աստեղ-բ | աստղով | Աստեղբ-ք | աստղերով |
| Բ. | յԱստեղ-է | աստղէ | յԱստեղ-ց | աստղերէ |
| | | | յԱստեղ-աց | |
| Հ. | զ Աստղ | աստղը | զ Աստեղ-ս | աստղերը |

63. **Երրորդ ձևին նշանագիրն է ի։ Այն ամէն բառեր որ սեռական ի կը վերջանան, այս հոլովման կը վերաբերին։ Օրինակ՝ Բան.**

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Բան | խօսք | Բան-ք | խօսքեր |
| Ս. | Բան-ի | խօսքի | Բանի-ց | խօսքերու |
| Տ. | Բան-ի | խօսքի | Բանի-ց | խօսքերու |
| | ի Բան | – մէջ | ի Բան-ս | – մէջ |
| Գ. | Բանի-ւ | խօսքով | Բանիւ-ք | խօսքերով |
| Բ. | ի Բան-է | խօսքէ | ի Բանի-ց | խօսքերէ |
| Հ. | զ Բան | խօսքը | զ Բան-ս | խօսքերը |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 63. Երրորդ ձևին նշանագիրն ի՞նչ է, օրինակ մը տուր և հոլովէ։



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Տեղագիր եզակիներուն յոգնակին և յոգնակիներուն եզակին դնել, ու նշանակել թէ որ ձևին կը վերաբերի իւրաքանչիւրը։*

Սուրբն Մեսրովբ արար (ըրաւ) զգիրս հայերէն գրոց։ Նստաւ տապանն ի լերինս Արարատայ։ Իմաստութիւն է խուսել (փախուստ տալ) ի վտանգաց մահու։ Ժողովուրդ որ նստէր ի խաւարի, ետես լոյս մեծ։ Հրաման ետ դնել զսուրբն ի բանտի և զոտս նորա պնդել ի կոճեղս (կոճղի հետ պինդ կապկըպել)։ Յարկեղ մեծատան գտանին գումարք արծաթոյ և ոսկւոյ։ Խածուած իժի, քարբի (մեծ օձ) և կարճի մահաբեր են իբրև զհարուածս նետից աղեղան։ Ոչ լուաւ Աքաաբ ձայնի Եղիա մարգարէի, և մեռաւ չարաչար մահուամբ։ Պահանջէ Աստուած հաւատս ի քրիստոնէից ոչ սրտիւ եւեթ (միայն) և մտօք, այլ արդեամբ և ի բանից շրթանց։ Նաւն կայր առ եզերբ (եզերքին քով) ծովուն Գեննեսարեթայ։ Բազումք ի թռչնոց երկնից (կը փախ-նան) յանգեղէ։ Կոտորեաց (ջարդեց) Յէու զամենայն որդիս արքայի։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ստոյգ բարեկամը փորձով կը ճանչցուի (ճանաչի)։ Հա-րուստ եղէք (լերուք) ոչ ոսկիով և արծաթով, այլ իմաստու-թեամբ։ Առաքինութիւնը կը տանի զմեզ առ ճշմարիտ երանութիւն։ Մեսիայի գալովն (գալուստ) ազգերն ազատե-ցան (փրկեցան)։ Ուսումն ապաւէն և սփոփանք է թշուառա-ներու։ Արեգակը լոյսի և ջերմութեան աղբիւր է։ Ամէն բան անկարելի է առանց աստուածային Նախախնամութեան։ Ձմրան մէջ աղքատներու և ծերերու զրկանքն ու տանջանքը կ'աւելնան (առաւելուն)։

## Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Որդին անառակ

(Տարայարութիւն)

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։ Մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ. անկաւ զպարանոցաւն նորա և համբուրեաց զնա։ Ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո։ Ասէ հայրն ցծառայսն իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա. և ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ։

#### Բառագիտութիւն

Ընթացաւ ընդ առաջ – Առջեւը վազեց, դիմաւորեց
Անկաւ զպարանոցաւն նորա – Անոր վզին պլլուեցաւ
Ագուցէք – Հագուեցուցէք
Տուք – Տուէ՛ք
Պարարակ – Գիրուկ, պարարտ
Զենէք – Մորթեցէք
Մեղայ յերկինս – Մեղանչեցի երկնքի դէմ,

## ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Պարզ հոլովման չորրորդ եւ հինգերորդ ձեւերը

64. *Պարզ հոլովման չորրորդ ձեւին նշանագիրն է ու։ Այն ամէն բառեր որոնց սեռականն ոյ կը վերջանայ՝ այս ձեւին կը վերաբերին։ Օրինակ.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 64. Ո՞րն է պարզ հոլովման չորրորդ ձեւին նշանագիրը, և ի՞նչպէս կը հոլովի մարդ բառը։



| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Ո. Մարդ | մարդ | Մարդ–ք | մարդիկ |
| Ս. Մարդ–ոյ | մարդու | Մարդո–ց | մարդերու |
| Տ. Մարդ–ոյ | մարդու | Մարդո–ց | մարդերու |
| ի Մարդ | – վրայ | ի Մարդ–ս | – վրայ |
| Գ. Մարդո–վ | մարդով | Մարդով–ք | մարդերով |
| Բ. ի Մարդ–ոյ | մարդէ | ի Մարդո–ց | մարդերէ |
| Հ. զ Մարդ | մարդը | զ Մարդ–ս | մարդերը |

65. *Հինգերորդ ձեւին նշանագիրն է ու։ Այն ամէն բառեր որ սեռական ու կը վերջանան՝ այս ձեւին կը վերաբերին։ Օրինակ.*

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Ո. Ջարդ | ջարդ | Ջարդ–ք | ջարդեր |
| Ս. Ջարդ–ու | ջարդի | Ջարդու–ց | ջարդերու |
| Տ. Ջարդ–ու | ջարդի | Ջարդու–ց | ջարդերու |
| ի Ջարդ | – մէջ | ի Ջարդ–ս | – մէջ |
| Գ. Ջարդ–ու | ջարդով | Ջարդու–ք | ջարդերով |
| Բ. ի Ջարդու–է | ջարդէ | ի Ջարդու–ց | ջարդերէ |
| Հ. զ Ջարդ | ջարդը | զ Ջարդ–ս | ջարդերը |

66. *Ջարդ բառին պէս կը հոլովին՝ քիչ մը տարբերութեամբ՝ ըր վերջացող բառերէն մէկ քանին։ Օրինակ.*

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Ո. Փոքր | պզտիկ | Փոքու–նք | պզտիկներ |
| Ս. Փոք–ու | պզտիկի | Փոքու–նց | պզտիկներու |
| Տ. Փոք–ու | պզտիկի | Փոքու–նց | պզտիկներու |
| ի Փոքր | – մէջ | ի Փոքու–նս | – մէջ. |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 65. Հինգերորդ ձեւին նշանագիրն ըսէ, և օրինակ մը տուր. — 66. Ուրիշ ի՞նչ վերջաւորութեամբ բառեր ջարդ բառին պէս կը հոլովին։

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Գ. | փոք-ու<br>փոք-ումն | պզտիկով | փոքու-ք<br>փոքու-մբք | պզտիկներով |
| Բ. | ի փոքու-է | պզտիկէ | ի փոքու-նց | պզտիկներէ |
| Հ. | զ փոքր | պզտիկը | զ փոքու-նս | պզտիկները |

*Ծանօթ.* — *Այս օրինակին պէս կը հոլովին հետեւեալ բառերը. Քաղցր, քաղցու, ի քաղցուէ, քաղցունք, – թանձր, թանձու, ի թանձուէ, թանձունք, – ծանր, ծանու, ի ծանուէ, ծանունք – բարձր, բարձու, ի բարձուէ, բարձունք – մանր, մանու, ի մանուէ, մանունք, – կարծր, կարծու, ի կարծուէ, կարծունք։ Իսկ*

*ասր (բուրդ) – ասու – յասուէ*
*ծաղր – ծաղու – ի ծաղուէ*
*մեղր – մեղու – ի մեղուէ*
} *յոգնակի չունին, և այլն։*

ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

## Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Ծաղագիր եզակիներուն յոգնակին և յոգնակիներուն եզակին գտնել, ու նշանակել թէ ո՛ր ձևին կը վերաբերին։*

*Ի բերանոյ երկուց վկայից հաստատի (կ'որոշուի) ամենայն բան։ Հատն մանանխոյ (մանանուխի) փոքր է քան զամենայն սերմանիս։ Դրունք դժոխոց գնա մի՛ յաղթահարեսցեն (յաղթել)։ Հողմովք սրտմտութեան (բարկութիւն) Բարձրելոյն խորտակեսցին (պիտի մանրուին) ժողովք ամբարշտաց։ Լուր (մտի դիր), որդեակ իմ, խրատու, և մի՛ արհամարհեր զառակս ծերոյ։ Նախանձու բանսարկուին (սատանայ) եմուտ (մտաւ) մահ յաշխարհ։ Ի խորհրդոց և ի գործոց չարաց ծնանին մեղք։ Բարուց աղուեսու պատկեր է այր (մարդ) խորամանկ։ Պատուիրանք Տեառն ոչ են ծանունք։ Գան եհար (ծեծեց) զծառայս ի փոքուէ մինչև ցմեծն։*



*Զօրու ծանու (շատ զօրք) խաղաց (վազեց) ի վերայ թշնամեաց։ Ապրեցան (ազատեցան) մարդիկ յալէկոծութենէ ծովու։ Առաքինութիւն նման է քաղցր մեղու։ Երկիր առնու զջերմութիւն յարեւէ։ Մարդ սուրբ վարուք ուրախ լինի ի մահու։*

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

*Ամէնքնիս Աստուծոյ ձեռքին ստեղծուածներն ենք (եմք)։ Գժոխքի մէջ աչքը վերցուց (ամբարձ զ....) ու տեսաւ (ետես) զԱբրահամ և զՂազարոս։ Դրան առջև նստած (բազմեալ) դրացիներուն պատմութիւն կը պատմէր։ Ձիերուն բերանը սանձ կը դնենք (դնեմք), որպէս զի մեզի հնազանդին (առ անսալոյ մեզ)։ Կէս օրուան միջոց արևուն զօրութիւնն աւելի է։ Արտաշեսի զօրքերուն մէջ խռովութիւն ելաւ (ել)։ Ծովուն մէջ ալէկոծութիւն կար (էր)։ Առաջին սպանութիւնը նախանձով եղաւ (եղև)։ Փոքրիկ և անմեղ տղաք սիրելի են ծնողներու և ընտանիքի։ Գրիգոր Լուսաւորիչ շատ տեղերէ կուռքերուն պաշտօնին բագիները կործանեց (կործանեաց զ....)։*

| | |
|---|---|
| Ամէնքնիս – Ամենքեան | Պատմութիւն – Վէպ |
| Ձեռք – Ձեռն | Կէս օրուան միջոց – ի միջօրէի։ |

## Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Աբրահամ և Ղովտ*

*Աբրահամ էր մեծատուն յոյժ անասնով և արծաթով և ոսկւով։ Եւ Ղովտայ՝ որ երթեալն էր ընդ Աբրահամու, էր արջառ և ոչխար։ Եւ ոչ բաւէր նոցա երկիրն բնակելոյ ի միասին. և եղև մարտ ի մէջ հովուաց խաշանցն։ Ասէ Աբրահամ ցՂովտ. Մի՛ լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո, զի արք եղբարք եմք մեք։ Մեկնեա՛ց յինէն. եթէ դու յահեակ՝ ես յաջ, եթէ*

*դու յաջ՝ ես յահեակ։ Եւ մեկնեցան իւրաքանչիւր յեղբօրէ իւրմէ։*

*Բառագիտութիւն*

| | |
|---|---|
| *Ի միասին – Միասին, մէկտեղ* | *Ընդ իս և ընդ քեզ – Իմ ու քու մէջը մէջերնիս։* |
| *Խաշն – Ոչխար* | |

## ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Խառն հոլովումն

67. *Խառն կ'ըսուի հոլովումը այն բառերուն՝ որոնց եզակի սեռականն ու գործիականը պարզ հոլովման այս կամ այն ձեւին, նման կ'ըլլան։ Այս կերպ հոլովման երկու ձեւ կայ։*

68. *Առաջինին կը վերաբերին այն բառերը՝ որոնց եզակի սեռականը պարզ հոլովման երրորդ ձեւին, և գործիականն՝ առաջինին պէս է։ Օրինակ.*

| Եզ. ուղղ. | սեռական | | գործիական |
|---|---|---|---|
| Քաղաք | քաղաքի | կ'ըլլայ | քաղաքաւ |
| Ընկեր | ընկերի | » | ընկերաւ |
| Մատն | մատին | » | մատամբ |
| Անձն | անձին | » | անձամբ, և այլն։ |

69. *Երկրորդ ձեւին կը վերաբերին այն բառերն՝ որոնց եզակի սեռականը պարզ հոլովման չորրորդ ձեւին պէս է և գործիականն առաջին ձեւին պէս։ Օրինակ.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 67. Ո՞ր հոլովումը խառն կ'ըսուի. և քանի՞ ձև կայ այս կերպ հոլովման. — 68. Ո՞ր բառերն առաջին ձևին կը վերաբերին. — 69. Ո՞ր բառերը երկրորդ ձևին կը վերաբերին։



| Եզ. ուղղ. | սեռական | | գործիական |
|---|---|---|---|
| Բարի | բարւոյ | կ'ըլլայ | բարեաւ |
| Գինի | գինւոյ | » | գինեաւ |
| Գօտի | գօտւոյ | » | գօտեաւ |
| Թզենի | թզենւոյ | » | թզենեաւ |
| Եկեղեցի | եկեղեցւոյ | » | եկեղեցեաւ, և այլն։ |

*Ծանօթ.* — Այս ձևին կը վերաբերին ամէն ի վերջացող բառերը. մէկ քանին միայն պարզ հոլովման չորրորդ ձևին պէս կ'ըլլան։ Ինչպէս. Հոգի, հոգւով, հոգւոց. որդի, որդւով, որդւոց. հռովմայեցի, հռովմայեցւով, հռովմայեցւոց, և այլն։

70. *Այս երկու ձեւերուն ալ յոգնակի վերջահոլովները պարզ հոլովման առաջին ձեւին պէս կ'ըլլան։ Զոր օրինակ.*

*Քաղաք, քաղաքի, քաղաքաւ, քաղաքաց, քաղաքօք. – անձն, անձին, անձամբ, անձանց, անձամբք. – գառն, գառին, գառամբ, գառանց, գառամբք. – տարի, տարւոյ, տարեաւ, տարեաց, տարեօք. – թզենի, թզենւոյ, թզենեաւ, թզենեաց, թզենեօք և այլն։*

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Շեղագիր եզակիներուն յոգնակին և յոգնակիներուն եզակին նշանակել։*

Գայլք թշնամի են գառանց։ Մատն մասն է մարդոյ։ Ծանր է բեռն սատանայի, և լուծն Աստուծոյ քաղցր։ Պատերազմօք կորնչին ազգք բազումք։ Մեծ ազն (ազգ)

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 70. Ի՞նչպէս կ'ըլլան այս երկու ձևերուն ալ յոգն. վերջահոլովները։

էին Հռովմայեցիք։ Ծառայք եմք երկնաւոր Թագաւորին։ Պարտք են զինուորի պատերազմել վասն փրկութեան հայրենեաց։ Ոչխարք հովուի գնձեն ի լեառն։ Լեզուաւ ճենճաւորաւ խօսէին Փարիսեցիք։ Կեանք աշխարհիս լի են վշտօք և դառնութեամբք։ Երէցն (մեծ) կրտսերոյն (պզտիկ) ծառայեսցէ (պիտի ծառայէ)։ Գինեաւ իմաստութեան արբեցայ (գինովցայ)։ Որոշիմք տեղեաւ՝ այլ ոչ սրտիւ։ Դառն է բաժանիլ ի սիրելեաց։ Գործովք բարեաց հանդիպիմք ողորմութեան։ Ի լերին բարձու երևեցան Յիսուսի Մովսէս և Եղիա։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Բարի մարդն ոսկիի և հագուստներու չի փափաքիր (ոչ ցանկայ), այլ իմաստութեան։ Եզներն ու ոչխարները խոտ կ'ուտեն (ճարակեն) դաշտի մէջ։ Աշխարհս կենդանիներով լեցուն է, բարիներով և չարերով։ Քրիստոս պիտի գայ (եկեսցէ) հրեշտակներով դատաստան ընելու (առնել) արդարներուն և մեղաւորներուն։ Հնդիկները միայն կաթով, պանիրով և բոյսերով կը սնանին։ Թեմիստոկլէս քաղաքացիներուն նախանձէն չվախցաւ (ոչ երկեաւ)։ Մեծ մրրիկ ելաւ ու նաւն ալիքներով կը լեցուէր (լնոյր)։ Զինուորը նիզակով խոցեց (խոցեաց) Յիսուսի Քրիստոսի կողը (հայցական)։ Յիսուս իմաստութեամբ և հասակով կը մեծնար (զարգանայր)։ Մարտիրոսները բռնաւորներուն սպառնալիքներէն չէին վախեր (ոչ ինչ երկնչէին)։

Ոչխար – Խաշն | Նիզակ – Տէգ

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

*Կուսանքն իմաստունք և յիմարք*

Նմանեցաւ արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային և հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք էին, և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի յամել փեսային՝ նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին։ Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ. Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա։



*Բառագիտութիւն*

Որոց առեալ զլապտերս իւրեանց – Որոնք իրենց կանթեղներն առած

Ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին – Հետերնին ձէթ չառին

Ի յամել փեսային – Փեսան ուշանալով, երբ փեսան ուշացաւ

Նիրհել – Քունը տանիլ, մրափել

Ի քուն մտին – Քնացան

Եղև բարբառ – Ձայն լսուեցաւ

Արիք ընդ առաջ նորա – Ելէք զինքը դիմաւորելու.

ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Անկանոն կամ զարտուղի հոլովմունք

71. *Անկանոն կամ զարտուղի կ'ըսուի հոլովումը մի քանի բառերու, որ վերը աւանդուած կանոններէն քիչ մը կը խոտորին։ Այս բառերն ութ հատ են միայն, այսինքն. Այր, Տէր, Հայր, Կին, Քոյր, Գիւղ, Օր, Տիւ։*

72. *Այր բառն՝ այսպէս կը հոլովի.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Այր | այր մարդ | Արք | այր մարդիկ |
| Ս. | Առն | » մարդու | Արանց | » մարդոց |
| Տ. | Առն, յԱյր | » մարդու | Արանց, յԱրս | » մարդոց,-մէջ |
| Գ. | Արամբ | » մարդով | Արամբք | » մարդերով |
| Բ. | յԱռնէ | » մարդէ | յԱրանց | » մարդերէ |
| Հ. | զԱյր | » մարդը | զԱրս | » մարդերը։ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 71. Ի՞նչ տեսակ բառերու հոլովումը անկանոն կամ զարտուղի կ'ըսուի. և քանի՞ ու որո՞նք են այս բառերը։ — 72. Այր բառն ի՞նչպէս կը հոլովի։

73. *Տէր բառն այսպէս կը հոլովի.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Տէր | տէր | Տեարք | տէրեր |
| Ս. | Տեառն | տիրոջ | Տերանց | տէրերու |
| Տ. | Տեառն | տիրոջ | Տերանց, տեարց | տէրերու |
| | ի Տէր | – վրայ | ի Տեարս | – վրայ |
| Գ. | Տերամբ | տիրոջմով | Տերամբք | տէրերով |
| Բ. | ի Տեառնէ | տիրոջմէ | ի Տերանց, ի տեարց | տէրերէ |
| Հ. | զՏէր | տէրը | զՏեարս | տէրերը։ |

74. *Հայր բառն այսպէս կը հոլովի.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Հայր | հայր | Հարք | հայրեր |
| Ս. | Հօր | հօր | Հարց, հարանց | հայրերու |
| Տ. | Հօր | հօր | Հարց, հարանց | հայրերու |
| | ի Հայր | – վրայ | ի Հարս | – վրայ |
| Գ. | Հարբ, հարամբ | հօրմով | Հարբք, հարամբք | հայրերով |
| Բ. | ի Հօրէ | հօրմէ | ի Հարց, ի հարանց | հայրերէ |
| Հ. | զՀայր | հայրը | զՀարս | հայրերը։ |

*Այսպէս կը հոլովին նաև Մայր և Եղբայր, Հօրեղբայր և Մօրեղբայր։*

75. *Կին բառն այսպէս կը հոլովի.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Կին | կին | Կանայք | կիներ |
| Ս. | Կնոջ | կնոջ | Կանանց | կիներու |
| Տ. | Կնոջ | կնոջ | Կանանց | կիներու |
| | ի Կին | – վրայ | ի Կանայս | – վրայ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 73. Տէր բառն ինչպէս կը հոլովի. — 74. Հայր բառն ինչպէս կը հոլովի. — 75. Կին բառն ինչպէս կը հոլովի։



| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Գ. | Կանամբ, կնաւ | կնոջմով | Կանամբք | կիներով |
| Բ. | ի Կնոջէ | կնոջմէ | ի Կանանց | կիներէ |
| Հ. | զԿին | կինը | զԿանայս | կիները։ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Շեղագիր բառերուն համապատասխան հոլովները նշանակել։*

*Կին յառնէ իւրմէ առաւ (անուեցաւ)։ Ծառայ* Տեառն *եմ ես։ Կոտորեցին* զարս *քաղաքին։ Տուրք բարիք ի* Տեառնէ *գան։ Որդեակ, լուր ձայնի* հօր *քո։ Ընթերցայ զվարս* հարանց*։ Առաքեցից (պիտի ղրկեմ) զՀոգին ճշմարտութեան՝ որ ի Հօրէ ելանէ։ Առ ի պտղոյ նորա, եկեր (կերաւ) և ետ* առն *իւրում։ Եղիսաբեթ ասէր* ցՏիրամայրն. *Օրհնեալ ես դու ի* կանայս*։ Գողացան ի գիշերի զամենայն ինչս* տանուտեառն*։* Կանայք*, հնազանդ լերուք (եղէք) ա-* րանց *ձերոց։* Արք*, մի դառնացուցանէք (մի նեղացնէք)* զկանայս *ձեր։ Եսթեր՝* տիկին *էր արքայի Արտաշիսի, և* հրամայէր *այլոց* կանանց*։ Աթենացիք թողին (թողուցին) զքաղաքն և ածին* զկանայս *և զորդիս իւրեանց ի Սաղամինա։*

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

*Կինն այրէն պիտի բաժնուի (բաժանեսցի) և այրը կնոջմէն։ Յիսուս դիւահար մարդիկը* (հայցկն.) *կը բժշկէր (բժշկէր)։ Ողորմելի մարդիկներէն բան մը չի յուսացուիր (ոչ ինչ է յուսալի)։ Հայրեր և մայրեր որդւոց կրթութեան միտ դնեն (խնամ ունիցին)։ Ծառաները տէրերնուն թող հնազանդին (հնազանդ լիցին)։ Ս. Եպիփան Եկեղեցւոյ*

Հայրերէն մէկն է։ Երուսաղեմի կիներէն շատերը Յիսուսի ետևէն կ'երթային (երթային զհետ)։ Հազարապետն եկաւ (եկն) շատ երևելի մարդիկներով, կնոջմով, մանչերով և աղջիկներով։ Առաքեալը տէրերուն կը պատուիրէ անիրաւ տեղ ծառաները (հայցական) չիչարչրկել (մի խոշտանգել)։ Տանտիրոջ որդին աւազակներէ սպաննուեցաւ (սպանաւ)։ Սուրբ կիներն Յիսուսի մարմինը (հայցական) խնկելու գնացին (շոգան ի խնկել)։ Յիսուս Երուսաղեմի կիները (յոգն. հայցական) մխիթարեց (մխիթարեաց)։

Ողորմելի – Վատ | Անիրաւ տեղ – Յանիրաւի
Մէկն – Մի։

## Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Կուսանքն իմաստունք և յիմարք

(Շարայարութիւն)

Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական. այլ երթայք ի վաճառականս և գնեսջիք ձեզ։ Իբրև նոքա գնացին գնել, եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն. և փակեցաւ դուռնն։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. Տէր Տէր, բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։

### Բառագիտութիւն

Կազմեցին – Պատրաստեցին
Տուք մեզ յիւղոյդ ձերմէ – Ձեր իւղէն մեզի տուէք
Շիջանին – Կը մարին

Գուցէ ոչ իցէ – Թերևս չըլլայ
Ոչ գիտեմ զձեզ – Ձեզ չեմ ճանչնար։



## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախորդ դասին

76. **Քոյր բառն այսպէս կը հոլովի.**

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Քոյր | քոյր | Քորք | քոյրեր |
| Ս. | Քեռ | քրոջ | Քերց | քոյրերու |
| Տ. | Քեռ | քրոջ | Քերց | քոյրերու |
| | ի Քոյր | – վրայ | ի Քորս | – վրայ |
| Գ. | Քերբ | քրոջմով | Քերբք | քոյրերով |
| Բ. | ի Քեռէ | քոյրէ | ի Քերց | քոյրերէ |
| Հ. | զՔոյր | քոյրը | զՔորս | քոյրերը։ |

77. **Գիւղ կը հոլովի այսպէս.**

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Գիւղ | գիւղ | Գիւղք | գիւղեր |
| Ս. | Գեղջ | գիւղի | Գիւղից | գիւղերու |
| Տ. | Գեղջ | գիւղի | Գիւղից | գիւղերու |
| | ի Գիւղ | – մէջ | ի Գիւղս | – մէջ |
| Գ. | Գիւղիւ | գիւղով | Գիւղիւք | գիւղերով |
| Բ. | ի Գեղջէ | գիւղէ | ի Գիւղից | գիւղերէ |
| Հ. | զԳիւղ | գիւղը | զԳիւղս | գիւղերը։ |

78. **Օր կը հոլովի այսպէս.**

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Օր | օր | Աւուրք | օրեր |
| Ս. | Աւուր | օրուան | Աւուրց | օրերու |
| Տ. | Աւուր | օրուան | Աւուրց | օրերու |
| | յՕր | – մէջ | յԱւուրս | – մէջ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 76. Հոլովէ քոյր բառը. — 77. Գիւղ բառն ի՞նչպէս կը հոլովի. — 78. Ի՞նչպէս կը հոլովի օր բառը։

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Գ. | Աւուրբ | օրով | Աւուրբք | օրերով |
| Բ. | յՕրէ | օրէ | յԱւուրց | օրերէ |
| Հ. | զՕր | օրը | զԱւուրս | օրերը։ |

79. Տիւ բառին եզակին միայն զարտուղի է. իսկ յոգնակին կանոնաւոր կերպով կը հոլովի այսպէս.

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Տիւ | ցորեկ |
| Ս. | Տուընջեան | ցորեկի |
| Տ. | Տուընջեան, ի Տիւ | ցորեկի, — մէջ |
| Գ. | Տուընջեամբ | ցորեկով |
| Բ. | ի Տուընջենէ, ի Տուէ | ցորեկէ |
| Հ. | զՏիւ | ցորեկը |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Տիւք | ցորեկներ |
| Ս. | Տուոց | ցորեկներու |
| Տ. | Տուոց, ի Տիւս | ցորեկներու |
| Գ. | Տուովք | ցորեկներով |
| Բ. | ի Տուոց | ցորեկներէ |
| Հ. | զՏիւս | ցորեկները։ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Շեղագիրներուն եզակի և յոգնակի համապատասխան հոլովները նշանակել։*

*Քորք քո և եղբարք կան արտաքոյ (դուրսը)։ Դուստր հօրաքեռն իմոյ գարնայնի (գարնան ատեն) բնակէ ի գեղջ։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 79. Տիւ բառն ինչպէս կը հոլովի։



Առաքեալք քորս կանայս զգաստս (զգուշաւոր) ընդ ինքեանս շրջեցուցանէին (հետերնին կը քալցընէին)։ Աւուրք ձմերան առաւել անբերելիք են (անտանելի են) տկարաց և ծերոց։ Յաւուրս յայսոսիկ եկն առ իս (ինծի) բարեկամ իմ։ Եղբայր իմ դարձաւ ի գեղջէ։ Ժամք տուընջեան երկարատև թուին (կ'երևին) քան զժամս գիշերոյ։ Ժամք չափեն զաւուրս, աւուրք՝ զեօթնեակս (շաբաթ), եօթնեակք՝ զամիսս, և ամիսք՝ զամս (տարիները)։ Որդիք յաջորդեն հարց, որպէս օր յաջորդէ աւուր, և տուընջեան գիշեր փոխանակէ (տեղը կ'անցնի)։ Պերիկլէս կորոյս զորդիս իւր յաւուրս ժանտամահի։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Մանկութեան օրերը մարդուս կեանքին գարունն են։ Քաղաքապետին տղան եղբայրներով և քոյրերով գիւղէն դարձաւ։ Գթութեան Քոյրերը մեր օրերուն մէջ հիւանդներուն սիրտ տուող հրեշտակներ են։ Ամառ ատեն ցորեկուան ժամերն երկայն կ'երևին։ Քիչ մը առաջ Պօղոսին հօրաքրոջ պարտէզը (ճխղր. տր.) գնացինք ընտանիքով։ Մարդուս օրերը շուքի պէս շուտով կ'անցնին (անցանեն)։ Ինչ որ մանկութեան օրերու մէջ չսորվեցար (ոչ ուսար), ծերութեան ատեն պիտի չսորվիս (ոչ ուսանիցես)։ Հայոց աշխարհին փափուկ մեծցած տիկիններն այն ատեն բոպիկ ոտքով և ամայի տեղուանք կը վազէին՝ խոտ ուտելով (ընթանային խոտաբուտ կենօք)։ Նինուէացի մարդիկն Յովնանու քարոզութեամբ դարձան և ապաշխարեցին։

| | |
|---|---|
| Սիրտ տուող — Սփոփիչ | Ինչ որ — Որ ինչ |
| Ամառ ատեն — Յամարանի | փափուկ մեծցած — փափկասուն |
| Քիչ մ'առաջ — Սակաւ մի յառաջ | Բոպիկ — Բոկ |
| Շուքի պէս — Իբրև զստուեր | Ոտքով — Հետի |
| Շուտով — Վաղ | Ամայի տեղ — Ամայաստան։ |

## Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Դատաւորն և Այրին

Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ ամաչէր: Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր: Դատ արա ինձ յոսոխէ իմմէ: Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս: Յետ այնորիկ ասէ ի միտս իւրում: Թէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ և ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի իսպառ եկեալ թախանձիցէ զիս: Եւ ասէ Տէր: Լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր: Իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա: Այո, ասեմ ձեզ, զի արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի:

### Բառագիտութիւն

Ի քաղաքի ուրեմն – Քաղաքի մը մէջ
Ոչ երկնչէր – Չէր վախեր
Ի նմին քաղաքի – Նոյն քաղաքին մէջ
Դատ՝ արա ինձ յոսոխէ իմմէ – Իմ հակառակորդիս հետ ունեցած դատս տես
Երկայնամիտ լինել – Համբերել
Աշխատ առնել – Աշխատցընել, նեղել
Ոսոխ – Հակառակորդ, թշնամի
Իսպառ – Միշտ, անդադար, ցվերջ
Թախանձել – Շատ աղաչել, ձանձրացընել
Լուարուք – Լսեցէք
Ի տուէ և ի գիշերի – Ցորեկ ու գիշեր:

## ԹՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Ածական գոյականի հետ

80. *Ածական անունը գոյականին թէ նախադաս կ'ըլլայ և թէ յետադաս: Ուստի հաւասարապէս կ'ըսուի.* Տօն մեծ, մեծ տօն – սնոտի յոյս, յոյս սնոտի, – հաւատարիմ բարեկամ, բարեկամ հաւատարիմ և այլն:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 80. Ածական անունը գրաբարի մէջ գոյականէն առա՞ջ կը դրուի թէ ետքը:



Բայց աւելի սովորական և ընտիր համարուած է յետադաս ընել զայն աշխարհաբարի հակառակ:

81. *Նախադաս ածականները նախդրիւ հոլովներու մէջ իրենք կ'առնեն գոյականին վրայ դրուելիք նախդիրը: Զոր օրինակ՝ Ուշիմ մանուկ կ'ըլլայ.*

Նախդ. Տրական՝ յուշիմ մանուկ, մանկունս.
Բացառական՝ յուշիմ մանկանէ, մանկանց.
Հայցական՝ զուշիմ մանուկ, մանկունս:

Ծանօթ. — Նախադաս ածականները երբ միավանկ ըլլան՝ նաև կը հոլովին: Զոր օրինակ. Մեծի բարկութեան, մեծաւ բարկութեամբ, ի մեծէ բարկութենէ, սրբոյ վկայի, սրբով վկայիւ, ի սրբո՛յ վկայէ, սրբոց վկայից, սրբովք վկայիւք, ի սրբոց վկայից և այլն:

82. *Յետադաս ածականներն իրենց գոյականներուն հետ թուով և հոլովով կը համաձայնին: Օրինակի համար.*

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ծառ մեծ | Ծառք մեծք |
| Ս. | Ծառոյ մեծի | Ծառոց մեծաց |
| Տ. | Ծառոյ մեծի | Ծառոց մեծաց |
| | ի ծառ մեծ | ի ծառս մեծս |
| Գ. | Ծառով մեծաւ | Ծառովք մեծօք |
| Բ. | ի ծառոյ մեծէ | ի ծառոց մեծաց |
| Հ. | զծառ մեծ | զծառս մեծս |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 81. Նախադաս ածականներն իրենց գոյականին հետ ի՞նչպէս կը համաձայնին. — 82. Յետադաս ածականներն իրենց գոյականաց հետ ի՞նչպէս կը համաձայնին:

*Ծանօթ.* — *Ցետագայ ածականներն՝ ինչպէս այս օրինակին մէջ կը տեսնուի՝ սովորաբար նախդրիւ չեն համաձայնիր իրենց գոյականաց հետ. չ'ըսուիր՝ ի ծառ ի մեծ, ի ծառոյ ի մեծէ, զծառ զմեծ: — Սակայն եթէ միջանկեալ բառով զատուած ըլլան՝ կ'ըսուի վայելչապէս զծառ մի զմեծ, զհովիւն հօտից զմեծն, ի մեղաց ձերոց ի բազմաց, յերկիր բարի և յընդարձակ, և այլն:*

83. *Բաղդատութիւն կ'ըսուի երկու անձերու կամ իրերու մէջ եղած հաւասարութիւնն ու տարբերութիւնը, զոր ածականներու միջոցով կ'իմանանք:*

*Հաւասարութեան բաղդատութիւնը կը ցուցուի՝ ածականի մը յաջորդող բառին սկիզբը դնելով իբրև զ... իսկ տարբերութեան համար կը գործածուին քան զ... առաւել քան զ... և յաճախ ածականին վրայ ագոյն մասնիկը բարդելով: Օր.*

*Հաւասարութեան բաղդատութիւն*

*Հաւատարիմ բարեկամն ոսկիի պէս թանկագին է. — Պատուական է իբրև զոսկի բարեկամ հաւատարիմ:*

*Սողոմոնի չափ իմաստուն մէկը չկայ. — Ոչ ոք է իմաստուն իբրև զՍողոմոն, և այլն:*

*Տարբերութեան բաղդատութիւն*

*Հաւատարիմ բարեկամն ոսկիէն աւելի թանկագին է. — Բարեկամ հաւատարիմ պատուական կամ առաւել պատուական կամ պատուականագոյն է քան զոսկի:*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 83. Ի՞նչ կը հասկցուի՝ ածականաց բաղդատութիւն ըսելով. և հաւասարութիւնն ու տարբերութիւնն ի՞նչպէս կը ցուցուի գրաբարի մէջ:



*Սողոմոնէն աւելի իմաստուն մէկը չկայ. — Ոչ ոք է իմաստուն կամ առաւել իմաստուն կամ իմաստնագոյն քան զՍողոմոն, և այլն:*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Որոշել շեղագիր ածականներուն հոլովն ու թիւը, և զուգադիր գոյականներուն հետ հոլովել:*

Ա. — Սողոմոն էր *այր իմաստուն*: *Ծոյլ մանուկ* ոչ սիրէ *զուսումն*: Ծառ բարի՝ պտուղ բարի *առնէ*, և ծառ չար՝ պտուղ չար *առնէ*: Սիրտ սուրբ և խիղճ անարատ *հանդուցանեն զմարդ*: Որդի հնազանդ *խնդութիւն է ծնողաց*: *Ճշմարիտ խոնարհութիւն ուսանիմք* ի Փրկչէն Յիսուսէ: *Փախիր* ի մարդոց չարաց: Գիրք *գրեցան* (*գրուեցան*) *ի խրատ* (*խրատի համար*) *և ի զգուշութիւն*: *Հայր որդւոյն անառակի ընթացաւ ընդառաջ և անկաւ զպարանոցաւ նորա* (*վիզը փաթթուեցաւ*): Ի *վերայ* արանց չարաց *տարածանի* ծանր գիշեր: Աշխատութիւնք մեծամեծք՝ *են աղբերք երջանկութեան և համբաւոյ*:

Բ. — *Հոգիք արդարոց վայելեսցեն ի փառս* կենացն *յաւիտենականաց*: *Աւետեօք* հոգւոյն Սրբոյ լի *եղև ամենայն երկիր*: *Սաւուղ եդ զԴաւիթ ի վերայ* արանց քաջաց *պատերազմողաց*: *Ոչ ոք ի թագաւորաց* սիրելի *եղև Աստուծոյ՝ իբրև զԴաւիթ*: *Առաքինութիւն* պատուականագոյն է *քան զոսկի և քան* զականս *պատուականս*: *Հանդերձք Յիսուսի ի ժամու պայծառակերպութեան փայլէին* սպիտակ *իբրև զձիւն*: *Նհանգք* (*գազան*) *ծովու առաւել յաղթանդամ* (*մեծղի*) *են քան զամենայն* ցամաքային կենդանիս:

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Իմաստուն և առաքինի մարդուն հաւասար բան չկայ (չիք ինչ)։ Փիլիպպոս Մակեդոնացւոց թագաւորը Մեծն Աղեքսանդրի հայրն էր։ Անզգամ մարդիկներու չար խորհուրդներէն ծանր դժբաղդութիւններ առաջ կու գան (յառաջ գան)։ Յովհաննէս Մկրտչին աշակերտներն Յիսուսի եկան և ըսին (եկին առ Յիսուս և ասեն)։ Հրեշտակներն իւղաբեր կիներուն երեւցան ու Քրիստոսի յարութիւնն (ճայցակամ) աւետեցին (աւետարանեցին)։ Սուրբ Յովհան Ոսկեբերանի համար կ'ըսեն (ասեն) թէ շատ աւելի գթած էր քան ճարտասան։ Մանր և անմեղ տղայոց աղօթքն Աստուծոյ ընդունելի են։ Գետերուն ջրերը բարձր լեռներէն կ'իջնեն (իջանեն)։

Բ. — Քրիստոնէին վարքին կանոններն հին և նոր Կտակարաններէն կ'առնուին (առեալ լինին)։ Խաղաղութիւն սիրող անձերու յատուկ է վիճաբանութիւններէ փախչել։ Մարմնոյ տգեղութիւնք՝ հոգւոյ ախտերուն չափ պժգալի չեն։ Յաճախ մեր թշնամիները մեր բարեկամներէն աւելի օգտակար կ'ըլլան մեզի։ Մահը մահուան երկիւղին պէս զարհուրելի չէ։ Յիսուսի գալուստն արեւմուտքի մէջ երեւցող (որ երեւի) փայլակի պէս պիտի ըլլայ։ Տղաք ընդհանրապէս թեթեւամիտ կ'ըլլան, և ոչ ծանր և աշխատասէր՝ չափահասներու պէս։ Ուսումնասիրին համար դասառութեան ժամերն աւելի արագ կը սահին քան հանգստեան ժամերը։

Հաւասար – Զուգակշիռ
Դժբաղդութիւն – Աղէտ
Ճարտասան – Ճարտարախօս
Կանոն – Օրէնք
Խաղաղութիւն սիրող – Խաղաղասէր
Յատուկ – Սեփական
Չափահաս – Հասեալ ի չափ
Վիճաբանութիւն – Բանակռիւ։



## Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Փարիսեցին և Մաքսաւոր

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի և միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձինն աղօթս մատուցանէր։ Աստուած իմ, գոհանամ զքէն՝ զի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ, զյափշտակօղս և զանիրաւս և զշունս, կամ իբրև զայս մաքսաւոր։ Այլ պահեմ երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր և ասէր։ Աստուած, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա. զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

#### Բառագիտութիւն

Մաքսաւոր – Մաքս առնող
Կալ յաղօթս – Աղօթքի կենալ
Մեկուսի – Մէկդի, առանձին
Գոհանամ զքէն – Շնորհակալ եմ քեզի
Պահել – Պահք պահել
Պահեմ երկիցս ի շաբաթու – Շաբաթն երկու անգամ պահք կը պահեմ
Տասանորդ – Տասներորդ մասը
Ամբառնալ – Վերցընել, վեր առնել
Կոծէր զկուրծս իւր – Կուրծքը կը ծեծէր
Քաւել – Սրբել, մաքրել։

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

### Թուական ածականներ

84. *Թուական կ'ըսուին թիւ և կարգ ցուցընող ածականները և երեք տեսակ են. Բացարձակ, Դասական և Ածանցեալ։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 84. Ո՞ր ածականները թուական կ'ըսուին, քանի՞ տեսակ են և որո՞նք են բացարձակները։

*Բացարձակ թուական կ՚ըսուին թիւերու անունները, և են ասոնք. Մի, Երկու, Երեք, Չորս կամ Չորք, Հինգ, Վեց, Եօթն, Ութ, Ինն, Տասն, Մետասան, Երկոտասան, Երեքտասան, Չորեքտասան, Հնգետասան, Վեշտասան, Եօթնևտասան, Ութևտասան, Իննևտասան, Քսան, Քսան և մի, Երեսուն, Երեսուն և մի, Քառասուն, Քառասուն և մի, Յիսուն, Վաթսուն, Եօթանասուն, Ութսուն, Իննսուն, Հարիւր, Երկերիւր կամ Երկու հարիւր, Հազար, Երկու հազար, Երեք հազար, Բիւր (տասը հազար), Հազար հազարք կամ Հազարք հազարաց (մէկ միլիոն), Հազար բիւր (տասը միլիոն), Բիւր բիւրք կամ Բիւրք բիւրոց (հարիւր միլիոն)։*

*Ծանօթ. — Թիւերն առանձին հոլովում չունին, և ամենքը միակերպ չեն հոլովիր, այլ անուանց այս կամ այն ձևին համեմատ՝ շատ քիչ տարբերութեամբ։ — Դիւրութեան համար՝ կարևոր գիտելիքներն հոս կ՚ամփոփենք։*

85. *Մի եզակի միայն, կը հոլովի այսպէս.*

| | |
|---|---|
| Ո. Մի | Գ. Միով |
| Ս. Միոյ | Բ. ի Միոյ կամ ի Միոջէ |
| Տ. Միում, ի Մի | Հ. զՄի |

*Իսկ Երկու, Երեք, Չորք միայն յոգնակի կը հոլովին այսպէս.*

| | | |
|---|---|---|
| Ո. Երկու կամ Երկուք | Երեք | Չորք |
| Ս. Երկուց | Երից | Չորից |
| Տ. Երկուց, յԵրկուս | Երից, յԵրիս | Չորից, ի Չորս |
| Գ. Երկուք | Երիւք | Չորիւք |
| Բ. յԵրկուց | յԵրից | ի Չորից |
| Հ. զԵրկուս կամ զԵրկու | զԵրիս | զՉորս |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 85. *Մի ի՞նչպէս կը հոլովի և ի՞նչպէս կը հոլովին երկու, երեք, չորք։*



85. *Հինգէն սկսեալ մնացած ամէն թիւերը թէ եզակի և թէ յոգնակի կը հոլովին այսպէս. Հինգ, հնգի, հնգիւ, հինգք, հնգից, հնգիւք. — Վեց, վեցի, վեցիւ, վեցք, վեցից, վեցիւք. — Եօթն, եօթան, եօթամբ, եօթանք, եօթանց, եօթամբք. — Ութ, ութի, ութիւ, ութք, ութից, ութիւք. — Տասն, տասին, տասամբ, տասունք, տասանց, տասամբք. — Մետասան, Երկոտասան, սանի, սանիւ, սանից, սանիւք. — Եօթնևտասան, Ութևտասան, Իննևտասան, տասին, տասամբ, տասունք, տասանց, տասամբք. — Քսան, քսանի, քսանիւ, քսանք, քսանից, քսանիւք. — Հարիւր, հարիւրոյ, հարիւրով, հարիւրք, հարիւրոց, հարիւրովք. — Հազար, հազարի, հազարաւ, հազարք, հազարաց, հազարօք. — Բիւր, բիւրու կամ բիւրոյ, բիւրուց կամ բիւրոց, բիւրուք կամ բիւրովք և այլն։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Որոշել հետևեալ բացարձակ թուականներուն հոլովն ու թիւը, և զուգադիր գոյականներուն հետ հոլովել։*

Ա. — Արար (ըրաւ) ի միոջէ արենէ զամենայն ազգս։ Գնեաց մի պատուական մարգարիտ։ Երեք ամք են յորմէ հետէ ծառայեմ քեզ։ Են ի պարտիզի մերում հինգ ծառք խնձորի։ Այս են անուանք առաքելոցն երկոտասանից։ Վեշտասան զարունք անցին զինեւ (վրայէս անցան. 16

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 85. *Հինգէն սկսեալ մնացած ամէն թիւերն ի՞նչպէս կը հոլովին։*

տարուան եմ)։ Ջօհեցին անդ ութնտասն գառինս և քառասուն և մի ոչխար։ Եհար (ջարդեց) Սաւուղ զհազարս և Դաւիթ՝ զբիւրս։ Հազարք հազարաց հրեշտակք պաշտէին զնա։

Բ. — Կեանք մարդոյ եթէ շատ՝ ամք եօթանասուն։ Եօթն եղբարք Մակաբայեցիք չարաչար մահուամբ վճարեցան (մեռան) վասն կրօնից։ Մին ի քառասուն մանկանց կորեաւ (կորսուեցաւ) ի կորստական բաղանիսն։ Նստաւ անդ տարի մի և ամիսս վեց։ Սողոն, Թաղէս և Պիւթագորաս էին երեք յեօթանց իմաստնոց Յունաց։ Նոյ զամս հարիւր աշխատ եղեւ ի շինութիւն տապանին (տապանը շինելու)։ Հրամանաւն Յիսուսի Ղազարոս յարեաւ (ողջացաւ) յետ չորից աւուրց մահուան իւրոյ։

## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Դոմետիանոս կայսրն օրուան մէկ ժամը (հայցական) ճանճեր բռնելով կ՚անցընէր (անցուցանէր յըմբռնել զճանճս)։ Աբրահամ երեք հարիւր ծառաներով զարկաւ (եհար) հինգ թագաւորներուն բանակները (հայցական)։ Տասը կոյսերէն հինգն յիմար էին։ Յիսուս երկու աւազակներու մէջ խաչուեցաւ (խաչեցաւ)։ Հրեշտակի մը տեսիլը Սամփսոնի հօրն ու մօրը խռովութեան պատճառ եղաւ (եղև առիթ)։ Յովաբ և Աբեսսա Դաւթի երկու քոյրերուն որդիներն էին։ Սրբուհի Մ. Մագդաղենացի՝ որուն մէջ (յորում) առաջ եօթը դևեր կային (էին), արցունքով ու զղջումով անցուց կեանքը (անցոյց զկեանս իւր)։ Պաղ ջուրի գաւաթով մը կրնանք (կարեմք) արքայութիւնը գնել։

Բ. — Յովաբ երեք նետերով զԱբիսողոմ սպաննեց (սպան)։ Վեսպասիանոս տասը տարի (հայցական) թագաւորեց (թագաւորեաց) և վաթսուն և ինը տարի ապրեցաւ (եկեաց)։ Հինգ տարիներէն ետքը սաստիկ սով եղաւ։ Ս. Փլաբիանոս մարտիրոսութեամբ մեռաւ երկու հարիւր յիսուն տարին (յամին)։ Մարիամ և Յովսէփ երեք օրէն ետքը գտան (գտին) զՅիսուս։ Յոբ ունէր (էին Յոբայ) տասնու-



չորս հազար ոչխար, վեց հազար ուղտ և հազար զոյգ (ամոլք) եզներու։ Յուդա տասներկու առաքեալներէն մէկը՝ երեսուն դահեկանի մատնեց զՔրիստոս։ Քառասուն տարիներուն լմննալուն պէս (ի կատարել) Աստուած Մովսիսին երևցաւ։ Հռովմ քաղաքը եօթը բլուրներու վրայ շինուած է (շինեալ է)։

| | |
|---|---|
| Մէջ – Ի մէջ | Գաւաթ – Բաժակ |
| Առաջ – Յառաջագոյն | Ետքը – Յետ (սեռականի հետ) |
| Արցունք – Արտասուք | Մարտիրոսութիւն – Վկայական մահ։ |
| Պաղ – Ցուրտ | |

## Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Ագար և Իսմայէլ*

Տեսեալ Սառայի զորդին Ագարայ Եգիպտացւոյ, որ եղեւ Աբրահամու, զի խաղայր ընդ Իսահակայ որդւոյ իւրում, և ասէ ցԱբրահամ։ Ի բաց հան զաղախինդ և զորդի դորա, զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյդ ընդ որդւոյ իմում Իսահակայ։ Եւ խիստ թուեցաւ բանն առաջի Աբրահամու վասն որդւոյ նորա։ Եւ ասէ Աստուած ցԱբրահամ։ Մի՛ ինչ խիստ թուեսցի առաջի քո վասն մանկանն և վասն աղախնոյն. զամենայն՝ զոր ինչ ասիցէ քեզ Սառա, լուր ձայնի նորա։ Յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն և ա՛ռ հաց և տիկ ջրոյ և ետ ցԱգար, և ետ յուս նորա զմանուկն, և արձակեաց զնա. և երթեալ մոլորեալ շրջէր յանապատի անդ առ Ջրհորովն երդման։

### Բառացիութիւն

| | |
|---|---|
| Ի բաց հան – Հեռացուր | Ետ յուս նորա զմանուկն – Տղան անոր ուսը տուաւ |
| Մի՛ ինչ խիստ թուեսցի առաջի քո – Թող ծանր չգայ քեզի | Առ Ջրհորովն երդման – Երդման Ջրհորին քով։ |
| Լուր ձայնի նորա – Խօսքին մտիկ ըրէ | |

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

### Նախորդ դասին շարունակութիւնը

86. *Դասական կ'ըսուին այն թուական ածականները՝ որ բանի մը կարգը կամ քանիերորդ ըլլալը կ'իմացընեն, և են ասոնք.*

*Առաջներորդ կամ Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ, Եօթներորդ, Ութերորդ, Իններորդ, Տասներորդ, Մետասաներորդ, Երկոտասաներորդ, Երեքտասաներորդ, Չորեքտասաներորդ, Հնգետասաներորդ, Վեշտասաներորդ, Եօթնետասաներորդ, Ութևտասաներորդ, Իննևտասաներորդ, Քսաներորդ, Քսաներորդ առաջներորդ, ևն., Երեսներորդ, Քառասներորդ, Յիսներորդ, Վաթսուներորդ, Եօթանասներորդ, Ութսներորդ, Իննսներորդ, Հարիւրերորդ, Երկերիւրերորդ, Հազարերորդ, Բիւրերորդ։*

87. *Այս Դասական թուականները խառն հոլովման առաջին ձևին պէս կը հոլովին այսպէս. Առաջներորդ, առաջներորդի, առաջներորդաւ. — Երկրորդ, երկրորդի, երկրորդաւ. — Տասներորդ, տասներորդի, տասներորդաւ, և այլն։*

88. *Ածանցեալ կ'ըսուին այն թիւերը որ կը կազմուին բացարձակներուն վրայ ակ կամ եակ, քեան կամ քին, պատիկ և իցս մասնիկներն աւելցնելով։ Օրինակ.*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 86. *Դասական թուականները որո՞նք են. — 87. Ի՞նչպէս կը հոլովին այս դասականները. — 88. Ի՞նչ տեսակ թիւեր ածանցեալ կ'ըսուին և ի՞նչ է իւրաքանչիւրին նշանակութիւնը։*



Ամբողջական առումը ցուցնող

| *Ակ կամ Եակ* | *Քեան կամ Քին* |
|---|---|
| Միակ | — — |
| Երկեակ | Երկոքեան, քին |
| Երրեակ | Երեքեան, քին |
| Քառեակ | Չորեքեան, քին |
| Տասնեակ | Տասնեքեան, քին |
| Յիսնեակ | Յիսնեքեան, քին |
| Հարիւրեակ | Ամենեքեան, քին |

Բազմապատկութիւնը ցուցնող

| *Պատիկ* | *Իցս* |
|---|---|
| Երկպատիկ | Երկիցս |
| Եռապատիկ | Երիցս |
| Քառապատիկ | Չորիցս |
| Հնգապատիկ | Հնգիցս |
| Իննապատիկ | Ըննիցս |
| Տասնապատիկ | Տասնիցս |
| Յիսնապատիկ | Յիսնիցս |
| Հարիւրապատիկ | Հարիւրիցս, և այլն։ |

89. *Քեան կամ քին վերջացողները միայն յոգնակի կը հոլովին այսպէս.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Երկոքեան | կամ | Երկոքին | երկուքը |
| Ս. | Երկոցուն | » | Երկոցունց | երկուքին |
| Տ. | Երկոցուն | » | Երկոցունց | երկուքին |
| | յԵրկոսեան | » | յԵրկոսին | — մէջ |
| Գ. | Երկոքումբ | » | Երկոքումբք | երկուքովը |
| Բ. | յԵրկոցուն | » | յԵրկոցունց | երկուքէն |
| Հ. | զԵրկոսեան | » | զԵրկոսին | երկուքը։ |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 89. *Քեան կամ քին վերջացող ածանցեալ թիւերն ի՞նչպէս կը հոլովին։*

Ասոր յար և նման կը հոլովին Երեքեան՝ -քին, Չորեքեան՝ -քին, Հնգեքեան՝ -քին, Ամենեքեան՝ -քին, և այլն։

90. *Ակ կամ եակ և պատիկ վերջացող ածանցեալ թիւերը կը հետեւին խառն հոլովման առաջին ձևին։ Զոր օրինակ. Միակ, միակի, միակաւ. Տասնեակ, տասնեակի, տասնեակաւ։ — Երկպատիկ, երկպատկի, երկպատկաւ. Տասնապատիկ, տասնապատկի, տասնապատկաւ. Հարիւրապատիկ, հարիւրապատկի, հարիւրապատկաւ, և այլն։*

*Ծանօթ. — Իցս վերջացող թուականք մակբայի նշանակութիւն ունենալով՝ չեն հոլովիր։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիր թուականներուն հոլովն ու թիւը և հոլովել՝ թէ՛ առանձին և թէ՛ զուգադիր գոյականով։*

*Քաջութիւն մանկանց եօթանեցունց զարմացոյց զթագաւորն։ Յամին վեցերորդի Դարեհի թագաւորի կատարեցաւ տաճարն սուրբ։ Իւրովքն ամենեքումբք (բոլոր իրեններովը) ծունր եղեալ եկաց յաղօթս (աղօթքի կեցաւ)։ Կատարեցաւ (մեռաւ) այրն ի չորեքտասաներորդի աւուր ամսեանն առաջնոյ։ Դուք բոլորեքեան չէք ապրելոց (պիտի չապրիք) ի վերջնում ատենին ի ձեռաց անողորմ հրեշտակաց։ Թիւ անկելոց (մեռած) թշնամեաց եօթնպատիկ առաւել էր քան զՅունացն։ Երիցս անգամ երևեցաւ տեսիլս այս առնն երանելւոյ։ Դուք ամենեքին գայթակղելոց էք (պիտի գայթակղիք) յայսմ գիշերի։ Հարիւրապատիկ առցէ (պիտի առնու) և զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ։ Եղև բանս այս յամին հազարերորդի հինգհարիւրերորդի յիսներորդի չորրորդի։*

*ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 90. Ի՞նչպէս կը հոլովին ակ կամ եակ և պատիկ վերջացող ածանցեալ թիւերը։*



### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — *Առաջին աղջկան անունը Մարգարիտա էր։ Յիսուս շաբթուան (եօթնեակ) վեցերորդ օրուան մէջ մեռաւ։ Դոմետիանոս տասնըհինգ տարի (հայցական) թագաւորեց և ապստամբներէն սպաննուեցաւ (սպանաւ)։ Տիբերիոս մեռաւ Յիսուսի Քրիստոսի երեսուն և եօթներորդ տարին (յամին)։ Տասնեւիններորդ դարն հանճարի հրաշքներու դար է։ Աստուած տէրերու տէրն է և ամենուն ստեղծողը։ Ժողովրդապետին աղջիկը տասներկու տարեկան (ամ՝ յոգն. սեռկն.) էր։ Լիոն քաղաքը Մարսիլէն հարիւր քսան մղոն հեռու է։ Եօթներորդ օրն (յաւուրն) Աստուած իր ամէն գործերէն հանգչեցաւ (հանգեաւ)։ Մարդ ցաւով կը ծնանի ու ցաւով կը մեռնի. նոյն է ամենուն սկիզբն ու կատարածն այս աշխարհիս մէջ։*

Բ. — *Պօղոս առաքեալ Հրեաներէն հինգ անգամ ծեծ կերաւ (գան էառ), մէկ անգամ քարկոծուեցաւ (քարկոծ եղև) և երեք անգամ ալեկոծութիւն քաշեց (նաւակոծ եղև)։ Քրիստոսի հազար իննըսուներեքերորդ թուականին մէջ առաջին խաչակրութիւնը եղաւ՝ Պետրոս Անապատականին քարոզութեամբ։ Հոգւոյ հիւանդութիւնն հարիւր անգամ աւելի ծանր է քան մարմնոյ ամէն թշուառութիւնները։ Առաջին Ադամը կորուստի պատճառ եղաւ, իսկ երկրորդը մահով զամենքն ողջընցուց (կենդանացոյց)։ Երկու բանակներուն զօրապետները խորհուրդ ըրին (ի խորհուրդ մտին) խաղաղութիւն հաստատել իրարու մէջ (ընդ միմեանս)։ Մեր երկու նախածնողներն երկրաւոր դրախտէն վտարուեցան (արտաքսեցան)։*

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Ագար և Իսմայէլ*

*(Տարայարութիւն)*

*Եւ նուաղեաց ջուր ի տկէ անտի. և ընկէց զմանուկն ի ներքոյ միոյ եղեւին ծառոյ. և երթեալ նստաւ յանդիման նորա ի բացեայ իբրև վտաւանաւ, զի ասէր թէ Ոչ տեսից զմահ որդւոյն իմոյ: Եւ նստէր յանդիման նորա. ձայն բարձեալ մանկանն լայր: Եւ լուաւ Աստուած ձայնի մանկանն ի տեղւոջէ՝ ուր էր և կոչեաց Աստուած զԱգար յերկնից և ասէ ցնա: Զի՞նչ է այդ, Ագար. մի՛ երկնչիր, զի լուաւ Աստուած ձայնի որդւոյ քոյ ի տեղւոջէ այտի ուր էր: Արի առ զմանուկն քո և զօրացո՛ զնա ձեռամբ, զի յազգ մեծ արարից զնա: Եւ եբաց Աստուած զաչս նորա, և ետես ջրհոր ջրոյ կենդանւոյ. և չոգաւ ելից զտիկն ջրով և արբոյց մանկանն:*

*Բառագիտութիւն*

Նուաղեաց – Պակսեցաւ
Ընկէց – Ձգեց
Ի ներքոյ միոյ եղեւին ծառոյ – Եղեւին ծառի մը տակ
Եղեւին – Մայր ծառ
Յանդիման նորա – Անոր դիմացը
Ի բացեայ իբրև վտաւանաւ – Նետ մը ձգելու չափով հեռու
Մի՛ երկնչիր – Մի՛ վախեր
Յազգ մեծ արարից զնա – Զինքը մեծ ազգ պիտի ընեմ
Ջուր կենդանի – Վազուկ և մաքուր ջուր
Եբաց Աստուած զաչս նորա – Աստուած անոր աչքը բացաւ
Ելից զտիկն – Տիկը լեցուց
Արբոյց մանկանն – Տղուն խմցուց.

---

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

## ԴԵՐԱՆՈՒՆ

---

### ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Դերանուն եւ Դիմորոշ յօդ

91. ***Դերանունը** բառ մ'է որ անուան տեղ կը գործածուի, որպէս զի խօսքի մէջ մի և նոյն գոյականը ստէպ չկրկնուի: Օրինակի համար.*

| *Փոխանակ ըսելու* | *Պէտք է ըսել* |
|---|---|
| *Խորհուրդ արարին քահանայապետքն վասն Յիսուսի՝ սպանանել զՅիսուս. կապեցին զՅիսուս և ետուն ի ձեռս Պիղատոսի:* | *Խորհուրդ արարին քահանայապետքն վասն Յիսուսի՝ սպանանել զնա. կապեցին զնա և ետուն ի ձեռս Պիղատոսի:* |

92. *Դերանունն անուան պէս երկու թիւ ունենալէ զատ՝ երեք դէմք ալ ունի. **ես, դու, ինքն***

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 91. *Դերանունն ի՞նչ է և ուրի՞ն տեղ կը գործածուի.* — 92. *Քանի՞ թիւ և քանի՞ դէմք ունի դերանունը, ո՞ր գիրերն ասոր տեղ կը գործածուին ու ի՞նչ կ'ըսուին:*

*կամ նա, որոնք կը ցուցնեն թէ խօսողը կամ խօսքին տէրն ո՛վ է. Ես, դո՛ւ, թէ նա կամ հեռու գտնուող անձը։*

*Դերանուան տեղ կը գործածուին նաև Ս, Դ, Ն գրերը, որոնք դիմորոշ յօդ կ'ըսուին, և բառերու ծայրը դրուելով՝ անոնց դէմքն ու նշանակութիւնները կ'որոշեն։ Ուստի.*

| | | |
|---|---|---|
| Տէրս | ըսել է | ես տէր, իմ տէր, այս տէր |
| Տէրդ | » | դու տէր, քո տէր, այդ տէր |
| Տէրն | » | ինքն տէր, իւր տէր, այն տէր |

*Ծանօթ. — Բայց բուն որոշիչ յօդ՝ Ն գիրն է, ինչպէս աշխարհաբարի մէջ՝ Ն կամ Ը։ Այս յօդը շատ անգամ կը զեղչուի գրաբարի մէջ՝ հետևորդ հարցուպատասխանին համաձայն։*

93. ***Աշխարհաբար յօդ ունեցող բառ մը գրաբարի մէջ առանց Ն յօդին կը գործածուի***

1°. ***Եթէ բառին նշանակած իրը բնութեան մէջ մէկ հատ է։ Զոր օրինակ.***

| | |
|---|---|
| Լուսինը խաւարեցաւ | Խաւարեցաւ լուսին, |
| Երկինքն ամպով պատած էր | Ամպամած էր երկին, |
| Աշխարհս անօրէնութիւններով լեցուեցաւ | Լցաւ երկիր ապականութեամբք. |

2°. ***Եթէ բառին նշանակած իրին բոլոր տեսակը կը հասկցուի, և կամ ո՛ր և իցէ և ամէն բառերը զօրութեամբ կ'իմացուին։ Օրինակ.***

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 93. *Աշխարհաբար յօդ ունեցող բառ մը երբ գրաբարի մէջ առանց Ն յօդին կը գործածուի։*



| | |
|---|---|
| Մարդս հողէ ստեղծուած է | Մարդ ստեղծեալ է ի հողոյ |
| Աշունն հունձքի եղանակ է | Աշուն է եղանակ հնձոց |
| Առիւծը կենդանիներուն թագաւորն է | Առիւծ թագաւոր է կենդանեաց |
| Թագաւորը ժողովուրդին հայրն է | Թագաւոր հայր է ժողովրդեան։ |

94. ***Հայերենի մէջ գլխաւոր հինգ տեսակ դերանուն կայ. Դիմական կամ Անձնական, Ցուցական, Ստացական, Յարաբերական և Անորոշ։***

*Ծանօթ. — Դերանուններուն մէջ անոնք որ առանձին կը գործածուին՝ գոյական դերանուն են, և անոնք որ գոյականի քով կը դրուին՝ ածական դերանուն են։ Ես, Դու, Ինքն. Սա, Դա, Նա. Սոյն Դոյն, Նոյն, գոյական դերանուն են։ Իսկ Այս, Այդ, Այն. Իմ, Քո, Մեր, Ձեր, ածական դերանուն են, վասն զի ածականաբար գոյականի քով կրնան դրուիլ. ինչպէս՝ Այս տուն, այն քաղաք, գրիչ իմ, մատեան քո, պարտէզ մեր, և այլն։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել դերանուններն ու դիմորոշ յօդերը, և անոնց պատկանող գոյականները։*

*Տեսեալ Յիսուս զՊետրոս՝ ասէ ցնա. Թշնամիք իմ կենդանի (ողջ) են, և զօրացան նոքա ի վերայ իմ։ Զժողովուրդ քո Տէր խոնարհ արարին և չարչարեցին զնա, և և զամենայն նեղութիւն հասուցին ի վերայ նորա։ Փրկէ Աստուած զմեզ ի չարէ, զի նա է յոյս յուսացելոց իւրոց*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 94. *Քանի՞ տեսակ դերանուն կայ, և անոնք երբ գոյական կ'ըսուին ու երբ ածական։*

(իր վրայ յուսացողներուն)։ Լցէք զերկիր և տիրեցէք դմա։ Աշխարհս վայր է անիծից և վշտաց։ Յորժամ քաղցեաւն Դաւիթ և որ ընդ նմայն (իրեն հետ) էին։ Վաղեաց այրն յորում (որուն մէջ) էր այսն (դև) չար։ Անունս մեր մոռասցի (պիտի մոռցուի) ժամանակաւ։ Այրդ ինքնին իսկ չար է։ Յիսուս եկաց (կեցաւ) առաջի դատաւորին. եհարց զնա դատաւորն։ Փրկեաց Աստուած զՆոյ և զորդիս նորա ի ջուրցն հեղեղաց (ջրհեղեղէն)։

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Գայլը գառնուկներուն թշնամի է։ Առիւծը կենդանիներուն թագաւորն է։ Ջուրը մարդուս ծարաւը կ'անցընէ (անցուցանէ)։ Իմաստունը կ'ըսէ. Թագաւորը ժողովուրդին հայրն է։ Զօրապետը զօրքերովը մէկտեղ գերի բռնուեցաւ (վարեցաւ ի գերութիւն)։ Եզներն, ոչխարներն ու ձիերն օգտակար են մարդուս։ Ճամբորդները չկրցան ժամանակին հասնիլ (հասանել), վասն զի ձիերն յոգնած էին։ Պատմութիւնը չարութեան և առաքինութեան թանգարան է։ Ինչո՞ւ համար չհաւատացիք դուք (ոչ հաւատացէք) ամկին խօսքին. վասն զի պատմութիւնը շինծու էր։ Հրեշտակները հոգի են։ Հիւանդութիւնը շատ անգամ հոգւոյ առողջութիւն կը ծնանի։ Ինչո՞ւ համար փախցաւ (երկեաւ) Պիղատոս զՅիսուս դատապարտելու. վասն զի վկայութիւնները սուտ էին։ Իրիկուան դէմ հրեշտակները Սոդոմ Գոմոր եկան (եկին ի...)։ Տունը փլաւ (անկաւ), վասն զի հիմերն աւազի վրայ հաստատուած էին (հաստատեալ էին)։

| | |
|---|---|
| Մէկտեղ – Հանդերձ | Յոգնած – Խոնջ |
| Ձի – Երիվար | Ռամիկ – Խառնաղանճ ամբոխ |
| Օգտակար – Պիտանի | Շինծու – Ստայօդ |
| Ճամբորդ – Ճանապարհորդ | Շատ անգամ – Յոլովակի |
| Ժամանակին – Ի ժամու | Իրիկուան դէմ – Ընդ երեկս։ |



## Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Դաւիթ և Աբեսաղոմ

Արար Աբեսաղոմ կառս և երիվարս, և առաքեաց պատուիրակս յամենայն ցեղս Իսրայելի և ասէ։ Ի լսել զձայն եղջեր փողոյ՝ ասասջիք եթէ թագաւորեաց Աբեսաղոմ։ Եւ եղև ժողովուրդ բազում երթեալ ընդ Աբեսաղոմայ։ Ասէ Դաւիթ ցամենայն ծառայս իւր։ Արիք և փախիցուք։ Ել արքայ և ամենայն տուն նորա հետիոտս. ելանէր ընդ զառիվերն Ձիթենեաց, ելանէր և լայր, և ինքն երթայր բոկ։ Եւ Աբեսաղոմ և ամենայն Իսրայէլ մտին յԵրուսաղէմ։ Եւ Դաւիթ եհաս ի բանակն, և հանդէս արար զօրուն որ ընդ նմա, և կացոյց ի վերայ նոցա հազարապետս և հարիւրապետս։ Պատուէր ետ արքայ և ասէ. Խնայեսջիք ի պատանեակն իմ յԱբեսաղոմ։

#### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Պատուիրակ – Պատգամաւոր | Զառիվեր – Դարուվեր |
| Եղջեր փողոյ – Եղջիւրէ փող | Բոկ – Բոպիկ ոտքով |
| Ի լսել ձեր զձայն եղջեր փողոյ – Փողի ձայնը լսածնուդ պէս | Հանդէս արար զօրուն որ ընդ նմա – Քովի զօրքերուն թիւին տեղեկացաւ։ |
| Հետիոտս – Հետի, ոտքով | |

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

### Էական կամ անձնական դերանուններ

95. *Էական կամ Անձնական դերանուններն երեք են. Ես, Դու, Ինքն կամ Նա։*

*Ես դերանունն այսպէս կը հոլովի.*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 95. Քանի՞ և որո՞նք են էական դերանունները. հոլովէ ես դերանունը։

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ես | ես | Մեք | մենք |
| Ս. | Իմ | իմ | Մեր | մեր |
| Տ. | Ինձ | ինծի | Մեզ | մեզի |
| | յիս | իմ մէջս | ի Մեզ | մեր մէջ |
| Գ. | Ինեւ | ինծմով | Մեօք | մեզմով |
| Բ. | յինէն | ինծմէ | ի Մէնջ | մեզմէ |
| Հ. | զիս | զիս | զՄեզ | զմեզ |

96. *Այսպէս կը հոլովի Դու դերանունը.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Դու | դու | Դուք | դուք |
| Ս. | Քո | քու | Ձեր | ձեր |
| Տ. | Քեզ | քեզի | Ձեզ | ձեզի |
| | ի Քեզ | քու մէջդ | ի Ձեզ | ձեր մէջ |
| Գ. | Քեւ | քեզմով | Ձեօք | ձեզմով |
| Բ. | ի Քէն | քեզմէ | ի Ձէնջ | ձեզմէ |
| Հ. | զՔեզ | զքեզ | զՁեզ | զձեզ |

97. *Ինքն դերանունը կը հոլովի այսպէս.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ինքն | ինքը | Ինքեանք | իրենք |
| Ս. | Ինքեան | իրեն | Ինքեանց | իրենց |
| Տ. | Ինքեան | իրեն | Ինքեանց | իրենց |
| | յինքն | — մէջ | յինքեանս | — մէջ |
| Գ. | Ինքեամբ | իրմով | Ինքեամբք | իրենցմով |
| Բ. | յինքենէ | իրմէ | յինքեանց | իրենցմէ |
| Հ. | զինքն | ինքը | զինքեանս | զիրենք |

*Ծանօթ.* — Ինքն *դերանուան տեղ յաճախ* Նա *կը գործածուի, որուն հոլովումը յաջորդ դասին մէջ է:*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 96. Ի՞նչպէս կը հոլովի դու դերանունը. — 97. Հոլովէ ինքն դերանունը:



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

#### Գրաբարէ աշխարհաբար

*Որոշել հետեւեալ հատուածի մէջ եղած դերանուններուն դէմքերն ու հոլովները:*

Դու լիջիր նորա աշակերտ, մեք Մովսիսի աշակերտք եմք: Նախ դու մեծարեսջիր զայս, զի և այլք զքեզ պատուեսցեն: Ասացաւ (ըսուեցաւ) մեզ. Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո: Մի լինիր ստախօս, զի յորժամ և զճշմարիտն ասիցես (ըսես) ոչ լսեն քեզ: Գրեցի քեզ բազում անգամ, այլ դու ցայժմ (մինչեւ հիմա) անպատասխանի թողեր զիս: Բարերախտ համարիմ զիս՝ յորժամ հասանէ ինձ (կարող կ'ըլլամ) օգնել ընկերաց իմոց: Կամիմ սիրել զԱստուած, զի այնպէս հրամայէ ինքն: Որ ինքն չար է, զիա՞րդ կարէ այլում բարի լինել: Ի քէ՞ն ասես զայդ, եթէ այլք (ուրիշներն) ասացին քեզ: Նոքօք հանդերձ յափշտակեսցուք (անոնց հետ մէկտեղ պիտի յափշտակուինք) ընդ առաջ Տեառն յօդս: Յիսուս ոչ յայտնեաց զինքն ընդ ամենեսեան: Որդիք մարգարէիցն ասեն ցԵղիսէէ. Այսօր էառ (առաւ) Տէր զտէրդ ի քէն: Ի մէնջ էին արքն՝ որ բարի արարին ձեզ:

### Բ

#### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Յիսուս ըսաւ (ասէ) իւր Առաքելոց. Ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ (մատնեսցէ): Ձեզի կ'ըսեմ (ասեմ) իշխաններ, Աստուծոյ հրամաններուն հակառակ մի կենաք (մի կայք): Ո՞վ կայ (է) մեզմէ առանց մեղքի: Յիսուս փարիսեցիներուն բան մը հարցուց (եհարց), բայց անոնք չկրցան պատասխան տալ (ոչ կարացին տալ պատասխանի):

Մեզի ամենուս ըսուեցաւ. Երեսիդ քրտինքով հացդ պիտի ուտես (կերիցես զհաց քո)։ Մենք ամէն օր այսպէս Աստուծմէ մեր ապրուստը կը խնդրենք (հայցեմք զօրապահիկն մեր). Մեր հացը (հայցական) տո՛ւր մեզի այսօր։

Բ. — Հեռի ըլլայ (լիցի) մեզմէ ստախօսութիւնը, վասն զի ստախօս մարդն ինք իր անձը կ'անարգէ (անձամբ զանձն իւր թշնամանէ), և կը ստիպէ (բռնադատէ) զմեզ իր խօսքերուն չհաւատալ՝ նոյն իսկ երբ շիտակն ըսէ (զճշմարիտն ասիցէ)։ Ձեզի շատ անգամ գրեցի, բայց դուք դեռ գիս պատասխանի արժանի չհամարեցաք (ոչ համարեցայք)։ Ախորժելի՞ է քեզի բարեկարգութեան օրինակը. մօտեցիր դիտելու (մատիր ի գնին) մեղուներու փեթակին։ Ես կ'ուզեմ (կամիմ) սիրել զԱստուած, վասն զի ինքն ինծի զայն կը հրամայէ (պատուիրէ)։ Ըսաւ Յիսուս. Սորվեցէք (ուսարուք) ինծմէ՝ որ հեզ եմ և սրտով խոնարհ։ Թշնամիները քան զմեզ քիչուոր են. ձեզմով անշուշտ պիտի յաղթենք (յաղթանակեսցուք)։

Մէկը – Մի ոմն
Ամէն օր – Զօրհանապազ
Վասն զի – Քանզի
Նոյն իսկ – Նա թէ և
Երբ – Յորժամ
Ախորժելի՞ է – Իցէ՞ հաճոյական
Որ – Զի
Քիչուոր – Սակաւաթիւ

Անշուշտ – Աներկբայապէս։

Գ.

ԾԱՂԿԱՔԱՂ

*Դաւիթ և Աբեսաղոմ*

(Շարայարութիւն)

Եղև կռիւ յանտառին Եփրեմայ. և պարտեցաւ անդ զօրն Իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի. և դիպեցաւ Աբեսաղոմ. և էր հեծեալ ի ջորւոջ իւրում. եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ. պատեցաւ գլուխ Նորա ընդ կաղնեաւ, և կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր. և ջորին անց ի ներքոյ Նորա։ Եւ ետես այր մի և պատմեաց Յովաբայ։



Առ Յովաբ երիս նետս և եհար զնոսա ի սրտի Աբեսաղոմայ, և ընկէց զնա ի վիհ մեծ յանտառին։ Եւ եհաս Քուսի և ասէ ցարքայ. Աւետիք տեառն իմոյ արքայի, զի արար քեզ Տէր իրաւունս։ Խռովեցաւ արքայ և ելաց. և այսպէս ասէր ի լալ իւրում. Որդեակ իմ Աբեսաղոմ, Աբեսաղոմ որդեա՛կ իմ. ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո. ես փոխանակ քո. Աբեսաղոմ որդեակ իմ, որդեա՛կ իմ Աբեսաղոմ։

*Բառագիտութիւն*

Պարտեցաւ – Յաղթուեցաւ
Եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ – Ջորին խիտ ու մեծ կաղնիի մը տակ մտաւ
Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր – Երկնքի և երկրիս մէջտեղը կախուեցաւ
Եհար – Զարկաւ
Ընկէց զնա ի վիհ մեծ յանտառին – Զինքն անտառին մէջի մեծ փոս մը ձգեց
Ելաց – Լացաւ
Ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո – Ո՛ւր էր թէ քու տեղդ ես մեռնէի

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

### Ցուցական դերանուններ

98. ***Ցուցական դերանուններն ասոնք են. Սա, Դա, Նա. – Այս, Այդ, Այն. – Սոյն, Դոյն, Նոյն. որոնք անձ մը կամ բան մը կը ցուցնեն։***

*Ծանօթ. — Սա, Դա, Նա գոյական են, և միայն անձի կամ մարդու տեղ կը գործածուին։ Այս, Այդ, Այն. Սոյն, Դոյն, Նոյն ածական են, բայց բայի առջև դրուած ատեննին՝ գոյականի իմաստ կ'առնեն, և թէ անձանց և թէ իրաց տեղ հաւասարապէս կը գործածուին։*

99. ***Նա դերանունը կը հոլովի այսպէս.***

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 98. Քանի՞ և որո՞նք են ցուցական դերանունք. — 99. Հոլովէ նա դերանունը։

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Նա | ան | Նոքա | անոնք |
| Ս. | Նորա | անոր | Նոցա | անոնց |
| Տ. | Նմա | անոր | Նոցա | անոնց |
| | ի Նա | – վրայ | ի Նոսա | – վրայ |
| Գ. | Նովաւ | անով | Նոքօք | անոնցմով |
| Բ. | ի Նմանէ | անկէ | ի Նոցանէ | անոնցմէ |
| Հ. | զՆա | ան | զՆոսա | զանոնք |

***Այսպէս կը հոլովին նաև Սա և Դա։***

100. ***Այս, Այդ, Այն դերանունները կը հոլովին այսպէս.***

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Այս | այս |
| Ս. | Այսր, Այսորիկ | ասոր |
| Տ. | Այսմ, Այսմիկ, յԱյս | ասոր, – մէջ |
| Գ. | Այսու, Այսուիկ | ասով |
| Բ. | յԱյսմանէ | ասկէ |
| Հ. | զԱյս | այս |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Այսոքիկ | ասոնք |
| Ս. | Այսց, Այսոցիկ | ասոնց |
| Տ. | Այսց, Այսոցիկ, յԱյսոսիկ | ասոնց, – մէջ |
| Գ. | Այսոքիւք | ասոնցմով |
| Բ. | յԱյսց, յԱյսցանէ | ասոնցմէ |
| Հ. | զԱյսոսիկ | ասոնք |

***Այսպէս կը հոլովին նաև Այդ և Այն։***

*Ծանօթ.* — Այս, Այդ, Այն գոյականէ թէ առաջ և թէ ետքը կրնան դրուիլ։ Գոյականէ առաջ կարճերը կը գործածուին. Այսր բանի, Այնու գրչաւ, Այդց քաղաքաց, և այլն։ Գոյականէ ետքը սովորաբար երկայնները կը գործածուին և այս կերպս աւելի սովորական և ընտիր է։ Միայն նախադաս գոյականի ծայրը Ս, Դ, Ն յօդերէն մէկը կը դրուի դերանուան դէմքին համաձայն, այսինքն եթէ դերանունը Այս է՝ նախընթաց գոյականին ծայրը Ս կը դրուի, եթէ Այդ է՝ Դ, և եթէ Այն է՝ Ն։ Երկու կերպն ալ հետեւեալ հարցուպատասխանին մէջ կը տեսնուի։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 100. Հոլովէ այս, այդ, այն դերանունները։



101. ***Այս, Այդ, Այն դերանունները գոյականի հետ այսպէս կը հոլովին.***

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Այս տուն | Տուն-ս այս |
| Ս. | Այսր տան | Տան-ս այսորիկ |
| Տ. | Այսմ տան | Տան-ս այսմիկ, |
| | յԱյս տուն | ի Տուն-ս յայս |
| Գ. | Այսու տամբ | Տամբ-ս այսուիկ |
| Բ. | յԱյսմ տանէ | ի Տանէ-ս յայսմանէ |
| Հ. | յԱյս տուն | զՏուն-ս զայս |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Այս կամ Այսոքիկ տունք | Տունք-ս այսոքիկ |
| Ս. | Այսց կամ Այսոցիկ տանց | Տանց-ս այսոցիկ |
| Տ. | Այսց կամ Այսոցիկ տանց | Տանց-ս այսոցիկ |
| | յԱյսոսիկ տունս | ի Տուն-ս յայսոսիկ |
| Գ. | Այսոքիւք տամբք | Տամբք-ս այսոքիւք |
| Բ. | յԱյսց կամ յԱյսոցիկ տանց | ի Տանց-ս յայսցանէ |
| Հ. | զԱյս կամ զԱյսոսիկ տունս | զՏուն-ս զայսոսիկ |

***Այսպէս կը հոլովին նաեւ Այդ տուն, Տունդ այդ. – Այն տուն, Տունն այն։***

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 101. Հոլովէ այս, այդ, այն գոյականի հետ։

102. *Սոյն, Դոյն, Նոյն դերանունները կը հոլովին այսպէս.*

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Սոյն | այս |
| Ս. | Սորին, Սորուն | ասոր |
| Տ. | Սմին, ի Սոյն | ասոր, – մէջ |
| Գ. | Սովին, Սովիմբ | ասով |
| Բ. | (չունի) | — |
| Հ. | զՍոյն | այս |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Սոքին, Սոյնք | ասոնք |
| Ս. | Սոցին, Սոցուն, Սոցունց | ասոնց |
| Տ. | Սոցին, Սոցուն, Սոցունց | ասոնց |
| | ի Սոյնս, ի Սոսին | – մէջ |
| Գ. | Սովիմբք, Սոքիմբք | ասոնցմով |
| Բ. | ի Սոցունց | ասոնցմէ |
| Հ. | զՍոյնս, զՍոսին | զասոնք |

*Այսպէս կը հոլովին նաև Դոյն և Նոյն։*

ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

Ա

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել թէ ո՛ր անուան տեղ դրուած են գոյական դերանունները, և ածական դերանուններն հոլովել իրենց գոյականներուն հետ։*

Ամենեքին յարգեն զխոնարհն, վասն զի նա մեծարէ զամենեսեան։ Ծնողք և վարժապետք խիստ թուին ստա-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 102. Հոլովէ սոյն, դոյն, նոյն դերանուն-ները։



հակ մանկան, քանզի յանդիմանեն զնա։ Մանուկն զոր տեսի՝ էր որդի առնս այսորիկ։ Հրեայք կալեալ զՅիսուս՝ գան հարին զնա, և ապտակս հանեալ (ապտակելով) նմա, եդին զխաչն յուս նորա՝ որ էր գործի սպանման նորա։ Ծառ որ ոչ բերէ պտուղ՝ հատանեն զայն և ի հուր արկանեն։ Զայր ոմն՝ զոր Խուժիկն անուանէին, զնոյն դեսպան առաքեցին։ Տե՛ս, տէր, զտառապանս իմ, հայեաց ի նոսա, և մի անցցէ ակն քո ի նոցունց։ Ընկալայ զթուղթ քո, և ընթերցեալ զայն՝ բազում ինչ տեղեկացայ։ Տէր փրկէ զաղքատն, երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Գրիգոր փութաջան աշակերտ է, անոր համար ուսուցիչը զանիկա շատ կը սիրէ։ Փախիր հպարտութենէն, վասն զի անիկա է ամէն չարիքներու աղբիւրը։ Ձեր խիղճը ձեզ չի մեղադրեր (ոչ ստգտանէ), եթէ անոր ձայնին դիւրաւ մտիկ ընէք (դիւրանսացք իցէք)։ Դժբաղդ է այն աշակերտն, որ ուսմանց փոյթ չըներ (ոչ ինչ միտ դնէ)։ Այն մարդուն ընտանիքը գեղէն նոր դարձած են (դարձեալ են)։ Այդ տղաքը հարուստ մարդու որդիներ են։ Այն խօսքերէն շատ մարդիկ և կիներ հաւատքի մէջ ամրացան (հաստատեցան)։ Այս առտուան դէշ լուրն առի՞ք (առէ՞ք զգոյժ). չարագործ մը խեղդուելով սպաննուեցաւ (սպանաւ). անիկա այն աւազակներուն խումբէն էր՝ որոնց սովորական գործն է մարդասպանութիւն։

Բ. — Պէտք է վախնալ (պարտ է երկնչել) աւելի այն թշնամիէն՝ որ հոգիներու կորուստին համար կ՚աշխատի (ճգնի)։ Ուստի՞ են քեզի այդ ընծաները. այսօր դատաւորէս առի՝ փոխարէն ջանասիրութեան։ Այն օրերուն մէջ այլազգիներն Իսրայելացւոց դէմ պատերազմի ելան (ճակատեցան ի պատերազմ)։ Այն զինուորներուն զօրավարը քաջ է և պատերազմի տեղեակ. անոնցմէ ոչ ոք պիտի կորսուի

(կորիցէ)։ Ստախօս են այն մարդիկը՝ որ կը խոստանան երդումով և չեն գործադրեր (ոչ ածեն ի կատարումն)։ Աստուած ստուգիւ կը մեծարուի (փառաւորի) այն խոնարհ անձերէն՝ որոնց գործերն ու խօսքերն իրարու համաձայն են (համաձայն են իրերաց)։ Որդեակ, զգուշացիր (զգոյշ լեր) չարերուն բազմութենէն, անոնց ճամբէն հեռացիր (խոտորեա), ինչու որ անոնք քեզ ի կորուստ կ'առաջնորդեն։

Հպարտութիւն — Ամբարտաւանութիւն
Նոր — Այն ինչ
Հարուստ — Մեծատուն
Դէմ — Ընդդէմ
Քաջ — Քաջարի
Բազմութիւն — Ժողով

Ստուգիւ — Ճշմարտապէս
Խեղդուելով — Խեղդամահ
Սովորական — Առօրեայ
Ընծայ — Պարգև
Փոխարէն — Ի վարձ
Պատերազմի տեղեակ — Պատերազմափորձ։

Գ.

ԾԱՂԿԱՔԱՂ

### *Մահ Հերովդի*

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն. և սպան զՅակոբոս եղբայր Յովհաննու սրով։ Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնացիս։ Նոքա առհասարակ եկին առ նա, և ի բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ արքայի, խնդրէին զխաղաղութիւն՝ վասն կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ։ Յաւուր միում յերևելւոջ Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան, և նստէր յատեանի, և խօսէր ընդ նոսա հրապարակաւ։ Եւ ամբոխն աղաղակէր թէ Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ։ Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ. և եղեալ որդնալից՝ սատակեցաւ։



### *Բառագիտութիւն*

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ — Այն ատենները
Արկ ձեռն — Ձեռք զարկաւ, սկսաւ
Էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնացիս — Հերովդէս Տիւրացւոց և Սիդովնացւոց վրայ բարկացած էր
Ի բանի արարեալ — Համոզելով

Արքունիք — Թագաւորական գանձ, պալատ
Անդէն — Նոյն ատեն, մէկէն
Եհար — Զարկաւ
Փոխանակ զի — Որովհետև, քանի որ
Եղեալ որդնալից — Որդերով լեցուելով, որդնոտելով։

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Ստացական եւ Յարաբերական դերանուններ

103. *Ստացական դերանուն* կ'ըսուին *Իմ*, *Քո*, *Իւր*, *Մեր*, *Ձեր*. *Սորա*, *Դորա*, *Նորա*, *Սոցա*, *Դոցա*, *Նոցա*, որոնք՝ ինչպէս տեսանք, էական և ցուցական դերանուններուն սեռականներն են, և թէ առանձին իբրև գոյական, և թէ ածականաբար գոյականի հետ կը գործածուին և կանոնաւոր կերպով կը հոլովին պարզ հոլովման Դ. ձևին համեմատ։ Օրինակ.

Իմ, իմոյ, իմով. Իմք, իմոց, իմովք։
Քո, քոյոյ, քոյով. Քոյք, քոյոց, քոյովք։
Իւր, իւրոյ, իւրով. Իւրք, իւրոց, իւրովք։
Մեր, մերոյ, մերով. Մերք, մերոց, մերովք։
Ձեր, ձերոյ, ձերով. Ձերք, ձերոց, ձերովք։
Սորա, սորայոյ. Դորա, դորայոյ. Նորա, նորայոյ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 103. Ո՞ր բառերն ստացական դերանուն կ'ըսուին և ի՞նչպէս կը հոլովին։

*Ծանօթ.* — Ստացական դերանուանք՝ գոյականի հետ եղած ատեն՝ յոգնակի ուղղականի ք և նախդրիւ տրականի ու հայցականի ս գիրը չեն առներ. ուստի չըսուիր զհրամանս մերս կամ ձերս. գոյականն ալ յօդ չառներ, չըսուիր սովորաբար տունս իմ, տունն քո, տունն նորա, այլ պէտք է ըսել՝ տուն իմ կամ տունս, տուն քո կամ տունդ, տուն նորա կամ տունն։

104. **Քո հոլովման երկու ձև ունի, գոյականի նախադաս եղած ատեն՝ կանոնաւոր կերպով կը հոլովի. յետադաս եղած ատեն՝ ամփոփ ձև մ'ունի։ Պարզութեան համար հոս գոյականի հետ երկու կերպն ալ դնենք։**

Եզակի

| | |
|---|---|
| Ո. Քո հրաման | Հրաման քո |
| Ս. Քոյոյ հրամանի | Հրամանի քոյ |
| Տ. Քոյոյ հրամանի | Հրամանի քում |
| Գ. Քոյով հրամանաւ | Հրամանաւ քով |
| Բ. ի Քոյոյ հրամանէ | ի Հրամանէ քումմէ |
| Հ. զՔո հրաման | զՀրաման քո |

Յոգնակի

| | |
|---|---|
| Ո. Քո հրաման | Հրամանք քո |
| Ս. Քոյոց հրամանաց | Հրամանաց քոց |
| Տ. Քոյոց հրամանաց | Հրամանաց քոց |
| ի Քո հրամանս | ի Հրամանս քո |
| Գ. Քոյովք հրամանօք | Հրամանօք քովք |
| Բ. ի Քոյոց հրամանաց | ի Հրամանաց քոց |
| Հ. զՔո հրամանս | զՀրամանս քո |

105. **Յարաբերական դերանուն կ'ըսուի՝ Որ**

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 104. *Ի՞նչ մասնաւոր փոխելիք կայ քո դերանուան վրայ.* — 105. *Ո՞րն է յարաբերական դերանունն և ինչո՞ւ այսպէս կը կոչուի։*



**կամ Ո, որ կը դրուի, առաջուց ըսուած մէկ կամ աւելի բառերու տեղ՝ որոնք յարաբերեալ կ'ըսուին։ Զոր օրինակ, այս խօսքին մէջ. աշակերտ որ ոչ ուսանի զդաս իւր՝ ոչ է արժանի մրցանակաց, որը աշակերտին տեղ դրուած է և կ'ըսուի յարաբերական, իսկ աշակերտ բառն՝ յարաբերեալ։**

106. **Որ կամ Ո յարաբերականն այսպէս կը հոլովի։**

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. Որ | Ո | որ |
| Ս. Որոյ | Ոյր | որուն |
| Տ. Որում, յՈր | Ում, յՈ | որուն, որուն մէջ |
| Գ. Որով | (չունի) | որով |
| Բ. յՈրմէ | յՈւմէ | որմէ |
| Հ. զՈր | զՈ | որ |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. Որք | Ոյք | որոնք |
| Ս. Որոց | Ոյց | որոնց |
| Տ. Որոց, յՈրս | Ոյց, յՈյս | որոնց մէջ կամ վրան |
| Գ. Որովք | (չունի) | որոնցմով |
| Բ. յՈրոց | յՈյց | որոնցմէ |
| Հ. զՈրս | զՈյս | զորոնք |

*Ծանօթ.* — Յարաբերական դերանունը բնաւ յօդ չառներ։ **Որ** թէ անձերու և թէ իրերու համար կը գործածուի. իսկ **Ո**, միայն անձի տեղ և սովորաբար հարցական իմաստով։ Զոր օրինակ. **Ո՞** (ո՞վ), **Ո՞յր** (որո՞ւն), **յՈւմէ՞** (որմէ՞), **Ո՞յք** (որո՞նք), և այլն։

107. **Որ յարաբերականը հարցական իմաստով**

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 106. *Հոլովէ որ կամ ո յարաբերականը.* — 107. *Որ յարաբերականը հարցական իմաստով ինչպէս կը գործածուի։*

*ածականաբար գոյականէն առաջ կը դրուի և անոր հետ թուով ու հոլովով կը համաձայնի, բայց ի յոգնակի ուղղականէն և նախդրիւ հոլովներէն։ Ինչպէս.*

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Ո՞ր լեզու | Ո՞ր լեզուք ո՞ր լեզուներ |
| Ս. Որո՞յ լեզուի | Որո՞ց լեզուաց » լեզուներու |
| Տ. Որու՞մ լեզուի, յո՞ր լեզու | Որո՞ց լեզուաց » լեզուներու |
| Գ. Որո՞վ լեզուաւ | Որո՞վք լեզուօք » լեզուներով |
| Բ. յՈրմէ՞ լեզուէ | յՈրո՞ց լեզուաց » լեզուներէ |
| Հ. զՈ՞ր լեզու | զՈ՞ր լեզուս » լեզուները |

108. *Խօսքի մէջ ընդհանրապէս յարաբերականը յարաբերեալէն վերջը կը դրուի, ինչպէս է աշխարհաբարի մէջ։ Բայց գրաբարին աւելի յատուկ և ընտիր համարուած է զայն յարաբերեալէն առաջ դնել։ Ուստի.*

| Ընտրելագոյն է ըսել | Փոխանակ ըսելու |
|---|---|
| Որ ուսանի զդաս իւր աշակերտ՝ արժանի է մրցանակաց | Աշակերտ որ ուսանի զդաս իւր՝ արժանի է մրցանակաց |
| Ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից | Ո՞ւր է արքայն հրէից որ ծնաւ |
| Դեմետրիոս և որ ընդ նմա էին ճարտարք | Դեմետրիոս և ճարտարք որ ընդ նմա էին։ |

109. *Երբ յարաբերեալը դերանուն ըլլայ՝ շատ անգամ կը զեղչուի և որ միայն դրուելով՝ ինք զօրութեամբ կը հասկցուի։ Օրինակ.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 108. Յարաբերակա՞նն առաջ կը դրուի թէ յարաբերեալը. — 109. Յարաբերականն առանց յարաբերեալին կրնա՞յ գործածուիլ և ե՞րբ։



| Պէտք է ըսել | Փոխանակ ըսելու |
|---|---|
| Որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի գնասցէ | Նա որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի գնասցէ |
| Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ | Նա որ ձեզ լսէ՝ ինձ լսէ |
| Երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն | Երանի այնոցիկ որք ոչ իցեն տեսեալ և հաւատասցեն։ |

110. *Երբ դերանուն յարաբերեալն այսպէս զօրութեամբ իմացուի, շատ անգամ յարաբերականն անոր հոլովը կ'առնէ, այսինքն՝ ինչ հոլով որ պիտի ունենար դերանուն յարաբերեալը, եթէ իրապէս դրուելու ըլլար խօսքին մէջ։ Օրինակի համար.*

| Սովորաբար կ'ըսուի | Փոխանակ ըսելու |
|---|---|
| Որում խնդրէ ի քէն՝ տուր | Նմա որ խնդրէ ի քէն՝ տուր |
| Ոմանք յորոց անդ կային | Ոմանք ի նոցանէ որք անդ կային |
| Խօսել չհամարձակէին զոր ինչ եղեւ | Խօսել չհամարձակէին զայն որ ինչ եղեւ։ |

**Ծանօթ.** — Բայց նաեւ՝ երբ յարաբերեալը դերանուն չըլլայ ու նիւթապէս դրուի յարաբերականէն ետքը, այս երկուքը կրնան երբեմն իրարու հոլովն առնել։ Օրինակ. *Բազում մարդասիրութիւն ցուցանէր որոց ի քաղաքին էին ախտաժէտք*. այսինքն *ախտաժետից՝ որք ի քաղաքին էին*։ — *Եւ զոր աստ առ մեզ մնացին մատեանք՝ յղեցից քեզ*. այսինքն, *և զմատեանս՝ որք մնացին*, և այլն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 110. Յարաբերականն առանց դերանուն յարաբերեալին ինչ հոլով կը դրուի։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել ստացական դերանունները, և գոյականի հետ եղածները հոլովել։*

Ա. — Որդեակ, խօսեաց միշտ ի բարի (աղէկութեան համար) քոյոց ծնողաց։ Ամենեցուն են իւր թերութիւնք։ Մատեան զոր գտի՝ ոչ քո է, ոչ իմ, ոչ դորա, ոչ մեր և ոչ ձեր, այլ այնմ՝ որ կորոյսն զայն։ Կամիս զի պատուեցից զբանս քո. պատուեա զիմս։ Եղբայր իմ եկն առ իս։ Տուն մեր գեղեցիկ է յոյժ։ Ծառք պարտիզին մերոյ լի են պտղովք։ Մեռաւ այր իւր։

*Նշանակել յարաբերական դերանունները ու յարաբերեալները, և տեղափոխել ըստ պահանջի։*

Բ. — Մեծ է Աստուած որ արար զերկինս և զերկիր։ Տեսի այր մի՝ որ բարձեալ ունէր փունջ ծաղկանց։ Զբանս զոր լուիցես՝ պատմեսջիր։ Բանն վասն որոյ (որուն համար) պատուիրեցեր՝ արարի։ Որ բարւոք վերակացու լինին երիցունք (քահանայ) կրկին պատուոյ արժանի եղիցին (պիտի ըլլան)։ Պիղատոս ասէր ցՀրեայս վասն Յիսուսի. Վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոց դուք չարախօսէք զդմանէ (ատոր վրայօք)։ Դու ոչ մտանես, և զորս մտանեն՝ ընդդէմ կացեալ արգելուս։ Իբրև լուան որ յԵրուսաղէմ Առաքեալքն էին՝ թէ և ի Սամարիա ընկալաւ (ընդունեցաւ) բանն Աստուծոյ, առաքեցին զոմանս (մէկ քանին) յեղբարց։ Յորմէ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցանէր զերեսս։ Երանի որոց սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն (պիտի տեսնեն)։



### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Անգութ Ներոնն իր մայրը սպաննեց (սպան)։ Տղաք, ձեր ծնողներուն հնազանդեցէք (հնազանդ լերուք)։ Տէրն իր ծառաներուն բարկացաւ։ Այս գիրքը ոչ իմս է, ոչ քուկդ, ոչ անորը, այլ ասորն է։ Առաքեալներն ամէն բան թողուցին (թողին) և իրենց վարդապետին հետեւեցան (գնացին զհետ)։ Յիսուս Քրիստոս մեր հոգիներուն բժիշկն է։ Քու փուճ խօսքերովդ չես կրնար (ոչ կարես) խաբել զիս։ Բարեկամներէդ մէկն այսօր բանտ դրուեցաւ (եդաւ)։ Տէր, ողորմէ ինծի քու ծառայիդ։ Քրիստոս իր անձը յայտնեց աշակերտներուն։ Ձեր այդ գրքերէն մէկը պզտիկ եղբօրս փոխ տուէք (տուք)։ Իմ հօրեղբօրս երկու ծառաներն իրենց ծառայակիցներէն շատ ծեծ կերան (արբին գան բազում)։

Բ. — Այս հրահանգները շատ դժուարին չեն, կ'ուզեմ սորվիլ (կամիմ ուսանել) և ուսուցչէս գովութիւն առնել (առնուլ)։ Գարունը մեր մանկութեան օրերուն օրինակ է։ Իմ հայրս ու մայրս հարուստ չեն, բայց բարեպաշտ են, ինչպէս նաև քուկիններդ։ Ջուրն ու գինին՝ որոնք շատ օգտակար են մարդուս, երբեմն մեծ վնաս կ'ընեն (գործեն)։ Ստութիւնն ու չարախօսութիւնն՝ որոցմէ կը զզուինք (գարշիմք), շատ սրտերու տիրած են (տիրացեալ են)։ Այն մարդն որմէ այս առաւօտ (յայսմ առաւօտու) ստակ ընդունեցայ (ընկալայ), յանկարծակի մեռաւ (յանկարծամահ եղև)։ Հրեաներն Յիսուսի ըսին. Ո՞ր իշխանութեամբ կ'ընես այդ բանը (առնես զ...)։ Ինչո՞ւ համար մեր հրամաններուն դէմ կեցաք (ընդդէմ կացէք)։ Հարցուց (եհարց) Նաւապետն Յովնանու. Ո՞ր աշխարհէն ես կամ ո՞ր ժողովուրդէ։ Որոնցմով կը մեղանչէ մարդ, նոյներով կը տանջուի (տանջի)։

Ամէն բան – Զամենայն ինչ
Փուճ – Սնոտի

Ինչպէս նաև – Որպէս և
Ինչո՞ւ համար – Վասն էր

Գ.

ԾԱՂԿԱՔԱՂ

### Յայտնի Աստուած Մովսիսի ի Քորէբ

Մովսէս արածէր զխաշինս Յոթորայ աներոյ իւրոյ. ած զխաշինսն յանապատ եւ եկն ի լեառնն Աստուծոյ ի Քորէբ: Երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենւոյն. եւ տեսանէր զի մորենին վառեալ էր եւ ոչ այրէր: Եւ ասէ Մովսէս. Անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ, զի՞ է՝ զի ոչ այրիցի մորենին: Իբրեւ ետես Տէր եթէ մերձենայ տեսանել, կոչեաց զնա ի միջոյ մորենւոյն, եւ ասէ. Մովսէս, Մովսէս, մի՛ մերձենար այսր. լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է: Ես եմ Աստուած հօր քոյ, Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակոբայ: Եւ դարձոյց Մովսէս զերեսս իւր, քանզի երկնչէր հայել առաջի Աստուծոյ:

Բառագիտութիւն

Բոցով հրոյ ի միջոյ մորենւոյն — Կրակի բոցով մորենիին մէջէն
Անցեալ տեսից — Երթամ նայիմ
Զի՞ է զի — Ինչպէս կ'ըլլայ որ
Լոյծ զկօշիկս քո — Կօշիկներդ հանէ՛
Տեղիդ յորում կաս դու ի դմա — Այդ տեղն ուր կեցեր ես դուն,

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

### Անորոշ դերանուանք

111. *Անորոշ դերանուն կամ Միջակ անուն կ'ըսուին քանի մը բառեր՝ որ որոշ իմաստ մը*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 111. Ո՞ր բառերն անորոշ դերանուն կամ միջակ անուն կ'ըսուին. և գլխաւորները որո՞նք են:



*չեն յայտներ, և տեղին համեմատ՝ թէ ածական են և թէ գոյական: — Գրաբարի մէջ գլխաւոր Անորոշ դերանուններն ասոնք են. Ոմն, Ոք. Իմն կամ Ինչ և Զինչ. Այլ, Միւս, Իւրաքանչիւր. Ամենայն, Միմեանց, Իրերաց:*

Ծանօթ. — Ոմն, ոք՝ ինչպէս նաև Իւրաքանչիւր, Միմեանց և Իրերաց անձերու համար կը գործածուին, և Իմն կամ Ինչ և Զի՞նչ՝ անշունչ իրերու համար միայն. իսկ Այլ, Միւս, Ամենայն՝ թէ անձերու և թէ իրերու համար:

112. *Ոմն և Ոք այսպէս կը հոլովին.*

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն | Ոք | մարդուն | մէկը |
| Ս. | Ուրումն | Ուրուք | » | մէկուն |
| Տ. | Ումեմն | Ումեք | » | մէկուն |
| | յՈմն | յՈք | » | - վրայ |
| Գ. | Ոմամբ | (չունի) | » | մէկով |
| Բ. | յՈւմեմնէ | յՈւմեքէ | » | մէկէ |
| Հ. | զՈմն | զՈք | » | մէկը |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոմանք | քանի մը | անձեր |
| Ս. | Ոմանց | » | անձերու |
| Տ. | Ոմանց | » | անձերու |
| | յՈմանս | » | - վրայ |
| Գ. | Ոմամբք | » | անձերով |
| Բ. | յՈմանց | » | անձերէ |
| Հ. | զՈմանս | » | անձեր |

113. *Այս դերանուններն երբ ածականի մըտքով առնուին՝ իրենց գոյականներէն եաքը կը*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 112. Հոլովէ ոմն և ոք. — 113. Այս դերանունները ածականի մտքով ի՞նչպէս կը գործածուին:

դրուին միշտ, ու թուով ու հոլովով կը համաձայնին։ Օրինակի համար.

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Այր ոմն | Այր ոք | մարդ | մը |
| Ս. | Առն ուրուք | Առն ուրուք | մարդու | » |
| Տ. | Առն ումեմն | Առն ումեք | մարդու | » |
| | յԱյր ոմն | յԱյր ոք | – վրայ | |
| Գ. | Արամբ ոմամբ | (չունի) | մարդով | » |
| Բ. | յԱռնէ ումեմնէ | յԱռնէ ումեքէ | մարդէ | » |
| Հ. | զԱյր ոմն | զԱյր ոք | մարդ | » |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Արք ոմանք | քանի մը | մարդեր |
| Ս. | Արանց ոմանց | » | մարդերու |
| Տ. | Արանց ոմանց | » | մարդերու |
| | յԱրս ոմանս | » | – վրայ |
| Գ. | Արամբք ոմամբք | » | մարդերով |
| Բ. | յԱրանց ոմանց | » | մարդերէ |
| Հ. | զԱրս ոմանս | » | մարդեր |

114. *Ոք շատ անգամ Ո յարաբերականին հետ կը բանի հարցական իմաստով, և մէկտեղ կը հոլովին։ Օրինակ.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ո՞ ոք | ո՞վ | Ո՞յք ոմանք | որո՞նք |
| Ս. | Ո՞յր ուրուք | որո՞ւն | Ո՞յց ոմանց | որո՞նց |
| Տ. | Ո՞ւմ ումեք | որո՞ւն | Ո՞յց ոմանց | որո՞նց |
| | յՈ՞ ոք | որո՞ւն վրայ | յՈ՞յս ոմանս | – վրայ |
| Գ. | (չունի) | — | (չունի) | — |
| Բ. | յՈւմէ՞ ումեքէ | որմէ՞ | յՈ՞յց ոմանց | որոնցմէ՞ |
| Հ. | զՈ՞ ոք | զո՞վ | զՈ՞յս ոմանս | զորո՞նք |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 114. Ոք ի՞նչ իմաստով և ի՞նչպէս ո յարաբերականին հետ կը գործածուի։



115. *Իմն կամ ինչ և Զի՞նչ միայն եզակի կը հոլովին հետևեալ կերպով.*

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Իմն, Ինչ | բան մը | Զի՞նչ | ի՞նչ բան |
| Ս. | Իրիք | բանի մը | Է՞ր | ի՞նչ բանի |
| Տ. | Իմիք | բանի մը | Ի՞մ, Հի՞մ | ի՞նչ բանի |
| | յԻմն, յԻնչ | – մէջ | յԻ՞նչ | – մէջ |
| Գ. | Իւիք | բանով մը | Ի՞ւ | ի՞նչ բանով |
| Բ. | յԻմեքէ | բանէ մը | յԻմէ՞ | ի՞նչ բանէ |
| | յԻմեմնէ | | | |
| Հ. | զԻմն, զԻնչ | բան մը | Զի՞նչ | ի՞նչ բան |

116. *Իմն կամ ինչ առանձին բնաւ չեն գործածուիր, այլ միշտ կամ ածականի և կամ գոյականի մը յետադաս ըլլալով՝ եզակիին մէջ հոլովով անոր հետ կը համաձայնին. իսկ յոգնակի ամէն հոլովներու մէջ սովորաբար իմն կամ ինչ կը մնայ անհամաձայն։ Օրինակ.*

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Բան իմն, ինչ | խօսք մը | Բանք | իմն / ինչ |
| Ս. | Բանի իրիք | խօսքի մը | Բանից | |
| Տ. | Բանի իմիք | խօսքի մը | Բանից | |
| | ի Բան իմն, ինչ | – մէջ | ի Բանս | |
| Գ. | Բանիւ իւիք | խօսքով մը | Բանիւք | |
| Բ. | ի Բանէ իմեքէ | խօսքէ մը | ի Բանից | |
| | ի Բանէ իմեմնէ | | | |
| Հ. | զԲան իմն, ինչ | խօսք մը | զԲանս | |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 115. Հոլովէ իմն կամ ինչ և զի՞նչ. — 116. Իմն կամ ինչ առանձին կրնա՞ն գործածուիլ և թէ ածական թէ գոյական բառերու հետ ի՞նչպէս կը համաձայնին։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել անորոշ դերանունները, ու հոլովել թէ՛ իրենց գոյականներով թէ՛ առանձին։*

*Ոչ ոք գիտաց զայն բան։ Առն ուրումն էին երկու որդիք։ Զգին արծաթոյն ոչ պահանջեաց յումեքէ։ Ո՞յր որդի է մանուկդ այդ։ Յումանս ի մարդկանէ եղև յայտնութիւն։ Ոչ ուրուք անկաւ ի միտս։ Ո՞յք ոմանք իցեն առքա։ Գնեալ կտաւ ի վաճառականաց՝ հատուցաք դահեկանս ինչ։ Ահեղ իմն է տեղիս այս և ես ոչ գիտէի։ Ի՞ւ կարծես երջանկանալ յաշխարհի աստ (աշխարհիս մէջ)։ Երկու ինչ հակառակ կան քեզ։ Առաքեալք ոչ իմիք կարօտացան յերկրաւորաց։ Անանիա եբեր (բերաւ) մասն ինչ ի գնոց գեղջն և եդ առ ոտս Առաքելոց։ Յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ կնաւ իւրով։ Աստուած ոչ գարշի յումեքէ յորոց արարն։ Ոմանք յորոց անդ կային՝ ասեն. Հայհոյէ դա։ Կողոպտեցին հանին (վերցուցին) ի նմանէ, և ոչ ինչ թողին զոր ընդ իւրն (քովը) ունէր։ Ընկերք մանկանդ այդորիկ ատեան (կ՚ատեն) զդա։ Զքոյս ի քոյոցս քեզ մատուցանեմք։ Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատւոյ արժանի եղիցին։*

### Բ

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — *Յիսուս յարութենէն ետքը տասնումէկ աշակերտներուն երևցաւ։ Այս մարդուն որդին թշուառ է։ Ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ (մատնելոց է)։ Յակոբ տասներկու որդւոց հայր էր, որոնցմէ ամենէն պզտիկն Եգիպտոսի տէր եղաւ (եղև)։ Եթէ մէկը նախատէ (թշնամանիցէ) զքեզ կամ անիրաւութիւն մ՚ընէ (արասցէ), թող իրեն։ Ժողովրդէն քանի մը հոգի Պօղոսի խօսքերուն հաւանեցան։ Իմ գործերս շատ շահաւոր են, բայց քուկիններդ իմիններէս աւելի օգտակար են։ Ժողովուրդին մէջ մարդ մը կար (էր) որուն ձեռքը չորցած էր (գօսացեալ էր)։ Որո՞նց են այդ գրքերը։ Իմ ողորմած հօրեղբայրս օրին մէկն աղքատի մը մէկ քանի դահեկան տուաւ (ետ)։*



Բ. — *Ի՞նչ բանով պակաս է առաքինի մարդն, իրաւցընէ և ոչ բանով մը։ Ո՞ր մէկուն ոչխարն եթէ ջրհոր իյնայ շաբաթ օրը (անկանիցի ի շաբաթու), զանիկա չի հաներ (ոչ հանցէ)։ Հարուստ մարդու մը պալատն այրեցաւ։ Թշուառ աղքատ մը չէր գիտեր (ոչ գիտէր) որմէ՞ ողորմութիւն խնդրել։ Մարմնոյ մասի մը ցաւն՝ ամէն անդամներուն ցաւ քաշել կու տայ (տայ վշտակրել)։ Որո՞ւն հրամանով այդ տաճարը կը շինէք։ Անիկա որ իր անձին չար է, որո՞ւն պիտի ըլլայ (լինիցի) բարի։ Ի՞նչ բանէ կը վախնայ (երկնչի) առաքինի մարդն. Աստուծմէ միայն, և ոչ ուրիշ մէկէ մը։*

Օրին մէկն – Յաւուր միում | Իրաւցընէ – Ապաքէն
Ուրիշ մէկն – Այլ ոք։

### Գ.

ԾԱՂԿԱՔԱՂ

*Յայտնի Աստուած Մովսիսի ի Քորէբ*

(Շարայարութիւն)

*Եւ ասէ Տէր ցՄովսէս. Տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս, և իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոցն, և տանել զնոսա յերկիր բարի և ընդարձակ։ Եւ արդ եկ առաքեցից զքեզ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց։ Եւ ասէ Մովսէս ցԱստուած. Ո՞վ եմ ես, զի երթայցեմ առ Փարաւոն։ Ահա ես երթեալ առ որդիսն Իսրայելի ասիցեմ ցնոսա. Աստուած հարցն ձերոց առա-*

քեաց զիս առ ձեզ, և հարցանիցեն զիս թէ զի՞նչ անուն է նորա, զի՞նչ ասացից ցնոսա։ Այսպէս ասասցես ցորդիսն Իսրայէլի. Որ Էն առաքեաց զիս առ ձեզ, այս է անուն իմ յաւիտենական։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Արդ եկ առաքեցից զքեզ առ փարաւոն արքայ Եգիպտացւոց – Եկուր զքեզ Եգիպտացւոց փարաւոն թագաւորին ղրկեմ | Զի՞նչ անուն է նորա – Անոր անունն ի՞նչ է<br>Որ Էն – Անիկա որ է, որ կայ<br>Հարցանիցեն զիս – Ինծի հարցնեն, |

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախորդ դասին

117. *Զի՞նչ և ինչ շատ անգամ հարցական իմաստով միասին կը գործածուին և երկուքն ալ կը հոլովուին այսպէս.*

| | | |
|---|---|---|
| Ո. | Զի՞նչ ինչ | ի՞նչ բան |
| Ս. | Է՞ր իրիք | » բանի |
| Տ. | Ի՞մ իմիք | » բանի |
| | յԻ՞նչ ինչ | » – մէջ |
| Գ. | Ի՞ւ իւիք | » բանով |
| Բ. | յիմէ՞ իմեքէ | » բանէ |
| Հ. | Զի՞նչ ինչ | » բան |

Ծանօթ. — Այլ, Միւս, Իւրաքանչիւր կը հոլովին պարզ հոլովման Դ. ձևին յար և նման, և վերջին երկուքին յոգնակի գործածութիւնը շատ սովորական չէ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 117. Զի՞նչ և ինչ մէկտեղ ի՞նչպէս կը գործածուին։



118. *Այլ գոյականի հետ թէ՛ առաջ և թէ՛ ետքը կրնայ դրուիլ, և թուով ու հոլովով անոր հետ կը համաձայնի։ Զոր օրինակ.*

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այլ օրինակ | Օրինակ այլ | ուրիշ կերպ |
| Ս. | Այլոյ օրինակի | Օրինակի այլոյ | » կերպի |
| Տ. | Այլում օրինակի | Օրինակի այլում | » կերպի |
| | յԱյլ օրինակ | յՕրինակ այլ | » – մէջ |
| Գ. | Այլով օրինակաւ | Օրինակաւ այլով | » կերպով |
| Բ. | յԱյլմէ օրինակէ | յՕրինակէ այլմէ | » կերպէ |
| Հ. | զԱյլ օրինակ | զՕրինակ այլ | » կերպը |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այլ օրինակք | Օրինակք այլք | ուրիշ կերպեր |
| Ս. | Այլոց օրինակաց | Օրինակաց այլոց | » կերպերու |
| Տ. | Այլոց օրինակաց | Օրինակաց այլոց | » կերպերու |
| | յԱյլ օրինակս | յՕրինակս այլս | » – մէջ |
| Գ. | Այլովք օրինակօք | Օրինակօք այլովք | » կերպերով |
| Բ. | յԱյլոց օրինակաց | յՕրինակաց այլոց | » կերպերէ |
| Հ. | զԱյլ օրինակս | զՕրինակս այլս | » կերպերը |

119. *Միւս գոյականէ առաջ կը դրուի և հոլովով ու թուով կը համաձայնի։ Զոր օրինակ.*

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Միւս օր | միւս օր |
| Ս. | Միւսոյ աւուր | » օրուան |
| Տ. | Միւսում աւուր | » օրուան |
| | ի Միւս օր | » – մէջ |
| Գ. | Միւսով աւուրբ | » օրով |
| Բ. | ի Միւսմէ օրէ | » օրէն |
| Հ. | զՄիւս օր | » օրը |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 118. Այլ գոյականի հետ ի՞նչպէս կը գործածուի. — 119. Միւս գոյականի հետ ի՞նչպէս կը գործածուի։

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ո. Միւս աւուրք | միւս | օրեր |
| Ս. Միւսոց աւուրց | » | օրերու |
| Տ. Միւսոց աւուրց | » | օրերու |
| ի Միւս աւուրս | » | – մէջ |
| Գ. Միւսովք աւուրբք | » | օրերով |
| Բ. ի Միւսոց աւուրց | » | օրերէ |
| Հ. զՄիւս աւուրս | » | օրերը |

120. *Իւրաքանչիւր գոյականէ թէ առաջ և թէ վերջը կը դրուի, եզակի միայն և անհամաձայն: Զոր օրինակ.*

*Առաջ դրուած*

| | | |
|---|---|---|
| Ո. Իւրաքանչիւր ոք | ամէն | մէկը |
| Ս. Իւրաքանչիւր ուրուք | » | մէկուն |
| Տ. Իւրաքանչիւր ումեք | » | մէկուն |
| յԻւրաքանչիւր ոք | » | – վրայ |
| Գ. Իւրաքանչիւր ումամբ | » | մէկով |
| Բ. յԻւրաքանչիւր ումեքէ | » | մէկէ |
| Հ. զԻւրաքանչիւր ոք | » | մէկը |

*Ետքը դրուած*

| | | |
|---|---|---|
| Ո. Այր իւրաքանչիւր | ամէն | մարդ |
| Ս. Առն իւրաքանչիւր | » | մարդու |
| Տ. Առն իւրաքանչիւր | » | մարդու |
| յԱյր իւրաքանչիւր | » | – վրայ |
| Գ. Արամբ իւրաքանչիւր | » | մարդով |
| Բ. յԱռնէ իւրաքանչիւր | » | մարդէ |
| Հ. զԱյր իւրաքանչիւր | » | մարդը |

*Ծանօթ.* — *Այսպէս կը հոլովին նաեւ երկաքանչիւր և*





*անձնիւր: Նմանապէս ամենայն գոյականէ առաջ թէ ետքը (քիչ անգամ) անհամաձայն կը մնայ: Ուստի կ'ըսուի. Ամենայն ոք, ամենայն ուրուք, ամենայն ումեք, և այլն:*

121. *Միմեանց և իրերաց գոյականաբար միշտ առանձին կը գործածուին, և յոգնակի միայն կը հոլովին: Այսպէս.*

| | | |
|---|---|---|
| Ո. (երկուքն ալ չունին) | | |
| Ս. Միմեանց | Իրերաց | մէկմէկու |
| Տ. Միմեանց | Իրերաց | մէկմէկու |
| ի Միմեանս | յԻրեարս | – վրայ |
| Գ. Միմեամբք | Իրերօք | մէկմէկով |
| Բ. ի Միմեանց | յԻրերաց | մէկմէկէ |
| Հ. զՄիմեանս | զԻրեարս | մէկզմէկ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

Գրաբարէ աշխարհաբար

*Լուծել հետեւեալ հրահանգին դերանուններն, նշանակելով տեսակը, թիւը, հոլովը, և այլն:*

Ա. — *Զի՞նչ ինչ արդեօք հաւանեցոյց զնոսա: Ի՞մ իմիք կարօտ էին նախնի հաւատացեալք: Այլով անուամբ կոչի դա: Երկնչել պարտ է յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ: Գնաց այր իւրաքանչիւր ի տուն իւր: Առ ինձ, թէ իւիք մեծացաւ այրն այն: Ճգնաւորք երկու բնակէին սակաւ ինչ հեռի ի միմեանց, և ոչ տեսին երբեք իւրաքանչիւր զընկեր իւր: Որոյ անուն ահ արկանէր (կը վախցնէր) բնակչաց աշխարհի մերում՝ փչեաց զոգի իւր չարագործն:*

Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որք ոչ իցեն լուեալ (լսած չեն) ի միտ առցեն (պիտի հասկընան)։

Բ. — Դուք ոչ մտանէք, և որոց մտանեն՝ չտայք թոյլ (չէք թողուր) մտանել։ Դու իմաստուն ես քան զիս, այլ եղբայր իմ իմաստնագոյն է քան զքեզ։ Անկաւ յախտ դժնդակ (գէշ հիւանդութիւն) և զկնի աւուրց ինչ վախճանեցաւ։ Ոմն ի բարեկամաց ձերոց երէկ սպանեալ է զորդի հազարապետին արքայի՝ բարեբարին իմոյ։ Որ ոչ փափաքէ հաճոյ լինել մարդկան, որ ոչ զանգիտէ (վախնալ) յանհաճոյ գտանելոյ յաչս այլոց, անդորրութեան նորա չիք պայման (չափ չկայ)։ Զիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի ժամանակաւ։ Անհնար է մեզ կատարել զպարտս՝ եթէ յամենայնի կամիցիմք զհետ լինել (ետևէ ըլլալ) որոց փափաքէ սիրտ մեր։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Մեզմէ, ձեզմէ և անոնցմէ ամէն մէկը։ Ամէն մէկուն տրուած է (տուեալ է)։ Ամէն մարդ իր տունը գնաց (չոգաւ)։ Աստուծմէ զատ (բաց յԱստուծոյ) ուրիշ մէկէ մը վախ չունիմ (ոչ է իմ)։ Այս մատանին ուրիշներէ գնեցի։ Մէկզմէկ սիրելու պարտական ենք (եմք)։ Իրարու բարև տուէք (ողջոյն տուք)։ Ինչո՞ւ իրարմէ կը փախչիք։ Մէկալ տղուն անունը Գրիգորիկ էր։ Խոզը մէկալ կենդանիներէն աւելի զզուելի է։ Մարդ մը հեռու երկիր գնաց (չոգաւ)։ Ատով քեզի ի՞նչ օգուտ եղաւ (եղև)։ Ասոնց մեզի դէմ (ընդդէմ մեր) թշնամութիւնն ինչո՞ւ համար է (առ ի՞նչ իցէ), չեմ գիտեր (ոչ գիտեմ)։

Բ. — Ի՞նչ բանի կարօտ էր Աստուած մարդը ստեղծելէն առաջ (չև ևս ստեղծեալ), և ոչ բանի մը։ Մեր մէկալ պարտիզէն քաղեցի այս անուշահոտ և գոյնզգոյն ծաղիկները։ Աղքատը քանի մը բանի կարօտ է, իսկ ագահն ամէն բանի։ Աշխարհիս մէջ արդեօք քանի՞ մարդիկ կան որ ճշմարտութեան ետևէ ըլլան (ի խնդիր իցեն)։ Արդարութեան ատեանը վրէժխնդիր կ՚ըլլայ (լինի) անոնց ամենուն՝



որ չարագործութեամբ կ՚ապրին (կեան)։ Առաքինի մարդիկ ոչ երբեք զիրար կ՚ատեն (ատեան)։ Այն մարդն է ամենէն աւելի իմաստուն, որ ամենէն սորվիլ կ՚ուզէ։ Քանի մը հոգի Սոկրատին հարցուցին (հարցին) թէ երջանիկ մարդն ո՞վ է. Անիկա որ քիչ բանի կը կարօտի, ըսաւ։ Բարի անունն ամուր բերդ մ՚է, անով մարդ շատ նեղութիւններէ և մեղքերէ ազատ կը մնայ (զերծանի)։

| | |
|---|---|
| Վախ – Երկիւղ | Օգուտ – Շահ |
| Զզուելի – Գարշ | Անուշահոտ – Քաղցրաբոյր |

Գոյնզգոյն – Երփներանգ.

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

Գողիաթ և Դաւիթ

Ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ. և Սաւուղ և արք Իսրայելի ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն։ Ել այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն, Գողիաթ անուն նորա. եկն եկաց, ձայն ետ ի ճակատն Իսրայելի և ասէ ցնոսա. Ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր։ Ընտրեցէք դուք ձեզ այր մի, և ես և նա մենամարտեսցուք երկոքեան. եթէ կարասցէ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից, եղիջիք դուք մեզ ի ծառայս։ Իբրև լուան Սաւուղ և ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն, զահի հարան և երկեան յոյժ։

Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն – Այլազգիներուն դէմ պատերազմի ելան | Զահի հարան և երկեան յոյժ–Սաստիկ վախցան, սարսափեցան |
| Եթէ կարասցէ հարկանել զիս – Թէ որ զիս կարենայ սպաննել | Ձայն ետ ի ճակատն Իսրայելի – Իսրայելացւոց բանակին ձայն տուաւ |

Ես և նա մենամարտեսցուք երկոքեան – Ես և ինքը մինակ կռուինք.

# ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

## ԲԱՅ

---

### ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Բայի սահման. — Տէր բայի եւ խնդիր բայի

122. *Բայ կ'ըսուին այն ամէն բառերն որ ըլլալու, ընելու և կրելու գործողութիւն մը կը յայտնեն։* Զոր օրինակ. *Ես սիրեմ զծնողս իմ. Այն աշակերտ գովի ի դասատուաց. Յիսուս զարգանայր իմաստութեամբ։* — Այս խօսքերուն մէջ *սիրեմ, գովի, զարգանայր* բառերը բայ կ'ըսուին։ Իմաստ կազմելու համար բայ պէտք է, առանց անոր խօսք չըլլար։

123. *Խօսքի մէջ Տէր բայի կամ Անուն բայի կ'ըսուին այն բառերը՝ որ գործողութիւնը կատարող անձը կամ իրը կը ցուցնեն։* Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ես ուսանիմ | ես կը սորվիմ |
| Արեգակն լուսաւորէ | արեգակը կը լուսաւորէ։ |

Հոս *ես, արեգակն, Տէր-բայի* կամ *Անուն-բայի* են, վասն զի գործող անձը և իրը կը յայտնեն։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 122. Ո՞ր բառերը բայ կ'ըսուին. — 123. Տէր բայի և խնդիր բայի ո՞ր բառերը կ'ըսուին։



*Իսկ Խնդիր բայի կ'ըսուին այն բառերը՝ որոնց վրայ բային ցոյց տուած գործողութիւնը կը կատարուի և անով իմաստը կ'ամբողջանայ։* Ես ուսանիմ — Արեգակն լուսաւորէ, թերի և անորոշ իմաստներ միայն կը յայտնեն, որոշ և ամբողջ ըլլալու համար դեռ մէկմէկ բառ պէտք է աւելցնել այսպէս. *Ես ուսանիմ զքերականութիւն. Արեգակն լուսաւորէ զաշխարհ։* Այս խօսքերուն մէջ *զքերականութիւն, զաշխարհ*, խնդիր են իրենց բայերուն։

124. *Բային խնդիրը երկու տեսակ է. Սեռի և Բնութեան։* Առաջինին վրայ գործողութիւնն ուղղակի կը կատարուի. ինչպէս այս խօսքին մէջ. *Աստուած ստեղծ զաշխարհ։*

*Իսկ Բնութեան խնդիր կ'ըսուին ո՛ր և իցէ սեռի խնդրէն դուրս հոլոված բառեր, որոնք խօսքին ուրիշ պարագաները կը յայտնեն։* Հետևեալ օրինակներուն մէջ հայցականները սեռի խնդիր են, և միւս ուղղական, տրական, գործիական և բացառական հոլովները՝ բնութեան խնդիր։

| | |
|---|---|
| Կացոյց զքեզ իշխան | զքեզ իշխան դրաւ |
| Խոստացայ նմա պարգևս | անոր ընծաներ խոստացայ |
| Տարայք զիս ի բանտ | զիս բանտ տարէք |
| Հարին զարսն գաւազանօք | մարդիկը փայտերով ծեծեցին |
| Աստուած արար զաշխարհս յոչընչէ | Աստուած աշխարհս ոչինչէն ստեղծեց։ |

125. *Սեռի խնդիրը կրնայ ըլլալ որոշեալ կամ անորոշ հայցական։* Որոշեալ կը դրուի՝ երբ մաս-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 124. Խնդիր բային քանի՞ տեսակ է և ի՞նչպէս կը տարբերին. — 125. Սեռի խնդիրն ե՞րբ որոշեալ և ե՞րբ անորոշ հայցական կը դրուի։

նաւոր անձի կամ իրի վրայ է խօսքը և կամ յառաջագոյն վրան խօսուած ու ծանօթ է. և անորոշ՝ երբ ծանօթ անձի կամ իրի վրայ չէ խօսքը։ Այսպէս.

| Որոշեալ | Անորոշ |
| --- | --- |
| Առնու զհացն և տայ նոցա — կ'առնէ հացն ու անոնց կու տայ։ | Էառ հաց և ետ նոցա — առաւ հաց ու անոնց տուաւ։ |
| Ցուցէք ինձ զդահեկանն — ցոյց տուէք ինծի դահեկանը։ | Մատուցին նմա դահեկան մի — անոր դահեկան մը բերին։ |
| Շինեաց զտունն իւր — իր տունը շինեց։ | Շինեաց իւր տուն — իրեն տուն մը շինեց։ |

*Ծանօթ.* — Բայերն անուանց պէս երկու թիւ ունին՝ և դերանուանց պէս երեք դէմք, ինչպէս յայտնի է։

Բայց սովորաբար ես, դու, նա, մեք, դուք, նոքա իբրև տէր բայի՝ նիւթապէս չեն դրուիր և լռելեայն կը հասկցուին։ Ինչպէս աշխարհաբար կ'ըսենք՝ կը գրեմ, կը կարդաք, կը լսէին, նոյնպէս նաև գրաբար՝ գրեմ, ընթեռնուք, լսէին։

126. Խօսքի կամ Նախադասութեան մէջ կանոնաւոր շարադրութեամբ՝ նախ Տէր-բային կը դրուի, յետոյ Բայը և յետոյ Խնդիր-Սեռին, իւրաքանչիւրն՝ իր լրացուցիչներով, որ կրնան ըլլալ ածական, յատկացուցիչ, բացայայտիչ, խնդիր բնութեան և մակբայ. ինչպէս կը տեսնուի յաջորդ օրինակին մէջ.

Ամենակալն Աստուած՝ արարիչ տիեզերաց, զօրութեամբ բազկի իւրոյ ազատեաց սքանչելապէս

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 126. Ի՞նչ կարգով կը շարուին նախադասութեան մը բառերը։



ի բռնութենէ Եգիպտացւոց զժողովուրդ իւր սիրելի զԻսրայէլ։

Ուր խօսքին էական մասը կը կազմեն Աստուած, ազատեաց, զժողովուրդ, այն է՝ Տէր-բայի, Բայ, Խնդիր-Սեռի. իսկ միւս հոլոված բառերը իւրաքանչիւրին պատկանող լրացուցիչներ են։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել հետևեալ խօսքերուն մասերը, և խնդիրներուն տեսակները։*

Ա. — Տէր Աստուած մեր Տէր մի է։ Ես տեսի զքեզ զի էիր ընդ եղբօր իմում։ Ծառայք, հնազանդ լերուք (եղէք) տերանց ձերոց։ Իշխանք երկրին եկանէին և մատնէին հանապազ առաջի նորա։ Ասէ Յիսուս ցփարիսեցիսն. Բերէք ինձ դահեկան մի։ Յովնան ննջէր և խորդայր ի նաւին։ Յիսուս էառ (առաւ) զմանկունսն ի գիրկս իւր և օրհնեաց զնոսա։ Զարչարեցին զծառայս նորա։ Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ (կը ճանչցուիմ) յիմոցն։ Պատրեցաւ (խաբուեցաւ) Եւա յօձէն։ ՅԱդամայ սերեցան (առաջ եկան) ազգք մարդկան։

Բ. Գրեցաւ (գրուեցաւ) թուղթս այս առ քեզ։ Ապրեցարուք (ազատուեցէք) յարանց չարաց աշխարհին այնորիկ։ Նոյ հաճոյ եղև (եղաւ) Աստուծոյ։ Փառք և հանգիստ են պտուղք աշխատութեան և քրտանց։ Որ վասն մեր չարչարեցաւ Քրիստոս՝ է արքայ արքայից և տէր տերանց։ Ադամ և Եւա արդարք էին յառաջագոյն, այլ իբրև կերան ի պտղոյ ծառոյն գիտութեան բարւոյ և չարի, ելին յաչացն Աստուծոյ, և չարեաց եղեն (եղան) մեզ առիթ։ Ամբարիշտն

*Յուլիանոս կայսր՝ աշակերտակից էր Ս. Բարսղի ի մանկութեան իւրում։*

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — *Երիտասարդներուն կը վայլէ (վայել է) գութ ու պարկեշտութիւն։ Աստուծոյ վախն ամէն առաքինութեանց աղբիւր է։ Դեմոսթենէս և Կիկերոն երկուքն ալ շատ անուանի ճարտարախօսներ էին։ Ձեր այդ ծառաներուն ճամբաները գէշ են։ Մեծն Աղեքսանդր Մակեդոնացւոց Փիլիպպոս թագաւորին որդին էր։ Աբէլ Կայենի եղբայրն Աստուծոյ հաճոյ եղաւ (եղև)։ Յովհաննէս Մկրտիչ՝ մեր Յիսուս Փրկչին կարապետը՝ Զաքարիա քահանայապետին որդին էր։ Աւետարանն ամէն քրիստոնեաներուն օրէնքն է։*

Բ. — *Մենք Աստուծոյ որդիներն ենք (եմք), Յիսուսի եղբայրներն ու Հոգւոյն սրբոյ տաճարները։ Այս կեանքիս վերջն՝ յաւիտենական բարեաց կամ չարիքներու սկիզբն է։ Ամպին սիւնն Իսրայելացիներուն կ'առաջնորդէր։ Յակոբոս և Յովհաննէս Զեբեդէոսի որդիներն՝ առաջ պատիւ սիրող էին։ Անտոնիոս և Տիտոս՝ Հռովմայեցիներուն կայսրերն՝ անուանի և զօրաւոր մարդիկ էին։ Համբերութիւնը տէրերու հարկաւոր է։*

Շատ անուանի – Գերահամբաւ
Ճամբայ – Գնացք
Գէշ – Չար

Պատիւ սիրող – Պատուասէր
Զօրաւոր – Հուժկու
Վերջ – Վախճան։

### Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Գողիաթ և Դաւիթ

(Շարայարութիւն)

*Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ, Ծառայ քո երթիցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ. Տէր Աստուած՝ որ*



*ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն և ի ձեռաց արջոյն, նոյն ապրեցուսցէ զիս ի ձեռաց այլազգւոյն այնորիկ։ Ասէ Սաւուղ. Երթ, և Տէր եղիցի ընդ քեզ։ Եւ առ զցուպն իւր ի ձեռին իւրում, և ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս ի հեղեղատէն և եդ զնոսա ի հովուական մախաղին, և զպարսն ի ձեռին իւրում, և մերձեցաւ առ այրն այլազգի։ Եւ գնայր գայր այլազգին և մերձենայր առ Դաւիթ, և այր վահանակիր առաջի նորա։*

### Բառագիտութիւն

Ծառայ քո երթիցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ – Քու ծառադ պիտի երթայ և այն այլազգիին հետ կռուի
Ապրեցոյց զիս – Զիս ազատեց
Ցուպ – Գաւազան

Հեղեղատ – Ջուր անցնելու ձոր
Մախաղ – Տոպրակ, քուրձ
Պարս – Պարսատիկ
Մերձեցաւ – Մօտեցաւ
Այր վահանակիր – Վահանը բռնող մարդ։

## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Բայերուն պարագաները

127. ***Բայերը՝ գործողութեանց իմաստներուն համաձայն՝ չորս տեսակի կը վերածուին։ Վերը տրուած (122) սահմանին համեմատ՝ բայ մը,***

*երբ ըլլալ նշանակէ, կ'ըսուի Էական, ինչպէս՝ լինել*
» *ընել* » » *Ներգործական* » *սիրել*
» *կրել* » » *Կրաւորական* » *գովիլ*
» *ընել* » *առանց ուրիշին ուղղակի ազդելու,*
*կ'ըսուի Չէզոք, ինչպէս՝ զարթնուլ։*

128. ***Ներգործական բայերը միշտ հայցական***

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 127. *Քանի՞ տեսակ բայ կայ և ի՞նչպէս կը տարբերին իրարմէ.* — 128. *Ներգործական ու կրաւորական բայերը սեռի խնդիրն ի՞նչ հոլով կ'առնեն։*

*հոլով սեռի խնդիր կ'առնեն, իսկ կրաւորական բայերը՝ բացառական հոլով։ Օրինակ.*

| Ներգործական | Կրաւորական |
|---|---|
| Աստուած ստեղծ զաշխարհ | Աշխարհ ստեղծաւ յԱստուծոյ |
| Կայէն սպան զԱբէլ | Աբէլ սպանաւ ի Կայենէ։ |

Ծանօթ. — Իսկ էական բայով կազմուած նախադասութեան մէջ, սեռի խնդրի տեղ՝ կը դրուի ուղղական հոլով բառ մը որ Տէր-բային ինչ բան ըլլալը կ'իմացնէ և ստորոգելի կ'ըսուի։ Օրինակ. **Հոգի** է Աստուած, **Աստեղազարդ** են երկինք։ Բոլորգիր բառերը ստորոգելի են, որոնք գրաբարի մէջ սովորաբար բայէն առաջ կը դրուին։

129. *Ժամանակ կ'ըսուին բայերուն այն պարագաները՝ որ գործողութեան առենը կը ցուցընեն, և երեք են. Ներկայ որ գործողութեան մը նոյն առեն կատարուիլը կ'իմացընէ. Օրինակ՝ Գրեմ. — Անցեալ որ կատարուած ըլլալը կը յայտնէ. Օրինակ՝ Գրեցի — Ապառնի որ կը զգացնէ թէ դեռ նոր պիտի կատարուի. Օրինակ՝ Գրեցից։*

*Բայց Անցեալը երկու տեսակ է, Անկատար և Կատարեալ. առաջինը կը ցուցընէ գործողութեան այնպէս անցած ըլլալը՝ որ դեռ բոլորովին լմնցած չէ։ Օրինակ. Ես գրէի, դու ուսանէիր, Նոքա խաղային։ Երկրորդը բոլորովին վերջացած ըլլալը ցոյց կու տայ։ Ինչպէս. Ես գրեցի, Նոքա կարդացին։*

130. *Եղանակ կ'ըսուին խօսքին միտքը բացատրելու կերպերը, և երեք են. Սահմանական*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 129. Բայերուն մէջ ժամանակ ըսելով ինչ կ'իմացուի և քանի՞ են. — 130. Եղանակն ինչ է և քանի՞։



*որ պատմելու ձևով գործը կ'իմացընէ. Հրամայական՝ որ կը հրամայէ. Ստորադասական՝ որ գործողութեան մը հետևութիւնը կը ցուցնէ։*

131. *Սահմանական եղանակը չորս ժամանակ ունի, Ներկայ, Անկատար, Կատարեալ և Ապառնի։ Միւս եղանակները միայն մէկ ժամանակ ունին, որ է Ներկայ։*

*Իսկ Հրամայականը երկրորդ ձև մ'ալ ունի՝ Արգելականը, որով բան մը չընելու կամ արգիլելու հրաման կը յայտնուի։ Օրինակ. Մի՛ գրեր, մի՛ երթայք, մի՛ ուտանչեր, և այլն։*

Ծանօթ. — Անուններու պէս՝ բայերը երկու թիւ ունին և անձնական դերանուններուն երեք դէմքերը։ Օրինակ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ա. դէմք | կարդամ (ես) | կարդամք (մեք) |
| Բ. » | կարդաս (դու) | կարդայք (դուք) |
| Գ. » | կարդայ (նա) | կարդան (նոքա)։ |

132. *Բայ մը կը բաղկանայ երկու մասերէ, արմատ և վերջաւորութիւն։ Խոնարհել՝ կը նշանակէ վերջաւորութեան զանազան ձևերն ըսել, անփոփոխ պահելով արմատական մասը։ Օրինակ. Գով-եմ, գով-ես, գով-է, գով-եցի, գով-իցեմ, գով-էաք, գով-էիք. և այլն։*

Ծանօթ. — Բայերուն հետ կը գործածուին նաև երեք Դերբայներ՝ **Անորոշ**, **Անցեալ** և **Ապառնի**, որ չեն խոնարհուիր, այլ բային անորոշ և ընդհանուր իմաստը կը յայտնեն։ Ինչպէս՝ **սիրել**, **սիրեալ**, **սիրելոց**։ — Ասոնց վրայ յետոյ զատ գլխով պիտի խօսինք։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 131. Սահմանական եղանակը քանի՞ ժամանակ ունի, և քանի՞ կերպ է հրամայականը. — 132. Բայ մը քանի՞ մասերէ կը բաղկանայ և ինչ ըսել է խոնարհել։

133. *Բայերու խոնարհումներն իրարու յար և նման չըլլալով, կը բաժնուին ձևական քանի մը շարքերու, որոնք Լծորդութիւն կ'ըսուին։ Այս տեսակէտով բայերը կը վերածուին հինգ խումբերու. Էական, Կանոնաւոր, Յաւելուածով, Անկանոն և Պակասաւոր։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն և խնդիրներուն տեսակները։*

Թագաւորն մեծամեծ պարգևս խոստանայր քրմացն։ Բազումք ի լողալ բանին հաւատացին, և եղև թիւ մարդկան իբրև հազարաց հնգից։ Ի միում վայրկենի պատուական ազգն նոցա սատակէր։ Ի բերանոյ առն անմտի անարգին առակք, զի ոչ ասէ ի ժամու (ատենին)։ Վախճանեցաւ հայր որդւոյ բարւոյ, և որպէս թէ ոչ, զի նմանող եթող (թողուց) յետ իւր։ Եթէ ստանաս բարեկամ՝ փորձեա զնա, և մի խակ և խակ (մէկէն ի մէկ) վստահ լինիր ի նա։ Զաւակ պատուական ո՞ր է մարդոյ, որ երկնչի ի Տեառնէ։ Որ ատեայ (կ'ատէ) զեղբայր իւր՝ զԱստուած չգիտէ (չի ճանչնար)։ Յոյժ ուրախ լինէր թագաւորն, իբր այն թէ (իբրև թէ) կատարեցան կամք նորա։ Օրէնքն Մովսիսի և Աւետարան՝ ոչ են հակառակ միմեանց։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Շուշանն անմեղութեան նշան է։ Առաւօտ կանուխ հովիւն ոչխարները դաշտ կը տանի։ Բարկութեան

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 133. *Լծորդութիւն ի՞նչ կը նշանակէ և այս տեսակէտով բայերը քանի խումբերու կը վերածուին։*



պէս դէշ ախտ չկայ (չիք)։ Յովսէփին եղբայրները նախանձեցան, և զինքը Մադիանացիներուն ծախեցին (վաճառեցին)։ Այսօր մեծ վտանգէ ազատեցայ (զերծայ)։ Յիսուս Յովհաննէսէն մկրտուեցաւ (մկրտեցաւ)։ Թագաւորը գերիներուն ազատութիւն շնորհեց (շնորհեաց)։ Վենետիկ քաղաքը Թագուհի Ադրիականի կը կոչուի (կոչի)։ Անյոյս մարդը կը նմանի առանց ղեկի նաւու։ Ձեր հօրաքրոջ որդին՝ որ այսօր մեկնեցաւ քաղաքէս, իմ բարեկամիս երեք հարիւր դահեկան պարտական է (պարտի)։ Այն մարդն որմէ այս նուէրն ընդունեցայ՝ քու հօրեղբօրդ մտերիմ բարեկամն է։

Բ. — Ո՛վ որ ուրիշները չի պատուեր, ինք ալ պատիւ չի գտներ. և ո՛վ որ կը ջանայ ուրիշները խաբել, ինքն անոնցմէ կը խաբուի (խաբի)։ Ապրիլ ամսուան մէջ բնութիւնը կը զուարթանայ, ամէն արարածներ գարունը կը բարևեն (ողջունեն)։ Աւելի լաւ է իրիկունն անօթի պառկիլ (ի քուն լինել), քան թէ առաւօտը պարտքով ելնել։ Շռայլութիւնն ու խաղ՝ թշուառութեանց երկու մեծամեծ աղբիւրներ են։ Խղճմտանքը մեր հոգիին անմահութեան ապացոյցներէն մէկն է։ Տղաք, զգուշացէք (զգուշասջիք) անոնցմէ՝ որ դէշ ճամբաներ կը քալեն (գնան)։ Քրիստոս ճամբուն վրայ երևցաւ երկու աշակերտներուն, որոնք Եմմաուս գիւղը կ'երթային։

Նշան – Օրինակ
Առաւօտ կանուխ – Վաղ քաջ ընդ առաւօտն
Առանց ղեկի – Անղեկ
Խղճմտանք – Խիղճ մտաց, գիտակցութիւն
Անօթի – Անսուաղ
Ապացոյց – Ցուցակութիւն
Դէշ – Թիւր
Ճամբուն վրայ – Ճանապարհայն։

### Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Գողիաթ և Դաւիթ

(Շարայարութիւն)

Իբրև հայեցաւ և ետես զԴաւիթ՝ արհամարհեաց, զի էր պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ, և ասէ.

Զիա՞րդ, շո՞ւն եմ ես, զի ցպով և քարամբք գաս ի վերայ իմ։ Եկ առ իս և տաց զմարմին քո թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. Դու գաս ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ. և ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց։ Եւ աճապարեաց ձգեաց զձեռն իւր ի մախաղն և առ անտի քար մի, և պարսաքարեաց և եհար զճակատ այլազգւոյն. և եմուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Ընթացաւ Դաւիթ, առ զնորին սուսեր և սպան զնա և եհատ զգլուխ նորա։ Իբրև տեսին այլազգիքն թէ մեռաւ զօրավարն նոցա՝ փախեան. և արք Իսրայելի յարձակեցան զհետ նոցա և կոխեցին զբանակս նոցա։

### Բառացիտուցիւն

Խարտեաշ – Շէկ
Զիա՞րդ – Ի՞նչպէս, ի՞նչ
Տաց զմարմին քո թռչնոց երկնից և գազանաց երկրի – Երկնքի թռչուններուն ու երկրիս գազաններուն տամ քու մարմինդ
Ձգեաց զձեռն իւր ի մախաղն – Ձեռքը մախաղը խօթեց
Սպան զնա և եհատ զգլուխ նորա՝ – Զայն սպաննեց և գլուխը կտրեց
Պարսաքարեաց – Պարսատիկով քարը նետեց
Եմուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն – Քարը սաղաւարտէն ճակատը մտաւ
Ա՛ռ զնորին սուսեր – Անոր սուրն առաւ
Յարձակեցան զհետ նոցա և կոխեցին զբանակս նոցա – Անոնց ետևէն վազեցին և բանակն աւին
Ասպար – Վահան։

## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

### Էական բայեր

134. *Թէպէտ բուն էական բայը մէկ հատ է, բայց գրաբարի մէջ չորս ուրոյն ձեւ ունի.* **Եմ, Գոմ, Լինիմ, Եղանիմ.** *որոնց առաջին երկուքը ներկայապէս ըլլալ կը նշանակեն, և վերջինները յետոյ ըլլալ կամ բան մ'ըլլալ, և կը նկատուին աւելի իբր չէզոք բայեր։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 134. Քանի՞ և որո՞նք են էական բայերը — խոնարհէ եմ և գոմ։



**Եմ** և **Գոմ** նոյն նշանակութեամբ կը խոնարհուին հետևեալ կերպով.

### Սահմանական եղանակ

Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Եմ | Գոմ | ես եմ |
| | Ես | Գոս | դուն ես |
| | Է | Գոյ | ան է |
| Յոգ. | Եմք | Գոմք | մենք ենք |
| | Էք | Գոյք | դուք էք |
| | Են | Գոն | անոնք են |

Անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Էի | Գոյի | ես էի |
| | Էիր | Գոյիր | դուն էիր |
| | Էր | Գոյր | ան էր |
| Յոգ. | Էաք | Գոյաք | մենք էինք |
| | Էիք | Գոյիք | դուք էիք |
| | Էին | Գոյին | անոնք էին |

(Կատարեալ և Ապառնի չունին)

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ե՛ր | եղի՛ր | քիչ գործածական |
| Յոգ. | Է՛ք, Երո՛ւք | եղէ՛ք | |

(Գոմ բայն հրամայական չունի)

### Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Իցեմ | Գուցեմ | որ ըլլամ |
| | Իցես | Գուցես | » ըլլաս |
| | Իցէ | Գուցէ | » ըլլայ |
| Յոգ. | Իցեմք | Գուցեմք | » ըլլանք |
| | Իցէք | Գուցէք | » ըլլաք |
| | Իցեն | Գուցեն | » ըլլան |

### Դերբայք

| | | | |
|---|---|---|---|
| Անորոշ | Ել | Գոլ | ըլլալ |
| Անցեալ | Եալ | (չունի) | եղած կամ ըլլալով |
| Ապառնի | Ելով | » | ըլլալու, որ պիտի ըլլայ |

135. *Լինիմ և Եղանիմ նոյն նշանակութեամբ կը խոնարհուին այսպէս.*

## Սահմանական եղանակ

### Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Լինիմ | Եղանիմ | կ'ըլլամ |
| | Լինիս | Եղանիս | կ'ըլլաս |
| | Լինի | Եղանի | կ'ըլլայ |
| Յոգ. | Լինիմք | Եղանիմք | կ'ըլլանք |
| | Լինիք | Եղանիք | կ'ըլլաք |
| | Լինին | Եղանին | կ'ըլլան |

### Անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Լինէի | Եղանէի | կ'ըլլայի |
| | Լինէիր | Եղանէիր | կ'ըլլայիր |
| | Լինէր | Եղանէր | կ'ըլլար |
| Յոգ. | Լինէաք | Եղանէաք | կ'ըլլայինք |
| | Լինէիք | Եղանէիք | կ'ըլլայիք |
| | Լինէին | Եղանէին | կ'ըլլային |

### Կատարեալ

Լինիմ բայը չունի

| | | |
|---|---|---|
| Եզ. | Եղէ | եղայ |
| | Եղեր | եղար |
| | Եղեւ | եղաւ |
| Յոգ. | Եղաք | եղանք |
| | Եղէք, Եղերուք | եղաք |
| | Եղեն | եղան |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 135. Խոնարհէ՛ լինիմ և եղանիմ բայերը։



### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Լիցիմ | Եղէց | պիտի ըլլամ |
| | Լիցիս | Եղիցիս | » ըլլաս |
| | Լիցի | Եղիցի | » ըլլայ |
| Յոգ. | Լիցուք | Եղիցուք | » ըլլանք |
| | Լիջիք | Եղիջիք | » ըլլաք |
| | Լիցին | Եղիցին | » ըլլան |

## Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Լեր, Լիջիր | Եղիջիր, Եղանիջիր | եղիր |
| Յոգ. | Լերուք | Եղերուք | եղէք |

### Արգելական

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Մի լինիր | Մի եղանիր | մ'ըլլար |
| Յոգ. | Մի լինիք | Մի եղանիք | մ'ըլլաք |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Լինիցիմ | Եղանիցիմ | որ ըլլամ |
| | Լինիցիս | Եղանիցիս | » ըլլաս |
| | Լինիցի | Եղանիցի | » ըլլայ |
| Յոգ. | Լինիցիմք | Եղանիցիմք | » ըլլանք |
| | Լինիցիք | Եղանիցիք | » ըլլաք |
| | Լինիցին | Եղանիցին | » ըլլան |

### Դերբայք

| | | | |
|---|---|---|---|
| Անորոշ | Լինել | Եղանել | ըլլալ |
| Անցեալ | Լեալ | Եղեալ | եղած, ըլլալով |
| Ապառնի | Լինելոց | Եղանելոց | ըլլալու, որ պիտի ըլլայ |

**Ծանօթ. Ա.** — Եմ, Գոմ բայերուն Կատարեալ և Ապառնի ժամանակներն ու հրամայականը, այս Լինիմ և Եղանիմ բայերով կը լրացուին։ — Այս վերջիններուս Անորոշ Դերբայները միշտ ել կ'ըլլան և ոչ իլ. պատճառը տես 151 համարի ծանօթութեան մէջ։

**Ծանօթ. Բ.** — Էական բայ է նաև իք երրորդ դէմք, որ

ըսել է կայ. բայց առանձին չի գործածուիր, այլ միշտ չ մակբայով: Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Չիք հնար | հնար կամ ճար չկայ |
| Չիք աստ | հոս չէ կամ հոս չկայ |
| Չիք տեսեալ | չէ տեսած. և այլն: |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Ա. — Խոնարհել սա ածական ստորոգելիները եական բայերէ մէկուն կամ միւսին հետ՝ պատշաճ դերանուն դէմքերը դնելով:*

Երջանիկ, սիրելի, թշուառ: Գթած, ողջ, անմեղ: Հլու, եռանդուն, հանդարտ: Ծոյլ, պատրաստ, արդար: Ուշիմ, ժրաջան, մտավարժ: Ուսումնասէր, ամբարիշտ, ողորմած: Իմաստուն, աղքատ, անոխակալ:

*Բ. — Նշանակել հետևեալ խօսքերու մասերը, և եական բայերուն ամէն պարագաները:*

Հարուածոց (տանջանք) ամբարտաւանին ոչ գոյ բժշկութիւն: Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց: Զաքարիա և Եղիսաբեթ՝ ծնողք Յովհաննու Մկրտչի՝ էին երկոքեան արդարք առաջի Աստուծոյ: Փորձիչն ասէր ցՅիսուս. Ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին: Եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս: Չիք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տան: Առաքինութիւն անփառունակ (փառք չունեցող) ոչ լինիցի առանց պատուոյ: Պատուականագոյն գանձ են մատեանք և բազում անգամ բժիշկք հիւանդութեանց հոգւոյ: Ո՜ պատանիք, նմանող



լերուք ջանասիրութեան մեղուաց և մրջնոց: Հայր Յովհաննու Մկրտչի էր Զաքարիա, և մայր՝ Եղիսաբեթ, ի դստերացն Ահարոնի: Յիսուս ասէր ցկինն քանանացի. Ով կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս: Չիք ինչ չարագոյն քան զմատեան յոռի (գէշ):

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Նոյ Աստուծոյ հաճոյ եղաւ: Մարիամ Ղազարու քոյրն Յիսուսի ըսաւ. Տէր, թէ՛ որ հոս ըլլայիր՝ եղբայրս մեռած չէր: Ո՛վ աշակերտ, նմանող եղիր մեղուին և մրջիւնին, և խելացի մարդ պիտի ըլլաս: Բոլոր առաքեալներն առաջ ձկնորս էին, յետոյ քարոզիչ եղան սուրբ Աւետարանին: Ամէն բան Աստուծմով եղաւ և առանց անոր բան մ'ալ չեղաւ: Կայէն Աբելին եղբայրն՝ անոր սպանող եղաւ: Տղաք, ձեր հոգևոր և մարմնաւոր ծնողաց հնազանդ եղէք: Հանճարեղ և առաքինի անձէն աւելի պատուական բան չկայ: Մենք գիտենք որ (գիտեմք զի) այն մարդը մեղաւոր է: Դուն անոր աշակերտ եղիր, մենք Մովսեսի աշակերտներն ենք, մենք գիտենք որ Աստուած Մովսէսին հետ (ընդ Մովսեսի) խօսեցաւ: Ասկէ ետքն աղէկ ըլլալ պիտի ջանամ (ջան գործեցից):

Բ. — Ուրիշներուն վարքը մեր հայելին պիտի ըլլայ: Չե՛ս կրնար (ո՞չ կարես) ըսել թէ գող եմ. գող պիտի ըլլամ ըսէ (ասա), բաւական է: Յաղթութիւնը կ'ըլլայ մարդու իմաստութեամբ և ձիերու զօրութեամբ: Քու աշակերտներդ խօսք մտիկ ընող են, իմիններս առաջ ծոյլ էին, բայց հիմայ ուսմունք սիրող եղան: Դատաստանի օրն աշխարհիս առաջինները՝ վերջին պիտի ըլլան, և վերջինները՝ առաջին: Մի ըլլաք ձիերու և ջորիներու պէս, որոնք իմաստութիւն չունին (Թարգմանէ այսպէս՝ որոնց մէջ իմաստութիւն չկայ): Ծոյլին համար ամէն բան դժուարին է, գործունէին առջև արգելք մը պիտի չըլլայ: Քրիստոս ամենուս կ'ըսէ. Եղէք

կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է։ Չկայ ծերոց համար անկէ աւելի մեծ մխիթարութիւն, ինչպէս տեսնել իրենց զաւակները կիրթ, պատկառոտ և առաքինի։

| | |
|---|---|
| Քարոզիչ – Քարոզ | Խօսք մտիկ ընող – Հլու |
| Ետքը – Յետ (սեռականով) | Ուսմունք սիրող – Ուսումնասէր |
| Ձի – Երիվար | Բան մ'ալ չ.... – Եւ ոչ ինչ |

Արգելք – Խոչընդոտ։

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Մեծատունն վստահ յինչսն

Առն ուրումն մեծատան ետուն անդք տոհմականս, և խորհէր ի միտս իւր և ասէր. Զի՞ գործեցից, զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։ Գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ, և ես մեծամեծս շինեցից, և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ։ Եւ ասացից ցանձն իմ. Անձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստուած. Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեսցեն. իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի։ Նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Ետուն անդք տոհմականս – Արտերն առատ բերք տուին | Բարութիւն – Բարիք, գանձ |
| Քակեցից զշտեմարանս իմ, և ես մեծամեծս շինեցից – Ամբարներս պիտի քակեմ և աւելի մեծեր պիտի շինեմ | Համբարեալ – Ժողոված |
| | Հանգիր – Հանգիստ ըրէ |
| | Որ գանձէ անձին – Ով որ իրեն համար կը ժողվէ։ |



## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

### Կանոնաւոր բայեր

136. *Կանոնաւոր* կ'ըսուին այն բայերը որոնց խոնարհման համար մասնաւոր կանոններ կան, ինչպէս անուններուն մէջ Պարզ հոլովումները։

Գրաբարի մէջ բոլոր բայերը լծորդութեան երեք ձև ունին. և իրարմէ կը տարբերին իրենց վերջի ձայնաւորներով, այսպէս.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա. | Լծորդութիւն | ամ | կը | վերջանայ, | ինչպէս | Կարդ–ամ |
| Բ. | » | եմ | » | » | » | Գով–եմ |
| Գ. | » | ում | » | » | » | Արգել–ում |

Ասոնցմէ իւրաքանչիւրն ունի նաև իրեն յատուկ կրաւորական ձևը։

137. *Չէզոք* բայերն առանձին լծորդութիւն չունին, այլ անոնք որ ներգործական ձևով կը խոնարհուին՝ կ'ըսուին *ներգործակերպ չէզոք*, և որոնք որ կրաւորականներուն պէս կը խոնարհուին՝ *կրաւորակերպ չէզոք* բայեր կ'ըսուին, ինչպէս պիտի տեսնուի Բ. Լծորդութեան կրաւորական ձևին մէջ (համար 145)։

138. *Հասարակ* բայեր անոնք կ'ըսուին՝ որ կրաւորական ձևով թէ՛ ներգործական իմաստ ունին և թէ՛ կրաւորական։ Այս կարգէն են, օրինակի համար, հետևեալ բայերը.

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 136. Կանոնաւոր բայեր որո՞նք կ'ըսուին. — 137. Չէզոք բայերն ի՞նչպէս կը խոնարհուին. — 138. Հասարակ բայեր որո՞նք կ'ըսուին։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իմանամ | ըսել է | իմանամ | (բան մը) | և իմացուիմ |
| Հոգամ | » | հոգամ | (մէկը) | և հոգացուիմ |
| Դատիմ | » | դատիմ | (ուրիշը) | և դատուիմ |
| Ծնանիմ | » | ծնանիմ | (մէկը) | և ծնանիմ (ուրիշէն) |
| Ընթեռնում | » | կարդամ | (գիրք մը) | և կարդացուիմ։ |

139. *Առաջին լծորդութեան իբր օրինակ կարդալ բայն՝ այսպէս կը խոնարհի.*

### Սահմանական եղանակ

Ներկայ

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| կարդ-ամ | կը կարդամ | կարդ-ամք | կը կարդանք |
| կարդ-աս | կը կարդաս | կարդ-այք | կը կարդաք |
| կարդ-այ | կը կարդայ | կարդ-ան | կը կարդան |

Անկատար

| | | | |
|---|---|---|---|
| կարդ-այի | կը կարդայի | կարդ-այաք | կը կարդայինք |
| կարդ-այիր | կը կարդայիր | կարդ-այիք | կը կարդայիք |
| կարդ-այր | կը կարդար | կարդ-ային | կը կարդային |

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| կարդ-ացի | կարդացի | կարդ-ացաք | կարդացինք |
| կարդ-ացեր | կարդացիր | կարդ-ացէք | կարդացիք |
| կարդ-աց | կարդաց | կարդ-ացին | կարդացին |

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| կարդ-ացից | պիտի | կարդամ | կարդ-ասցուք | պիտի | կարդանք |
| կարդ-ասցես | | կարդաս | կարդ-ասջիք | | կարդաք |
| կարդ-ասցէ | | կարդայ | կարդ-ասցեն | | կարդան |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 139. Առաջին լծորդութեան օրինակ մը տուր և խոնարհէ։



### Հրամայական եղանակ

| Հաստատական | | Արգելական |
|---|---|---|
| կարդ-ա՛ | կարդ-ացէք | Մի՛ կարդ-ար, Մի՛ կարդ-այք |
| կարդ-ասջիր | կարդ-ասջիք | |

### Ստորադասական եղանակ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| կարդ-այցեմ | որ | կարդամ | կարդ-այցեմք | որ | կարդանք |
| կարդ-այցես | » | կարդաս | կարդ-այցէք | » | կարդաք |
| կարդ-այցէ | » | կարդայ | կարդ-այցեն | » | կարդան |

### Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | կարդ-ալ | կարդալ |
| Անցեալ | կարդ-ացեալ | կարդացած, -ցեր |
| Ապառնի | կարդ-ալոց | կարդալիք։ |

Ծանօթ. — Կարդալ բայն այս իր ներգործական ձևին մէջ կը նշանակէ նաև կանչել, և կրաւորականին մէջ՝ կանչուիլ։

140. *Այս Ա. լծորդութեան կը վերաբերին կեալ և Ստեալ բայերը, որոնց մէջ եա կը փոխուի է կամ ե քանի մը ժամանակներու մէջ, ինչ որ անուններու հոլովման մէջ ըսած ենք* (58)։

*Կեալ* (*կ'ապրիմ*) *ներգործակերպ չէզոք բայն այսպէս կը խոնարհուի.*

### Սահմանական եղանակ

Ներկայ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | կեամ | կ'ապրիմ | Յոգ. | կեամք | կ'ապրինք |
| | կեաս | ապրիս | | կեայք | ապրիք |
| | կեայ | ապրի | | կեան | ապրին |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 140. Ա. Լծորդութեան պատկանող կեալ և ստեալ բայերն ի՞նչ փոփոխութիւն կը կրեն — Խոնարհէ՛ կեալ բայը։

Անկատար

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | կէի | կ'ապրէի | Յոգ. | կէաք | կ'ապրէինք |
| | կէիր | ապրէիր | | կէիք | ապրէիք |
| | կեայր | ապրէր | | կէին | ապրէին |

| Կատարեալ | | | Ապառնի | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եզ. | կեցի | ապրեցայ | Եզ. | կեցից | պիտի | ապրիմ |
| | կեցեր | ապրեցար | | կեցցես | » | ապրիս |
| | Եկեաց | ապրեցաւ | | կեցցէ | » | ապրի |
| Յոգ. | կեցաք | ապրեցանք | Յոգ. | կեցցուք | » | ապրինք |
| | կեցէք | ապրեցաք | | կեցջիք | » | ապրիք |
| | կեցին | ապրեցան | | կեցցեն | » | ապրին |

## Հրամայական եղանակ

| Հաստատական | | | Արգելական |
|---|---|---|---|
| Եզ. | կեաց, կեցջիր | ապրէ՛ | Մի կեար մի ապրիր |
| Յոգ. | կեցէք | ապրեցէ՛ք | Մի կեայք մի ապրիք |

## Ստորադասական եղանակ

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| կեայցեմ որ ապրիմ | կեայցեմք որ ապրինք |
| կեայցես » ապրիս | կեայցէք » ապրիք |
| կեայցէ » ապրի | կեայցեն » ապրին |

## Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | կեալ | ապրիլ |
| Անցեալ | կեցեալ | ապրած, -րեր |
| Ապառնի | կելոց | ապրելիք։ |

141. **Ատեամ կը խոնարհուի այսպէս.**

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 141. Խոնարհէ՛ ատեամ բայը։



## Սահմանական եղանակ

| Ներկայ | | | Անկատար | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | Ատեամ | կ'ատեմ | Եզ. | Ատէի | կ'ատէի |
| | Ատեաս | ատես | | Ատէիր | ատէիր |
| | Ատեայ | ատէ | | Ատեայր | ատէր |
| Յոգ. | Ատեամք | ատենք | Յոգ. | Ատէաք | ատէինք |
| | Ատեայք | ատէք | | Ատէիք | ատէիք |
| | Ատեան | ատեն | | Ատէին | ատէին |

| Կատարեալ | | | Ապառնի | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | Ատեցի | ատեցի | Ատեցից | պիտի | ատեմ |
| | Ատեցեր | ատեցիր | Ատեսցես | » | ատես |
| | Ատեաց | ատեց | Ատեսցէ | » | ատէ |
| Յոգ. | Ատեցաք | ատեցինք | Ատեսցուք | » | ատենք |
| | Ատեցէք | ատեցիք | Ատեսջիք | » | ատէք |
| | Ատեցին | ատեցին | Ատեսցեն | » | ատեն |

## Հրամայական եղանակ

| Հաստատական | | | Արգելական |
|---|---|---|---|
| Եզ. | Ատեա, ատեսջիր | ատէ՛ | Մի ատեար, մի ատեր |
| Յոգ. | Ատեցէք | ատեցէ՛ք | Մի ատեայք, մի ատէք |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ատիցեմ որ ատեմ | Յոգ. | Ատիցեմք որ ատենք |
| | Ատիցես » ատես | | Ատիցէք » ատէք |
| | Ատիցէ » ատէ | | Ատիցեն » ատեն |

## Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | Ատեալ | ատել |
| Անցեալ | Ատեցեալ | ատած, ատելով |
| Ապառնի | Ատելոց | ատելիք, որ պիտի ատէ |

Ա. Ծանօթ. — Ինչպէս եա փոխուեցաւ ե և է, նմանապէս ո՛ր և իցէ բայի մը արմատին մէջ հանդիպած է, ոյ ձայնաւոր գրերն ի, ու կը փոխուին, իսկ ի, ու անհետ կ'ըլլան յար և

*նման անուններուն, Օրինակ. Տէր՝ Տիրեմ, Սէր՝ Սիրեմ, Շէն՝ Շինեմ, Յոյս՝ Յուսամ, Գիր՝ Գրեմ, Սուրբ՝ Սրբեմ, և այլն։*

**Բ. Ծանօթ.** — *Ատեամ բային մէկ ուրիշ ձևն է Ատեմ, որ Բ. լծորդութեան կը վերաբերի։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

**Ա. — *Խոնարհել սա բայերը՝ քովի բառերով միասին։***

*Լուանալ զհանդերձս, աղալ զցորեան, կարդալ զգիրս, գնալ յեկեղեցի, խնդալ ընդ դրացիս, անսալ խրատուց հօր։* (Այսպէս. Ես լուանամ զհանդերձս, դու աղաս զցորեան, նա...)։

**Բ. — *Նշանակել շեղագիր բայերուն տեսակը, եղանակը, ժամանակը, թիւն ու դէմքը։***

*Քուրմք Բահաղու* կարդացին *(կանչել) այգուէ ցօր հասարակ (առաւօտէն մինչև կէսօր), և ոչ ոք էր որ պատասխանի* տայր *նոցա։ Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին տեսանել թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ (սակ) ի գանձանակն։ Ո՛րչափ կեցցէ մարդ՝ այնչափ* մերձենայ *ի գերեզման։ Ինչ մի միայն* անել *օրէն է յայսմ աշխարհի, գատելութիւն։ Եթէ նաւ ի վտանգի կայցէ ի սաստիկ ալեկոծութեանց, զբեռինս և զկարասին* ածեն *ի ծով։ Սիրտ խոնարհի կայ ի մշտնջենաւոր խնդութեան, իսկ ամբարտաւանին՝* ծփայ *նախանձու և բարկութեամբ։ Ետես Յիսուս երկուս նաւս ի ծովակին Գեննեսարեթայ, յորոց ձկնորսք ոմանք ելեալ՝* լուանային *զգործիսն։ Որ յօգուտ աշակերտացն միայն* կեան *ուսուցիչք, սիրեն զժրաջան մանկունս և* ատեան *զանփոյթսն։ Դէմք մարդոյ հայելի են մտաց, և աչք* մերկանեն *զգաղտնիս սրտից։ Երեք ինչ են զորս ատեաց անձն իմ. զաղքատ հպարտ, զմեծատուն ագահ և զծեր գադաշոտ (անխելք, ցնդած)։*



### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

**Ա.** — *Ո՛վ որ չարութեամբ կ'ապրի՝ միշտ վախի մէջ է։ Բան մը պիտանի չէ՝ եթէ օրինաւոր չէ։ Ապրիլը՝ դէպ ի մահ վազել մ'է։ Քանի որ դեռ երիտասարդ ես՝ մտածէ ապագայ վիճակդ, և մի՛ մոռնար որ օր մը պիտի ծերանաս։ Աւելի լաւ է մարմնով հիւանդ ըլլալ՝ քան թէ հոգւով։ Կանայք գետին եղերքը զգեստներ կը լուային։ Միշտ պիտի ապրիմ բարերարներս սիրելով ու անոնց երախտագէտ պիտի ըլլամ։ Նոյ նահապետը տապանէն ելաւ ու Աստուծոյ զոհ ըրաւ (մատոյց ողջակէզ)։ Մաթուսաղա ինն հարիւր իննըսուն և ինը տարի* (անորիշ ձյցկն.) *ապրեցաւ։ Իմաստուն մարդիկ արդարութիւնը կը սիրեն և ստութիւնը կ'ատեն։ Ապրին միշտ առաքինի և ուսումնասէր տղաք։*

**Բ.** — *Անոնք որ համբերութեամբ կը վերցընեն (բառնամ) իրենց նեղութիւններուն ու վշտերուն խաչերը, հանդերձեալ կենաց մէջ պիտի ապրին։ Մեր դրացին իր աղախինն ու ծառան միշտ կ'ատէր։ Կ'ուզեմ որ խօսքերդ ամենուն հաճելի ըլլան, տասն անգամ մտածէ ու մէկ անգամ ըսէ։ Մի՛ լար մեռեալները. անոնք որ անզգայ և անկենդան են՝ արտասուքի պէտք չունին (կարօտանամ)։ Առաքինի մարդիկ ոչ երբեք զիրար կ'ատեն։ Ամէն բանէ աւելի ջանք ըրէ լեզուդ սանձել։ Աւելի լաւ է անտառներու մէջ կենալ, քան կռապաշտներու և բարկացողներու հետ բնակիլ։ Հին Գերմանացիք պատերազմով և աւարառութիւններով կ'ապրէին։*

### Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Դանիէլ կործանէ զԲէլ*

*Էին կուռք մի Բաբելացւոց՝ անուն Բէլ. և ելանէր նմա ռոճիկ աւուր միոջ, նաշիհ երկոտասան արդու և քառասուն ոչխար և գինի վեց մար. և թագաւորն պաշտէր*

զնա։ Բայց Դանիէլ պագանէր երկիր Աստուծոյ իւրոյ։ Ասէ ցնա Թագաւորն. Դու ընդէ՞ր ոչ երկիր պագանես Բելայ։ Եւ նա ասէ. Քանզի ոչ պաշտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստուած կենդանի, զարարիչն երկնի և երկրի։ Եւ ասէ ցնա Թագաւորն. Իսկ Բէլ ո՞չ թուի քեզ թէ իցէ Աստուած կենդանի, եթէ ո՞չ տեսանիցես որչափ ուտէ և ըմպէ հանապազ։ Ասէ Դանիէլ ծիծաղելով. Մի խաբիր, արքայ, զի դա է ի ներքոյ կաւեայ և արտաքոյ պղնձի. ոչ կերեալ դորա երբեք և ոչ արբեալ։ Բարկացեալ Թագաւորն, կոչեաց զքուրմս նորա և ասէ ցնոսա. Եթէ ոչ ասիցէք ինձ ո՛վ ուտէ զսեղանն զայն՝ մահու մեռանիցիք։

### Բառագիտութիւն

Նաշիհ — Բարակ ազնիւ ալիւր
Արդու — Չափ մը (ցորենի)
Մար — Չափ մը (հեղուկի)
Պագանէր երկիր Աստուծոյ իւրոյ — Իր Աստուծոյն երկրպագութիւն կ'ընէր
Քուրմ — Կռապաշտ քահանայ.
Եղանէր նմա ռոճիկ՝ աւուր միոջ — Օրական թոշակ կու գար իրեն
Ձեռագործ — Ձեռքով շինուած
Ոչ կերեալ դորա երբեք և ոչ արբեալ — Դա ամենևին ոչ կերած ունի և ոչ խմած.

## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

### Շարունակութիւն նախորդ դասին

142. *Բայերուն ներգործական ու կրաւորական ձևերու տարբերութիւնն կատարեալին մէջ կը տեսնուի։ Ո՛ր և իցէ ներգործական ձև՝ կատարեալին մէջ ի կը վերջանայ, և ո՛ր և իցէ կրաւորական ձև՝ այ։ Օրինակ.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 142. Ներգործական և կրաւորական ձևերուն գլխաւոր տարբերութիւնն ո՞ւր կը տեսնուի։



| Ներգ. կատարեալ | | Կրաւ. կատարեալ |
|---|---|---|
| Բանամ | Բաց-ի | Բաց-այ |
| Ածեմ | Ած-ի | Ած-այ |
| Բերեմ | Բեր-ի | Բեր-այ |
| Թողում | Թող-ի | Թող-այ |
| Ջենում | Ջեն-ի | Ջեն-այ և այլն։ |

143. *Կարդալ բային կրաւ. ձևն այս է.*

### Սահմանական եղանակ

Ներկայ

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Կարդամ | կը կարդացուիմ | Կարդամք | կը կարդացուինք |
| Կարդաս | կը կարդացուիս | Կարդայք | կը կարդացուիք |
| Կարդայ | կը կարդացուի | Կարդան | կը կարդացուին |

Անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Կարդայի | կը կարդացուէի | Կարդայաք | կը կարդացուէինք |
| Կարդայիր | կը կարդացուէիր | Կարդայիք | կը կարդացուէիք |
| Կարդայր | կը կարդացուէր | Կարդային | կը կարդացուէին |

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Կարդացայ | կարդացուեցայ | Կարդացաք | կարդացուեցանք |
| Կարդացար | կարդացուեցար | Կարդացայք | կարդացուեցաք |
| Կարդացաւ | կարդացուեցաւ | Կարդացան | կարդացուեցան |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Կարդասցայց | պիտի կարդացուիմ | Կարդասցուք | պիտի կարդացուինք |
| Կարդասցիս | պիտի կարդացուիս | Կարդասջիք | պիտի կարդացուիք |
| Կարդասցի | պիտի կարդացուի | Կարդասցին | պիտի կարդացուին |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 143. Խոնարհէ՛ կարդալ բային կրաւորական ձևը։

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Կարդասջի՛ր | կարդացուէ՛ | Կարդացարո՛ւք | կարդացուեցէ՛ք |
| Մի՛ կարդար | մի՛ կարդացուիր | Մի՛ կարդայք | մի՛ կարդացուիք |

### Ստորադասական եղանակ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կարդայցիմ | որ | կարդացուիմ | Կարդայցիմք | որ | կարդացուինք |
| Կարդայցիս | » | կարդացուիս | Կարդայցիք | » | կարդացուիք |
| Կարդայցի | » | կարդացուի | Կարդայցին | » | կարդացուին |

### Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | Կարդալ | կարդացուիլ |
| Անցեալ | Կարդացեալ | կարդացուած |
| Ապառնի | Կարդալոց | կարդացուելիք։ |

*Ծանօթ.* — *Ինչպէս այս կարդամ բային մէջ կը տեսնուի, յաջորդ լծորդութեանց մէջ ալ ինչ ինչ ժամանակներու կամ եղանակներու Ներգ. և Կրաւ. ձեւերն իրարու թէեւ նման են, բայց իմաստով կը տարբերին։ Աւելի որոշ հասկցնելու համար՝ ասոնք յաճախ անցեալ դերբայով ու լինիմ էականով կը բացատրուին այսպէս.* Կարդացեալ *լինիմ, լինիս.* Կարդացեալ *լինէի, լինէիր. և այլն։*

144. **Առաջին լծորդութեան բայերուն կրաւորական ձեւ տալու համար՝ պէտք է կատարեալին, Ապառնիին, Հրամայականին և Ստորադասականին վերջաւորութիւնները փոխել հետեւեալ կերպով.**

| | | Կատր. | Ապառնի | Հրամ. | Ստորադ. |
|---|---|---|---|---|---|
| Բանամ | Ներգ. | Բաց-ի | Բաց-ից | Բա՛ց | Բանայց-եմ |
| | Կրաւ. | Բաց-այ | Բաց-այց | Բաց-իր | Բանայց-իմ |
| Աղամ | Ներգ. | Աղաց-ի | Աղաց-ից | Աղա՛ | Աղայց-եմ |
| | Կրաւ. | Աղաց-այ | Աղաց-այց | Աղաց-իր | Աղայց-իմ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 144. Ա. *լծորդութեան բայերուն ի՞նչպէս կրաւորական ձեւ կը տրուի։*



145. **Ատել բային կրաւորական ձեւն այս է.**

### Սահմանական եղանակ

| Ներկայ | | | Անկատար | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | Ատիմ | կ'ատուիմ | Եզ. | Ատէի | կ'ատուէի |
| | Ատիս | ատուիս | | Ատէիր | ատուէիր |
| | Ատի | ատուի | | Ատէր | ատուէր |
| Յոգ. | Ատիմք | ատուինք | Յոգ. | Ատէաք | ատուէինք |
| | Ատիք | ատուիք | | Ատէիք | ատուէիք |
| | Ատին | ատուին | | Ատէին | ատուէին |

| Կատարեալ | | | Ապառնի | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | Ատեցայ | ատուեցայ | Ատեսցիմ | պիտի | ատուիմ |
| | Ատեցար | ատուեցար | Ատեսցիս | » | ատուիս |
| | Ատեցաւ | ատուեցաւ | Ատեսցի | » | ատուի |
| Յոգ. | Ատեցաք | ատուեցանք | Ատեսցուք | » | ատուինք |
| | Ատեցայք | ատուեցաք | Ատեսջիք | » | ատուիք |
| | Ատեցան | ատուեցան | Ատեսցին | » | ատուին |

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ատիջի՛ր, Ատեսջի՛ր | ատուէ՛ | Մի՛ ատիր մի՛ ատուիր |
| Յոգ. | Ատեցարո՛ւք | ատուեցէ՛ք | Մի՛ ատիք մի՛ ատուիք |

### Ստորադասական եղանակ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Եզ. | Ատիցիմ | որ | ատուիմ | Յոգ. | Ատիցիմք | որ | ատուինք |
| | Ատիցիս | » | ատուիս | | Ատիցիք | » | ատուիք |
| | Ատիցի | » | ատուի | | Ատիցին | » | ատուին |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 145. Խոնարհէ՛ *ատել բային կրաւորական ձեւը։*

### Գերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | Ատել, ատեցեալ լինել | ատուիլ |
| Անցեալ | Ատեցեալ | ատուած, ատուելով |
| Ապառնի | Ատելոց | ատուելիք: |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

#### Գրաբարէ աշխարհաբար

*Ա. — Հետեւեալ խօսքերուն մէջ բայերուն ներգ. ձեւերը կրաւորականի դարձնել, ու կրաւորականները՝ ներգործականի, եւ փակագծուած ուղղական բառերը վերածել պատշաճ հոլովներու:*

Կարդաց մատեանս այս (ես): Լուացայց (ձեռք) իմ: Տեղայցէ հուր եւ ծծումբ (երկինք): Ամացան (Նոքա) ի ծով բարբարոսքն: Ազգն Հրէից ատեաց (մարդիկ) յորմէհետէ ոչ հաւատացան (Որդին Աստուած): Թագաւորն եւ իշխանք կարդացան (թուղթն) առաքեալ ի սրբոյ հայրապետէն: Յիսուս գթացեալ բացաւ (աչք) առն ի ծնէ կոյր ծնելոյ: Մերկացարուք (հանդերձ) սգոյ ձերոյ: Ս. Իգնատիոս աղաց իբրեւ ցորեան (առիւծք): Ողբացան (դուք) ամենայն եկեղեցիք քրիստոնէից:

*Բ. — Նշանակել բայերուն տեսակը, ձեւը, ժամանակը, թիւը եւ դէմքը:*

Զգուշասջիր միշտ ի կենակցութենէ արանց չարասրտաց: Ազուէս խորամանկ բանիւք գողացաւ զպանիր ագռաւուն: Ասէր Յիսուս ցՊետրոս. Յայժմ գիշերի երիցս ուրասցիս զիս: Սիմոն մոգ՝ որ զօրութեամբ դիւաց ամբարձեալ էր յօդս, յաւուր միում անկեալ ի բարձունէ անտի՝ սատակեցաւ աղօթիւք Ս. Պետրոսի: Հրեայք ոչ ուտէին հաց,



չեւ նախ լուացեալ զձեռս: Միով բանիւ Յիսուսի բացան աչք առնն ի ծնէ կուրի: Բարեգործութիւնք անձանց գթասիրաց ոչ մոռասցին առաջի Տեառն: Որ ունիցի հաւատս, եւ ասիցէ լերինս այսմիկ թէ բարձիր եւ անկիր ի ծով, եղիցի: Պահապանքն երթեալ զգուշանային հանդէպ գերեզմանին:

### Բ

#### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Պետրոս Յիսուսի Քրիստոսի գերեզմանը վազեց (ընթանամ): Մեր դրացւոյն տան կարասիներն աւազակներէ գողցուեցան: Եղիսէ մարգարէն Նէեմանին ըսաւ. Երեք անգամ Յորդանանու մէջ լուացուէ, եւ պիտի բժշկուիս (բժշկեսցիս): Յովնաթան իր զգեստներն հանեց (մերկանամ) ու Դաւթին հագցուց (զգեցոյց): Ամբարիշտ մարդոց ամէն խնդիրներն Աստուծմէ պիտի մերժուին (զլանամ): Քու թագաւորութիւնդ ձեռքէդ պիտի առնուի (բառնամ) եւ ընկերոջդ պիտի տրուի (տացի): Շատ պիտի զարմանաս երբ լսես (իմանամ) մէկիկ մէկիկ սուրբերուն չարչարանքները:

Բ. — Խօսք տուր (խոստանամ) մեզի այսօր՝ մոռնալ ամէն բան, եւ այն մարդուն հետ թշնամութիւն չընել (թշնամանամ): Ո՜վ մեղաւորներ, եթէ կը բաղձաք (ցանկամ) որ Աստուած վրանիդ գթայ, դարձէք ձեր չար ճամբաներէն: Յիսուսի Քրիստոսի բանաւոր գառներն ու ոչխարները՝ եկեղեցւոյ հովիւներու խնամքներուն (Նախդր. տրկ.) յանձնուեցան (հաւատամ): Այնպէս վազեցէք՝ որ կրնաք (կարասջիք) հասնիլ: Արքայութեան փառքի մէջ արդարներուն սրտերն ուրախութեամբ պիտի գինովնան (արբենամ): Զօրացէք ուժէ ինկած ձեռքեր, վասն զի ձեր բազուկներուն բեռները պիտի թեթեւնան: Ով որ պարապ տեղ կը բարկանայ՝ ետքը պիտի զղջայ: Մանր ծախքերը երբ շատնան՝ մեծամեծ ժառանգութիւններ կը սպառեն:

| | |
|---|---|
| Մէկիկ մէկիկ – Մի ըստ միոջէ | Ուժէ ինկած – Լքեալ |
| Հետ – Ընդ (տրականով) | Պարապ տեղ – Տարապարտուց |

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Դանիէլ կործանէ զԲէլ

(Շարայարութիւն)

Եկն Թագաւորն Դանիելիւ հանդերձ ի տուն Բէլայ: Եւ ասէն քուրմք Բէլայ. Ահաւասիկ մեք արտաքս ելցուք, և դու արքայ, դի՛ր առաջի դորա զկերակուրդ և զգինիդ խառնեալ դիցես, և փակեա զդուրսդ և կնքեա մատանեաւ քով. և եկեալ ընդ առաւօտս՝ եթէ ոչ գտցի այդ ամենայն կերեալ ի Բէլայ՝ մեռցուք մեք. ապա թէ ոչ՝ Դանիէլ, որ սուտ խօսեցաւ զմէնջ: Եւ նոքա վստահ էին, զի արարեալ էին ընդ սեղանովն մուտ անյայտ և ընդ այն մտանէին հանապազ և ուտէին զայն: Իբրև ելին արտաքս և Թագաւորն եդ զկերակուրսն առաջի Բէլայ, հրաման ետ Դանիէլ բերում մանկտւոյ, և բերին մոխիր և ցանեցին ընդ ամենայն մեհեանն առաջի Թագաւորին միայնոյ, և ելեալ արտաքս՝ փակեցին զդուռնն և կնքեցին մատանեաւ Թագաւորին և գնացին:

#### Բառագիտութիւն

Դանիելիւ հանդերձ — Դանիելին հետ մէկտեղ
Եւ զգինիդ խառնեալ դիցես — Լեցուր գինիդ ու դիր
Զի արարեալ էին ընդ սեղանովն մուտ անյայտ — Վասն զի սեղանին տակը ծածուկ դուռ բացեր էին
Արտաքս ելցուք — Դուրս ելնենք
Ընդ առաւօտս — Առաւօտը
Ընդ այն մտանէին — Անկէ կը մտնէին
Մեհեան — Կռատուն.

---



## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

### Երկրորդ լծորդութիւն

146. *Գովեմ բայն օրինակ է Բ. լծորդութեան, և այսպէս կը խոնարհի.*

#### Սահմանական եղանակ

| | Ներկայ | | Անկատար | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Գովեմ | կը գովեմ | Գովէի | կը գովէի |
| | Գովես | » գովես | Գովէիր | » գովէիր |
| | Գովէ | » գովէ | Գովէր | » գովէր |
| Յոգ. | Գովեմք | » գովենք | Գովէաք | » գովէինք |
| | Գովէք | » գովէք | Գովէիք | » գովէիք |
| | Գովեն | » գովեն | Գովէին | » գովէին |

| | Կատարեալ | | Ապառնի | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Գովեցի | գովեցի | Գովեցից | պիտի գովեմ |
| | Գովեցեր | գովեցիր | Գովեսցես | » գովես |
| | Գովեաց | գովեց | Գովեսցէ | » գովէ |
| Յոգ. | Գովեցաք | գովեցինք | Գովեսցուք | » գովենք |
| | Գովեցէք | գովեցիք | Գովեսջիք | » գովէք |
| | Գովեցին | գովեցին | Գովեսցեն | » գովեն |

#### Հրամայական եղանակ

| | Հաստատական | | Արգելական |
|---|---|---|---|
| Եզ. | Գովեա՛, եա՛ց, եսջի՛ր, | գովէ՛ | Մի՛ գովեր, մի՛ գովեր |
| Յոգ. | Գովեցէ՛ք, եսջի՛ք | գովեցէ՛ք | Մի՛ գովէք, մի՛ գովէք |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 146. Երկրորդ Լծորդութեան օրինակ մը տուր և խոնարհէ՛:

## Ստորադասական եղանակ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եզ. | Գովիցեմ | որ գովեմ | Յոգ. | Գովիցեմք | որ | գովենք |
| | Գովիցես | » գովես | | Գովիցէք | » | գովէք |
| | Գովիցէ | » գովէ | | Գովիցեն | » | գովեն |

## Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | Գովել | գովել |
| Անցեալ | Գովեալ | գոված, |
| Ապառնի | Գովելոց | գովելիք: |

147. *Ասել և Գիտել, Կարել և Մարթել (կըրնամ) բայերը կատարեալին, Ապառնիին, Հրամայականին և Անցեալ դերբային մէջ իրենց ե նշանագիրն ա ի փոխելով Ա. լծորդութեան կը հետևին այսպէս.*

| Կատր. | Ապառնի | Հրամայական. | Անց. դերբայ |
|---|---|---|---|
| Ասացի | Ասացից | Ասա՛, ասջի՛ր | Ասացեալ |
| Գիտացի | Գիտացից | Գիտա՛, ասջի՛ր | Գիտացեալ |
| Կարացի | Կարացից | Կարասջի՛ր | Կարացեալ |
| Մարթացի | Մարթացից | Մարթասջի՛ր | Մարթացեալ |

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Բնականօրէն լուծել սա խօսքերն իրենց պարագաներովը:*

Ա. — Որ ատեայ զեղբայր իւր՝ զԱստուած ոչ գիտէ: Ջախուն ողջոյն (բոլոր) գործեսցուք զգործս մեր, և ապա

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 147. Ի՞նչ գիտելիք կայ ասել, գիտել, կարել և մարթել բայերու մասին:



ննջեսցուք: Եթէ սիրիցէք զմիմեանս, ժառանգեսջիք զարքայութիւն երկնից: Այր բարի սիրէ զարդարութիւն: Մանուկ զգօն մեծարէ զծնողս իւր: Գիտաց Յիսուս զկեղծաւորութիւն Հրէից, յորժամ փորձեցին զնա բանիւք: Ամենայն երազահանք Եգիպտոսի ոչ կարացին մեկնել զերազն Փարաւոնի: Գտցէ մարդ զհաց քրտամբք երեսաց իւրոց: Աշակերտքն մոռացան առնուլ հաց: Ո՞ քննեսցէ զբարձրութիւն երկնից և զընդարձակութիւն տիեզերաց: Հրեայք ոչ խոստովանեցան զՔրիստոս Որդի Աստուծոյ: Այլ է գողութիւն և այլ է ստութիւն, և երկոքին զկորուստ ժառանգեսցեն:

Բ. — Բնութիւն զոմանս ի կենդանեաց պատսպարեաց կարծրապինդ մորթով: Խնդրեցէք յԱստուծոյ զիմաստութիւն, և մի զճոխութիւն և զփառս: Ծերութիւն և տաղտուկ ինքնակալութեան՝ ստիպեցին զկայսրն Դիոկղետիանոս յանձանօթ և ի խաղաղասէր կեանս: Փարիսեցիք տրտընջէին և ասէին ցՅիսուս. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ, և քոյքդ ուտեն և ըմպեն: Ոչ ոք ծառայ կարասցէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ՝ զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ: Պարսիկք ոչ տաճարս կառուցանէին և ոչ սեղանս, և պաշտէին զարեգակն, զլուսին, զհուր, զերկիր, զհողմ և զջուր: Իբրև կատարեաց Յիսուս զառակ այգւոյն և մշակացն, խնդրէին դպիրք և քահանայապետք ի նմին ժամու արկանել ի նա ձեռս, բայց երկնչէին ի ժողովրդենէն, զի գիտացին թէ առ նոսա ասաց զառակն զայն:

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Աստուած ստեղծեց մարդն ու ամէն կենդանիները: Պիտի սիրեմ զԱստուած՝ իմ ամէն զօրութեամբս, և ընկերներս՝ իմ անձիս պէս: Անզգամ մարդն իր խղճալի վիճակն հօս չըմբռներ (ոչ առնու ի միտ), բայց ետքը պիտի գիտնայ: Պէտք է (պարտ է) քրիստոնէին խաչակից ըլլալ

Քրիստոսի, որպէս զի կարենայ հանդերձեալ կենաց մէջ մասնակից ըլլալ անոր փառքին։ Վարժապետներն անհոգ աշակերտները պիտի խրատեն, պիտի յանդիմանեն և պիտի պատժեն անխրատները։ Հերովդէսի ծառաները նախատեցին զՅիսուս։ Ո՞րնք սպաննեցին արդեօք մեր դրացւոյն այս երկու կատուները։ Տղաք, աշխատութիւնը սիրեցէք, մրջիւնը զձեզ կը յորդորէ։ Քեզի բան մը պիտի ըսեմ, խնդրելով որ զայն ուրիշ մէկու մը պիտի չյայտնես (հանել ի վեր)։ Ադամ ու Եւա իմացան (գիտեմ) թէ մերկ են, և թզենիի տերևներ կարեցին ու իրենց մէջք կապելու լաթեր շինեցին (արարին)։

Բ. — Խօսքով և գործով (արդեամբք) պատուէ ծնողքդ։ Ճշմարիտ խոնարհութիւնը փառք չի փնտռեր։ Վաղն այս ժամուս պիտի առնեմ զամէնքը։ Անիկա որ լռել չգիտցաւ, խօսիլ ալ պիտի չգիտնայ։ Քահանայապետն իր հանդերձները պատռեց։ Յիսուս առաքեալները բարձր լեռ մը հանեց։ Մեր դասագրքերը բերի՛ր։ Իմիններս ու քուկիններդ բերի։ Թէ որ դու ես այն բարերար մարդն՝ համարձակ ըսէ մեզի։ Ձեզ ըսի, և չէք հաւտար։ Նախ դու օգնէ քեզի, որ ես ալ քեզ օգնեմ։ Թէ որ ընկերութեան մը առաջնորդ ըլլաս, գիտցիր որ գլխաւոր մը երբ ուզէ վայելուչ կերպով իր պաշտօնն ընել, պէտք է բարի օրինակ ըլլայ՝ աւելի գործով քան թէ խօսքով։

Մէջք կապելու լաթ — Ափածանելի։

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

## Դանիէլ կործանէ զԲէլ

(Շարայարութիւն)

Եւ քուրմքն մտին գիշերի ըստ սովորութեան իւրեանց. կանամբք և որդւովք իւրեանց, կերան զամենայն և ոչ ինչ թողին։ Կանխեաց Թագաւորն ընդ առաւօտն Դանիելիւ



հանդերձ, և ասէ. Ո՞ղջ են կնիքդ, Դանիէլ։ Եւ նա ասէ. Ողջ են, արքայ։ Եւ ընդ բանալ դրանցն՝ հայեցեալ Թագաւորին ի սեղանն՝ ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Մեծ ես, Բէլ, և ոչ գոյ նենգութիւն ի քեզ և ոչ մի։ Ծիծաղեցաւ Դանիէլ և կալաւ զԹագաւորն զի մի՛ մտցէ ի ներքս, և ասէ. Ադէ՛ հայեաց ընդ յատակդ, և տես ո՞յր է հետդ այդ։ Ասէ Թագաւորն. Տեսանեմ հետս արանց, կանանց և մանկտւոյ։ Յայնժամ բարկացեալ Թագաւորն՝ կալաւ ըզքուրմսն, և ցուցին նմա զգաղտնի դուրսն՝ ընդ որ մտանէին և ծախէին զսեղանն։ Կոտորեաց զնոսա Թագաւորն և զԲէլ ետ ի ձեռս Դանիելի, և կործանեաց զնա և զմեհեան նորա։

Բառագիտութիւն

Գիշերի — Գիշեր ատեն
Ընդ բանալ դրանցն — Դռները բացուելուն պէս
Ի ձայն մեծ աղաղակեաց — Բարձր ձայնով պոռաց
Կալաւ զԹագաւորն զի մի՛ մտցէ ի ներքս — Թագաւորը բռնեց որ ներս չմտնէ
Ադէ հայեա՛ց ընդ յատակդ — Մէկ մը յատակը դիտէ
Ընդ որ մտանէին և ծախէին զսեղանն — Ուսկից կը մտնէին և սեղանը կը սպառէին (ուտելով)։

# ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախորդ դասին

148. *Երկրորդ լծորդութեան բայերը կրաւորական կ'ըլլան, եթէ ներգործական ձևին ե նշանագիրն ի փոխենք, և կատարեալի ու միւս ժամանակներու վերջաւորութիւններն ըստ կանոնի վերածենք հետևեալ կերպով.*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 148. Ուրեմն Բ. լծորդութեան բայերն ի՞նչպէս կրաւորական կ'ըլլան։

| | Սհմ. Նր. | Կտր. | Ապռն. | Հրմկ. | Արգլ. | Ստրդ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ներգ. | Ածեմ | Ածի | Ածից | Ա՛ծ, | Մի՛ ածեր | Ածիցեմ |
| Կրաւ. | Ածիմ | Ածայ | Ածայց | Ածիր, | Մի՛ ածիր | Ածիցիմ |
| Ներգ. | Բերեմ | Բերի | Բերից | Բե՛ր, | Մի՛ բերեր | Բերիցեմ |
| Կրաւ. | Բերիմ | Բերայ | Բերայց | Բերիր, | Մի՛ բերիր | Բերիցիմ։ |

149. ***Գովեմ բային կրաւորական ձեւն այսպէս կը խոնարհուի.***

### *Սահմանական եղանակ*

| | Ներկայ | | | Անկատար | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եզ. | Գովիմ | կը | գովուիմ | Գովէի | կը | գովուէի |
| | Գովիս | » | գովուիս | Գովէիր | » | գովուէիր |
| | Գովի | » | գովուի | Գովէր | » | գովուէր |
| Յոգ. | Գովիմք | » | գովուինք | Գովէաք | » | գովուէինք |
| | Գովիք | » | գովուիք | Գովէիք | » | գովուէիք |
| | Գովին | » | գովուին | Գովէին | » | գովուէին |

| | Կատարեալ | | Ապառնի | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | Գովեցայ | գովուեցայ | Գովեցայց | պիտի | գովուիմ |
| | Գովեցար | գովուեցար | Գովեսցիս | » | գովուիս |
| | Գովեցաւ | գովուեցաւ | Գովեսցի | » | գովուի |
| Յոգ. | Գովեցաք | գովուեցանք | Գովեսցուք | » | գովուինք |
| | Գովեցայք | գովուեցաք | Գովեսջիք | » | գովուիք |
| | Գովեցան | գովուեցան | Գովեսցին | » | գովուին |

### *Հրամայական եղանակ*

| | Հաստատական | Արգելական |
|---|---|---|
| Եզ. | Գովեա՛ց, եսջի՛ր գովուէ՛ | Մի՛ գովիր մի գովուիր |
| Յոգ. | Գովեցարո՛ւք, եցա՛յք գովուեցէ՛ք | Մի՛ գովիք մի գովուիք |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 149. Խոնարհէ՛ գովեմ բային կրաւորական ձեւը։



### *Ստորադասական եղանակ*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Եզ. | Գովիցիմ | որ | գովուիմ | Յոգ. | Գովիցիմք | որ | գովուինք |
| | Գովիցիս | » | գովուիս | | Գովիցիք | » | գովուիք |
| | Գովիցի | » | գովուի | | Գովիցին | » | գովուին |

### *Դերբայք*

| | | |
|---|---|---|
| Աներիշ | Գովիլ | գովուիլ |
| Անցեալ | Գովեալ | գովուած |
| Ապառնի | Գովելոց | գովուելիք |

150. ***Ասեմ և Գիտեմ բայերն Ա. լծորդութեան համեմատ կրաւորական կ'ըլլան այսպէս.***

Կատարեալ

Ասացայ, –ացար, –ացաւ. –ացաք, –ացայք, –ացան
Գիտացայ, –ացար, –ացաւ. –ացաք, –ացայք, –ացան

Ապառնի

Ասացայց, –ասցիս, –ասցի. –ասցուք, –ասջիք, –ասցին
Գիտացայց, –ասցիս, –ասցի. –ասցուք, –ասջիք, –ասցին

Հրամայական

Ասասջիր, Ասացարուք. — Գիտասջիր, Գիտացարուք.
Անց. Դերբայ. — Ասացեալ. — Գիտացեալ։

**Ծանօթ.** — Կարեմ և Մարթեմ կը նկատուին իբր ներգործակերպ չէզոք բայեր և կրաւորական ձև չունին։

151. ***Այս Բ. լծորդութեան չէզոք բայերէն մաս մը ներգործակերպ են, այսինքն՝ միայն ներգործական ձեւով կը խոնարհին, մաս մ'ալ կրաւորակերպ, այսինքն՝ կրաւորական ձեւով միայն կը խոնարհուին։ Օրինակ.***

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 150. Ի՞նչպէս կը խոնարհուին ասեմ և գիտեմ բայերուն կրաւորական ձեւերը. — 151. Երկրորդ լծորդութեան միւս ամէն չէզոք բայերն ի՞նչպէս կը խոնարհուին։

| Ներգործակերպ չէզոք | Կրաւորակերպ չէզոք |
| --- | --- |
| Ամաչեմ, ամաչեցի, ամաչեա՛ | Աշխատիմ, աշխատեցայ |
| Գոչեմ, գոչեցի, գոչեա՛ | Բնակիմ, բնակեցայ |
| Տիրեմ, տիրեցի, տիրեա՛ | Դադարիմ, դադարեցայ |
| Դիմեմ, դիմեցի, դիմեա՛ | Երևիմ, երևեցայ |
| Մռնչեմ, մռնչեցի, մռնչեա՛ | Կագիմ, կագեցայ |
| Ժամանեմ, –նեցի, –նեա՛ | Ճեմիմ, ճեմեցայ |
| Սպասեմ, սպասեցի, սպասեա՛ | Վիճիմ, վիճեցայ. և այլն։ |

Ծանօթ. — Սոյն լծորդութեան կրաւորակերպ չէզոք բայերուն և ներգ. մտքով առնուած հասարակ բայերուն հրամայականը եցի՛ր կամ եսջի՛ր ըլլալու տեղ՝ եա՛ կամ եա՛ց կ'ըլլայ։ Օրինակ. Նայեա՛, նայեաց. ողորմեա՛, ողորմեա՛ց. խօսեա՛, խօսեաց։ — Ասոնց անորոշ դերբայն ալ ել կը վերջանայ և ոչ թէ իլ։ Ուստի կ'ըսուի. Նայել, ողորմել, խօսել, ծնանել, բնակել, երևել և այլն։

152. Ներգործական բայով կազմուած խօսք մը կրաւորական ընելու համար, բային ձևը փոխելէ զատ, պէտք է նաև Տէր բային բացառական խնդիր դնել, և հայցական խնդիրն՝ ուղղական Տէր բայի։ Զոր օրինակ.

| Ներգործական | Կրաւորական |
| --- | --- |
| Աստուած ստեղծ զաշխարհ | Աշխարհ ստեղծաւ յԱստուծոյ |
| Ծնողք սիրեն զորդիս | Որդիք սիրին ի ծնողաց |
| Յիսուս բժշկէր զհիւանդս | Հիւանդք բժշկէին ի Յիսուսէ |

Փոխադարձաբար՝ կրաւորական բայով կազմուած խօսք մը ներգործական կ'ըլլայ, եթէ խօսքին Տէր բային հայցական խնդիր ընենք և բացառական խնդիրն ալ՝ ուղղական Տէր բայի, ինչպէս յիշեալ օրինակներէն յայտնի է։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 152. Ներգործական բայով կազմուած խօսք մը կրաւորական ընելու համար ուրիշ ի՛նչ պէտք է ընել։



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

Հետևեալ խօսքերուն ներգործականները կրաւորական դարձնել և կրաւորականները՝ ներգործական։

Ա. — Արեգակն լուսաւորէ զերկիր։ Յուդիթ սպան զՀողեփեռնէս։ Քրիստոս փրկեաց զմեզ արեամբ իւրով։ Ստեղծաւ աշխարհս յԱստուծոյ։ Աշխատասէր մեղուք ի բաց վանեն զծոյլ պիծակս (վայրի մեղու)։ Մովսէս առաքեցաւ յԱստուծոյ՝ փրկիչ Իսրայէլի։ Եղիա քարոզեաց զՔրիստոս մինչև ի կատարած աշխարհի։ Յակոբ ծնաւ զՅովսէփ և զերկոտասան նահապետսն։ Մարտիրոսք առ ոչինչ համարեցան զսպառնալիս բռնաւորաց և զտանջանսն։ Յիսուս Քրիստոս ծնաւ ի Մարեմայ կուսէն Հոգւով սրբով։ Որդիքն Յակոբայ վաճառեցին զՅովսէփ զեղբայրն իւրեանց։ Յովնաթան բազում անգամ փրկեաց զսիրելին իւր զԴաւիթ։ Դանիէլ աղօթիւք փրկեցաւ ի բերանոյ առիւծուց։ Վրէժ մահուան Աբելի խնդրեցաւ ի Կայենէ։ Արեգակն պաշտեցաւ յամենայն ազգաց արևելից։

Քերականօրէն լուծել սա խօսքերը։

Բ. — Այր առաքինի մեծարի յամենեցունց։ Դղրդեցաւ (սարսեցաւ) քաղաքն ամենայն ի ձայնէ մանկանցն և ծերոց։ Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք։ Կամ լռեա և կամ խօսեաց բարւոք։ Քսենոփոն կոչեցաւ Մեղու Ատտիկեան։ Ի՞ւ և որո՞վ օրինակաւ գործեցաւ մեղսն։ Յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց,

որում անուն էր Նազարեթ։ Յորժամ կոչիցիս ի կոչունս (խնջոյք), մի բազմիցիս յառաջին բարձին (պատուոյ տեղ)․ գուցէ պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ, և եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ․ Տուր սմա տեղի։ Դատեցարուք զմարդ ի գործոց և ոչ ի կերպարանաց։

## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա․ — Գրուած է․ Տունս աղօթքի տուն պիտի կոչուի։ Որոնց շատ տրուեցաւ (աւանդիմ) աւելի պիտի պահանջուի անոնցմէ։ Այն ատեն մարգարէին խօսքը կատարուեցաւ՝ որ կ'ըսէ։ Կը փառաւորէին (հովիւք) զԱստուած այն ամէն բանին համար՝ զոր տեսան, ինչպէս պատմուեցաւ իրենց։ Լսելով Յակոբ (լուեալ Յակովբայ) թէ կը գտնուի կերակուր Եգիպտոսի մէջ, որդիները ղրկեց (առաքեմ)։ Յիսուսի անուան առջև ամէն ծունր պիտի կրկնուի։ Իգիպտոսի ձախորդութիւններն Յոյներէն և բարբարոսներէն կը պատմուէին։ Աշխարհիս անշունչ և շնչաւոր էակներն և մարդս ստեղծուեցան Աստուծմէ։ Այն գիրքը՝ զոր կարդացինք, արդեօք քեզմէ՞ շարադրուեցաւ թէ ուրիշ մէկէ մը։ Այս անմեղ գառնուկը որմէ՞ սպաննուեցաւ։ Փարաւոն բոլոր իւր զօրքերովը Կարմիր ծովուն ալիքներուն մէջ ընկղմեցաւ։ Յիսուս Հերովդեսի ծառաներէն նախատուեցաւ։ Ծոյլ աշակերտները միշտ կը յանդիմանուին։ Սուրբ մարտիրոսները շատ տանջանքներու համբերեցին, քարկոծուեցան և աղօթուեցան։

Բ․ — Աստուած ըսաւ Կայենին․ Եղբօրդ մահուան վրէժը քեզմէ պիտի խնդրուի։ Պիտի չսիրուիս՝ թէ որ զքեզ միայն սիրես։ Ծածուկ բան չկայ՝ որ ժամանակով չյայտնուի։ Ջուր կ'ուզուի իրաւցընէ, բայց ոչ թէ ջրհեղեղ։ Ո՛վ որ կը ջանայ ուրիշները խաբել, շատ անգամ ինք անոնցմէ կը խաբուի։ Սոխակները գարունը կ'ողջունեն, և ծիծեռնիկները տանիքներու վրայ բոյն կը շինեն (յօրինեմ)։ Շատ անգամ պատերազմողներուն զրահները թշնամիներու



նիզակներէն կը խորտակուին։ Պտղոմէոս Մակեդոնացւոց թագաւորն յաղթուելով Կելտացիներէն՝ սպաննուեցաւ, և բոլոր Մակեդոնիա բարբարոսներուն ոտքի տակ գնաց (լինել կոխան ոտից)։ Կիւրոս մանուկը Լիւսանդրի կ'ըսէր․ Այս պարտէզներն ու ծառերն ինծմէ տնկուեցան։

## Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Կործանումն Սոդոմայ

Մարդիկն Սոդոմացւոց չարք և մեղաւորք էին առաջի Աստուծոյ յոյժ։ Եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ ընդ երեկս, և ասեն ցՂովտ․ Կործանելոց եմք զքաղաքս զայս, զի բարձրացաւ աղաղակ սոցա առաջի Տեառն, և առաքեաց զմեզ Տէր սատակել զսա։ Իբրև եղև առաւօտ՝ փութացուցանէին հրեշտակքն զՂովտ և ասէին․ Արի առ զկին քո և զերկուս դստերս քո և ել աստի, զի մի՛ և դու կորնչիցիս ընդ անօրէնութիւնս քաղաքիդ։ Եւ կալան հրեշտակքն զձեռանէ նորա և զձեռանէ կնոջ նորա և զձեռանէ երկուց դստերաց նորա, և հանին զնա և ելին արտաքոյ քաղաքին։ Արեգակն ծագեաց յերկիր․ և Տէր տեղաց ի Սոդոմ և ի Գոմոր ծծումբ և հուր, և կործանեաց զքաղաքսն զայնոսիկ և զամենայն բնակիչս քաղաքացն։

#### Բառագիտութիւն

Ընդ երեկս — Երեկոյեան դէմ
Կործանելոց եմք զքաղաքս զայս — Այս քաղաքը պիտի կործանենք
Կալան հրեշտակքն զձեռանէ նորա — Հրեշտակներն անոր ձեռքէն բռնեցին
Զի մի՛ և դու կորնչիցիս ընդ անօրէնութիւնս քաղաքիդ — Որպէս զի չըլլայ թէ քաղքիս անօրէնութեանց հետ դուն ալ կորսուիս
Տէր տեղաց ի Սոդոմ և ի Գոմոր ծծումբ և հուր — Աստուած Սոդոմայ ու Գոմորայ վրայ ծծումբ ու կրակ թափեց․

## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ·

### Երրորդ լծորդութեան

153· *Արգելուլ բայն օրինակ է Գ. լծորդութեան, և այսպէս կը խոնարհի·*

### *Սահմանական եղանակ*

| | Ներկայ | | Անկատար | |
|---|---|---|---|---|
| Եզ· | Արգելում | կ'արգիլեմ | Արգելուի | կ'արգիլէի |
| | Արգելուս | արգիլես | Արգելուիր | արգիլէիր |
| | Արգելու | արգիլէ | Արգելոյր | արգիլէր |
| Յոգ· | Արգելումք | արգիլենք | Արգելուաք | արգիլէինք |
| | Արգելուք | արգիլէք | Արգելուիք | արգիլէիք |
| | Արգելուն | արգիլեն | Արգելուին | արգիլէին |

| | Կատարեալ | | | Ապառնի | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եզ· | Արգելի | արգիլեցի | Եզ· | Արգելից | | արգիլեմ |
| | Արգելեր | արգիլեցիր | | Արգելցես | | արգիլես |
| | Արգել | արգիլեց | | Արգելցէ | պիտի | արգիլէ |
| Յոգ· | Արգելաք | արգիլեցինք | Յոգ· | Արգելցուք | | արգիլենք |
| | Արգելէք | արգիլեցիք | | Արգելջիք | | արգիլէք |
| | Արգելին | արգիլեցին | | Արգելցեն | | արգիլեն |

### *Հրամայական եղանակ*

| | Հաստատական | | Արգելական |
|---|---|---|---|
| Եզ· | Արգե՛լ, | արգիլէ՛ | Մի՛ արգելուր, մի՛ արգիլեր |
| Յոգ· | Արգելէ՛ք | արգիլեցէ՛ք | Մի՛ արգելուք, մի՛ արգիլէք |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 153. Երրորդ լծորդութեան օրինակ մը տուր և խոնարհէ՛։



### *Ստորադասական եղանակ*

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արգելուցում որ արգիլեմ | Արգելուցումք որ արգիլենք |
| Արգելուցուս » արգիլես | Արգելուցուք » արգիլէք |
| Արգելուցու » արգիլէ | Արգելուցուն » արգիլեն |

### *Դերբայք*

| | | |
|---|---|---|
| Անորոշ | Արգելուլ | արգիլել |
| Անցեալ | Արգելեալ | արգիլած |
| Ապառնի | Արգելլոց | արգիլելիք |

154· *Երրորդ լծորդութեան ներգործական ձևերը կրաւորականի կը վերածուին՝ կանոնաւոր վերածումներն ընելով նախորդներուն նման։ Օրինակ·*

| | | Կատարեալ | Ապառնի | Հրամայական |
|---|---|---|---|---|
| Թողում | Ներգ· | Թող-ի | Թող-ից | Թո՛ղ |
| | Կրաւ· | Թող-այ | Թող-այց | Թող-ջի՛ր |
| Ջենում | Ներգ· | Ջեն-ի | Ջեն-ից | Ջե՛ն |
| | Կրաւ· | Ջեն-այ | Ջեն-այց | Ջեն-ի՛ր, Ջեն-ջի՛ր |
| Հեղում | Ներգ· | Հեղ-ի | Հեղ-ից | Հե՛ղ |
| | Կրաւ· | Հեղ-այ | Հեղ-այց | Հեղ-ի՛ր, Հեղ-ջի՛ր։ |

155· *Արգելուլ բային կրաւորական ձևն այսպէս կը խոնարհուի·*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 154. Այս Գ. լծորդութեան բայերն ի՞նչպէս կրաւորական կ'ըլլան. — 155. Խոնարհէ՛ արգելուլ բային կրաւորական ձևը։

## Սահմանական եղանակ

| | Ներկայ | | Անկատար | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Արգելում | կ'արգիլուիմ | Արգելուի | կ'արգիլուէի |
| | Արգելուս | արգիլուիս | Արգելուիր | արգիլուէիր |
| | Արգելու | արգիլուի | Արգելոյր | արգիլուէր |
| Յոգ. | Արգելումք | արգիլուինք | Արգելուաք | արգիլուէինք |
| | Արգելուք | արգիլուիք | Արգելուիք | արգիլուէիք |
| | Արգելուն | արգիլուին | Արգելուին | արգիլուէին |

Կատարեալ

| Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Արգելայ | արգիլուեցայ | Արգելաք | արգիլուեցանք |
| Արգելար | արգիլուեցար | Արգելայք | արգիլուեցաք |
| Արգելաւ | արգիլուեցաւ | Արգելան | արգիլուեցան |

Ապառնի

| Եզակի | | | Յոգնակի | | |
|---|---|---|---|---|---|
| Արգելայց | պիտի | արգիլուիմ | Արգելցուք | պիտի | արգիլուինք |
| Արգելցիս | » | արգիլուիս | Արգելջիք | » | արգիլուիք |
| Արգելցի | » | արգիլուի | Արգելցին | » | արգիլուին |

## Հրամայական եղանակ

| | Հաստատական | | Արգելական |
|---|---|---|---|
| Եզ. | Արգելջիր | արգիլուէ | Մի արգելուր մի արգիլուիր |
| Յոգ. | Արգելարուք | արգիլուեցէք | Մի արգելուք մի արգիլուիք |

## Ստորադասական եղանակ

| Եզակի | | | Յոգնակի | | |
|---|---|---|---|---|---|
| Արգելուցում | որ | արգիլուիմ | Արգելուցումք | որ | արգիլուինք |
| Արգելուցուս | » | արգիլուիս | Արգելուցուք | » | արգիլուիք |
| Արգելուցու | » | արգիլուի | Արգելուցուն | » | արգիլուին |



## Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | Արգելուլ | արգիլուիլ |
| Անցեալ | Արգելեալ | արգիլուած |
| Ապառնի | Արգելլոց | արգիլուելիք |

*Ծանօթ.* — Թէ այս և թէ նախընթաց լծորդութեանց ներգ. ձևին կատարեալ եզակի երրորդ դէմքը եթէ միավանկ և բային արմատն է՝ սկիզբը ե կամ է գրերը կ'առնէ սովորաբար. բաղաձայնով սկսած արմատին ե, և ձայնաւորով սկսածին է կը դրուի: Զոր օրինակ.

| Բայ | Արմատ | Կտր. Գ. Դէմք | |
|---|---|---|---|
| Լամ | Լաց | կ'ըլլայ ե լաց | լացաւ |
| Բանամ | Բաց | » ե բաց | բացաւ |
| Տեսանեմ | Տես | » ե տես | տեսաւ |
| Արկանեմ | Արկ | » է արկ | ձգեց |
| Առնում | Առ | » է առ | առաւ |
| Օծանեմ | Օծ | » է օծ | օծեց |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Լուծել հետևեալ խօսքերու մասերը՝ իրենց պարագաներով:*

Ա. — Զենին անդ գառինս երկուս: Արգելի զոտս իմ ի չար ճանապարհաց: Դիզէք փայտս ի վերայ փայտից: Յաւելից զայդ ևս ի վերայ քո: Անօրէնն Անտիոքոս եհեղ արեան բազում: Որդիքն Ղևեայ առնուին կանայս ի դստերացն Ահարոնի: Զինուորքն թքին ընդ երեսս նորա և ծեծէին զգլուխն եղեգամբ: Իբրև արգելուին Առաքեալք զմանկտին, ասէ ցնոսա Յիսուս. Մի արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից: Ամենայն ուղխք (գետ) ի ծով գնան, և ծով ոչ լնու: Յորժամ հեղոյր արևն

Ստեփանոսի՝ Պաւղոս էր որ պահէր զհանդերձսն։ Փութացուցանէին հրեշտակքն զՂովտ ասելով։ Զերծիր (փախչիլ) ի լեառն, գուցէ ընդ նոսա (անոնց հետ) ըմբռնիցիս։

Բ. — Թողի ինձ եօթն հազար այր, որք ոչ կրկնեցին ծունր (պաշտել) Բահաղու։ Ի խաշանց առնումք զասր վասն զգեստուց։ Յիսուս ի հարսանիս Կանայ՝ յորժամ պակասեաց գինին՝ ասէր ցսպասաւորսն. Լցէք զթակոյկդ ջրով, և նոքա լցին։ Դատաւորք վճռեցին պակել զպատանին Սոփոկլէս, և Նաքիլէս նկուն եղեալ՝ (յաղթուած) եթող զհայրենիս։ Հրեայք խցին զականջս իւրեանց և դիմեցին առհասարակ ի վերայ Ստեփանոսի։ Յաւել Տէր խօսել ընդ Աքազու և ասէ. Խնդրեա՛ դու քեզ նշան։ Ետես Ագար աղբիւր ջրոյ կենդանւոյ, չոգաւ ելից զտիկն ջրով և արբոյց մանկանն։ Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Երբ ուզեց ամբոխին մէջ մտնել, աշակերտները զինքը չթողուցին։ Ե՛լ, Պետրոս, մորթէ և կե՛ր։ Շատ արտասուք կը թափէին (հեղում) կորսուածին վրայ։ Ցաւ ցաւի վրայ աւելցուցին։ Թէ որ առիր, ինչո՞ւ իբրև չառած կը պարծիս։ Եղևին ծառի մը տակ ձգեց (ընկենում) մանուկը։ Աճեցէք և շատցէք և լեցուցէք երկիրը։ Սուրբերէն ոմանք առիւծներուն բերանները գոցեցին (խնում)։ Կրակ իջեցուց Եղիա և այրեց (կիզում) յիսուն զօրականները։ Արգիլուեցաւ և մնաց բանտին մէջ տասնուչորս տարի (Ծյցկն.)։ Մեռաւ և աւելցաւ իր ժողովուրդին քով (առ ժողովուրդ իւր)։ Դանէն դուրս թող ձգուի, որպէս զի գիրը կատարուի (լնում) որ կ'ըսէ։ Անառակ որդին թողուց իր հայրենի տունն ու հեռու աշխարհ գնաց, որպէս զի հոն ազատութեամբ ուզածին պէս ապրի։

Բ. — Զըլլայ թէ ապերախտն զքեզ արգիլէ բարիք ընելէ։ Թէ որ մարդ մը ունենայ (լինիցի մարդոյ) հարիւր



ոչխար, և անոնցմէ մէկը մոլորի, միթէ պիտի չթողո՞ւ իննսուն և ինն ոչխարները լեռներու վրայ և երթայ մոլորեալը փնտռէ։ Ո՞վ պիտի արգիլէ զԱստուած պատժելու անզգամ և անգութ մարդիկը, և զանոնք որ մոլութեանց ամէն տեսակներու մէջ իրենք զիրենք մատնած են (անձնատուրք են)։ Աննիբաղ որ Հռովմայեցւոց բախտը տարակոյսի մէջ ձգեց (յերկբայս արկանեմ), վերջապէս իր հայրենակիցներուն նախանձին համար՝ ստիպուեցաւ պատերազմին ասպարէզը թողուլ և Կարքեդոն դառնալ, իր ազգին կորուստն ողբալու։

| | |
|---|---|
| Դուրս – Արտաքոյ | Ուզածին պէս – Ըստ հաճոյս |
| Տակ – ի ներքոյ | Տեսակ – Ազգ՝ |

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

Եղիա և ողջակէզ իւր

Մերձեցոյց Եղիա զամենայն ժողովուրդն և ասէ ցնոսա. Մինչև ցե՞րբ կաղայք յերկուս հետս. եթէ Տէր է Աստուած, երթայք զհետ նորա, և եթէ Բահաղն իցէ, երթայք զհետ նորա։ Ես մնացեալ եմ միայն մարգարէ Տեառն, և մարգարէք Բահաղու՝ արք չորեք հարիւր և յիսուն։ Տացեն մեզ երկուս եզինս. և ընտրեսցեն իւրեանց զմին, և յօշեսցեն և դիցեն ի վերայ փայտից. և հուր մի՛ դիցեն. և ես արարից զմիւս եզնն և եդից ի վերայ փայտից, և հուր ոչ մատուցից։ Եւ կարդասջիք զանուն աստուծոյն ձերոյ, և ես կոչեցից զանուն Տեառն Աստուծոյ իմոյ. և Աստուած որ լուիցէ հրով՝ նա է Աստուած։ Եւ առին մարգարէքն ամօթոյ զզուարակն՝ զոր ետ նոցա. և արարին և կարդացին զանուն Բահաղու յայգուէ մինչև ցհասարակ օր. և ասէին. Լո՛ւր մեզ, Բահա՛ղ, լո՛ւր մեզ։ Եւ ոչ գոյր բարբառ և ոչ ունկնդրութիւն։

Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Մինչև ցե՞րբ կաղայք յերկուս հետս – Մինչև ե՞րբ տարտամ պիտի գըտնուիք | Զուարակ – Եզ, հորթ<br>Յայգուէ մինչև ցհասարակ օր – Առտուընէ մինչև կէսօր |

Յօշեսցեն – Պատառ պատառ ընեն։

## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

### Յաւելուածով բայեր. Պարզ եւ Ածանցեալ արմատ

156. *Երեք լծորդութեանց բայերուն ներգործական և կրաւորական ձևերն՝ իրենց նիւթական կազմութեան տեսակէտով՝ երկու շարքերու կը վերածուին, ոմանք Պարզ և ոմանք Յաւելուածով կ'ըսուին։*

*Պարզ կ'ըսուին այն բայերը՝ որոնց պարզ արմատին վրայ կ'աւելցուին անմիջապէս ամ, եմ, ում վերջաւորութիւնները, ինչպէս. Աղ–ամ, սիր–եմ, զեն–ում։*

*Յաւելուածով կ'ըսուին անոնք՝ որոնց արմատին և վերջաւորութեան մէջ կը մտնեն այս գրերը կամ մասնիկները. ն, ան, են, չ, նչ։ Զոր օրինակ.*
*փախ–ն–ում, տես–ան–եմ, մերձ–են–ամ, թաք–չ–իմ, երկ–նչ–իմ։*

157. *Այս յաւելուած մասնիկները կը գտնուին Սհմ. Ներկային, Անկատարին, Արգելականին, Ստորադասականին և Անորոշ և Ապառնի դերբայներուն մէջ, որով ասոնք Յաւելուածով ժամանակներ կ'ըսուին։*

*Իսկ կատարեալին, Ապառնիին, Հրամայականին և Անցեալ դերբային մէջ յիշեալ մասնիկները*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 156. *Բայերն իրենց նիւթական կազմութեան տեսակէտով՝ ե՞րբ պարզ կ'ըսուին և ե՞րբ յաւելուածով.* — 157. *Ո՞ր ժամանակներուն մէջ այս յաւելուած գրերը կը գտնուին, և որո՞նց մէջ չեն գտնուիր և ի՞նչ կ'ըսուին այդ ժամանակները։*



*կամ բոլորովին կը վերնան, և կամ կը ձևափոխուին. անոր համար ասոնք Պարզ ժամանակներ կ'ըսուին։*

158. *Ո՛ր և իցէ բայ իր սովորական արմատէն զատ՝ ունի նաև ուրիշ մը, որ է կատարեալին եզակի երրորդ դէմքը։*

*Այս ալ երկու կերպ կրնայ ըլլալ. երբեմն Ներկայի արմատին հետ նոյն է, և այն ատեն պարզ արմատ կ'ըսուի. և երբեմն այս վերջինիս վրայ աց, եաց, ոյց (ոյս, ոյզ) մասնիկները կ'աւելնան, և այն ատեն կ'ըսուի ածանցեալ արմատ։*

*Օրինակի համար՝ հանեմ բային կատարեալի արմատը պարզ է, վասն զի սահմ. Ներկային և կատարեալին արմատը մէկ է՝ հան. ընդհակառակն սիրեմ բային կատարեալի արմատն ածանցեալ կ'ըսուի, վասն զի Ներկային և կատարեալին արմատները կը տարբերին իրարմէ. Ներկայինն է սիր, կատարեալինը՝ սիրեաց։*

*Ծանօթ.* — *Միայն ուցանեմ (ուսանեմ, ուզանեմ) վերջացող բայերուն մէջ՝ ներկային արմատներն ալ ոյց ածանցով կ'ըլլան։ Զոր օրինակ. Դարձոյց՝ դարձուց–անեմ, շիջոյց՝ շիջուց–անեմ։*

*Դարձեալ, պէտք չէ շփոթել մէկմէկու հետ բայի մը և բառի մը արմատները, որոնք կրնան իրարմէ տարբերիլ։ Զոր օրինակ. Կեցի, – ցեր (ապրիլ), ունի արմատ–բայի՝ կեաց, իսկ արմատ–բառի՝ կեանք. մթագնեցայ, – ցար (խաւարիլ), բայարմատն է՝ մթագնեաց, իսկ բառի արմատը՝ մութ։ Այսպէս նաև ուրիշ շատ մը ածանցեալ և բարդ բառերէ կազմուած բայերու մէջ։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 158. *Բայերը քանի՞ արմատ ունին, և կատարեալի արմատը ե՞րբ պարզ կ'ըսուի ու ե՞րբ ածանցեալ։*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն յաւելուածով ժամանակները, յաւելուած մասնիկները ու պարզ կամ ածանցեալ արմատները։*

Ա. — Երկնչէին որդիքն Իսրայէլի հայել յերեսս Մովսէսի։ Որք մեղանչէինն՝ մեռանէին հոգւով, և եթէ ոչ ապաշխարէին՝ կորնչէին։ Յեսու հարկանէր Տեառն զօրութեամբ զամենայն ազգսն՝ որք մարտնչէին ընդ որդիսն Իսրայէլի։ Ասէր Յիսուս ցՓարիսեցիսն. Հարցից և ես բան մի։ Եցոյց նոցա զամենայն գանձն որ կային ի տան Տեառն։ Եդիտ Աստուած զԳաւիթ ծառայ իւր և իւղով սրբով էօծ զնա։ Թողի զնոսա գնալ ըստ կամս անձանց իւրեանց (իրենց ուզածին պէս)։ Իբրև ետես եթէ բարւոք ետ (լաւ կերպով տուաւ) զպատասխանին, ասէ. Ձես հեռի յարքայութենէն Աստուծոյ։ Յաճախ մարդ անմտագոյն գտանի քան զանբանս։ Հրաշալի տեսարան բնութեան յաղթահարէ զկուրութիւն և զանմտութիւն ամբարշտաց։

Բ. — Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին ի խորխորատ անկանին։ Արձակեաց զժողովուրդն՝ ել ի նաւ, և գնաց ի սահմանս Մագդաղենայ։ Իսրայելացիք յերկրէն Եգիպտոսի անցին յերկիրն Քանանու։ Որք ոչ հրաժարեն ի փոքր թերութեանց, անկցին անյապաղ ի մեղս մեծամեծս։ Կատոն անդադար յուշ արկանէր (միտքը ձգել) Հռովմայեցւոց զանպաճոյճ կեանս, զանշահասիրութիւն և զամենայն առաքինութիւնս նախնեաց իւրեանց։ Հրամայեաց Յիսուս ժողովրդեան բազմել ի վերայ գետնոյ, և առեալ զեօթն նկանակն և զձկունսն՝ գոհացաւ, եբեկ և ետ ցաշակերտսն, և նոքա արկին առաջի ժողովրդեանն։ Յայնմ պատերազմի մանկունք բաժանեցան ի



մարց, կանայք յարանց, և մատնեցան ի ձեռս անագորոյն թշնամեաց։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Կը զարմանամ որ այդպէս շուտ կը փոփոխուիք։ Աստուծոյ ամէն հրեշտակներն անոր երկրպագութիւն պիտի ընեն (երկիր պագանել)։ Շատ ու թանկագին պարգևներ կը խոստանար։ Աշարոմի գաւազանը կլլեց (կլանել) միւսերուն գաւազանները։ Փրկէ (ապրեցուցանել) քու անձդ, և իջիր խաչէդ։ Տաճարին վարագոյրը պատռեցաւ (հերձանել) վերէն մինչև վար։ Կտրէ զայն, և նետէ (ընկենուլ) վրայէդ (թարգմանէ քեզմէ)։ Ինչո՞ւ կը հարցնես ինծի, անոնց հարցուր որ լսեցին (լուան) և տեսան։ Յիսուս տեսաւ զՆաթանայէլ որ իրեն կու գար։ Զմօտեցուցին (մերձեցուցանել) զմեզ տաճարին։ Եօթներորդ օրուան մէջ դադրեցաւ (հանգչիլ) Աստուած իր գործերէն։ Ամպի հետքի պէս պիտի անցնի մեր կեանքը։ Այդ անզգամ մարդիկը բերէք (ածել) հոս և սպաննեցէք իմ առջևս։

Բ. — Ցըցուց քեզ Աստուած այդ ամէն (բանը)։ Մի նետէք (արկանել) սրբութիւնը շուներուն առջև։ Թագաւորն առաւօտեան դէմ տաճարը մտաւ։ Յիսուս իմացաւ (գիտել) անոնց խորհուրդը և ըսաւ։ Ցանձն առաւ, ներեց և անոնց հետ խաղաղութիւն ըրաւ (արար)։ Լիսիա նորէն անցնելով գնաց թագաւորին (առ արքայ)։ Մարդոցմէ ոչ մէկն հիւանդութիւններէ և ծերութենէ ազատեցաւ։ Առաքինութենէ զատ՝ ամէն բան երազի պէս կ՚անցնի։ Աշխարհս սատիճանով շինուած է, մէկը կ՚ելնէ և ուրիշ մը կ՚իջնէ։ Պէտք է ցաւակից ըլլալ այն խեղճերուն որ կը մուրեն, չէ թէ անիծել։ Ո՛վ որ իր քսակին մէջ ստակ չի գտներ, ուրիշներուն քսակին մէջ գտնել չյուսայ։

Առաւօտեան դէմ — Ընդ առաւօտն։

## Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Եղիա և ողջակէզ իւր*

*(Շարայարութիւն)*

*Եւ այպանեաց ի միջօրէին զքուրմսն Եղիա և ասէ. Մեծաձայն կարդացէք, զի աստուած է, թերևս զբօսանք ինչ իցեն նմա, կամ թէ ի քուն իցէ և յարիցէ։ Եւ իբրև մերձեցան յընդերեկսն, խօսեցաւ Եղիա ընդ մարգարէս գարշելեացն և ասէ. Ի բաց կացէք, արդ ես արարից զողջակէզն իմ։ Եւ առ Եղիա երկոտասան քար և շինեաց զքարինսն յանուն Տեառն. և եդէզ զշերտսն ի վերայ սեղանոյն զոր արար. և յօշեաց զողջակէզն և եդէզ ի վերայ շերտիցն։ Եւ ասէ. Առէք ինձ չորս սափորս ջրոյ և հեղէք ի վերայ ողջակիզիդ և ի վերայ շերտիցդ։ Եւ ասէ. Կրկնեցէք. և կրկնեցին։ Եւ ասէ. Երեքնեցէք. և երեքնեցին։ Գնայր ջուրն շուրջ զսեղանովն։ Եւ աղաղակեաց Եղիա յերկինս և ասէ. Լուր ինձ, Տէր, լուր ինձ հրով, և ծանիցէ ժողովուրդս թէ դու ես Տէր Աստուած։ Եւ անկաւ հուր յերկնից և եկեր զողջակէզն և զշերտսն։*

**Բառացիտուրքեն**

| | |
|---|---|
| Այպանեաց — Ծաղրեց | Ի բաց կացէք — Հեռացէք |
| Իբրև մերձեցան յընդերեկսն — Երբ իրիկուան ժամանակները մօտեցան | Եդէզ զշերտսն ի վերայ սեղանոյն — Ջարդած (փայտերը) սեղանին վրայ շարեց |
| Առէք ինձ չորս սափորս ջրոյ — Ինծի չորս սափոր ջուր բերէք | Երեքնեցէք — Երեք անգամ կրկնեցէք |



## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Լծորդութիւն յաւելուածով բայերու

159. *Ան յաւելուածով բայեր Ա. և Բ. լծորդութեանց մէջ կը գտնուին։*

*Ա. լծորդութեան պարզ ժամանակներուն մէջ ան յաւելուածը աց կը փոխուի, իսկ Բ. լծորդութեան նոյն ժամանակներուն մէջ բոլորովին կը ջնջուի։ Օրինակ.*

Ա. Լծորդութիւն

*Գոհ-ան-ամ, գոհ-աց-այ, գոհ-աց-այց, գոհ-աց-իր, գոհ-աց-եալ. Զարմ-ան-ամ, զարմ-աց-այ, զարմ-աց-այց, զարմ-աց-իր, զարմ-աց-եալ. Ընթ-ան-ամ, ընթ-աց-այ, ընթ-աց-այց, ընթ-աց-իր, ընթ-աց-եալ. Մուր-ան-ամ, մուր-աց-այ, մուր-աց-այց, մուր-աց-իր, մուր-աց-եալ։*

Բ. Լծորդութիւն

*Արկ-ան-եմ, արկ-ի, արկ-ից, արկ, արկ-եալ. Հատ-ան-եմ, հատ-ի, հատ-ից, հատ, հատ-եալ. Հարց-ան-եմ, հարց-ի, հարց-ից, հարց, հարց-եալ. Սպան-ան-եմ, սպան-ի, սպան-ից, սպան, սպան-եալ։*

160. *Գոհանամ և Հատանեմ բայերը կը խոնարհուին այսպէս.*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 159. *Ո՞ր լծորդութեանց մէջ ան յաւելուածով բայեր կը գտնուին և ի՞նչ փոփոխութիւն կը կրէ յիշեալ մասնիկը Ա. և Բ. լծորդութեանց պարզ ժամանակներուն մէջ։* — 160. *Ա. և Բ. լծորդութեանց ան յաւելուածով բայերու մէյ-մէկ օրինակ տուր և խոնարհէ՛։*

Սահմանական ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| գոհանամ | գոհանամք | հատանեմ | հատանեմք |
| գոհանաս | գոհանայք | հատանես | հատանէք |
| գոհանայ | գոհանան | հատանէ | հատանեն |

Անկատար

| | | | |
|---|---|---|---|
| գոհանայի | գոհանայաք | հատանէի | հատանէաք |
| գոհանայիր | գոհանայիք | հատանէիր | հատանէիք |
| գոհանայր | գոհանային | հատանէր | հատանէին |

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| գոհացայ | գոհացաք | հատի | հատաք |
| գոհացար | գոհացայք | հատեր | հատէք |
| գոհացաւ | գոհացան | եհատ | հատին |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| գոհացայց | գոհասցուք | հատից | հատցուք |
| գոհասցիս | գոհասջիք | հատցես | հատջիք |
| գոհասցի | գոհասցին | հատցէ | հատցեն |

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| — | — | — | — |
| գոհասջիր | — | հա՛տ | հատէք |
| Մի՛ գոհանար | Մի՛ գոհանայք | Մի՛ հատաներ | Մի՛ հատանէք |

Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| գոհանայցեմ | գոհանայցեմք | հատանիցեմ | հատանիցեմք |
| գոհանայցես | գոհանայցէք | հատանիցես | հատանիցէք |
| գոհանայցէ | գոհանայցեն | հատանիցէ | հատանիցեն |

Դերբայք

| | | |
|---|---|---|
| Անորոշ | գոհանալ | հատանել |
| Անցեալ | գոհարեալ | հատեալ |
| Ապառնի | գոհանալոց | հատանելոց։ |



161. Հարկանեմ (զարնել) որ Բ. լծորդութեան յաւելուածով բայերուն կարգէն է, պարզ ժամանակներուն մէջ կ գիրն ալ կը ձգէ, վասն զի արմատն հար է և ոչ հարկ։ Օրինակով տեսնենք.

Սահմանական

Ներկայ

| | |
|---|---|
| Հարկանեմ | Հարկանեմք |
| Հարկանես | Հարկանէք |
| Հարկանէ | Հարկանեն |

Անկատար

| | |
|---|---|
| Հարկանէի | Հարկանէաք |
| Հարկանէիր | Հարկանէիք |
| Հարկանէր | Հարկանէին |

Կատարեալ

| | |
|---|---|
| Հարի | Հարաք |
| Հարեր | Հարէք |
| Եհար | Հարին |

Ապառնի

| | |
|---|---|
| Հարից | Հարցուք |
| Հարցես | Հարջիք |
| Հարցէ | Հարցեն |

Հրամայական

Հա՛ր Հարէք Մի՛ հարկաներ Մի՛ հարկանէք

Ստորադասական

| | |
|---|---|
| Հարկանիցեմ | Հարկանիցեմք |
| Հարկանիցես | Հարկանիցէք |
| Հարկանիցէ | Հարկանիցեն |

Դերբայք

| | |
|---|---|
| Անորոշ | Հարկանել |
| Անցեալ | Հարեալ |
| Ապառնի | Հարկանելոց |

**Ծանօթ.** — Բ. լծորդութեան մէջ քանի մը բայեր կան՝ որ այս ան յաւելուած ունեցողներուն կը նմանին, բայց պարզ բայեր են։ Զոր օրինակ. Դարմանեմ, ժամանեմ, սերմանեմ բայերուն արմատները են դարման, ժաման, սերման, որոնք պարզ ժամանակներու մէջ ալ անփոփոխ կը պահուին. դարման-եցի, ժաման-եցեր, սերման-եաց։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 161. Ի՞նչպէս կը խոնարհուի հարկանեմ բայը։

Ընդհակառակն՝ ածեմ, բերեմ, հանեմ, հեղուեմ բայերը պարզ ժամանակներուն մէջ ածեցի, բերեցի, հանեցի, հեղուեցի չեն ըլլար, այլ Բ. լծորդութեան ան յաւելուածով բայերուն պէս՝ պարզ արմատներուն առջև վերջաւորութիւնները կը դրուին միայն. Ած-ի, բեր-ի, հան-ի, հեղու-ի. ած-ից, բեր-ից, հան-ից, հեղու-ից. ա՛ծ, բե՛ր, հա՛ն, հեղո՛յս. ած-եալ, բեր-եալ, հան-եալ, հեղու-եալ։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել հետևեալ հրահանգի բայերուն պարզ և յաւելուածով ժամանակները ու պարզ և ածանցեալ արմատները։*

Ա. — Զոր ոչն ուսար յաւուրս մանկութեան քոյ, ոչ ուսցիս ի ժամանակի ծերութեան։ Բաղաամ ոչ անէծ զԻսրայէլ, այլ օրհնեաց։ Հերովդէս ձեռն արկ (սկսաւ) չարչարել զԱռաքեալսն։ Հրեայք հանին ի խաչ ընդ Յիսուսի և այլ ևս երկուս չարագործս։ Աստուած ելից զժողովուրդ իւր յերեսաց իւրոց։ Մուծէք (մտցնել) զգոստ ի ներքս, քանզի ունին ինչ ասել տանուտեարնն։ Առաքեալք մատուցան առնուլ հաց։ Ստեղծ Տէր Աստուած զերկին և զերկիր ի վեց աւուրս։ Օծեր իւղով զգլուխ իմ։ Երկիր պագից Աստուծոյ իմոյ մինչև եմ (կամ) ես։ Հրեշտակ Աստուծոյ իջեալ յերկնից՝ նստէր ի վերայ գերեզմանին։ Ծովն Կարմիր եկուլ զԵգիպտացիս և Իսրայելացիք անցին իբրև ընդ ցամաք։

Բ. — Որդին Աստուծոյ էջ յերկնից առնել զկամս Հօր իւրոյ երկնաւորի։ Զակքէ, փութա՛ էջ այտի, զի այսօր ի տան քում պարտ է ինձ ագանել (կենալ)։ Եհան Յիսուս զդևն ի նմանէ և լուծան կապանք լեզուի նորա։ Կին ոմն ախտաժէտ խորհէր ի մտի՝ թէ միայն մերձեցայց ի հանդերձս Յիսուսի՝ փրկեցայց։ Պատմի թէ Հերմէս եգիպ-



զտատրակ մեռեալ և յայնմանէ յօրինեաց զքնար։ Սակաւաձեռն գունդ Լևոնիդեայ հարեալ խորտակեցաւ յանթիւ բազմութենէ թշնամեաց։ Ենէաս բարձեալ ի վերայ ուսոց իւրոց զծերունի հայրն իւր զԱնքիս՝ ել ի Տրովայ։ Մին աղօթս առնէ և միւսն անիծանէ. ո՞յր ձայնի լուիցէ Տէր։ Բախտք երկուց քերցն Կաստորի կարի (շատ) այլազան գտան։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Անցած ժամանակն ա՛յլ ևս չի դառնար։ Չարագործ մարդիկ Կայենի պէս թշուառ պիտի ըլլան, անիծուած Աստուծմէ և մարդկանցմէ։ Այդ յաւանակն ինչո՞ւ կը քակէք։ Այդ չար տղան իր մօրմէն անիծուեցաւ։ Անոր լեզուին կապերը քակուեցան։ Կայծակը խիստ բարձր ծառերը կը զարնէ։ Հիւրկանոսը կապած՝ Տիգրանին կը բերէին (ածել)։ Բան մը չբերինք աշխարհ և ոչ ալ պիտի կարենանք տանիլ։ Բարձր լերան մը վրայ հանելով զանիկա՝ ցցուց աշխարհիս ամէն թագաւորութիւնները։ Բաբելացիք ձգեցին Դանիէլը առիւծներուն գուբը։ Կրակը կը մոռնար (անգիտանալ) իր այրող բնութիւնը, և սուրբ մանուկներն անվնաս կը պահէր։ Կ՚ուզե՞ս որ լաւ մեռնիլ (բարւոք) սորվիս, նախ լաւ ապրիլ սորվէ։

Բ. — Բաղակ ըսաւ Բաղաամին. Եկուր և անիծէ այս ժողովուրդը։ Միթէ կորսնցնելով պիտի կորսնցնե՞ս արդարն ամբարշտին հետ։ Շողոքորթութեամբ մեծամեծներուն մօտութիւնները կը զօրանան, և առաքինութիւնները կ՚ապականին։ Յիսուս ժողովրդապետին տունը մտնելով ըսաւ. Ինչո՞ւ խռոված էք և կուլաք, տղան մեռած չէ, այլ կը քնանայ։ Ուրիշի պակասութենէն զգուշանանք, և լաւութենէն մեր պակասութիւնը ուղղենք։ Սոկրատին վրայ շատ չափաւորութիւն տեսնուեցաւ, ասոր համար իր բոլոր կեանքին մէջ ամենևին տկարութիւն չզգաց։ Երբ բան մը չգիտնաս և ուզես զայն սորվիլ ուրիշէ մը, մի՛ մոռնար որ աշակերտին առաջին պարտքը լռութիւնն է։

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Ընթրիք Բաղտասարայ

Բաղտասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց հազար առն։ Եւ իբրև ընդ գինիս եմուտ, հրամայեաց բերել զսպաս արծաթոյ և ոսկւոյ, զոր եհան Նաբուգոդոնոսոր հայր նորա ի տաճարէն որ յԵրուսաղէմ։ Բերին և ըմպէին նոքօք թագաւորն և մեծամեծք իւր. ըմպէին գինի և օրհնէին զաստուածս ոսկեղէնս և զարծաթեղէնս և զպղնձիս և զերկաթիս, և զԱստուածն յաւիտենից ոչ օրհնեցին։ Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ, և գրէին ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին, և թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն որ գրէր։

#### Բառագիտութիւն

Իբրև ընդ գինիս եմուտ — Երբոր գինովցաւ

Զսպաս արծաթոյ և ոսկւոյ — Արծաթ և ոսկի ամանները

Գրէին ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին — Թագաւորին պալատին ծեփ տրուած պատին վրայ կը գրէին։

---

## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Շարունակութիւն նախորդ դասին

162. Ըն յաւելուածով բայեր Ա. լծորդութեան մէջ միայն կը գտնուին, և այդ մասնիկը պարզ ժամանակներու մէջ եզ կը փոխուի։ Զոր օրինակ.

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 162. Ո՞ր լծորդութեան մէջ ըն յաւելուածով բայեր կը գտնուին և այդ յաւելուածը պարզ ժամանակներուն մէջ ի՞նչ կ'ըլլայ։



| | Կատար. | Ապառնի | Հրամյկն. | Անց. Դերբ. |
|---|---|---|---|---|
| Արբենամ | Արբեցայ | Արբեցայց | Արբեցիր | Արբեցեալ |
| Մերձենամ | Մերձեցայ | Մերձեցայց | Մերձեցիր | Մերձեցեալ |
| Ցագենամ | Ցագեցայ | Ցագեցայց | Ցագեցիր | Ցագեցեալ |
| Քաղցենամ | Քաղցեցայ | Քաղցեցայց | Քաղցեցիր | Քաղցեցեալ |

163. Ամէն չ և նչ յաւելուածով բայեր Բ. լծորդութեան կրաւորական ձևին կը վերաբերին, և են կրաւորակերպ չէզոք բայեր։ Ասոնք կատարեալ և ապառնի ժամանակներու մէջ չ և նչ յաւելուածները թողլով՝ արմատին և վերջաւորութեան մէջ ե գիրը կ'առնեն, և անցեալ դերբայնին միշտ ուցեալ կ'ըլլայ։ Օրինակ.

| | Կատարեալ | Ապառնի | Անց. Դերբայ |
|---|---|---|---|
| Թաք-չ-իմ | Թաք-ե-այ | Թաք-ե-այց | Թաք-ուցեալ |
| Թռ-չ-իմ | Թռ-ե-այ | Թռ-ե-այց | Թռ-ուցեալ |
| Ոստ-չ-իմ | Ոստ-ե-այ | Ոստ-ե-այց | Ոստ-ուցեալ |
| Պակ-չ-իմ | Պակ-ե-այ | Պակ-ե-այց | Պակ-ուցեալ |
| Փախ-չ-իմ | Փախ-ե-այ | Փախ-ե-այց | Փախ-ուցեալ |
| Մատ-չ-իմ | Մատ-ե-այ | Մատ-ե-այց | Մատ-ուցեալ |
| Երկ-նչ-իմ | Երկ-ե-այ | Երկ-ե-այց | Երկ-ուցեալ |
| Մարտ-նչ-իմ | Մարտ-ե-այ | Մարտ-ե-այց | Մարտ-ուցեալ |

Ծանօթ. — Այս չ յաւելուածով բայերէն շատերը երկրորդ ձև մ'ալ ունին ն յաւելուածով, Գ. լծորդութեան ում վերջաւորութեամբ։ Ուստի

| | | | |
|---|---|---|---|
| Թաքչիմ | կ'ըսուի նաև | Թաքնում (պահուըտիմ) |
| Թռչիմ | » | » | Թռնում (թռչիմ) |
| Ոստչիմ | » | » | Ոստնում (ցատքեմ) |
| Պակչիմ | » | » | Պակնում (շատ վախնամ) |
| Փախչիմ | » | » | Փախնում (փախչիմ). և այլն։ |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 163. Չ և նչ յաւելուածով բայք ո՞ր լծորդութեան կը վերաբերին և ի՞նչպէս կը խոնարհին։

Սակայն պարզ ժամանակներու մէջ այս երկու ձևերն իրարմէ չեն տարբերիր:

**164. Փախչիմ կամ փախնում այսպէս կը խոնարհուի:**

### Յաւելուածով ժամանակներ

Սահմանական ներկայ

| | |
|---|---|
| **փախչիմ, -չիս, -չի** | **փախնում, -նուս, -նու** |
| **փախչիմք, -չիք, -չին** | **փախնումք, -նուք, -նուն** |

Անկատար

| | |
|---|---|
| **փախչէի, -չէիր, -չէր** | **փախնուի, -նուիր, -նոյր** |
| **փախչէաք, -չէիք, -չէին** | **փախնուաք, -նուիք, -նուին** |

Արգելական

| | |
|---|---|
| **Մի՛ փախչիր, Մի՛ փախչիք** | **Մի՛ փախնուր, Մի՛ փախնուք** |

Ստորադասական

| | |
|---|---|
| **փախչիցիմ, -ցիս, -ցի** | **փախնուցում, -ցուս, -ցու** |
| **փախչիցիմք, -ցիք, -ցին** | **փախնուցումք, -ցուք, -ցուն** |

Անորոշ և Ապառնի դերբայք

| | |
|---|---|
| **փախչել, փախչելոց** | **փախնուլ, փախնլոց** |

### Պարզ ժամանակներ

(Երկու ձևերն ալ նոյնացած)

| Կատարեալ | Ապառնի |
|---|---|
| **փախեայ, -եար, -եաւ** | **փախեայց, -իցես, -իցէ** |
| **փախեաք, -եայք, -եան** | **փախիցուք, -իջիք, -իցեն** |

| Հրամայական | Անց. Դերբայ |
|---|---|
| **փախի՛ր, փախիջի՛ր** | **փախուցեալ** |
| **փախերո՛ւք, փախիջի՛ք** | |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 164. Խոնարհէ՛ փախչիմ և փախնում բայը:



**Ծանօթ.** — **Մեղ-անչ-եմ** և քանի մը բայերու, ինչպէս **Առ-նում**, **Զգած-նում** (զգածուիմ), **Հեղձ-նում** (խղդուիմ), **Ջեռ-նում** (տաքնամ) յաւելուածը, պարզ ժամանակներուն մէջ՝ բոլորովին կը վերնայ: Օրինակ. **Մեղ-անչ-եմ**, **մեղ-այ**, **մեղ-այց**, **մեղ-իցես**, **մեղ-իր**, **մեղ-ուցեալ**. — **Առ-նում**, **առ-ի**, **առ-եր**, **էառ**, **առ-ից**, **առ-եալ**. — **Զգած-նում**, **զգած-այ**, **զգած-այց**, **զգած-իր**, **զգած-եալ**. — **Հեղձ-նում**, **հեղձ-այ**, **հեղձ-այց**, **հեղձ-իր**, **հեղձ-եալ**. և այլն: — **Երդ-նում** պարզ ժամանակներու մէջ ն յաւելուածին տեղ ու կ'առնէ: ինչպէս. **Երդ-ու-այ**, **երդ-ու-ար**, **երդ-ու-աւ**, **երդ-ու-այց**, **երդ-ու-իցիս**, **երդ-ու-իցի**, **երդ-ու-իր**, **երդ-ու-արուք**, **երդ-ու-եալ**: Իսկ **Յանց-ան-եմ** (յանցանք գործեմ) որ ան յաւելուածով բայ մ'է, պարզ ժամանակներուն մէջ չ և նչ յաւելուածով բայերուն պէս կը խոնարհի. **Յանց-ե-այ**, **յանց-ե-ար**, **յանց-ե-աւ**, **յանց-ե-այց**, **յանց-ի-ցես**, **յանց-ի-ցէ**, **յանց-ու-ցեալ**:

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն ժամանակները, և քերականօրէն լուծել ամէն մէկ նախադասութիւն:*

Ա. — **Որդիքն Իսրայելի ուտէին զմանանայն յանապատին և ոչ յագենային: Մատիք առ Տէր և առէք զլոյս: Քաղցեալ և ոչ ետուք ինձ ուտել: Ասէին Իսրայելացիք. Հարքն մեր մեղան, և մեք պատուհասիմք: Թռեաւ աղաւնին ի տապանէն և դարձաւ անդրէն յետս: Դատաւորն ցասուցեալ ընդ այն՝ (անոր վրայ) մռնչէր իբրև զառիւծ: Յուդա երկեաւ յետ մատնութեանն, և մատուցեալ առ քահանայապետսն՝ ասէ. Մեղայ, զի մատնեցի զարիւն արդար: Տէր, մարտիր ընդ այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս: Աշակերտքն Յիսուսի երկուցեալ ի մրրկէ ծովուն՝ աղաղակեցին.**

Վարդապետ, կորնչիմք աւասիկ: Փախերուք ի մեղաց իբրև յերեսաց օձի: Բազումք ի բռնաւորաց կորեան չարաչար մահուամբ:

Բ. — Ո՛վ աշակերտ, երկի՛ր ի ստախօսէ և ի զրպարտչէ իբրև ի գողոյ և յաւազակէ: Հսկայք՝ որդիք երկրի՝ մարտեան ընդ աստուածս: Գառինք ի գայլոց երկնչին, և ժողովուրդք ի բռնաւորաց: Նաւն՝ որով փախչէր Յովնան ի Թարշիշ՝ կայր ի վտանգի. վասն որոյ երկուցեալ նաւապետն՝ հրաման ետ ընկենուլ զկարասին ի ծով: Աշակերտքն երեքին՝ իբրև լուան զձայնն յերկնից ի Թաբոր լերին, երկեան յոյժ և անկան ի վերայ երեսաց իւրեանց: Ծարաւի լեր սիրոյն, և անդէն (մէկէն) աղբիւր կենդանութեան յագեցուսցէ զքեզ: Եթէ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս, երթիջիր բազմիջիր ի յետին տեղւոջ, զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ՝ ասիցէ. Բարեկամ, ի վեր մատիր:

## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Անտառին մէջ՝ մեծ ու խոր փոս մը ձգեց զանիկա: Կշտացիր (յագենամ) խենդ չարածեր: Բաղարջակերաց տօնը մօտեցաւ ու ամէն իսրայելացիք իրենց բնակութիւնները փախան: Ծածկուէ ատեն մը, մինչեւ որ Աստուծոյ բարկութիւնն անցնի: Արծիւներուն ձագերը բարձր տեղեր թռան: Լսեցի (լսայ) ձայնդ և վախցայ: Եթէ չապաշխարէք, ամէնքդ նոյնպէս պիտի կորսուիք: Երկու կողմի բանակները պատերազմեցան (մարտնչիմ) իրարու հետ: Արթնցաւ (զարթնում) փարաւոն և նորէն քնացաւ (մտանել ի քուն): Թող զննեմ սիւներն և կռթնիմ (յենում) անոնց (Ընդր. տրակ.): Ապշելով (պշնում) երկինք կը նայէին (հայել ընդ երկինս) անոր երթալուն:

Բ. — Եթէ յանցանք գործեցիր (յանցանեմ), ինչո՞ւ չես ապաշխարեր: Խօսք տուր (խոստանամ) և երդուընցիր ինծի՝ այն մարդուն վնաս մը չընելու: Ո՛վ որ Աստուծմէ կը վախնայ, միայն անկէ կը վախնայ: Մեղանչեցի, վասն



զի անմեղ արիւն թափեցի: Երբ արթընցան՝ զանիկա իրենց քով (առ իւրեանս) գտան: Ձրի տուր ինչ որ Աստուծմէ ձրի առիր: Ծառաներն անոր մօտենալով կ'աղաչէին: Զգոյշ եղիր ոչ թէ միայն սիրոյ հակառակ խօսք մը զրուցելէն, այլ փախիր նաև ուրիշներուն բերնէն ալ զայն լսելէն: Սատանան Յիսուսի մօտենալով կ'ըսէր. Թէ որ Աստուծոյ որդի ես՝ ըսէ որ այս քարերս հաց ըլլան:

Խոր փոս – Վիհ
Խենդ – Խելակորոյս

Ատեն մը – Առ ժամանակ մի
Բարձր տեղեր – Բարձունք.

## Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

## Ընթրիք Բաղտասարայ

(Տարայարութիւն)

Յայնժամ հատան գոյնք թագաւորին. և յօդք միջոյ նորա լուծանէին և ծունկք նորա զմիմեանս բաբախէին: Աղաղակեաց և ասէ. Որ ոք ընթերցցի զգիրդ զայդ և զմեկնութիւն դորա ցուցանէ ինձ, ծիրանիս զգեցցի և երրորդ ի թագաւորութեան իմում տիրեսցէ: Մտանէին ամենայն իմաստունք Բաբելացւոց, և ոչ կարէին զգիրն ընթեռնուլ, և ոչ զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին: Յայնժամ ածին ի ներքս զԴանիէլ. և ասէ թագաւորն ցԴանիէլ. Ես լուայ զքէն թէ կարող ես մեկնել մեկնութիւնս. և արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ և զմեկնութիւն դորա ցուցանել ինձ, ծիրանիս զգեցցիս և երրորդ ի թագաւորութեան իմում տիրեսցես:

### Բառագիտութիւն

Հատան գոյնք թագաւորին – Թագաւորին գոյնը նետեց
Ծունկք նորա զմիմեանս բաբախէին – Անոր ծունկերն իրարու կը զարնուէին

Յօդք միջոյ նորա լուծանէին – Մէջքին խաղերը կը քակուէին
Ես լուայ զքէն – Ես քու վրայօքդ լսեցի.

## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Շարունակութիւն նախորդ դասերուն

165. Գրաբար միավանկ և ն յաւելուածով քանի մը բայեր կան՝ որոնց արմատն ի բնէ ց կը վերջանայ, բայց այս գիրը յաւելուածով ժամանակներու մէջ՝ ն և երբեմն ռ տառերուն հանդիպելով կը ջնջուի։ Օրինակով տեսնենք.

| Արմատ | Սահմ. Ներկ. | Անկատար | Ստորդասկն. | Ան. Դերբ. |
|---|---|---|---|---|
| կաց | կա-մ | կա-յի | կա-յցեմ | կա-լ |
| Լաց | Լա-մ | Լա-յի | Լա-յցեմ | Լա-լ |
| Դարձ | Դառ-նամ | Դառ-նայի | Դառ-նայցեմ | Դառ-նալ |
| Բաց | Բա-նամ | Բա-նայի | Բա-նայցեմ | Բա-նալ |
| Թաց | Թա-նամ | Թա-նայի | Թա-նայցեմ | Թա-նալ |
| Լից | Լ-նում | Լ-նուի | Լ-նուցում | Լ-նուլ |
| Խից | Խ-նում | Խ-նուի | Խ-նուցում | Խ-նուլ |
| Ցեց | Ցե-նում | Ցե-նուի | Ցե-նուցում | Ցե-նուլ |

Ծանօթ. — Այսպիսի արմատով բայի մը, եթէ ներգործական է, կատարեալ եզ. երրորդ դէմքը և հրամայականը մի և նոյն բայարմատն է. վասն զի

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կաց | թէ | կեցիր | ըսել է՝ | թէ | կեցաւ՝ | որ է | եկաց |
| Բաց | » | բաց | » | » | բացաւ | » | եբաց |
| Լաց | » | լաց | » | » | լացաւ | » | ելաց |
| Լից | » | լեցուր | » | » | լեցուց | » | ելից |
| Խից | » | գոցէ | » | » | գոցեց | » | եխից. և այլն։ |

Իսկ դարձ և ընթերց և ուրիշ նման արմատներու ր գիրն ռ կը փոխուի յատուկ պատճառի մը համար, որուն բացատրութիւնը տես Ուղղագրութեան մասին մէջ։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 165. Ի՞նչ գիտելիք կայ քանի մը բայերու արմատական ց գրին և ն յաւելուածին վրայ։



166. Ամէն ուցանեմ վերջացող բայեր անցողական կ'ըլլան, վասն զի գործողութիւնը ուրիշին ընել տալ կը նշանակեն. ասոնք կը ձևանան՝ չէզոք բայերու կատարեալի արմատին կցելով յիշեալ մասնիկը, ինչպէս կը տեսնուի յաջորդ օրինակներուն մէջ.

| | Չէզոք բայ | Արմատ կատարեալի | Անցողականի վերածուած |
|---|---|---|---|
| Ա. Լծորդ. | Գնամ | Գնաց | Գնաց-ուցանեմ |
| | Դառնամ | Դարձ | Դարձ-ուցանեմ |
| | Խաղամ | Խաղաց | Խաղաց-ուցանեմ |
| | Մերձենամ | Մերձեաց | Մերձեց-ուցանեմ |
| Բ. Լծորդ. | Ամաչեմ | Ամաչեաց | Ամաչեց-ուցանեմ |
| | Գոչեմ | Գոչեաց | Գոչեց-ուցանեմ |
| | Իջանեմ | Էջ | Իջ-ուցանեմ |
| | Հանգչիմ | Հանգ | Հանգ-ուցանեմ |
| | Մեռանիմ | Մեռ | Մեռ-ուցանեմ |
| Գ. Լծորդ. | Զարթնում | Զարթ | Զարթ-ուցանեմ |
| | Զգենում | Զգեաց | Զգեց-ուցանեմ |
| | Պակնում | Պակ | Պակ-ուցանեմ |
| | Ջեռնում | Ջեռ | Ջեռ-ուցանեմ։ |

Ծանօթ. — Այս կանոնէս քիչ մը կը խոտորին **Կորնչիմ**, **Փլանիմ** (փլչիմ) և քանի մը նման բայեր, որոնց արմատին ուսանեմ և ուզանեմ պէտք է յարել՝ անցողական ընելու համար։ Իսկ ներգործական բայերն այս ձևին վերածուելու տեղ, **Տամ** բայով կը բացատրուին։ Ուստի կ'ըսուի. Տամ տանել, տացուք բանալ, տուր ընթեռնուլ, մի տայք ընկենուլ. և այլն։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 166. Ուցանեմ վերջացող բայերն ի՞նչ կ'ըսուին և ի՞նչպէս կը ձևանան։

167. *Այս անցողական բայերն ուցանիմ ձեւով կրաւորական չեն ըլլար երբէք, այլ երբ հարկը պահանջէ՝ սովորաբար չէզոքը կը գործածուի։ Օրինակ.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխանակ* | *Դարձուցանիմ* | *ըսելու՝* | *կ'ըսուի* | *Դառնամ* |
| » | *Իջուցանիմ* | » | » | *Իջանեմ* |
| » | *Հանգուցանիմ* | » | » | *Հանգչիմ* |
| » | *Ջեռուցանիմ* | » | » | *Ջեռանիմ* |

*Եւ երբեմն ալ՝ էական բային օժանդակութեամբ բաղադրեալ ժամանակ կը կազմուի այսպէս. Դարձուցեալ լինիմ, իջուցեալ եղեն, հանգուցեալ եղիցուք, ջեռուցեալ լինէին. և այլն։*

168. *Մատուցանեմ (տալ, ներկայացնել) բայն այսպէս կը խոնարհուի.*

### *Սահմանական*

Ներկայ

*Մատուցանեմ, ցանես, ցանէ, ցանեմք, ցանէք, ցանեն*

Անկատար

*Մատուցանէի, ցանէիր, ցանէր, ցանէաք, ցանէիք, ցանէին*

Կատարեալ

*Մատուցի, ցեր, տոյց, տուցաք, տուցէք, տուցին*

Ապառնի

*Մատուցից, տուցես, տուցէ, տուցուք, տուջիք, տուցեն*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 167. *Ուցանեմ վերջացող բայերուն կրաւորական ձեւն ի՞նչպէս կը կազմուի. — 168. Խոնարհէ՛ մատուցանեմ բայը։*



### *Հրամայական*

*Մատո՛, Մատուցէ՛ք. Մի՛ մատուցաներ, Մի՛ մատուցանէք*

| *Ստորադասական* | | *Դերբայք* | |
|---|---|---|---|
| *Մատուցանիցեմ,* | *ցանիցեմք* | Անորոշ | *Մատուցանել* |
| *ցանիցես,* | *ցանիցէք* | Անցեալ | *Մատուցեալ* |
| *ցանիցէ,* | *ցանիցեն* | Ապառնի | *Մատուցանելոց* |

*Ծանօթ.* — Ինչպէս այս օրինակին մէջ կը տեսնուի, *ուցանեմ* վերջացող բայք Բ. լծորդութեան *ան* յաւելուածով բայերէն են. պարզ ժամանակներուն մէջ այս յաւելուածը կը զեղջուի։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել սա հրահանգի բայերուն պարզ և յաւելուածով ժամանակները, չէզոքներուն անցողականները, և փոխադարձաբար։*

Ա. — *Կինն մեղաւոր թանայր զգետինն արտասուօք։ Բա՛ց զբերան քո և խօսեաց։ Ձայն աղօթից լնու զտաճար Աստուծոյ։ Թացից զպատառն իմ և տաց մատնըչին իմում։ Դարձարուք առ իս, և ես դարձայց առ ձեզ։ Կացէք և հանգերուք աստ սակաւիկ մի։ Լցան ամենեքին Հոգւով սրբով։ Կորոյս աշխարհն զայրն պատուական։ Ո՞չ ապաքէն քեզ ջուր արբուցի։ Ո՞ զգեցոյց քեզ զհանդերձս։ Հրեշտակն զարհուրեցոյց զպահապանս գերեզմանին։ Ես հովիւս յանցեայ, դոքա ոչխարք զի՞ արարին։ Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բաղխեցէք (դուռ զարնել) և բացցի ձեզ։*

Բ. — Կերան ամենքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ լի, և որք կերանն՝ էին իբրև արք չորք հազարք։ Իմաստունք նմանեցուցանեն զկեանս անըրջոց։ Արք ոմանք ածէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։ Որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն Քրիստոսի՝ գտցէ զնա։ Աստուած ելից զտիեզերս սքանչելեօք։ Հրեայք խցին զականջս իւրեանց և դիմեցին առհասարակ ի վերայ Ստեփանոսի։ Սատանայ ած զՅիսուս յԵրուսաղէմ, և կացուցեալ զնա ի վերայ աշտարակի տաճարին՝ ասէ. Եթէ որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի ի վայր։ Բազումք ի թռչնոց՝ ի մերոց նահանգաց երթեալ՝ անցուցանեն զձմեռն յաշխարհս ջերմինս (տաք)։

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Նոյ տապանին պատուհանը բացաւ։ Մեղաւոր կին մը Յիսուսի ոտքն արցունքով կը թրջէր (թանամ)։ Յիսուս գլուխը ծռելով (խոնարհեցուցանեմ) հոգին աւանդեց։ Քաղաքապետը քաղաքին դռները բանալով՝ մարդասիրութեամբ ընդունեցաւ (ընկալաւ) զանիկա։ Ճահիճները լեցընելով (լնում) անցուց բանակը։ Առիւծներուն բերանները կը գոցէին (խնում)։ Աղեքսանդր ծառի մը (ճխդր. տր.) կռթնելով՝ (յենում) սկսաւ ամենուն վրայ նետ նետել (արձակեմ)։ Նափոլէոն Պոնափարդ իւր քաջ զինուորներէն մեծ մասը Մոսկուայի արշաւանքին մէջ կորսնցուց։ Դառնալով հայրենիքը՝ նորէն շէնցուց (զարդարեմ)։ Նաւին ետևի կողմէն չորս խարիսխ ձգեցին։ Զգէ զէնքերդ և ինծի անձնատուր եղիր։ Այն հեղինակին ամէն գրքերը կարդացած եմ (ընթեռնում)։ Թոյն խմցուցին (արբուցանեմ) և սպաննեցին զանիկա։ Փառաւոր զգեստներդ հագուէ և իշխանին դիմացն ելիր։

Բ. — Ցըցուցէք ինծի դահեկանը. անոնք ալ ցըցուցին։ Տղաքներ կը բերէին (մատուցանեմ) որպէս զի ձեռք դնէ անոնց վրայ։ Ծիրանի զգեստներ հագուեցուցին և թագաւոր



անուանեցին զանիկա։ Տէր, մարէ (շիջուցանեմ) մեզմէ հնոցին բոցը։ Աչքդ բաց, որպէս զի ուրիշներէ չխաբուիս։ Զարաբարոյ մարդն այն ատեն աւելի կը յայտնուի, երբ զինքը ծածկել ուզէ։ Շողոքորթութիւններն հոգիները կը կորսնցընեն։ Պարտք ունեցող ծառան՝ իր ծառայակիցներէն մէկը բռնելով կը խղդէր ու կ'ըսէր. Վճարէ (հատուցանեմ) ինծի ինչ որ կը պարտիս։ Անաքսագորաս իր որդւոյն մահուան լուրն առնելով՝ կ'ըսէր. Գիտէի արդէն թէ մահկանացուներ ծնած եմ։

Ետևի կողմէն – Յետուստ կողմանէ | Թոյն – Դեղ մահու
Տղաքներ – Մանկտի | Պարտք ունեցող – Պարտապան։

## Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Ընթրիք Բաղտասարայ*

(Շարայարութիւն)

Ասէ Դանիէլ. Արքայ, Աստուած Բարձրեալ զմեծութիւն և զթագաւորութիւն և զպատիւ և զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում. և յորժամ բարձրացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան մարդկան։ Եւ դու, որդի նորա Բաղտասար, ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ։ Վասն այսորիկ յերեսաց նորա առաքեցաւ թաթ ձեռինն, և զգիրդ զայդ գրեաց։ Եւ այս ինչ է գիրդ՝ որ գրեալ է. Մանէ, Թեկէլ, Փարէս։ Եւ այս է մեկնութիւն բանիցդ. Մանէ, չափեաց Աստուած զթագաւորութիւն քո և վախճանեաց զնա. Թեկէլ, կշռեցաւ ի կշիռս և գտաւ պակասեալ. Փարէս, բաժանեցաւ թագաւորութիւն քո և տուաւ Մարաց և Պարսից։ Եւ ի նմին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ Քաղդէացւոց. և Դարեհ արքայ առ զթագաւորութիւնն. որ էր ամաց վաթսուն և երկուց։

*Բառագիտութիւն*

Մինչև ծանեաւ – Մինչև իմացաւ | Յորժամ բարձրացաւ սիրտ նորա – Երբոր հպարտացաւ։
Վախճանեաց – Լմցուց

Բ. — Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ լի, և որք կերանն՝ էին իբրև արք չորք հազարք։ Իմաստունք նմանեցուցանեն զկեանս անըրջոց։ Արք ոմանք ածէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։ Որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն Քրիստոսի՝ գտցէ զնա։ Աստուած ելից զտիեզերս սքանչելեօք։ Հրեայք խցին զականջս իւրեանց և դիմեցին առհասարակ ի վերայ Ստեփանոսի։ Սատանայ ած զՅիսուս յԵրուսաղէմ, և կացուցեալ զնա ի վերայ աշտարակի տաճարին՝ ասէ. Եթէ որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի ի վայր։ Բազումք ի թռչնոց՝ ի մերոց նահանգաց երթեալ՝ անցուցանեն զձմեռն յաշխարհս ջերմինս (տաք)։

## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Նոյ տապանին պատուհանը բացաւ։ Մեղաւոր կին մը Յիսուսի ոտքն արցունքով կը թրջէր (թանամ)։ Յիսուս գլուխը ծռելով (խոնարհեցուցանեմ) հոգին աւանդեց։ Քաղաքապետը քաղաքին դռները բանալով՝ մարդասիրութեամբ ընդունեցաւ (ընկալաւ) զանիկա։ Ճահիճները լեցընելով (լնում) անցուց բանակը։ Առիւծներուն բերանները կը գոցէին (խնում)։ Աղեքսանդր ծառի մը (ճխդր. տր.) կռթնելով՝ (յենում) սկսաւ ամենուն վրայ նետ նետել (արձակեմ)։ Նափոլէոն Պոնափարդ իւր քաջ զինուորներէն մեծ մասը Մոսկուայի արշաւանքին մէջ կորսնցուց։ Դառնալով հայրենիքը՝ նորէն շէնցուց (զարդարեմ)։ Նաւին ետևի կողմէն չորս խարիսխ ձգեցին։ Զգէ զէնքերդ և ինծի անձնատուր եղիր։ Այն հեղինակին ամէն գրքերը կարդացած եմ (ընթեռնում)։ Թոյն խմցուցին (արբուցանեմ) և սպաննեցին զանիկա։ Փառաւոր զգեստներդ հագուէ և իշխանին դիմացն ելիր։

Բ. — Ցըցուցէք ինծի դահեկանը. անոնք ալ ցըցուցին։ Տղաքներ կը բերէին (մատուցանեմ) որպէս զի ձեռք դնէ անոնց վրայ։ Ծիրանի զգեստներ հագուեցուցին և թագաւոր



անուանեցին զանիկա։ Տէր, մարէ (շիջուցանեմ) մեզմէ հնոցին բոցը։ Աչքդ բաց, որպէս զի ուրիշներէ չխաբուիս։ Չարաբարոյ մարդն այն ատեն աւելի կը յայտնուի, երբ զինքը ծածկել ուզէ։ Շողոքորթութիւններն հոգիները կը կորսնցընեն։ Պարտք ունեցող ծառան՝ իր ծառայակիցներէն մէկը բռնելով կը խղդէր ու կ՚ըսէր. Վճարէ (հատուցանեմ) ինծի ինչ որ կը պարտիս։ Անաքսագորաս իր որդւոյն մահուան լուրն առնելով՝ կ՚ըսէր. Գիտէի արդէն թէ մահկանացուներ ծնած եմ։

Ետևի կողմէն – Յետուստ կողմանէ
Տղաքներ – Մանկտի

Թոյն – Դեղ մահու
Պարտք ունեցող – Պարտապան։

## Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

## Ընթրիք Բաղտասարայ

(Շարայարութիւն)

Ասէ Դանիէլ. Արքայ, Աստուած Բարձրեալ զմեծութիւն և զթագաւորութիւն և զպատիւ և զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում. և յորժամ բարձրացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան մարդկան։ Եւ դու, որդի նորա Բաղտասար, ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ։ Վասն այսորիկ յերեսաց նորա առաքեցաւ թաթ ձեռինն, և զգիրդ զայդ գրեաց։ Եւ այս ինչ է գիրդ՝ որ գրեալ է. Մանէ, Թեկէլ, Փարէս։ Եւ այս է մեկնութիւն բանիցդ. Մանէ, չափեաց Աստուած զթագաւորութիւն քո և վախճանեաց զնա. Թեկէլ, կշռեցաւ ի կշիռս և գտաւ պակասեալ. Փարէս, բաժանեցաւ թագաւորութիւն քո և տուաւ Մարաց և Պարսից։ Եւ ի նմին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ Քաղդէացւոց. և Դարեհ արքայ առ զթագաւորութիւնն. որ էր ամաց վաթսուն և երկուց։

### Բառացիութիւն

Մինչև ծանեաւ – Մինչև իմացաւ
Վախճանեաց – Լմնցուց

Յորժամ բարձրացաւ սիրտ նորա
– Երբոր հպարտացաւ։

## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

### Ժամանակներուն կազմութիւնը

169. *Ինչպէս բայերուն ձեւական տարբերութիւնները Սահմ. Ներկային ու կատարեալին մէջ տեսանք, այս երկու ժամանակներէն կը կազմուին նաև միւս բոլոր մնացածները։ Սահմ. Ներկայէն Յաւելուածով ժամանակները կը ձեւանան, իսկ կատարեալէն՝ Պարզ ժամանակները։*

170. *Սահմ. Ներկայէն կը ձեւանան Անկատարները՝ ամ, եմ, ում վերջաւորութիւններն այի, էի, ույի փոխելով։ Օրինակ. Աղ–ամ աղ–այի, սիր–եմ սիր–էի, զեն–ում զեն–ույի։*

*Արգելականները կը ձեւանան՝ եզ. երկրորդ դէմքի ս գրին տեղ ր դնելով։ Օրինակ. Աղաս՝ մի աղար, սիրես՝ մի սիրեր, զենուս՝ մի զենուր։*

*Իսկ Արգելականի յոգնակին չի տարբերիր Սահմ. ներկային յոգնակի երկրորդ դէմքէն։ Աղայք՝ մի աղայք, սիրէք՝ մի սիրէք, զենուք՝ մի զենուք։*

171. *Սահմ. Ներկային վերջաւորութիւններն այցեմ, իցեմ և ուցում ընելով կը ձեւանան Ստորադասականները։ Օրինակ. Աղ–այցեմ, աղ–այցես,*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 169. Որո՞նք են գլխաւոր ժամանակները որոնցմէ ուրիշներ կը ձեւանան, և ո՞ր ժամանակները Սահմ. ներկայէն կը ձեւանան և որո՞նք կատարեալէն. — 170. Ի՞նչպէս կը ձեւանան բայի մը Անկատարներն ու Արգելականները. — 171. Ի՞նչպէս կը կազմուին Ստորադասականն ու Անորոշ և Անցեալ դերբայները։



*աղ–այցէ. Սիր–իցեմ, սիր–իցես, սիր–իցէ. Զեն–ուցում, զեն–ուցուս, զեն–ուցու։*

*Նոյն Ներկային ծայրի մ գիրը լ փոխելով կը կազմուին Անորոշ դերբայները. Աղամ՝ աղալ, սիրեմ՝ սիրել, զենում՝ զենուլ։*

*Իսկ Անորոշ Դերբային ծայրը ոց աւելցնելով Ապառնի դերբայները կը ձեւանան. Աղալ՝ աղալ–ոց, սիրել՝ սիրել–ոց, զենուլ՝ զենլոց։*

172. *Կատարեալին ծայրը ց գիրն աւելցնելով կը ձեւանան Ապառնի ժամանակները։ Աղացի՝ աղացից, աղացցես, աղացցէ. Լուացայ՝ լուացայց, լուացիս, լուացցի. Հանի՝ հանից, հանցես, հանցէ. Բացի՝ բացից, բացցես, բացցէ, Դարձայ՝ դարձայց, դարձցիս, դարձցի։*

Ծանօթ. — Այս օրինակներէն յայտնի է որ Ապառնի ժամանակին եզ. Ա. դէմքէն զատ, միւս մնացածներուն մէջ ց գիրը ս կը փոխուի՝ երբ կատարեալի արմատն ածանցեալ ու բազմավանկ է, իսկ միավանկներուն մէջ անփոփոխ կը մնայ։

173. *Երբ բայի մը կատարեալը բազմավանկ ածանցեալ արմատ ունի, անոր ծայրի ց գիրը զեղչելով կը ձեւանայ Ներգ. Հրամայականը։ Կարդաց՝ կարդա՛, սիրեաց–սիրեա՛, դարձոյց–դարձո՛. և երբ պարզ արմատ ունի, կամ միավանկ է, արմատը կ'ըլլայ Հրամայական։ Օրինակ. Տե՛ս, Ջե՛ռ, Հա՛ռ, Բե՛կ. և այլն։*

Ծանօթ. — Այս և միւս ժամանակներուն Հր. ձեւերու կազմութիւնը կանոնաւոր բայերու շարքին մէջ տեսանք ար-

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 172. Ի՞նչպէս կը ձեւանայ ապառնին. — 173. Հրամայականն ի՞նչպէս կը ձեւանայ։

ղէն։ — Իսկ միավանկ, հասարակ և կրաւորակերպ չէզոքները հրամայականի կազմութեան մասին՝ կարդալ ինչ որ ըսած ենք 159, 165 և 151 համարներուն և վերջինիս ծանօթութեան մէջ։

174. **Բայի մը կատարեալի արմատին վրայ եալ մասնիկն աւելցնելով կը ձևանան Անցեալ դերբայները։ Զոր օրինակ.**

| Պարզ արմատ | | Ածանցեալ արմատ | |
|---|---|---|---|
| Հատ | հատ-եալ | Իմաց | իմաց-եալ |
| Տես | տես-եալ | Սիրեաց | սիրեց-եալ |
| Մուտ | մտ-եալ | Կորոյս | կորուս-եալ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն տեսակը, ձևը, ժամանակն ու ասոր կազմութիւնը։*

Ա. — Մատնեաց եղբայր զեղբայր ի մահ։ Եսայի ասէր երբեմն ցարքայն Եզեկիա. Հրամայեա տան քում, զի մեռանիս։ Պետրոս ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս։ Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։ Տգէտք և խօթամիտք (տկար միտք ունեցող) ընդ վայր հարկանեն (վար զարնել) զարժանաւորս գովեստից, և զպարսաւելիսն գովատեն (գովել)։ Ողջոյն քաղաքք հիմնայատակ կործանեցան ի շարժմանց երկրի։ Որ զրկէր զարուեստաւոր զօք ի ձեռանէ կամ յոտից և կամ ի միոյ յաչացն, անդէն ի մահ

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 174. Անցեալ դերբայն ինչպէս կը ձևանայ։



դատապարտէր ի Հնդկաց։ Ճարտարաբանութեամբ Դեմոսթենեայ՝ գրգռեցան Աթենացիք ի պատերազմ։ Յոյնք յերիս մեծամեծ պատերազմունս յաղթեցին Պարսից, երկիցս ի ցամաքի և մի անգամ ի ծովու։

Բ. — Ո՞յր ուրուք էշ կամ եզն եթէ անկանիցի ի ջրհոր, ոչ վաղվաղակի հանցէ զնա յաւուր շաբաթու։ Տես ի ժամու վճարել (աւարտել) զգործս քո, լո՛յց զջահդ յառաջ քան զհասանել խաւարի։ Ենէաս բազմեալ ի խելս (ետևի կողմ) նաւին՝ զմտաւ ածէր զարկածսն (ձախորդութիւն) որ անցին ընդ նա, և զուղեկիցսն կորուսեալս։ Թագաւոր որ գիտիցէ իմաստութեամբ վարել զիշխանութիւնն ընձեռեալ (յանձնուած) նմա յԱստուծոյ, զփառաւորագոյնն քան զամենայն յաղթութիւնս կանգնեսցէ յաշխարհի։ Երթեալ երբեմն առն ուրումն ի Լակեդեմոն, և անդ տեսեալ զմանկունս պատկառանօք իմն ակն ածել (խպնիլ) ի ծերոց, ասէր. Ի Լակեդեմոն եւեթ բարերաստիկ գտանի ծերութիւն։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Աստուծոյ ամէն պատգամները գրեց Մովսէս։ Եղիսէ Նէէմանին ըսաւ. Գնա՛ եօթն անգամ լուացուէ Յորդանանու մէջ։ Դատէ՛, Տէր, զանոնք՝ որոնք կը դատեն երկիրս։ Վերուցին (բառնամ) Յիսուսի մարմինը և թաղեցին նոր (կոյս) գերեզմանի մէջ։ Ո՛վ որ յաջողութեան ժամանակ բարիք չըներ՝ դժբաղդութեան ատեն շատ կը կրէ։ Կ'ուզես թշնամիդ վրէժ առնել, բարիք ըրէ անոր։ Կեղծ բարեկամներն արևու ժամացոյցի շուքին կը նմանին. երբ օդը պայծառ է՝ կը տեսնուի, երբ ամպոտ է՝ կը ծածկուի։ Թէ որ աւելորդ (բաներ) գնես, հարկաւորները պիտի ստիպուիս ծախել։ Անկարելի է մեր պարտքերը կատարել, եթէ ուզենք մեր քմահաճոյքին (հաճոյք անձանց) հետևիլ։

Բ. — Ո՛վ որ անիրաւութիւն կը սերմանէ, ատելութիւն և վրէժխնդրութիւն միայն պիտի հնձէ։ Եթէ մէկը

Թագաւորէն սիրուիլ՝ ամենէն աւելի երանելի է. իսկ ո՛վ որ Աստուծմէ սիրուի՝ ի՜նչ բանի արդեօք արժանի պիտի չըլլայ: Մեր սուրբ հաւատքը մեզի կը սորվեցնէ որ միայն բարեգործութեամբ մեր թշնամիներէն վրէժ առնենք: Ամենէն աւելի այն տղան սիրուելու արժանի չէ, որ իր պակասութիւններն ուղղել չուզեր: Թէ որ թշնամիներդ շահիլ կ՚ուզես, անոնց ծառայելէն (պաշտել) ու բարիք ընելէն մի՛ դադրիր: Աւելի կը վնասուին մարդիկ կասկածանաց կարծիքէն քան թէ զրպարտութենէն: Թերութեան մը նշանները (նշմարանք) աւելի լաւ կը տեսնենք ուրիշի վրայ՝ քան թէ մեր վրայ:

## Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Դանիէլ և թշնամիք նորա

Էր վիշապ մի մեծ, և պաշտէին զնա Բաբելացիք: Ասէ Թագաւորն ցԴանիէլ. Միթէ և զդմանէ՞ ասիցես թէ պղնձի է. աՀաւասիկ կենդանի է, ուտէ և ըմպէ. արդ եկ, պա՛գ դմա երկիր: Ասէ ցնա Դանիէլ. Ես Տեառն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է Աստուած կենդանի: Բայց դու, արքայ, տո՛ւր ինձ իշխանութիւն, և սպանից զվիշապդ առանց սրոյ և գաւազանի: Եւ ասէ Թագաւորն. Տուեալ քեզ: Եւ առ Դանիէլ ձիւթ, ճարպ և մազ, և եփեաց ի միասին և արար գնդակս, և եհար ի բերան վիշապին. և իբրև կերաւ՝ պայթեաց վիշապն: Իբրև լուան Բաբելացիքն, բարկացան յոյժ, և կուտեցան ի վերայ Թագաւորին և ասեն. Հրեայ եղեւ Թագաւորն, զԲէլ կործանեաց, զվիշապն և զքուրմն կոտորեաց:

### Բառագիտութիւն

Վիշապ – Մեծ օձ
Տուեալ քեզ – Քեզի Հրաման
Ձիւթ – Սև ձիւթ
Ճարպ – Մսի եղ
Եփեաց ի միասին և արար գնդակս – Մէկտեղ եփեց և գնտակներ շինեց.



## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

### Անկանոն բայեր

175. Անկանոն կ՚ըսուին մի քանի բայեր՝ որոնց կատարեալի արմատները ներկայի արմատներէն տարբեր են բոլորովին, որով Պարզ ժամանակներն ալ յատուկ և անկախ ձևով մը կը խոնարհին:

Գրաբարի մէջ տասներկու անկանոն բայ կայ, որոնք կը վերաբերին Ա. և Բ. լծորդութեանց, և են. Տամ, Գամ, Երթամ, Առնեմ, Դնեմ, Ուտեմ, Յառնեմ, Ըմպեմ, Լսեմ, Ճանաչեմ, Ունիմ, Տանիմ: — Ասոնց Յաւելուածով ժամանակները կանոնաւոր են:

176. Տամ բային պարզ ժամանակներն այսպէս կը խոնարհուին.

Արմատ ներկայի Տ, արմատ կատարեալի Տու կամ Տուր:

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Ետու | տուի | Տուայ | տրուեցայ |
| Ետուր | տուիր | Տուար | տրուեցար |
| Ետ | տուաւ | Տուաւ | տրուեցաւ |
| Տուաք | տուինք | Տուաք | տրուեցանք |
| Ետուք | տուիք | Տուայք | տրուեցաք |
| Ետուն | տուին | Տուան | տրուեցան |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 175. Ո՞ր բայերն անկանոն կ՚ըսուին. քանի՞ և որո՞նք են այս տեսակ բայերը. — 176. Խոնարհէ տամ բային պարզ ժամանակները:

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տաց | պիտի | տամ | Տուայց | պիտի | տրուիմ |
| Տացես | » | տաս | Տացիս | » | տրուիս |
| Տացէ | » | տայ | Տացի | » | տրուի |
| Տացուք | » | տանք | Տացուք | » | տրուինք |
| Տաջիք | » | տաք | Տաջիք | » | տրուիք |
| Տացեն | » | տան | Տացին | » | տրուին |

Հրամայական

(Ներգործական միայն)

Տո՛ւր, Տաջի՛ր, Տայջի՛ր տո՛ւր    Տո՛ւք տուէ՛ք

Անց. Դերբայ Տուեալ { տուած, տրուած<br>տալով, տրուելով

177. *Գամ ներգործակերպ չէզոք բայը կը խոնարհուի այսպէս.*

***Արմատ ներկայի Գ., արմատ կատարեալի Եկ***

| Կատարեալ | | Ապառնի | | |
|---|---|---|---|---|
| Եկի | եկայ | Եկից | պիտի | գամ |
| Եկիր | եկար | Եկեսցես | » | գաս |
| Եկն | եկաւ | Եկեսցէ | » | գայ |
| Եկաք | եկանք | Եկեսցուք | » | գանք |
| Եկիք | եկաք | Եկեսջիք | » | գաք |
| Եկին | եկան | Եկեսցեն | » | գան |

Հրամայական

Ե՛կ, Եկեսջի՛ր եկո՛ւր    Եկա՛յք եկէ՛ք

Անց. Դերբայ Եկեալ եկած, գալով

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 177. Գամ բայն ի՞նչպէս կը խոնարհուի։



178. *Երթամ կրաւորակերպ չէզոք բայն այսպէս կը խոնարհուի.*

***Արմատ ներկայի Երթ, արմատ կատարեալի Չոգ***

| Կատարեալ | | Ապառնի | | |
|---|---|---|---|---|
| Չոգայ | գնացի | Երթայց | պիտի | երթամ |
| Չոգար | գնացիր | Երթիցես | » | երթաս |
| Չոգաւ | գնաց | Երթիցէ | » | երթայ |
| Չոգաք | գնացինք | Երթիցուք | » | երթանք |
| Չոգայք | գնացիք | Երթիջիք | » | երթաք |
| Չոգան | գնացին | Երթիցեն | » | երթան |

Հրամայական

Ե՛րթ, Երթիջի՛ր գնա՛    Երթա՛յք գնացէ՛ք

Անց. Դերբայ Երթեալ գնացած, երթալով

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն ժամանակը, թիւն ու դէմքը, և բայարմատներուն տեսակը։*

Ա. — Թացից զպատառն և տաց մատնըչին իմում։ Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Ասէր ումն ցՅիսուս. Եկից զկնի քո յոր վայր և երթիցես։ Վարդապետ եկեալ է և կոչէ զքեզ։ Ընկեցեալ (ձգելով) զարծաթն ի տաճարին, չոգաւ խեղդեցաւ։ Երթայցէ տէրդ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 178. Խոնարհէ՛ երթամ բային պարզ ժամանակները։

իմ առաջի իմ, և ծառայ քո եկեսցէ։ Յիսուս ետ իշխանութիւն Առաքելոց հանելոյ զդևս և բժշկել զամենայն հիւանդութիւնս։ Մարիամ և Յովսէփ չոգան ի Նազարեթէ ի Բեթղեհէմ։ Ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն և պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեւն։ Հրաման ետ բռնաւորն երկաթի պուտամբ (պտուկ) հալել կապար։

Բ. — Իջեալ Պետրոս ի նաւէն չոգաւ առ Յիսուս գնալով ի վերայ ջուրցն, և տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ։ Ո՞ր թագաւոր երթեալ տալցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, և ոչ նստեալ նախ խորհիցի եթէ կարո՞ղ իցէ տասն հազարաւ զդէմ ունել (դէմ դնել) այնորիկ՝ որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ։ Յորժամ կոչիցիս ի կոչունս, մի երթեալ բազմեսցիս յառաջին բարձին, այլ երթիջիր ի յետին տեղւոջ, զի եկեալ որ զքեզն կոչեաց՝ ասիցէ ցքեզ. Բարեկամ, ի վեր մատիր։ Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Իբրև եկն Յիսուս ի քաղաք իւր Նազարեթ՝ ուր սնեալն էր, եմուտ ի ժողովարանն, և ետուն նմա զգիրս Եսայեայ մարգարէի։

## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Բանտապետն Յովսեփայ ձեռքը տուաւ բանտը։ Ուրկէ՞ կու գաս կամ ո՞ւր (յո՞) կ'երթաս։ Այն փառքը զոր տուիր ինծի՝ տուի անոնց, որպէս զի մէկ ըլլան, ինչպէս մենք ալ մէկ ենք։ Որուն շատ տրուեցաւ, շատ պիտի խնդրուի անկէ, և որուն քիչ՝ քիչ։ Փարիսեցիք փորձելով կը հարցնէին Յիսուսին. Պէ՞տք է հարկ տալ կայսեր՝ թէ չէ, տա՞նք թէ չտանք։ Գնա մրջիւնին, ո՛վ աշակերտ, և անկէ սորվէ ժամանակդ յարգել։ Աստուծոյ ի՞նչ պատասխան պիտի տաս, երբոր գայ ամէն գործերուդ հաշիւ պահանջելու։ Ինչո՞ւ համար այսօր լոյս ատեն եկաք։ Եկէք սպաննենք զանիկա և առնենք անոր ժառանգութիւնը։ Ե-



տեւդ պիտի գամ ո՛ւր որ ալ երթաս։ Ձեր ընծաներն ուրիշ մարդու տուէք։

Բ. — Ո՛վ որ ունի (դարձուր որուն որ կայ՝ գոմ բայով) պիտի տրուի և աւելցուի. և ո՛վ որ չունի՝ ինչ ալ որ ունենայ անկէ պիտի առնուի (բառնամ)։ Յիսուսի վերջին գալուստի օրն արեւելքէն արդարներ պիտի գան և պիտի նստին երկնից թագաւորութեան մէջ։ Յիմար կոյսերն իմաստուններուն ըսին. Տուէք մեզի ձեր իւղէն, վասն զի ահա մեր լապտերները կը մարին (շիջանիմ)։ Ի ծնէ կոյրին ըսուեցաւ որ երթայ Սելովամայ աւազանին մէջ լուացուի. գնաց, լուացուեցաւ, եկաւ և կը տեսնէր։ Հրեաները պահապաններուն շատ ստակ տուին՝ որ վկայեն թէ Յիսուսի աշակերտները գիշեր ատեն եկան զինքը գողցան։ Երբ մատնեն զձեզ, մի հոգաք թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսիք, վասն զի պիտի տրուի ձեզի այն ժամուն մէջ ինչ որ պիտի խօսիք։

| | |
|---|---|
| Ուրկէ՞ – Ուստի՞ | Լոյս ատեն – Յարևու |
| Ո՛ւր – Յո՞ | Ո՛ւր որ ալ – Յո՛ր վայր և |
| Ետևէդ – Զկնի քո | Գիշեր ատեն – Գիշերի. |

## Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Դանիէլ և թշնամիք նորա

(Շարայարութիւն)

Եւ ասեն ցթագաւորն. Տո՛ւր մեզ ի ձեռս զԴանիէլ, ապա թէ ոչ սպանանեմք զքեզ և զտուն քո։ Իբրև ետես թագաւորն եթէ կարի տագնապեն զնա, հարկաւ ի ձեռս ետ նոցա զԴանիէլ։ Եւ նոքա արկին զնա ի գուբն առիւծուց. և անդ էր զվեց օր։ Էին ի գբին եօթն առիւծք, և տային նոցա հանապազ երկուս մարդս և երկուս պատրուճակս. բայց յայնժամ ոչինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցեն զԴանիէլ։ Իբրև եկն ի բերան գբոյն, և հայեցաւ և ետես զի նստէր Դանիէլ, աղաղակեաց ի ձայն մեծ և

ասէ. Մեծ ես Տէր Աստուած Դանիէլի, չիք այլ ոք բաց ի քէն։ Եւ առ զնա ի վեր։ Եւ զվնասակարս կորստեան նորա արկին ի գուբն, և գէշ գէշ պատառեցան նոյն ժամայն առաջի նորա։

Բառագիտութիւն

Հարկաւ — Ստիպուած
Պատարուճակ — Զոհելու կենդանի
Գէշ գէշ պատառեցան նոյն ժամայն — Նոյն վայրկենին պատառ պատառ եղան։

## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախորդ դասին

179. *Առնել բային պարզ ժամանակներն ասոնք են.*

*Արմատ ներկայի թէ կատարեալի Արար։*

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արարի | ըրի | Արարայ | եղայ |
| Արարեր | ըրիր | Արարար | եղար |
| Արար | ըրաւ | Արարաւ | եղաւ |
| Արարաք | ըրինք | Արարաք | եղանք |
| Արարէք | ըրիք | Արարայք | եղաք |
| Արարին | ըրին | Արարան | եղան |

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արարից | պիտի | ընեմ | Արարայց | պիտի | ըլլամ |
| Արասցես | » | ընես | Արասցիս | » | ըլլաս |
| Արասցէ | » | ընէ | Արասցի | » | ըլլայ |
| Արասցուք | պիտի | ընենք | Արասցուք | պիտի | ըլլանք |
| Արասջիք | » | ընէք | Արասջիք | » | ըլլաք |
| Արասցեն | » | ընեն | Արասցին | » | ըլլան |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 179. Խոնարհէ՛ առնել բային պարզ ժամանակները։



Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Արա՛ / Արասջի՛ր | ըրէ՛ | Արասջի՛ր | եղի՛ր |
| | | Առնիջի՛ր | եղի՛ր (ըլլուէ՛) |
| Արարէ՛ք | ըրէ՛ք | | |

Անց. դերբայ Արարեալ { ըրած, եղած

180. *Դնել բային պարզ ժամանակները կը խոնարհուին այսպէս.*

*Արմատ ներկայի թէ կատարեալի Դիր։*

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Եդի | դրի | Եդայ | դրուեցայ |
| Եդիր, Եդեր | դրիր | Եդար | դրուեցար |
| Եդ | դրաւ | Եդաւ | դրուեցաւ |
| Եդաք | դրինք | Եդաք | դրուեցանք |
| Եդիք | դրիք | Եդայք | դրուեցաք |
| Եդին | դրին | Եդան | դրուեցան |

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եդից | պիտի | դնեմ | Եդայց | պիտի | դրուիմ |
| Դիցես | » | դնես | Դիցիս | » | դրուիս |
| Դիցէ | » | դնէ | Դիցի | » | դրուի |
| Դիցուք | » | դնենք | Դիցուք, Դիցիմք | » | դրուինք |
| Դիջիք | » | դնէք | Դիջիք, Դիցիք | » | դրուիք |
| Դիցեն | » | դնեն | Դիցին | » | դրուին |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 180. Խոնարհէ՛ դնել բային պարզ ժամանակները։

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Դի՛ր, Դիջի՛ր | դի՛ր | Դիջի՛ր, Դնիջի՛ր | դրուէ՛ |
| Դի՛ք | դրէ՛ք | Եդարո՛ւք, Եդա՛յք | դրուեցէ՛ք |

Անց. դերբայ Եդեալ { դրած, դրուած

181. *Ուտեմ բային պարզ ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

**Արմատ ներկայի Ուտ, արմատ կատարեալի Կեր։**

Կատարեալ

(Ներգործական և կրաւորական՝ նոյն ձև)

| | | | |
|---|---|---|---|
| Կերայ | կերայ | կամ | կերուեցայ |
| Կերար | կերար | » | կերուեցար |
| Կերաւ, Եկեր | կերաւ | » | կերուեցաւ |
| Կերաք | կերանք | » | կերուեցանք |
| Կերայք | կերաք | » | կերուեցաք |
| Կերան | կերան | » | կերուեցան |

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կերայց | պիտի | ուտեմ | Կերայց | պիտի | ուտուիմ |
| Կերիցես | » | ուտես | Կերիցիս | » | ուտուիս |
| Կերիցէ | » | ուտէ | Կերիցի | » | ուտուի |
| Կերիցուք | » | ուտենք | Կերիցուք | » | ուտուինք |
| Կերիջիք | » | ուտէք | Կերիջիք | » | ուտուիք |
| Կերիցեն | » | ուտեն | Կերիցին | » | ուտուին |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 181. Ի՞նչպէս կը խոնարհուին ուտեմ բային պարզ ժամանակները։



Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Կե՛ր, Կերիջի՛ր | կե՛ր | Կերիջի՛ր, Ուտիջի՛ր | կերուէ՛ |
| Կերա՛յք | կերէ՛ք | (յոգն. չունի) | |

Անց. դերբայ Կերեալ — կերած, կերուած

182. *Յառնեմ (ելլալ, յարութիւն առնել) չէզոք բային ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

**Արմատ ներկայի և կատարեալի Յար։**

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Յարեայ | ելայ | Յարեաք | ելանք |
| Յարեար | ելար | Յարեայք | ելաք |
| Յարեաւ | ելաւ | Յարեան | ելան |

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Յարեայց | պիտի | ելնեմ | Յարիցուք | պիտի | ելնենք |
| Յարիցես | » | ելնես | Յարիջիք | » | ելնէք |
| Յարիցէ | » | ելնէ | Յարիցեն | » | ելնեն |

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Ա՛րի, Յարի՛ր, Յարիջի՛ր | ելի՛ր | Ա՛րիք, Յարի՛ք, Յարերո՛ւք | ելէ՛ք |

Անց. դերբայ Յարուցեալ { ելած, յարութիւն առած

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 182. Խոնարհէ՛ յառնեմ բային պարզ ժամանակները։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Սա խօսքերուն բայերն ու բայարմատները լուծել քերականօրէն։*

Ա. — Արարի իրաւունս և արդարութիւն։ Եթէ զբանդ զայդ առնիցէք, անիծեալ լիջիք։ Արի, Տէր, և օգնեա մեզ։ Դիցուք թէ այնպէս իցէ։ Մովսէս զաւուրս քառասուն եկաց ի լերին Սինայ, հաց ոչ եկեր և ջուր ոչ արբ։ Ոչ երկեայց ի չարէ, և զոր ինչ պարտն է առնել արարից։ Դիւրագոյն է առնել յաղթութիւնս մեծամեծս՝ քան յաղթել անձին։ Բարիս արարեալ՝ յաղթեսցես չարին։ Զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի։ Ոչ կեայ մարդ՝ զի կերիցէ, այլ ուտէ՝ զի կեցցէ։ Զարթուցեալ Յովսէփ ի քնոյ արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն։ Ասէր Յիսուս ցանդամալոյծն. Քեզ ասեմ, արի առ զմահիճս քո և երթ ի տուն քո։

Բ. — Դաւիթ եմուտ ի տունն Աստուծոյ և եկեր զհաց առաջաւորութեանն՝ զոր ոչ էր օրէն նմա ուտել և ոչ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։ Որդի հօրաքեռն իմոյ յանցելում եօթնեկի եղաւ ի բանտ վասն պարտուց։ Այրն զոր ունէր այս պիղծ, զգաստացեալ հրամանաւն Յիսուսի, իսկ և իսկ յարուցեալ չոգաւ քարոզել ի Դեկապոլիս զոր ինչ արար նմա Աստուած։ Գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եդի և հնձեմ զոր ոչ սերմանեցի, և ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս, և եկեալ տոկոսեօք պահանջէի։ Տիեզերք ամենայն և որ ի նմա կենդանիք՝ մարդ և անասուն՝ յԱստուծոյ արարան։ Զտեղի առ (կանգ առաւ) կոչեաց զկոյրն և ասէ. Զի՞նչ կամիք զի արարից ձեզ։

Այս պիղծ — Զար դև | Ստամբակ — Խիստ, դաժան։



### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Աստուած ըրաւ երկինքն ու երկիրս ոչինչէն։ Մեծ բաներ ըրէ առանց խոստանալու։ Յիսուս Ղազարոսին ըսաւ. Ղազարէ, ելիր եկուր դուրս գերեզմանէդ։ Եթէ մեղր գտնես՝ չափով կեր։ Յոբ իր բոլոր յոյսն Աստուծոյ վրայ (ճխղր- տրկճ.) դրած էր։ Երբ իրիկուն կ'ըլլայ, մտքերնիս դնենք (դնել ի մտի) թէ առտուան ժամը պիտի չտեսնենք։ Աստուած Ադամը դրախտին մէջ դրաւ։ Բարիք ըրէ, չարիքէն փախիր։ Մարդ մը կ'ըսէր. ինչ որ ընես քեզի կ'ընես։ Աշխարհ գալու ատեննիս բան մը չբերինք, անկէ երթալու ատեն ալ բան մը պիտի չտանինք։ Ադամ ու Եւա արգիլուած պտուղէն կերան։ Սաբայ թագուհին շատ ընծաներ տարաւ Սողոմոնի։

Բ. — Ինչ որ կ'ուզես որ քեզ ընեն մարդիկ՝ դու ալ նոյնն ըրէ անոնց, և ինչ որ չես ուզեր՝ դու ալ անոնց մի՛ ըներ։ Երկու ազգերն իրարու հետ դաշինք դրին և խաղաղութիւն ըրին։ Վերջին դատաստանին օրն ամէն մարդիկ յարութիւն պիտի առնեն։ Այն ատեն Յակոբ սկսաւ լալ և ըսել. Զար գազան մը որդիս կերաւ։ Աղեքսանդր և Նապոլէոն մեծամեծ քաջութիւններ ըրին։ Յիսուս՝ Պետրոս և Անդրէաս առաքեալներուն ըսաւ. Եկէք ետևէս և ձեզ մարդկանց որսորդ պիտի ընեմ։ Շատ բան կայ որ մինչև չսորվիս (չև ուսեալ) չես կրնար ընել, շատ բան ալ կայ՝ որ մինչև չընես՝ չես սորվիր։ Յիսուս յարութիւն առնելով՝ (յառնեմ) միաշաբաթի առաւօտն երևցաւ Մարիամ Մագդաղինացիին որմէ եօթը դևեր հանած էր։ Բարիք ըրէ և ծովը ձգէ զանոնք, թէ որ ձկները չգիտնան՝ Աստուած կը գիտնայ։

Մեծ բաներ — Մեծամեծք։

## Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Եօթն եղբարք Մակաբայեցիք*

*Դէպ եղև եղբարս եօթն՝ մարբն հանդերձ կալեալս՝ ածել յառեան թագաւորին: Մի ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն: Սկսաւ խօսել և ասէ. Մեք պատրաստ եմք ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս հայրենիս: Սրտմտութեամբ լի եղև թագաւորն. հրամայէ կենդանւոյն ի տապակն ջեռուցեալս իջուցանել: Իբրև առաջինն յաշխարհէ փոխեցաւ, զերկրորդն ի տեղի տանջանացն մատուցանէին և անդէն հարցանէին. Կերիցե՞ս խոզենի միս: Նա ետ պատասխանի և ասէ. Ո՛չ: Վասն այսորիկ և սա ի նոյն տանջանս տանջեալ վախճանէր:*

*Բառագիտութիւն*

Դէպ եղև — Հանդիպեցաւ
Մարբն հանդերձ կալեալս — Իրենց մօրը հետ բռնուած
Անցանել ըստ օրէնս հայրենիս — Հայրենի օրէնքն ոտքի տակ առնել
Ի տապակն ջեռուցեալս իջուցանել — Տաքցուցած տապակներու (թաւա) վրայ դնել
Յաշխարհէ փոխեցաւ — Մեռաւ
Կենդանւոյն — Ողջ ողջ:

## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախորդ դասերուն

183. *Ըմպեմ բային պարզ ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

*Արմատ ներկայի Ըմպ, կատարեալի Արբ:*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 183. Խոնարհէ՛ ըմպեմ բային պարզ ժամանակները:



*Կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Արբի | խմեցի | Արբաք | խմեցինք |
| Արբեր | խմեցիր | Արբէք, իք | խմեցիք |
| Արբ, Էարբ | խմեց | Արբին | խմեցին |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Արբից | պիտի խմեմ | Արբցուք | պիտի խմենք |
| Արբցես | » խմես | Արբջիք | » խմէք |
| Արբցէ | » խմէ | Արբցեն | » խմեն |

*Հրամայական*

Ա՛րբ, Արբջիր } խմէ՛
Արբէք խմեցէ՛ք

*Անց. դերբայ*

Արբեալ խմած, խմելով:

184. *Լսեմ բային պարզ ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

*Արմատ ներկայի և կատարեալի Լու կամ Լուր:*

*Կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Լուայ | լսեցի | Լուաք | լսեցինք |
| Լուար | լսեցիր | Լուայք | լսեցիք |
| Լուաւ | լսեց | Լուան | լսեցին |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Լուայց | պիտի լսեմ | Լուիցուք | պիտի լսենք |
| Լուիցես | » լսես | Լուիջիք | » լսէք |
| Լուիցէ | » լսէ | Լուիցեն | » լսեն |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 184. Խոնարհէ՛ լսեմ բային պարզ ժամանակները:

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Լո՛ւր / Լուիջի՛ր | լսէ՛ | Լուարո՛ւք | լսեցէ՛ք |

Անց. դերբայ Լուեալ   լսած, լսելով։

185. *Ճանաչեմ բային պարզ ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

*Արմատ ներկայի Ճանաչ, կատարեալի՝ Ծան։*

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Ծանեայ | ճանչցայ | Ծանեաք | ճանչցանք |
| Ծանեար | ճանչցար | Ծանեայք | ճանչցաք |
| Ծանեաւ | ճանչցաւ | Ծանեան | ճանչցան |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Ծանեայց | պիտի ճանչնամ | Ծանիցիմ | պիտի ճանչցուիմ |
| Ծանիցես | » ճանչնաս | Ծանիցիս | » ճանչցուիս |
| Ծանիցէ | » ճանչնայ | Ծանիցի | » ճանչցուի |
| Ծանիցուք | » ճանչնանք | Ծանիցիմք | » ճանչցուինք |
| Ծանիջիք | » ճանչնաք | Ծանիցիք | » ճանչցուիք |
| Ծանիցեն | » ճանչնան | Ծանիցին | » ճանչցուին |

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Ծանի՛ր / Ծանիջի՛ր | ճանչցի՛ր | Ծանի՛ք / Ծաներո՛ւք | ճանչցէ՛ք |

Անց. դերբայ Ծանուցեալ { ճանչցած, ճանչցուած։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 185. Ի՞նչպէս կը խոնարհուին ճանաչեմ բային պարզ ժամանակները։



186. *Ունիմ բային անկանոն ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

*Արմատ ներկայի Ուն, կատարեալի՝ Կալ։*

Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| կալայ | բռնեցի | կալաք | բռնեցինք |
| կալար | բռնեցիր | կալայք | բռնեցիք |
| կալաւ | բռնեց | կալան | բռնեցին |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| կալայց | պիտի բռնեմ | կալցուք | պիտի բռնենք |
| կալցիս | » բռնես | կալջիք | » բռնէք |
| կալցի | » բռնէ | կալցին | » բռնեն |

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| կա՛լ / կա՛ | բռնէ՛, առ | կալարո՛ւք / կալա՛յք, կալէ՛ք | բռնեցէ՛ք |

Անց. դերբայ կալեալ   բռնած, բռնելով։

Ծանօթ. — Ասոր յար և նման կը խոնարհուի ընդունիմ բարդ բայը. միայն վերի անկանոն ժամանակներուն մէջ՝ կալ արմատին քով հանդիպած դ գիրը կը զեղչուի անուշութեան համար, և կ'ըսուի՝ Ընկալայ, ընկալայց, ընկա՛լ, ընկալեալ։

187. *Ունիմ կանոնաւոր ժամանակներուն մէջ թէ ունենալ թէ բռնել ըսել է. իսկ անկանոն ժամանակներուն մէջ՝ միայն բռնել կը նշանակէ։ Գրա-*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 186. Խոնարհէ՛ ունիմ բային անկանոն ժամանակները. — 187. Ունիմ քանի՞ իմաստ ունի և ո՞ր բայն ասոր տեղ կը գործածուի ունենալ նշանակութեամբ։

*բարի մէջ այս վերջիններուս, և շատ անգամ կանոնաւոր ժամանակներուն տեղ ալ՝ Եմ էական բայը կը գործածուի ունենալ նշանակութեամբ։*

188. *Ունիմ բային տեղ Եմ էականը գործածելու առեն՝ խօսքին տէր բային սեռական ընելու է, և սեռի խնդիրն՝ ուղղական, ինչպէս կը տեսնուի յետագայ օրինակներով.*

| Փոխանակ ըսելու | Սովորաբար կ՚ըսուի |
|---|---|
| Ունիմ արծաթ բազում. | Է իմ արծաթ բազում. |
| Ունէր նա որդի սիրելի. | Որդի մի էր նորա սիրելի. |
| Ունիմք մեք ծառայս բազումս. | Են մեր ծառայք բազումք։ |

*Իսկ անկանոն ժամանակներու՝ մէջ՝ ունենալ նշանակութեամբ՝ միայն Եմ էական բայը կը գործածուի այսպէս.*

| Գրաբար | Աշխարհաբար |
|---|---|
| Եղև նորա պատերազմ ընդ Եգիպտացիս. | Անիկա Եգիպտացիներուն հետ պատերազմ ունեցաւ. |
| Յակոբայ եղեն երկոտասան որդիք. | Յակոբ տասներկու որդի ունեցաւ. |
| Վաղիւ եղիցին նորա ամք եօթանասուն. | Վաղը 70 տարիներ պիտի ունենայ (տարեկան պիտի ըլլայ)։ |

189. *Տանիմ բային անկանոն ժամանակներն այսպէս կը խոնարհուին.*

*Արմատ ներկայի Տան, կատարեալի՝ Տար։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 188. *Ունիմ բային տեղ եմ էականը գործածելու ատեն ի՞նչ պէտք է ընել. — 189. Տանիմ բային անկանոն ժամանակներն ի՞նչպէս կը խոնարհուին։*



Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Տարայ | տարի | Տարաք | տարինք |
| Տարար | տարիր | Տարայք | տարիք |
| Տարաւ | տարաւ | Տարան | տարին |

Ապառնի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տարայց | պիտի | տանիմ | Տարցուք | պիտի | տանինք |
| Տարցիս | » | տանիս | Տարջիք | » | տանիք |
| Տարցի | » | տանի | Տարցին | » | տանին |

Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Տա՛ր<br>Տարջիր | տա՛ր | Տարա՛յք<br>Տարջիք | տարէ՛ք |

Անց. դերբայ Տարեալ տարած, տանելով։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել անկանոն բայերուն պարզ և յաւելուածով ժամանակները և Ունիմ բայով խօսքերը Եմ բայով բացատրել։*

Ա. — Ադամ լուեալ զձայն Աստուծոյ՝ երկեաւ։ Որ ունի հարսն՝ նա է փեսայ։ Յովսէփ ծանեաւ զեղբարս իւր, բայց նոքա ոչ ծանեան զնա։ Խօսեա՛ց, Տէր, զի լուիցէ ծառայ քո։ Լուարո՛ւք զայս ամենայն և ծանեարո՛ւք զի մեծ է գթութիւն Աստուծոյ։ Էր Յիսուսի իշխանութիւն թողուլ զմեղս։ Երկու որդիք եղեն Հռաքելի, Բենիամին և Յովսէփ։ Մեծատուն է այր՝ որ ունիցի բարեկամ։ Զամենայն գիշերս աշխատ եղաք և ոչ ինչ կալաք։ Լուայց զինչ խօսի Տէր

Աստուած իմ: Առն միոջ էին երկու որդիք: Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան: Ծանեաք զի ոչ գոյ այլ Աստուած՝ բայց ի քէն: Էին նորա սպասք (անօթ) արծաթիք և պղնձիք: Ունիք զօրականս, երթայք և զգուշացարուք: Տանիցին զձեզ առաջի դատաւորաց և թագաւորաց վասն իմ:

Բ. — Աղեքսանդր ընդարձակեաց զտէրութիւնն զոր ընկալաւ ի Փիլիպպոսէ: Կինն սամարացի հրամայեալ ի Յիսուսէ երթալ կոչել զայր իւր, պատասխանի տայր ասելով թէ չիք իմ այր: Միհրդատ դեղ մահու (թոյն) արբեալ մեռաւ, զի մի մատնեսցի ի ձեռս Հռովմայեցւոց: Կիմոն աթենացի ոչ այլ ինչ ընկալաւ ի հօրէն իւրմէ Միլտիադեայ, բայց անուն փառաւոր և տուգանս հնգից տաղանդաց: Յայտնեցի զանուն քո մարդկան՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. Նոքա ծանեան թէ առ ի քէն ելի, և ոչ ոք ի նոցանէ կորեաւ՝ բայց որդին կորստեան, զի գիրն լցցի: Ունիմք հինգ զգայարանս, զտեսանելիս, զլսելիս, զհոտոտելիս, զշօշափելիս և զճաշակելիս: Յաւուրս Նոյի մարդիկ ուտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչև ցօրն յորում եմուտ Նոյ ի տապանն, և եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսին:

Բ "

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Ի՞նչ գործ ունիս դու հօս: Իսահակ շատ որդիներ և թոռներ ունէր: Այս թուղթը հօրմէս ընդունեցայ: Ինչ որ ունիմ՝ քուկդ է, և ինչ որ դու ունիս՝ այն իմս է: Աստուած Սամփսոնին պատուիրեց որ գինի և օղի չխմէ: Լսէ, որդեակ, քու հօրդ խրատներուն և մօրդ օրէնքները մի՛ անարգեր: Ուռկանը ծով ձգեցին ու շատ ձուկ բռնեցին: Կը պատմեն թէ երբ Անաքսագորաս լսեց իր որդւոյն մահն՝ ըսաւ. Գիտէի արդէն թէ մահկանացու ծնայ: Տղայ մը երկար ատեն Պղատոնի քով (ընդ երկար առ Պղատոնի) աշակերտելէն վերջ՝ երբ տուն դարձաւ և տեսաւ որ հայրը բարկութեամբ կը պոռար. Ես այդպիսի բան ամենևին



լսած չունիմ, ըսաւ: Մեծ իմաստութիւն է գիտնալ օգտակար կերպով գործադրել (յօգուտ ի վար արկանել) փիլիսոփայի մը սա խօսքը. Ճանչցիր զքեզ: Յակոբ շատ ծառաներ և աղախիններ ունէր: Դարեհ թագաւորն երկու աղջիկ և մէկ մանչ (ուստր) ունէր:

Բ. — Սամփսոն առիւծին բերնէն բռնեց (ունիմ զբերանոյ) և պատռեց: Լաբան Յակոբը հետապնդեց (պնդիմ զկնի) և բռնեց զայն: Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ: Բռնէ այս գիրքը և կարդա՛ (ընթեռնում): Ով որ չափէն աւելի գինի կը խմէ՝ կը գինովնայ (արբենամ): Ճանչցէք որ Աստուած հրաշքներ (սքանչելիք) ըրաւ: Հռովմայեցիք առաջին անգամ չգիտնալով թէ փիղերն ինչ անուն ունին, զանոնք Լուկանիոյ եզներ կոչեցին: Ո՞վ կրնայ մոռնալ այն բարերարութիւնները՝ զոր ընդունեցաւ իր հայրենիքէն, ծնողքէն և Աստուծմէ: Մարդ մը խենդ կոչելով Դիոգինէսը, «Ես խենդ չեմ, ըսաւ փիլիսոփան, բայց քուկինիդ նման միտք ալ չունիմ»: Ես ճանչցայ շատեր՝ որ իրենց լեզուն չսանձելնուն համար մեծամեծ թշուառութեանց մէջ ինկան: Թէպէտ ամենամեծ յառաջադիմութիւն ունենաս գիտութեանց մէջ, պէտք է զքեզ չափի մէջ բռնես փոխանակ հպարտանալու, վասն զի դեռ շատ բան կը մնայ զոր չես գիտեր:

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

### Եօթն եղբարք Մակաբայեցիք

(Տարայարութիւն)

Յետ նորա զերրորդն ածին և զլեզուն խնդրէին: Նա վաղվաղակի մատուցանէր, և զձեռսն քաջասիրտս տարածանէր, զի և թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն սրտի քաջութեան, զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ: Եւ սա իբրև փոխէր, չորրորդն ի տեղի մատուցեալ, ի նոյն տանջանս չարչարէին: Մինչդեռ ոգիքն

կրտսերոյ մանկանն առ իւր կային, կոչեաց Թագաւորն զմայրն, և աղաչէր լինել պատանւոյն կենաց Նորին խորհրդական, զի փրկեսցի։ Իբրեւ կարի շատ ստիպեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն և ասէ. Ողորմեաց ինձ, որդեակ իմ. յուշ լիցի քեզ զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, և սնուցի զքեզ զերիս ամս ի գիրկս ստեամբ։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Առ ոչինչ զցաւսն համարեցաւ — Ցաւերը բանի տեղ չդրաւ | Յուշ լիցի քեզ — Յիշէ, միտքդ բեր |
| Մինչդեռ ոգիքն առ իւր կային — Մինչ դեռ հոգին աւանդած չէր | Եւ սա իբրև փոխէր — Երբ սա ալ կը մեռնէր (աշխարհէս կ'ելլէր)։ |

## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

### Պակասաւոր եւ Միադէմ բայեր

190. *Պակասաւոր կ'ըսուին այն բայերը՝ որ թէպէտ կանոնաւոր են, բայց ամէն եղանակ կամ ժամանակ չունին և ուրիշ բայէ ալ չեն լրացուիր։ Գրաբարի մէջ այս տեսակ երկու բայ կայ միայն, Պարտել և Գոգել։*

*Պարտել բային գործածական ժամանակներն ասոնք են.*

| Սահմ. Ներկայ | | | Անկատար | | |
|---|---|---|---|---|---|
| Պարտիմ | պետք է | ինձ որ | Պարտէի | պետք էր | ինձ որ |
| Պարտիս | » » | քեզ որ | Պարտէիր | » » | քեզ որ |
| Պարտի | » » | անոր որ | Պարտէր | » » | անոր որ |
| Պարտիմք | » » | մեզ որ | Պարտէաք | » » | մեզ որ |
| Պարտիք | » » | ձեզ որ | Պարտէիք | » » | ձեզ որ |
| Պարտին | » » | անոնց որ | Պարտէին | » » | անոնց որ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 190. Պակասաւոր բայեր որո՞նք կ'ըսուին. և ի՞նչպէս կը խոնարհուի պարտել։



### Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Պարտիցիմ | պետք ըլլայ | ինձ որ |
| Պարտիցիս | » » | քեզ որ |
| Պարտիցի | » » | անոր որ |
| Պարտիցիմք | » » | մեզ որ |
| Պարտիցիք | » » | ձեզ որ |
| Պարտիցին | » » | անոնց որ |

Անորոշ Դերբայ Պարտել։

*Ծանօթ. — Ասոր հետ պէտք չէ շփոթել Պարտիմ, պարտեցայ, պարտեցայց կանոնաւոր բայը, որ պարտական եմ, պարտք ունիմ տալու ըսել է. նոյնպէս Պարտեմ կը. Պարտիմ՝ որ յաղթեմ, յաղթուիմ կը նշանակէ։*

191. *Գոգել բային գործածական ժամանակներն են.*

### Ապառնի

| | |
|---|---|
| (չունի) | Գոգցուք պիտի ըսենք |
| Գոգցես պիտի ըսես | Գոգջիք » ըսէք |
| Գոգցէ » ըսէ | Գոգցեն » ըսեն |

### Հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| Գոգ / Գոգջիր | ըսէ | Գոգջէք | ըսէք |

Անորոշ Դերբայ. Գոգել ըսել։

192. *Միադէմ կ'ըսուին այն բայերը՝ որոնց մի*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 191. Խոնարհէ՛ գոգել բայը. — 192. Միադէմ ո՞ր բայերը կ'ըսուին, քանի՞ և որո՞նք են։

քանի եզ. երրորդ դէմքերը միայն գործածական են, և այն ալ առանց ուղղական դէմք յայտնող բառի մը՝ որուն վերաբերին: — Մեր մէջ այս տեսակ բայեր երեք են միայն. Մարթի, Պիտի, Ցաւէ:

Մարթի կը նշանակէ կարելի է. միւս դէմքերն են Մարթէր՝ որ է՝ կարելի էր, և Մարթիցի՝ որ ըսել է կարելի ըլլայ:

Պիտի՝ ըսել է պէտք է. Պիտէր՝ պէտք էր. Պիտեցաւ՝ պէտք եղաւ. Պիտեսցի կամ Պիտիցի՝ պէտք պիտի ըլլայ:

Ցաւէ՝ ըսել է ցաւ կու տայ. Ցաւէր՝ ցաւ կու տար. Ցաւեաց՝ ցաւ եղաւ. Ցաւեսցէ կամ Ցաւիցէ ցաւ ըլլայ կամ պիտի ըլլայ: Բայց առանձին չի խոնարհուիր. այլ միշտ դերանուան հետ, այսպէս. Ցաւէ ինձ, ցաւէ քեզ, ցաւէ նմա. Ցաւէր ինձ, քեզ, նմա. Ցաւեաց մեզ, քեզ, նոցա. և այլն:

Ծանօթ. — Այս միադէմ բայերը շատ անգամ էական բայի հետ անջատօրէն ալ կը գործածուին այսպէս. Մարթ է, էր. Պարտ է, էր. Ցաւ է, էր, եղև, և այլն:

193. Կան քանի մը ամբողջ բայեր ալ, որ եզակի երրորդ դէմքով կը գործածուին իբր միադէմ բայ: ինչպէս. Հանդիպի կը պատահի, Դիպեսցի պիտի պատահի, Հասանէ հարկ կ'ըլլայ, Ասի կ'ըսուի, Երևի, Թուի կ'երևի, Կարծի կը կարծուի, Լսի կը լսուի. և այլն:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 193. Ուրիշ ի՞նչ բայեր իբր միադէմ կը գործածուին յաճախ:



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Քերականօրէն լուծել հետևեալ բայերն իրենց ամէն պարագաներովը:*

Ա. — Պարտիմք օգնել իրերաց: Գոգցուք թէ այդ այդպէս իցէ: Մարթէր վաճառել զայդ իւղ և տալ աղքատաց: Պարտ է ինձ և զՀռովմ տեսանել: Գոգջիք եթէ տեառն իւրում պիտոյ է: Պօղոս յետ մխիթարելոյ զուղեկիցսն՝ որք խռովեալ էին յերեսաց մրրկին, ասէր. Ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել: Իբրև տեսին առաքեալքն զՅիսուս զի գնայր ի վերայ ծովուն, թուէր նոցա առ աչօք (ոգի կամ ցնորք) ինչ տեսանել: Կարծի յոմանց թէ մասնական ինչ եղեալ իցէ ջրհեղեղն: Ետ կոչել զբարեկամս և զդրացիս և ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս՝ զի գտի զդրամն իմ զկորուսեալ: Արուեստաւորի պարտ է վաստակել ոչ վասն շահու, այլ վասն համբաւոյ:

Բ. — Ցաւէ ինձ, ով սիրելի, զի ոչ եմ բաւական բառնալոյ զմասն ինչ ի վշտաց՝ որ զսիրտ քո կեղեքեն (պատըռատել): Պարտ և արժան է՝ որոց բարիս յումեքէ ընկալան՝ գոհանալ զնմանէ (անոր շնորհակալ ըլլալ) և մի բնաւ մոռանալ զերախտիսն (արդիւնք, բարեգործութիւն): Ծանիր զյարգ ժամանակիդ, ո՛ աշակերտ. եթէ պղերգութեամբ (ծուլութիւն) վատնեսցես զայն և կամ ի խաղս սնոտիս, ցաւեսցէ քեզ ընդ այն (անոր համար) յաւուր միում, այլ ի զուր: Իբրև զգացուցին աշակերտքն Յիսուսի վասն ժողովրդեանն՝ թէ ոչ ունին զինչ ուտիցեն յանապատի անդ, ասէր փորձելով զնոսա. Դուք տուք դոցա ուտել:

Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Պէտք է որ միշտ մէկզմէկ սիրենք։ Մեր օրէնքին համեմատ (ըստ տրկմի. ճետ) պէտք է մեռնի։ Ինչ որ պէտք էր ընել՝ ըրինք։ Նաբուգոդոնոսոր երեք մանկունքը հնոցին մէջ ձգել տուաւ. իրեն կ'երևէր թէ Աստուած կարող չըլլայ զանոնք ազատել։ Ուրիշ ճամբով կարելի չէ արքայութիւն մտնել, բայց եթէ առաքինութեան ճամբով։ Ջանքով կարելի է ամէն արգելքներու յաղթել։ Որուն որ հաց պէտք է՝ հաց տուր, որուն որ զգեստ՝ զգեստ։ Հոս քիչ բան պէտք է։ Կը ցաւիմ որ սիրելի բարեկամս կորսնցուցի։ Ձեզմէ մէկը չկար՝ որ իմ վրաս ցաւէր։ Սողոմոնին համար կ'ըսուի թէ ապաշխարեց։ Կ'երևի թէ արեգակն աշխարհիս չորս կողմը (չուրջ զերկրաւ) կը դառնայ (հոլովիմ), բայց ընդհակառակն երկիրս արևուն չորս կողմը կը դառնայ (թաւալիմ)։ Պօղոս առաքեալը կ'ըսուի թէ Ստեփանոս Նախավկային աղօթքովը դարձած ըլլայ։ Կը պատմուի թէ Յուլիանոս ուրացաւ հաւատքը, ու նորէն (անդրէն) բացաւ կուռքերուն մեհեանները։

Բ. — Յովսէփ ըսաւ մատակարարին. Երեք օրէն վերջը պիտի մեռնիս և մարմինդ թռչուններուն կերակուր պիտի ըլլայ։ Տրդատ Ս. Գրիգոր Լուսաւորիչը կարիճներու և օձերու գուբը (վիրապ) ձգել տուաւ։ Ես այնպէս պիտի ընեմ՝ որ այլ ևս չպիտի կարենան դէմ դնել (ընդդէմ կալ)։ Այդ հիւանդներն իրենց տուները ղրկել տուր։ Պետրոս կ'ըսէր Յիսուսի. Թէպէտ մեռնիլ ալ հարկ ըլլայ ինծի՝ (ճասաճեմ բայով) զքեզ պիտի չուրանամ։ Պէտք չէ ամըչնալ ուրիշներուն հարցընելէ ինչ որ մէկը չի գիտեր։ Մարդուս բաւական չէ միայն մարմինին պէտքերն հոգալ (հայթայթել), պէտք չէ հոգին ալ անխնամ թողուլ։ Կը ցաւիմ, բարեկամ, որ չկրցայ խնդիրքդ շուտով (փութանակի) կատարել։ Խօսիլ գիտնալ բաւական չէ, պէտք է խօսելու ժամանակն ու տեղն ալ գիտնալ։ Դատաւորն անոր ձեռքերն ու ոտքերը կապել տուաւ։ Զանիկա կղզի մը (ուրեք) աքսորել պիտի տամ։



Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Եօթն եղբարք Մակաբայեցիք*

*(Շարայարութիւն)*

Արդ աղաչեմ զքեզ, որդեակ, մի զարհուրիր դու ի չարաչարուք դահճէ այտի, այլ եղբարցն արժանի եղեալ՝ ընտրեա՛ զմահ քան զկեանս աշխարհի։ Եւ մինչդեռ մայրն զայն մխիթարութիւնս մատուցանէր, սկսաւ խօսել պատանեակն և ասէ. Ո՞ւմ կայք, զի՞ յապաղէք, չեմ ինչ լսելոց հրամանի թագաւորիդ. այլ հրամանաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց։ Յայնչափ քաջութիւն սրտի մանկանցն եօթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն։ Առաւել ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին. սակայն և սա յուսացեալ ի Տէր՝ մեկնեցաւ յաշխարհէ։ Զհետ որդւոցն և մայրն երանելի ի նոյն օրէնս կատարեցաւ։

*Բառագիտութիւն*

Չարաչուք — Անողորմ, գէշ
Ո՞ւմ կայք, զի՞ յապաղէք — Ո՞րու կը սպասէք, ինչո՞ւ կ'ուշանաք
Սրտաբեկ լինէր թագաւորն — Թագաւորին սիրտը կը կոտրէր, կը ցաւէր
Ի նոյն օրէնս — Նոյն կերպով
Չեմ ինչ լսելոց — Մտիկ ընելիք չունիմ.

# ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

## ԴԵՐԲԱՅ

### ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Դերբայներու սահման եւ գործածութիւն

194. *Դերբայ կ'ըսուին այն բառերը՝ որ շատ անգամ բայի տեղ կը գործածուին, ինչպէս դերանունները՝ անուանց տեղ: — Ասոնք երեք են թուով ինչպէս տեսանք, Անորիշ, Անցեալ, Ապառնի:*

*Առաջինն Անորիշ կ'ըսուի, վասն զի ոչ դէմք, ոչ թիւ և ոչ ալ ժամանակ կը ցուցնէ: Իսկ միւսերն անցած և գալիք ժամանակը կը յայտնեն: Անորիշ և Անցեալ դերբայներն անուանց պէս կը հոլովին, հետեւելով պարզ հոլովման Դ. ձեւին: Առաջինը եզակի միայն կը հոլովի, երկրորդը թէ եզակի և թէ յոգնակի. իսկ Ապառնի դերբայն անփոփոխ կը մնայ:*

Ծանօթ. Ա. — Անցեալ դերբայն ածականաբար գոյականներու քով դրուելով անոնց հետ թուով ու հոլովով կը

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 194. Ո՞ր բառերը դերբայ կ'ըսուին, ի՞նչ կը նշանակեն և ի՞նչպէս կը ձևափոխուին:



համաձայնի: Ինչպէս. Եղբայր սիրեցեալ, եղբօր սիրեցելոյ, եղբարբ սիրեցելով, յեղբօրէ սիրեցելոյ, զեղբայր սիրեցեալ. եղբարք սիրեցեալք, եղբարց սիրեցելոց, և այլն. Սիրեցեալ եղբարք, սիրեցելոց եղբարց, սիրեցելովք եղբարբք, ի սիրեցելոց եղբարց, զսիրեցեալ եղբարս:

Ծանօթ. Բ. — Նոյն դերբայն էական բային հետ գործածուելով՝ բաղադրեալ ըսուած ժամանակներ կը կազմէ թէ ներգ. և թէ կրաւ. մտքով: Ինչպէս.

Սիրեալ եմ – սիրած կամ սիրուած եմ, Սիրեալ ես – սիրած կամ սիրուած ես, Սիրեալ էի – սիրած կամ սիրուած էի, Սիրեալ եղէ – սիրած կամ սիրուած եղայ, և այլն:

195. *Ապառնի դերբայն համանուն ժամանակին նշանակութիւնն ունի, և միշտ Եմ բային հետ անոր տեղ կը գործածուի: Օրինակ.*

| | | | |
|---|---|---|---|
| Սիրելոց եմ | ըսել է | պիտի | սիրեմ |
| Ոչ եմ ապրելոց | » » | » | չապրիմ |
| Հասանելոց էի | » » | » | հասնէի |
| Մեռանելոց ես | » » | » | մեռնիս, և այլն: |

196. *Անորիշ և անցեալ դերբայները շատ անգամ Սահմ. ներկային, Անկատարին, կատարեալին, Ապառնիին և Ստորադասականին տեղ կը գործածուին: Զոր օրինակ.*

Սահմ. Ներկայի, Անկատարի եւ Կատարեալի տեղ

Ասէին որոտումն լինել. այսինքն՝ թէ լինի կամ եղև. Կ'ըսէին թէ որոտում եղաւ: Պատասխանի ետուն չգիտել. այսինքն՝ թէ ոչ գիտեմք. պատասխանեցին թէ չենք գի-

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 195. Ապառնի դերբայն ի՞նչ կը նշանակէ և ի՞նչպէս կը գործածուի. — 196. Օրինակներով ցոյց տուր թէ անորիշ և անցեալ դերբայները բայի մը ո՞ր ժամանակներուն տեղ կը գործածուին յաճախ:

տեր։ Կարծէին կարել կարկատել, այսինքն՝ թէ կարեն կարկատել. կը կարծէին թէ կրնան կարկտել։ Տեսի անզգամաց արմատս ծգեալ. այսինքն զի անզգամք ծգեալ են կամ էին. տեսայ որ անզգամներն արմատ ձգեր էին։ Եւ հրամայեալ փեստոսի՝ ածին զՊաւղոս. այսինքն իբրև հրամայեաց Փեստոս. ու երբոր հրամանն տուաւ փեստոս՝ բերին զՊօղոս։

## Ապառնիի եւ Ստորադասականի տեղ

Ինձ տացէ Աստուած ասել. այսինքն՝ զի ասացից. Աստուած տայ ինձ որ ըսեմ։ Պատուիրեցի քեզ չուտել. այսինքն՝ թէ մի ուտիցես. պատուիրեցի քեզի որ չուտես։ Ի տեսանելն զքեզ՝ բերկրեսցի. այսինքն իբրև տեսանիցէ. երբոր տեսնէ զքեզ՝ պիտի ուրախանայ։ Հիւանդացեալ՝ և մի ակն կալցի ողջանալոյ. յորժամ հիւանդասցի. երբ հիւանդանայ՝ առողջանալու յոյս չունենայ։ Մի վհատիցիս յանդիմանեալ ի նմանէ. յորժամ յանդիմանիցիս. սիրտդ չկոտրի՝ երբ իրմէ յանդիմանուիս։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Գերբայները դիմաւոր բայի վերածել և ընդհակառակն, ու խօսքերուն մնացած մասերը շտկել քերականօրէն։*

Ա. — Զօր ինչ առնելոց ես՝ արա վաղվաղակի։ Ակնարկէին ուսակցացն գալ օգնել նոցա։ Ի. դառնալ մեղաւորին՝ կեցցէ։ Մտանեմք անդր առ ի խուզելոյ (քննել) զմեզ։ Տուր ինձ հրաման երթալ թաղել զհայր իմ։ Որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող։ Գալոց է Միածինն փառօք Հօր։ Անդր թափելոց էր նաւն զբեռինն։ Մի հոգայցէք թէ զինչ ուտիջիք առ վաղիւ։ Մարտիրոսք վարժեալ էին քաղցու, ծարաւոյ և այլ ամենայն տանջանաց։ Աստուած բաժանելոց է յաւուր միում զարդարն յամբարշտէն։ Սաւղոս լցեալ սպառնալեօք՝ երթայր ի Դամասկոս՝ չարչարել զքրիստոնեայս։

Բ. — Բնակիչք աշխարհին Գերգեսացւոց զահի հարեալ յորոց տեսինն, աղաչէին զՅիսուս գնալ ի սահմանաց իւրեանց։ Որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի, և որ ոչն գուցէ՝ և զոր ունիցին բարձցի ի նմանէ։ Ննջեցէք այսուհետև և հանգերուք, զի ահա հասեալ է ժամ, և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց. արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոց է զիս։ Կարէ՞ք ըմպել զբաժակն զոր ըմպելոց եմ։ Ցեղանեալն Ցիսուսի ի ցամաք՝ պատահեաց այր մի՝ յորում էին դևք, և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ և ոչ ի տան բնակեալ, այլ ի գերեզմանս։ Իբրև գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա զի արասցեն թագաւոր, գնաց դարձեալ ի լեառն միայն։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Աստուած մարդոց հրաման տուաւ որ միս ուտեն։ Մեռնելէն ետքը դատաստան կայ։ Այն կուսանքը որ հետերնին իւղ առեր էին՝ հարսնիքին մէջ մտան, անոնք որ չէին առած՝ դուրս (արտաքս) մնացին։ Դպիրները պատասխան տուին թէ չենք գիտեր։ Հրաման տուաւ որ մեռելներն յարութիւն առնեն։ Աստուած տայ որ միշտ խաղաղութիւն ըլլայ երկրիս վրայ։ Երբ մէկը դժոխք երթայ՝ յոյսը կորէ բոլորովին անկէց ազատելէ։ Թէ և նեղութիւններ և վշտեր զքեզ գտնեն, դեռ մի վհատիր (մի լիցի քեզ), այլ դիմէ առ Աստուած։ Ամենքս ալ պիտի մեռնինք։ Ծնողքս ու դաստիարակներս միշտ պիտի սիրեմ։ Մարգարէն ըսաւ անոր. Քանի մը օրէն պիտի մեռնիս։ Հաւը դեռ չխօսած՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս։ Երբ մեղանչես՝ յոյսդ մի կորեր, այլ զղջա։

Բ. — Աստուած Ադամին ու Եւային պատուիրեց որ այն ծառին պտուղէն չուտեն։ Երբ դատաւորն հրաման

տուաւ՝ սուրբերն առջևը բերին։ Արթըննալով տեսայ որ արևը ծագեր էր։ Կը կարծէին թէ զանոնք պիտի կարենան ազատել։ Աստուած մարդս այնպիսի պատուոյ հասուց (ամբառնամ) մինչև անոր անձնիշխանութիւն պարգևեց։ Դատապարտեալներուն համար աղօթելը զուր տեղն է։ Այս պատուիրանները մինչև հիմայ պահեր եմ։ Նախ տղաք չեն մտածեր գալիքը, երկրորդ՝ տղայամիտ մարդիկ։ Եթէ կարելի ըլլար որ թագաւորները փիլիսոփայ ըլլային, կ՚ըսէր Պղատոն, կամ փիլիսոփաները թագաւոր, բոլոր մարդկութիւնը երջանիկ պիտի ըլլար։ Ժամանակաւ իմաստասէր մը իր գերիին՝ որ յանցանքի մէջ բռնուած էր՝ այսպէս ըսաւ. Զքեզ պիտի ծեծէի՝ թէ որ բարկացած չըլլայի։

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

### Կայէն և Աբէլ

Եղև Աբէլ հովիւ խաշանց, և Կայէն գործէր զերկիր։ Եբեր Կայէն ի պտղոյ երկրի պատարագ Աստուծոյ. ած և Աբէլ յանդրանկաց խաշանց իւրոց և ի պարարտաց նոցա։ Հայեցաւ Աստուած յԱբէլ և ի պատարագս նորա, և ի Կայէն և ի զոհս նորա ոչ նայեցաւ։ Եւ տրտմեցաւ Կայէն յոյժ, և ասէ ցԱբէլ եղբայր իւր. Եկ երթիցուք ի դաշտ։ Եւ իբրև չոգան ի դաշտ անդր, յարեաւ Կայէն ի վերայ Աբելի և սպան զնա։ Եւ ասէ Տէր Աստուած ցԿայէն. Ո՞ւր է Աբէլ եղբայր քո։ Եւ նա ասէ. Չգիտեմ, միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ։ Եւ ասէ Աստուած. Զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ։ Անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի, գործիցես զերկիր, և ոչ յաւելցէ տալ քեզ զզօրութիւն իւր. երերեալ և տատանեալ եղիցիս ի վերայ երկրի։

Բառագիտութիւն

Գործէր զերկիր — Երկիր կը մըշակէր
Եբեր — Բերաւ
Պատարագ — Նուէր
Յանդրանկաց խաշանց իւրոց — Իր ոչխարներուն անդրանիկներէն։



## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

### Շարունակութիւն նախորդ դասին

197. *Երբ մի և նոյն տէր բային ունեցող երկու դիմաւոր բայեր քովէքով գան, յաճախ նախընթացն անցեալ դերբայ կը դրուի՝ խօսքն աւելի կորուկ ընելու համար։ Օրինակ.*

Խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն. — գիրքը գոցեց ու պաշտօնեային տուաւ. — Վաճառեալ զինչս իւր՝ չոգաւ յաշխարհ հեռի. — ինչքերը ծախեց ու հեռու աշխարհ գնաց. — Կոչեալ զծառայսն՝ եհարց ցնոսա. — ծառաները կանչեց ու անոնց հարցուց։

198. *Այս ձևով բացատրուած խօսքերու մէջ Անցեալ և Անորիշ դերբայներուն տէր բային սովորաբար սեռական հոլովով կը դրուի։ Օրինակ.*

Եւ ելեալ անտի Յիսուսի՝ գնաց. այսինքն Յիսուս. — Յիսուս անկէ ելաւ գնաց. — Տեսեալ արդարոց ծիծաղեցան. այսինքն արդարք. — արդարները տեսան ու խնդացին. — Ասացեալ նորա զայս՝ լռեաց. այսինքն նա. — անիկա այս ըսաւ ու լռեց. — Մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ. այսինքն մինչև բազումք իսկ ասացին թէ մեռաւ. — մինչև շատերն ըսին թէ մեռաւ. — Մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա. այսինքն՝ մինչ զի և հաց ևս ոչ ժամանէին ուտել նոքա. — մինչև հաց ուտելու անգամ չէին հասնէր։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 197. Ուրիշ ի՞նչ պարագայի մէջ դիմաւոր բայի տեղ անցեալ դերբայ կը գործածուի. — 198. Անորիշ և անցեալ դերբայներուն տէր բային ի՞նչ հոլովով կը դրուի։

տուաւ՝ սուրբերն առջեւը բերին։ Արթըննալով տեսայ որ արեւը ծագեր էր։ Կը կարծէին թէ զանոնք պիտի կարենան ազատել։ Աստուած մարդս այնպիսի պատուոյ հասուց (ամբառնամ) մինչև անոր անձնիշխանութիւն պարգեւեց։ Դատապարտեալներուն համար աղօթելը զուր տեղն է։ Այս պատուիրանները մինչեւ հիմայ պահեր եմ։ Նախ տղաք չեն մտածեր գալիքը, երկրորդ՝ տղայամիտ մարդիկ։ Նթէ կարելի ըլլար որ թագաւորները փիլիսոփայ ըլլային, կ՚ըսէր Պղատոն, կամ փիլիսոփաները թագաւոր, բոլոր մարդկութիւնը երջանիկ պիտի ըլլար։ Ժամանակաւ իմաստասէր մը իր գերիին՝ որ յանցանքի մէջ բռնուած էր՝ այսպէս ըսաւ. Զքեզ պիտի ծեծէի՝ թէ որ բարկացած չըլլայի։

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

*Կային և Աբել*

Եղև Աբէլ հովիւ խաշանց, և Կային գործէր զերկիր։ Եբեր Կային ի պտղոյ երկրի պատարագ Աստուծոյ. ած և Աբէլ յանդրանկաց խաշանց իւրոց և ի պարարտաց նոցա։ Հայեցաւ Աստուած յԱբէլ և ի պատարագս նորա, և ի Կային և ի զոհս նորա ոչ նայեցաւ։ Եւ տրտմեցաւ Կային յոյժ, և ասէ ցԱբէլ եղբայր իւր. Եկ երթիցուք ի դաշտ։ Եւ իբրև չոգան ի դաշտ անդր, յարեաւ Կային ի վերայ Աբելի և սպան զնա։ Եւ ասէ Տէր Աստուած ցԿային. Ո՞ւր է Աբէլ եղբայր քո։ Եւ նա ասէ. Զգիտեմ, միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ։ Եւ ասէ Աստուած. Զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ։ Անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի, գործիցես զերկիր, և ոչ յաւելցէ տալ քեզ զզօրութիւն իւր. երերեալ և տատանեալ եղիցիս ի վերայ երկրի։

*Բառագիտութիւն*

Գործէր զերկիր – Երկիր կը մշակէր
Եբեր – Բերաւ
Պատարագ – Նուէր
Յանդրանկաց խաշանց իւրոց – Իր ոչխարներուն անդրանիկներէն։



# ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Շարունակութիւն նախորդ դասին

197. *Երբ մի և նոյն տէր բային ունեցող երկու դիմաւոր բայեր քովէքով գան, յաճախ նախընթացն անցեալ դերբայ կը դրուի՝ խօսքն աւելի կորուկ ընելու համար։ Օրինակ.*

Խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն. – գիրքը գոցեց ու պաշտօնէին տուաւ. – Վաճառեալ զինչս իւր՝ չոգաւ յաշխարհ հեռի. – ինչքերը ծախեց ու հեռու աշխարհ գնաց. – Կոչեալ զծառայսն՝ եհարց ցնոսա. – ծառաները կանչեց ու անոնց հարցուց։

198. *Այս ձևով բացատրուած խօսքերու մէջ Անցեալ և Անորոշ դերբայներուն տէր բային սովորաբար սեռական հոլովով կը դրուի։ Օրինակ.*

Եւ ելեալ անտի Յիսուսի՝ գնաց. այսինքն Յիսուս. – Յիսուս անկէ ելաւ գնաց. – Տեսեալ արդարոց ծիծաղեցան. այսինքն արդարք. – արդարները տեսան ու խնդացին. – Ասացեալ նորա զայս՝ լռեաց. այսինքն նա. – անիկա այս ըսաւ ու լռեց. – Մինչեւ բազմաց իսկ ասել թէ մեռաւ. այսինքն մինչև բազումք իսկ ասացին թէ մեռաւ. – մինչև շատերն ըսին թէ մեռաւ. – Մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա. այսինքն՝ մինչ զի և հաց ևս ոչ ժամանէին ուտել նոքա. – մինչև հաց ուտելու անգամ չէին հասներ։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 197. Ուրիշ ի՞նչ պարագայի մէջ դիմաւոր բայի տեղ անցեալ դերբայ կը գործածուի. — 198. Անորիշ և անցեալ դերբայներուն տէր բային ի՞նչ հոլովով կը դրուի։

**Նոյնպէս կ'ըլլան բաղադրեալ ժամանակներու դերանուն տէր բայերն։ Ուստի, գրաբարի մէջ՝**

| Փոխանակ ըսելու | Սովորաբար կ'ըսուի |
|---|---|
| Ես տեսեալ եմ | Իմ տեսեալ է |
| Դու ընթերցեալ ես | Քո ընթերցեալ է |
| Նա ընկալեալ է | Նորա ընկալեալ է |
| Մեք չեմք լուեալ | Մեր չիք լուեալ |
| Դուք չէք լուցեալ | Ձեր չիք լուցեալ |
| Նոքա չեն լացեալ | Նոցա չիք լացեալ. ևն։ |

**Ծանօթ. —** Անորոշ և Անց. դերբայններու տէր բային երբ այսպէս դերանուն ըլլայ, սեռականի տեղ երբեմն տրական հոլով ալ կը դրուի։ Օրինակ.

Թողեալ ձեզ զԱստուած՝ քարանց պաշտօն մատուցանէիք. (այսինքն՝ թողեալ ձեր). — *դուք զԱստուած թող տուած՝ քարերու երկրպագութիւն կ'ընէիք*։ — Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր. — *չենք ուզեր որ այդ մարդը վրանիս թագաւորէ*։ — Ոչ թողից անցանել քեզ ընդ այս. — *պիտի չթողում որ դու ասկէ անցնիս*, և այլն։

199. ***Ող, իչ և լի բառերը բայածական կ'ըսուին, և դերբայներուն պէս դիմաւոր բայի տեղ կը գործածուին։ Այսպէս.***

Սրբող կամ Սրբիչ ըսել է Նա որ սրբէ
Փրկող կամ Փրկիչ » » Նա որ փրկէ
Բացող կամ Բանալի » » Նա որ բանայ, և այլն։

**Ծանօթ. —** Ինչպէս կը տեսնուի՝ բայի մ'արմատին ծայրն ող և իչ դրուելով՝ սոյն վերջաւորութեամբ բայածականք կը

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 199. Ի՞նչ վերջաւորութեամբ բառեր բայածական կ'ըսուին և ի՞նչպէս կը գործածուին։



կազմուին։ Իսկ բանալի, սրբելի, դառնալի և ամէն լի վերջացողները կը ձևանան՝ բային անորոշ դերբայի ծայրն ի գիրն աւելցնելով։

200. ***Լի վերջացող բայածականները երկու մտքով կը գործածուին, ող կամ իչ և պէտք է կամ կարելի է իմաստով։ Օրինակ.***

Լսելիք օրինացն արդարասցին. — *օրէնքին մտիկ ընողները պիտի արդարանան.*

Աղաչեմ զընթերցանելիսն. — *կարդացողներուն կ'աղաչեմ.*

Բայց գիտելի է զի... — *բայց գիտնալու է, կամ պէտք է գիտնալ որ...*

Ջնջելի են տառքն բ և ք. — *ըսել է՝ բ ու ք գրերը պէտք է աւրել.*

Այժմ տանելի է. — *առոր կարելի է համբերել։*

**Ծանօթ. —** Ունիմ բայն Անորոշ դերբային քով դրուելով՝ Ապառնի դերբային ու ժամանակին, կամ աշխարհաբար լիք բայածականին նշանակութիւնը կուտայ անոր։ Օրինակ.

Պատանիս այս ունի ինչ ասել քեզ — այսինքն՝ *ասասցէ կամ ասելոց է. — ըսելիք մը ունի։*

Այր զգօն ի նելքոյ կարգադրէ զգործ զոր ունի առնել արտաքոյ — *զոր առնելոց է. — ընելիք գործը։*

Իսկ թէ ընդէ՞ր անգիտացան արդեօք, ոչ ունիմ քննել ի ժամուս — *ոչ քննեցից. — պիտի չքննեմ*, և այլն։

201. ***Ող և ած բայածականներէ ձևացած աշխարհաբար խօսքերը գրաբարի մէջ ընդհանրապէս որ յարաբերականով կամ անցեալ դերբայով կը բացատրուին։ Օրինակ.***

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 200. Քանի՞ նշանակութեամբ կը գործածուին լի վերջացող բայածականները. — 201. Աշխարհաբար բայածականով բացատրուած խօսքերը՝ գրաբար ի՞նչպէս պէտք է դարձնել։

Ձեզի եկող ճիւրերը մեզի ծանօթ են. — Ծանօթ են մեզ ճիւրքն որ եկին առ ձեզ կամ եկեալ առ ձեզ.

Դրան առջև կեցող մարդը ներս կանչէ. — Կոչեա ի ներքս զայրն որ առ դրան կայ կամ առ դրան կացեալ.

Եղբօրս գրած նամակն առի. — Ընկալայ զթուղթն զոր գրեաց եղբայր իմ կամ գրեալ յեղբօրէ իմմէ.

Կորսուած դրամս գտայ. — Գտի զդրամս իմ զոր կորուսի կամ գտի զդրամս իմ զկորուսեալ, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Քերականօրէն լուծել և փոխանակել սա դերբայով ու դիմաւոր բայով կազմուած խօսքերը։*

Ա. — Ամենեցուն բացեալ զբերանս իւրեանց՝ այպն առնէին (ծաղրել) և նախատէին զնա։ Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա՝ մեղ ինչ ոչ գոյր նոցա։ Կոչեալ Փիլիպպոսի զԱրիստոտէլ՝ նմա յանձն արար զկրթութիւն Աղեքսանդրի։ Թողեալ կնոջն սամարացւոյ զսափորն իւր՝ եմուտ ի քաղաքն և ասէր ցմարդիկն. Եկայք տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ է։ Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. մի խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի։ Մակեդոնացւոց չհետ մտեալ (հետապնդել) կոտորէին զՊարսիկս, որոց ի պարտութիւն մատնեալ (յաղթուիլ) ի փախուստ դառնային։ Ասէր Յիսուս ցՓարիսեցիս՝ որ անդոսնէին զնա. Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ։

Բ. — Մանկունք, անսացէք ծնողաց ձերոց և դաստիարակաց, զի հասեալ ձեր ի չափ յասուր միում՝ հնազանդել պարտիք օրինաց։ Եկեալ ոմանց ի քահանայից առ Յովհաննէս Մկրտիչ՝ հարցանէին զնա. Ասա մեզ ո՞վ ես դու, Եղիա՞ ես, զի պատասխանի տացուք՝ որոց առաքեցինն



զմեզ։ Որք իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ որ ոչ գուցէ, և որ իցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ։ Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Արի, առ զմահիճս քո և երթ ի տուն քո։ Այն ինչ առեալ Տրովացւոց զբօթ մահուան Հեկտորի՝ քաջայանդուգն պաշտպանին իւրեանց, բախէին զկուրծս և փետէին զհերս։ Հատեալ մանանխոյ աճէ և լինի ծառ, մինչև թռչնոց երկնից գալ և հանգչել յոստս (ճիւղ) նորա։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Արքայութիւն տանող ճամբան նեղ է և փուշերով լեցուն։ Անոր այս խօսքերն ըսած ատեն՝ մեր աչքերը բացուեցան։ Ամէն բանէ սորվողն՝ ամենէն իմաստուն կ՚ըլլայ։ Թէ որ Ադամ արգիլուած պտուղը չուտէր՝ մենք պիտի չմեռնէինք։ Թագաւորն այս լսեց ու զարմացաւ։ Հացերն այնչափ շատ էին՝ մինչև անոնցմէ եօթն զամբիւղ լեցուցին Առաքեալները։ Այս խօսքը լսեցին և ամէնքը միաբերան աղաղակեցին. Մենք այդպիսի բան լսած չենք։ Ճամբուն վրայ շատ ժողովուրդ խռնուած էր, մինչև ճամբորդները չէին կրնար անցնիլ։ Անոր կ՚աղաչէին որ իրենց սահմաններէն երթայ։ Դատաւորն յանցաւորները կանչեց և մէկիկ մէկիկ (մի ըստ միոջէ) հարցաքննեց։ Զարագործները քաղաքէն դուրս (արտաքոյ քան զքաղաքն) հանեցին և գլուխնին կտրեցին։ Պօղոս առաքեալը պատուհանէն (ընդ պատուհանն) վար իջուցին և փախուցին։ Այս ալ պէտք է գիտել որ յանցաւորը մինակ էր։

Բ. — Պէտք է գիտնալ որ արդարները մեղքէ կը խորշին։ Զիս տեսնողներն ու ինծմէ լսողները երանելի են։ Դժոխքին տանջանքները համբերելու (տանել) բան չեն։ Ինծի ղրկած գիրքդ ընդունեցայ։ Ձեր հայրն ազատող մարդն՝ իմ բարեկամս է։ Գրած նամակս ձեռքդ հասա՞ւ։ Մարգարէացիր ո՞վ է քեզի զարնողը։ Մակեդոնացի մարդ մը Պօղոսի երեցաւ ու ըսաւ. Անցիր Մակեդոնիա ու օգնէ մեզի։ Շատախօսութիւնը խօսողին համար մեծ պակսութիւն

է և լողին համար մեծ տանջանք։ Ծովուն մէջ մեծ շարժում եղաւ, մինչեւ նաւն ալիքներէն կը ծածկուէր։ Ջուարճութիւնն իրմէ փախչողին ետեւէն կը վազէ։ Յիսուսի գալուստովը՝ խաւարի մէջ նստողները լոյս տեսան, և մահուան ստուերներուն մէջ եղողներուն՝ լոյս ծագեցաւ։ Զճանչցած մարդուդ հետ ընտանեբար մի վարուիր, վասն զի սրտին խորութիւնը չես գիտեր։ Աւելորդ բաներ գնողն՝ հարկաւորները կը ստիպուի ծախելու։ Յակոբոս և Յովհաննէս իրենց նաւն ու հայրը թողուցին և Յիսուսի ետեւէն գնացին։ Քեզմէ բան մը խնդրողին մէկէն ոչ մ'ըսեր, այս լեղի (դառնահամ) դեղն անուշութեամբ և քաղաքավարութեամբ բարեխառնէ։

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

*Սողոմոն խնդրէ յԱստուծոյ զիմաստութիւն*

Երեւեցաւ Տէր Սողոմոնի ի քուն գիշերոյ և ասէ. խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ։ Եւ ասէ Սողոմոն. Տէր Աստուած իմ, դու ետուր զծառայ քո փոխանակ Դաւթի հօր իմոյ, և ես եմ մանուկ փոքր։ Տացես ծառայի քում սիրտ՝ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել ի մէջ բարւոյ և չարի։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն զայն բան։ Եւ ասէ ցնա Տէր. փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ, և ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն և ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց, ահա ետու քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ. իբրև զքեզ ոչ ոք եղև յառաջ քան զքեզ, և յետ քո ոչ յարիցէ նմանող քեզ։ Եւ զոր ոչն ես խնդրեցեր՝ ետու քեզ, զմեծութիւն և զփառս։

*Բառագիտութիւն*

Խելամուտ լինել ի մէջ բարւոյ և չարի — Չարն ու բարին ճանչնալ

Յետ քո ոչ ոք յարիցէ նմանող քեզ — Քեզմէ վերջը նմանդ պիտի չըլլայ

Եւ զոր ոչն ես խնդրեցեր ետու քեզ — Չխնդրածդ ալ տուի քեզ։



## ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Խնդրառութիւն բայերու եւ դերբայներու

202. *Բնութեան խնդիրն ամէն հոլով կրնայ դրուիլ, ինչպէս վերն ըսած ենք* (124)։ *Այս խնդիրն ուղղականի տեղ շատ անգամ նախդրիւ տրական կը դրուի։ Գրաբարի մէջ.*

| Սովորաբար կ'ըսուի | Փոխանակ ըսելու |
|---|---|
| Օծանել զոք ի թագաւոր | Օծանել զոք թագաւոր |
| Ցոչինչ կամ առ ոչինչ համարել | Ոչինչ համարել |
| Արարից զքեզ յազգ մեծ | Արարից զքեզ ազգ մեծ։ |

203. *Առնել և տալ նշանակող բայերն, ինչպէս՝ գնել, վաճառել, առնուլ, տալ, ստանալ, վարձել, սակ արկանել, գործիականի տեղ՝ սովորաբար սեռական հոլով բնութեան խնդիր կ'առնեն, քիչ անգամ նաև բացառական կամ ընդ նախդրով։ Զոր օրինակ.*

Գնոց գնեցայք, — այսինքն է գնովք գնեցայք.
Արծաթոյ վաճառեցին զագարակն, — արծաթով.
Գնեցի զմատեանս զայս երից (կամ յերից, ընդ երից) դահեկանաց, — երիւք դահեկանօք։

204. *Տնտղութիւն, ձանապարհ, ձև և չափ նշանակող բնութեան խնդիրներն ընդհանրապէս հայ-*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 202. Ի՞նչ հոլով կը դրուի ուղղական բնութեան խնդիրը. — 203. Առնել և տալ նշանակող բայերու բնութեան խնդիրն ի՞նչ հոլով կը դրուի. — 204. Բնութեան խնդիրն ի՞նչ նշանակութեամբ հայցական հոլով կը դրուի։

*ցական հոլով կը դրուին, ինչպէս յետագայ օրինակներուն մէջ կը տեսնուի.*

Տեւողութիւն. — *Հող կերիցես* զամենայն աւուրս, — *այսինքն՝* յամենայն կամ ընդ ամենայն աւուրս. — **Եղև** ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, — ի քառասուն տիւ և ի քառասուն գիշեր. — **Թագաւորեաց** *որդի նորա* ամս տասն, — յամս կամ ընդ ամս, *և այլն*։

Ճանապարհ. — **Գնալ** զճանապարհս թիւրս, — ի ճանապարհս կամ ընդ ճանապարհս թիւրս. — **Զօգան** մղոնս երկուս, — ընդ մղոնս երկուս. — **Երթիջիք** զճանապարհն ծեր, — ընդ կամ ի ճանապարհն ծեր, *և այլն*։

Ձեւ եւ չափ. — **Խօսեցաւ** *արքայ* զայս օրինակ, — այսու օրինակաւ. — **Տարոն** զձև *և* զօրինակ **Բաբելոնի** *շինէր*, — ձևով *և* օրինակաւ. — **Արբուցանել** *ումեք* բաժակ մի *ջուր*, — բաժակաւ միով. — **Բարձին** *զնշխարսն* երկոտասան սակառի, — *երկոտասան սակառեօք*, *և այլն*։

205. *Գործիականի տեղ դարձեալ հայց. հոլով կը դրուի բնութեան խնդիրը, երբ մի և նոյն բային գոյականն է և կամ նման նշանակութիւն ունի, ինչպէս նաև որ դերանունը եթէ նոյն գոյականը կը յարաբերէ։ Օրինակ.*

Նոյն կամ նման գոյական. — **Ամաչեցէք** զամօթ մեծ, — *այսինքն՝* ամօթով մեծաւ. — **Մեղոյց** *զնոսա* մեղս մեծամեծս, — մեղօք մեծամեծօք. — Զմահ *աղուեսու սպանից զքեզ*, — մահուամբ. — Զթաղումն *իշոյ թաղեսցի*, — թաղմամբ, *և այլն*։

Որ դերանուն. — *Գիտես զծառայութիւնն* զոր *ծառայեցի քեզ*, — որով *ծառայեցի*. — *Տեսի ես զնեղութիւնն* զոր *նեղեն զնոսա Եգիպտացիքն*, — որով *նեղեն*, *և այլն*։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 205. Ուրիշ ի՞նչ պարագայի մէջ բնութեան խնդիրն հայցական հոլով կը դրուի։



206. *Շատ անգամ գոյական և ածական անունները իրենց բայերուն կամ դերբայներուն տեղ կրնան գործածուիլ և անոնց պէս խնդիր առնել։ Այսպէս.*

| Ընտրելագոյն է լսել | Փոխանակ լսելու |
| --- | --- |
| *Ի լուր* բանիցն *ոչ ևս զգայր* **Տուլլոս** *զաղէտս իւր.* | Լուեալ կամ ի լսել զբանսն *ոչ ևս զգայր* **Տուլլոս** *զաղէտս իւր.* |
| **Վայելչին** *քաղցրութեամբ ի կեանս՝* աներկիւղք ի մահուանէ և անտենչք նմին. | **Վայելչին** *քաղցրութեամբ ի կեանս՝* ոչ երկնչելով կամ երկուցեալ ի մահուանէ և ոչ տենչացեալ նմին. |
| Ծանրացասումն *Հերովդէս՝ առ գուժաբերն գոչէր.* | Ծանրացասումն եղեալ կամ ծանր ցասուցեալ *Հերովդէս՝ առ գուժաբերն գոչէր*։ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն տեսակն ու ձևը, և քերականօրէն զննատել բնութեան խնդիրները.*

Ա. — *Մարտիրոսք յոչինչ համարէին զանտանելի չարչարանս վասն յաւիտենից կենաց։* **Խօսեցաւ** **Աստուած** *ընդ* **Աբրահամու** *վասն* **Իսահակայ** *որդւոյ նորա և ասէ.* **Ես** *եղէց նմա ի հայր և նա եղիցի ինձ յորդի։* **Կենաց** **Կայենի** *տխուր եղև կատարած. զնոյն օրինակ պատժեսցին*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 206. Բայերու և դերբայներու տեղ իրենց թէ գոյական և թէ ածական անունները կրնա՞ն գործածուիլ։

*ցական հոլով կը դրուին, ինչպէս յետագայ օրինակներուն մէջ կը տեսնուի.*

Տեւողութիւն. — *Հող կերիցես* զամենայն աւուրս, — *այսինքն՝* յամենայն կամ ընդ ամենայն աւուրս. — *Եղև* ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, — ի քառասուն տիւ և ի քառասուն գիշեր. — *Թագաւորեաց որդի նորա* ամս տասն, — յամս կամ ընդ ամս, *և այլն:*

Ճանապարհ. — *Գնալ* զճանապարհս թիւրս, — ի ճանապարհս կամ ընդ ճանապարհս թիւրս. — *Չոգան* մղոնս երկուս, — ընդ մղոնս երկուս. — *Երթիջիք* զճանապարհն ձեր, — ընդ կամ ի ճանապարհն ձեր, *և այլն:*

Ձեւ եւ չափ. — *Խօսեցաւ արքայ* զայս օրինակ, — այսու օրինակաւ. — *Տարսոն* զձև և զօրինակ *Բաբելոնի շինէր*, — ձևով և օրինակաւ. — *Արբուցանել ումեք* բաժակ մի *ջուր*, — բաժակաւ միով. — *Բարձին զնշխարսն* երկոտասան սակառի, — *երկոտասան սակառեօք, և այլն:*

205. *Գործիականի տեղ դարձեալ հայց. հոլով կը դրուի բնութեան խնդիրը, երբ մի և նոյն բային գոյականն է և կամ նման նշանակութիւն ունի, ինչպէս նաև որ դերանունը եթէ նոյն գոյականը կը յարաբերէ: Օրինակ.*

Նոյն կամ նման գոյական. — *Ամաչեցէք* զամօթ մեծ, — *այսինքն՝* ամօթով մեծաւ. — *Մեղոյց զնոսա* մեղս մեծամեծս, — մեղօք մեծամեծօք. — Զմահ *աղուեսու սպանից զքեզ*, — մահուամբ. — Զթաղումն *իշոյ թաղեսցի*, — թաղմամբ, *և այլն:*

Որ դերանուն. — *Գիտես զծառայութիւնն* զոր *ծառայեցի քեզ*, — որով *ծառայեցի.* — *Տեսի ես զնեղութիւնն* զոր *նեղեն զնոսա Եգիպտացիքն*, — որով *նեղեն, և այլն:*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 205. *Ուրիշ ի՞նչ պարագայի մէջ բնութեան խնդիրն հայցական հոլով կը դրուի:*



206. *Շատ անգամ գոյական և ածական անուններն իրենց բայերուն կամ դերբայներուն տեղ կրնան գործածուիլ և անոնց պէս խնդիր առնել: Այսպէս.*

| Ընտրելագոյն է լսել | Փոխանակ լսելու |
|---|---|
| Ի լուր բանիցն *ոչ ես զգայր Տուլլոս զաղէտս իւր.* | Լուեալ կամ ի լսել զբանսն *ոչ ես զգայր Տուլլոս զաղէտս իւր.* |
| *Վայելէին քաղցրութեամբ ի կեանս՝* աներկիւղք ի մահուանէ և անտենչք նմին. | *Վայելէին քաղցրութեամբ ի կեանս՝* ոչ երկնչելով կամ երկուցեալ ի մահուանէ և ոչ տենչացեալ նմին. |
| Ծանրացասումն *Հերովդէս՝ առ գուժաբերն գոչէր.* | Ծանրացասումն եղեալ կամ ծանր ցասուցեալ *Հերովդէս՝ առ գուժաբերն գոչէր:* |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել բայերուն տեսակն ու ձևը, և քերականօրէն գնահատել բնութեան խնդիրները.*

Ա. — *Մարտիրոսք յոչինչ համարէին զանտանելի չարչարանս վասն յաւիտենից կենաց: Խօսեցաւ Աստուած ընդ Աբրահամու վասն Իսահակայ որդւոյ նորա և ասէ. Ես եղէց նմա ի հայր և նա եղիցի ինձ յորդի: Կենաց Կայենի տխուր եղև կատարած. զնոյն օրինակ պատժեսցին*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 206. *Բայերու և դերբայներու տեղ իրենց թէ գոյական և թէ ածական անունները կրնա՞ն գործածուիլ:*

ամենայն չարագործք։ Բնիկք աշխարհին պնդեցան (վազեցին) զկնի լրտեսացն զճանապարհն Յորդանանու։ Որք պատերազմին ընդդէմ գրգանաց աշխարհի՝ պսակեցին յարքայութեան երկնից զանթառամ փառաց զպսակն։ Երկայնամիտ լինի Աստուած առ մեղաւորս, և որոց ապաշխարեն՝ թողու զամենայն մեղս զորս մեղան։ Աղխողորմ էր տեսարանն այն, այլ ոչ կակղացուցանէր զսիրտ անագորոյն յաղթականին։

Բ. — Մովսէս զքառասուն տիւ եկաց ի գլուխ Սինայ լերին։ Տեսեալ առաքելոց զՅիսուս զի զգնայր ի վերայ ալեաց ծովուն, երկեան երկիւղ մեծ։ Ասէր Յուդիթ ցպահապանս Բետիղուայ. Կացջիք դուք առ (քով) դրան քաղաքիս զգիշերս զայս։ Աքաաբ արքայ Իսրայելի չոգաւ զհետ ամենայն անօրէնութեանց զորս անօրինեցաւ Մանասէ։ Առն ուրումն մեծատան վաճառեալ զշքեղ ամարանոց իւր չորեքհարիւր դահեկանաց, գնոց առեալ է փոխանակ նորին հոյակապ ապարանս մերձ ի ծով։ Մարիամ և Յովսէփ զաւուրս երիս տառապեալ ի խնդիր Յիսուսի՝ գտին զնա ի տաճարին։

| | |
|---|---|
| Գրգանք – Վայելք | Անագորոյն – Անգութ |
| Աղխողորմ – Խիստ սրտաշարժ | Ի խնդիր – Փնտռելու համար. |

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Իսրայելացիք Դաւիթը թագաւոր ընտրեցին։ Աստուած խոստացաւ Աբրահամու՝ մեծ ազգ ընելու զանիկա։ Օձին ըսուեցաւ (ասացաւ) կեանքիդ ամէն օրերը հող ուտես (կերիցես)։ Օրուան մը ճամբայ քալեցին (գնամ)։ Աստուած յաւիտենական սիրով սիրած է զմեզ։ Կը մոռնամ այն նախատինքը որով նախատեցիր զիս։ Երբ անոր գալը լսուեցաւ՝ (դարձուր անոր գալուստի լուրին վրայ Նխդր. տրկն.) բոլոր քաղաքն ոտք ելաւ (դղրդիմ)։ Յուդայի զօրքը դեռ պատերազմիլ չսկսած՝ (չեւ սկսեալ) թշնամիք աճապարեցին փախչելու (փախուստ Նխդր. տրկն.)։ Գողիադ անունով մարդ մը դէպ Իսրայելացւոց բանակը ձայն տալով կ'ըսէր. Ձեզմէ մէկը թող ելնէ՝ որ երկուքնիս մենամարտինք, եթէ նա ինծի յաղթէ՝ մենք ձեզի ծառայ ըլլանք, բայց եթէ ես յաղթեմ՝ դուք մեզի ծառայ ըլլաք։ Կոկորդիլոսները գիշերները ջուրի մէջ կ'անցնեն։ Այս տաճարը քառասուն և վեց տարուան մէջ (դարձուր հայցականով) շինուեցաւ։ Ծառաներն իրեք օրուան ճամբայ գնացին և իրենց տիրոջ կորուսած քսակը չգտան։ Հայրը ցաւագին անէծքով (ան. հյցկն.) իր որդին անիծեց։ Մեղաւորներն յաւիտենական կորուստով (ան. հյցկն) պիտի կորսուին։



Բ. — Պետրոս Անանիայի կնոջն հարցուց. Ըսէ ինծի, ո՞րչափ գնով ծախեցիք գիւղը։ Մաթուսաղա իննհարիւր վաթսունինը տարի ապրեցաւ, իսկ Նոյ ապրեցաւ ութհարիւր յիսուն տարի։ Առատութեան եօթը տարիներէն ետքը՝ եօթը տարի սով եղաւ։ Ղեւտացիներն Աստուծմէ սահմանուած էին քահանայ ըլլալու։ Հօրաքրոջս որդին անցեալ կիւրակէ շատ տրտում էր և արցունքի կաթիլներ կ'իջնէին աչքերէն. բոլոր օրը ոչ կերաւ և ոչ խմեց։ Շիտակ ճամբէն քալէ (երթամ) չես իյնար, և եթէ իյնաս ալ՝ շուտով կ'ելնես։ Վարդապետ, բոլոր այս գիշերս աշխատեցանք (աշխատ լինել) ու բան մը չբռնեցինք։ Առաքինութիւնն ամէն օր կարծես թէ այս կերպով (օրինակ – հյցկն.) կ'ըսէ մեզի. Որդեակ, իմ ետեւէս եկուր, ինծմով միայն կարելի է փառքի և անմահութեան (Նխդր. տրկն.) հասնիլ։ Վեստեան տաճարին մէջ գիշեր ցերեկ (հյցկն.) կրակն անշէջ կը պահուէր։ Զայն ելաւ ամէն կողմ թէ Սիղղա Միհրդատայ յաղթելով՝ Հռովմայ վրայ պիտի վազէ (խաղամ), որպէս զի իր վրէժխնդրութիւնն յագեցնէ (ի յագուրդ)։

| | |
|---|---|
| Կաթիլ – Շիթ | Շիտակ – Ուղղորդ |
| Ետեւէս – Զկնի իմ | Գիշեր ցերեկ – Ցայգ և ցերեկ. |

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Մեծատունն ու աղքատը*

*Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ ոմն Ղազարոս՝ անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ, և ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ մեծատանն։ Եղեւ մեռանել աղքատին և տանել հրեշտակացն զնա ի գոգն Աբրահամու։ Մեռաւ և մեծատունն և թաղեցաւ. և ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր, ետես զԱբրահամ ի հեռաստանէ և զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ։ Աղաղակեաց և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, և առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ ի տապոյ աստի։ Եւ ասէ Աբրահամ. Որդեակ, յիշեա զի ընկալար զբարիս քո ի կեանս քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս։*

#### *Բառագիտութիւն*

*Ագանէր բեհեզս* — Ազնիւ կտաւներ կը հագուէր
*Ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր* — Երբոր տանջանքի մէջ էր՝ աչքերը վեր առաւ
*Ի հեռաստանէ* — Հեռուէն
*Թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր* — Մատին ծայրը ջրի մէջ թրջէ
*Պապակիմ ի տապոյ աստի* — Կը տոչորիմ այս տաքէն.

---

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

## ՆԱԽԴԻՐ

---

### ՅԻՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Զ նախդրին գործածութիւնը

207. *Նախդիր կ'ըսուին այն գիրերն ու բառերը, որ անուններու և դերանուններու քով դրուելով՝ անոնց այս կամ այն պարագան ցոյց կու տան։*

*Անոնք երկու տեսակ են. Բուն նախդիրներ և Հոլովառու բառեր։*

*Բուն նախդիր են՝ զ, ի, յ, ց, առ, ընդ, ըստ, որոնք հոլովուած բառերու սկիզբը դրուելով՝ կերպ կերպ նշանակութիւններ կու տան։*

208. *Զ նախդիրն հայցականէն զատ՝ գործիական և բացառական հոլովներու հետ կը գործածուի, և կ'ըսուի զ նախդրիւ գործիական և զ նախդրիւ բացառական։*

*Զ նախդրիւ գործիականը կը նշանակէ.*

1°. *Մարդու մը կամ բանի մը չորս կողմը.*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 207. *Նախդիրն ի՞նչ է ու քանի՞ տեսակ. որո՞նք են բուն նախդիրները.* — 208. *Զ նախդիրն հայցականէն զատ ուրիշ ո՞ր հոլովներու հետ կը գործածուի և ի՞նչ կը նշանակէ Զ նախդրիւ գործիականը։*

2°. *Բանի մը առենները: Զոր օրինակ.*

*ԶՄովսեսիւ, Մովսէսի չորս կողմը.*
*Զտամբ, տանը չորս կողմը.*
*Զայրիւ, այրին չորս կողմը.*
*Զինն ժամու, ժամն իններն առենները.*
*Զմիջօրէիւ, կէսօրուան առենները.*
*Զայնու ժամանակաւ, այն առենները, և այլն:*

209. *Զ նախդրիւ բացառականը կը նշանակէ անձի մը կամ բանի մը վրայօք: Օրինակ.*

*ԶՅակոբայ, Յակոբին վրայօք.*
*Զնմանէ, անոր վրայօք.*
*Զմանկանէ, տղու վրայօք.*
*Զինէն, իմ վրայօքս.*
*Զողորմութենէ մեծատանց – հարուստներուն ողորմութեան վրայօք, և այլն:*

*Ծանօթ.* — Բացառականի վրայ զ նախդիրն եկած ատեն ի կամ յ նախդիրը կը զեղչուի, ինչպէս վերի օրինակներէն յայտնի է:

210. *Ածել, արկանել կամ անկանել, անցանել, ծիծաղել և ուրիշ նման բայեր, բնութեան խնդիր կ'առնեն զ նախդրիւ գործիական. իսկ գոհանալ, կախել, ունել, բուռն հարկանել և ուրիշներ՝ զ նախդրիւ բացառական: Օրինակ.*

Ածել զմիջով (մէջքին կապել), արկանել զանձամբ (վրան ձգել, հագնիլ), ունել զձեռանէ (ձեռքէ բռնել), բուռն հարկանել զհանդերձից (զգեստէն բռնել քաշել), գոհանալ զԱստուծոյ (Աստուծոյ փառք տալ, շնորհակալ ըլլալ), կախել

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 209. Զ նախդրիւ բացառականն ի՞նչ կը նշանակէ. — 210. Ո՞ր բայերը զ նախդրիւ գործիական բնութեան խնդիր կ'առնեն և որո՞նք զ նախդրիւ բացառական:



զփայտէ (փայտէն կախել), անցանել զօրինօք (օրէնք չպահել), ծիծաղել զոմամբ (մէկը ծաղր ընել), և այլն:

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Քերականօրէն լուծել զ նախդրիւ չեղագիր հոլովները ու խօսքերուն մնացած մասերը:*

Ա. — Եղբարքն Յովսեփայ բերէին համբաւ չար զնմանէ: Զհասարակ գիշերաւ եհար Տէր զամենայն անդրանիկս Եգիպտացւոց: Ծիծաղին զինև թշնամիք իմ: Հրաման ետ արքայ, և կախեցին զՀաման զփայտէ: Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրև՝ հրամայեաց երթալ յայնկոյս: Զայնու ժամանակաւ Ներոն յարոյց հալածանս: Բուռն եհար Յովբ զհանդերձից իւրոց և պատառեաց: Քահանայապետք Հրէից և ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ զի սպանանիցեն զնա, և ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայից մատուցելոց: Զաքարիա և Եղիսաբեթ՝ ծնողք Յովհաննու Մկրտչի՝ արդարք էին առաջի Աստուծոյ, և ոչ գոյր նոցա որդի, քանզի երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց (ծերացած էին): Պիղատոս հարցանէր զՅիսուս. Ո՞չ ինչ տաս պատասխանի, տես քանի՜ ամբաստանեն զքէն: Տեսեալ Կեսարու զԲրուտոս ինքնին սուսերամերկ յարձակեալ ի վերայ, ձորձ զգլխով արկեալ՝ ակն ունէր մահու:

Բ. — Հատեալ խուժադուժ (վայրենի) ազգաց ոմանց զգլուխս թշնամեաց անկելոց ի պատերազմի, տանէին առ զօրապետն առ ի հանդէս (ցոյց) քաջութեան իւրեանց: Կէսք ի մշակացն տրտնջէին զտանուտեառնէն ասելով. Յետինքդ մի ժամ գործեցին և հաւասարակորդս (հաւասար) մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ (ջերմութիւն): Ի գիրս Պղատոնի և Քսենոփոնտեայ

դտանին գեղեցիկ ներբողեանք (գովեստ) զՍոկրատայ առն իմաստնոյ։ Մատուցեալ որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն՝ ասեն ցՅիսուս. Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն։ Մի ոմն յայնցանէ որ զնովաւն կային՝ ձգեաց (քաշեց) սուր և եհար զծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն նորա։ Հրաման է մեզ ոչ երդնուլ, բայց ոչ թոյլ տուեալ երբեք՝ անցանել զօրինաւոր երդմամբ։

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Ադամ Աստուծոյ պատուիրանը չպահեց (անցանեմ)։ Պէտք է ամէն ժամ Աստուծոյ շնորհակալ ըլլանք (գոհանամ) որ զմեզ ստեղծեր է և ողջ կը պահէ։ Զինուորները Յիսուսի չորս կողմը պատեցին։ Ժամ իննին ատեններն արեգակը պիտի խաւարի։ Շատ ձմեռներ վրայէս (զինև) անցան և տեսայ բազմաթիւ գարուններ։ Պօղոսին վզին վրայ ինկած (անկանիմ զ Նախդրիւ գործիականի) կը համբուրէին զանիկա։ Անոր վրայօք ինծի բան մը մի ըսեր։ Քաղաքին չորս կողմը պարիսպ քաշեցին (ածեմ)։ Զինուորներն Յիսուսի վրայ կարմիր քղամիդ մը ձգեցին։ Բարի տղան իր ընկերոջ վրայ գէշ չի խօսիր (չարախօսեմ)։ Յանկարծ կէսօրուան ատեն (մէջօր) երկինքէն լոյս փայլատակելով՝ ձայն մը լսուեցաւ՝ որ կ՚ըսէր. Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, զիս ինչո՞ւ կը հալածես։ Հնդիկ ժողովուրդներու մէկ քանիին մէջ այրիները կրակէ անցնելով (ածիմ զբոցով) իրենց այրերուն գերեզմանին վրայ կը մեռնէին։

Բ. — Այգիին տէրն օրուան երրորդ ժամու ատենները հրապարակ ելաւ, և տեսնելով որ ոմանք դատարկ կը կենային՝ ըսաւ. Գնացէք այգին, և ինչ որ պէտք է՝ պիտի տամ ձեզի։ Իշխաններուն չուրջը եղող շողոքորթները ճանճերու պէս են, այն ատեն միայն անոնցմէ կը հեռանան՝ երբ կեանքի սնունդնին կը պակսի։ Սոված գայլեր ոչխարներուս վրայ յարձըկած ատեն՝ վզերնէն



(փողք) բռնելով գետին կը զարնէի (զգետնեմ, զգետնի հարկանեմ) և բազուկներուս մէջ կը խեղդէի։ Բարբարոս ազգերէն շատերը, որոնք հռովմէական կայսրութիւնը տակն ու վրայ ըրին (վեր ի վայր ամբոխել), չկրցան հաստատուն տէրութիւն մը հիմնել։ Իսրայելացիք մեծամեծ հրաշքներով Եգիպտոսէն ազատուելէ ետք, անապատին մէջ Աստուծոյ հրամաններուն դէմ կեցան (հեստել՝ վերջած. տր. խնդրով), և յաճախ տրտնջեցին Մովսէսի և Ահարոնի վրայօք։ Սոկրատ բանտի մէջ մեռաւ՝ իր չուրջը եղող աշակերտներուն հետ հոգւոյ անմահութեան վրայ խօսելով։

## Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Սաւուղ և Դաւիթ*

Իբրև դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազգին, ա՛ռ զնա Աբեններ և ած զնա առաջի Սաւուղայ։ Եւ ա՛ռ զնա Սաւուղ առ իւր յաւուր յայնմիկ, և ոչ ետ նմա դառնալ ի տուն հօր իւրոյ, և կացոյց զնա ի վերայ արանց պատերազմի։ Իբրև դարձաւ Դաւիթ ի սպանանելոյ զայլազգին, ելին պարաւորք ընդ առաջ Դաւթի և Նուագէին կանայք խաղալիկք և ասէին. Եհար Սաւուղ զհազարս և Դաւիթ զբիւրս։ Եւ զչարեցաւ Սաւուղ վասն բանին այնորիկ, և ասէ. Դաւթի ետուն զբիւրս, և ինձ ետուն զհազարս. և արդ զի՞նչ պակասէ նմա, բայց եթէ թագաւորութիւնն։ Եւ ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ յայնմանէ և առ յապա. և եղև թշնամութեամբ ընդ Դաւթի զամենայն աւուրս նորա։

#### *Բառացիութիւն*

Ա՛ռ զնա Սաւուղ առ իւր — Սաւուղ զինքը քովն առաւ

Ելին պարաւորք ընդ առաջ Դաւթի — Պար բռնողներ Դաւթի ընդառաջ գնացին

Նուագէին կանայք խաղալիկք — Պար բռնող կիները կ՚երգէին.

Ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ յայնմանէ և առ յապա — Սաւուղ այն օրուընէ վերջը ծուռ աչքով կը նայէր

Զչարեցաւ — Սաստիկ առնուեցաւ

դատանին գեղեցիկ ներբողեանք (գովեստ) զՍոկրատայ առն իմաստնոյ։ Մատուցեալ որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն՝ ասեն ցՅիսուս. Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն։ Մի ոմն յայնցանէ որ զՅովաւն կային՝ ձգեաց (քաշեց) սուր և եհար զծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն նորա։ Հրաման է մեզ ոչ երդնուլ, բայց ոչ թոյլ տուեալ երբեք՝ անցանել զօրինաւոր երդմամբ։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Ադամ Աստուծոյ պատուիրանը չպահեց (անցանեմ)։ Պէտք է ամէն ժամ Աստուծոյ շնորհակալ ըլլանք (գոհանամ) որ զմեզ ստեղծեր է և ողջ կը պահէ։ Զինուորները Յիսուսի չորս կողմը պատեցին։ Ժամ իննին ատենները արեգակը պիտի խաւարի։ Շատ ձմեռներ վրայէս (զինև) անցան և տեսայ բազմաթիւ գարուններ։ Պօղոսին վզին վրայ ինկած (անկանիմ զ Նախմէրիւ գործիականաւ) կը համբուրէին զանիկա։ Անոր վրայօք ինծի բան մը մի ըսեր։ Քաղաքին չորս կողմը պարիսպ քաշեցին (ածեմ)։ Զինուորներն Յիսուսի վրայ կարմիր քղամիդ մը ձգեցին։ Բարի տղան իր ընկերոջ վրայ գէշ չի խօսիր (չարախօսեմ)։ Յանկարծ կէսօրուան ատեն (մէջօր) երկինքէն լոյս փայլատակելով՝ ձայն մը լսուեցաւ՝ որ կ'ըսէր. Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, զիս ինչո՞ւ կը հալածես։ Հնդիկ ժողովուրդներու մէկ քանիին մէջ այրիները կրակէ անցնելով (ածիմ զրոցով) իրենց այրերուն գերեզմանին վրայ կը մեռնէին։

Բ. — Այգիին տէրն օրուան երրորդ ժամու ատենները հրապարակ ելաւ, և տեսնելով որ ոմանք դատարկ կը կենային՝ ըսաւ. Գնացէք այգին, և ինչ որ պէտք է՝ պիտի տամ ձեզի։ Իշխաններուն շուրջը եղող շողոքորթները ճանճերու պէս են, այն ատեն միայն անոնցմէ կը հեռանան՝ երբ կեանքի սնունդնին կը պակսի։ Սոված գայլեր ոչխարներուս վրայ յարձըկած ատեն՝ վզերնէն



(փողք) բռնելով գետին կը զարնէի (զգետնեմ, զգետնի հարկանեմ) և բազուկներուս մէջ կը խեղդէի։ Բարբարոս ազգերէն շատերը, որոնք հռովմէական կայսրութիւնը տակն ու վրայ ըրին (վեր ի վայր ամբոխել), չկրցան հաստատուն տէրութիւն մը հիմնել։ Իսրայելացիք մեծամեծ հրաշքներով Եգիպտոսէն ազատուելէ ետք, անապատին մէջ Աստուծոյ հրամաններուն դէմ կեցան (հեստել՝ վերջած. տր. խնդրով), և յաճախ տրտնջեցին Մովսէսի և Ահարոնի վրայօք։ Սոկրատ բանտի մէջ մեռաւ՝ իր շուրջը եղող աշակերտներուն հետ հոգւոյ անմահութեան վրայ խօսելով։

### Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### *Սաւուղ և Դաւիթ*

Իբրև դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազգին, ա՛ռ զնա Աբեններ և ած զնա առաջի Սաւուղայ։ Եւ ա՛ռ զնա Սաւուղ առ իւր յաւուր յայնմիկ, և ոչ ետ նմա դառնալ ի տուն հօր իւրոյ, և կացոյց զնա ի վերայ արանց պատերազմի։ Իբրև դարձաւ Դաւիթ ի սպանանելոյ զայլազգին, ելին պարաւորք ընդ առաջ Դաւթի և նուագէին կանայք խաղալիկք և ասէին. Եհար Սաւուղ զհազարս և Դաւիթ զբիւրս։ Եւ զչարեցաւ Սաւուղ վասն բանին այնորիկ, և ասէ. Դաւթի ետուն զբիւրս, և ինձ ետուն զհազարս. և արդ զի՞նչ պակասէ նմա, բայց եթէ թագաւորութիւնն։ Եւ ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ յայնմանէ և առ յապա. և եղև թշնամութեամբ ընդ Դաւթի զամենայն աւուրս նորա։

#### *Բառագիտութիւն*

Ա՛ռ զնա Սաւուղ առ իւր — Սաւուղ զինքը քովն առաւ

Ելին պարաւորք ընդ առաջ Դաւթի — Պար բռնողներ Դաւթի ընդառաջ գնացին

Նուագէին կանայք խաղալիկս — Պար բռնող կիները կ'երգէին.

Ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ յայնմանէ և առ յապա — Սաւուղ այն օրուընէ վերջը ծուռ աչքով կը նայէր

Զչարեցաւ — Սաստիկ առնուեցաւ

## ՑԻՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Ի Նախդիր

211. *Նախդրիւ տրականէն և բացառականէն զատ՝ ի կը գործածուի վերջահոլով տրականի հետ և կ՚ըսուի Նախդրիւ վերջահոլով տրական, ինչպէս ըսած ենք արդէն* 34 *համարի ծանօթութեան մէջ։*

*Նախդրիւ տրականն ընդհանրապէս շարժում ցուցնող բայերու առջև կը գործածուի, իսկ նախդրիւ վերջահոլով տրականը՝ դադարում ցուցնող բայերու առջև։ Զոր օրինակ.*

| Շարժում | | Դադարում | |
|---|---|---|---|
| Ընթացան | ի դաշտ | Կայր | ի դաշտի |
| Եհաս | ի տուն | Վաստակէր | ի տան |
| Եմուտ | ի բանտ | Ազօթէին | ի բանտի, և այլն։ |

*Խորհուրդ. — Տեղական յատուկ անունները՝ թէ և բայը դադարում յայտնէ, միշտ նախդրիւ տրական կը դրուին։ Ուստի կ՚ըսուի հաւասարապէս.*

Երթալ ի Վենետիկ և Կալ ի Վենետիկ
Հասանել ի Փարիզ և Բնակել ի Փարիզ
Մտանել ի Հռովմ և Նստել ի Հռովմ, և այլն։

212. *Նախդրիւ վերջահոլով տրականը ուրախութիւն կամ վիճակ ցուցընող բառերու մէջ՝ իրո-*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 211. Ի նախդիրը բացառականէն և նախդրիւ տրականէն զատ ո՞ր հոլովի վրայ կը դրուի, և Գրաբարի մէջ ե՞րբ նախդր. տրական և ե՞րբ նխդր. վերջահոլով տրական կը գործածուի. — 212. Ի՞նչ կը նշանակէ նխդր. վերջ. տրականը ուրախութիւն կամ վիճակ ցուցընող բառերու մէջ։



*ղութեան մը ժամանակը կամ միջոցը կը յայտնէ։ Զոր օրինակ.*

Ի ծննդեան նորա — անոր ծնանելու ատենը
Ի սովու, ի վտանգի — սովի, վտանգի միջոց
Ի թագաւորութեան Արտաշեսի — Արտաշեսի թագաւորութեան ատենը, և այլն։

213. *Նախդրիւ վերջահոլով տրականը եզակի միայն կը գործածուի, և յոգնակիի մէջ նախդրիւ տրական կը դրուի նաև դադարում ցուցնող բայերու առջև։*

*Ուստի կ՚ըսուի. Բնակել կամ Նստել ի տունս, գործել կամ սերմանել յագարակս, և այլն։*

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա

### Գրաբարէ աշխարհաբար

*Թարգմանօրէն վերլուծել ու խօսքերուն մէջ ի նախդիրն շեղագիր խնդրառութիւնները։*

Ա. — Պետրոս և Յովհաննէս ելին ի տաճարն։ Յիսուս պահեալ յանապատին զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։ Յոր տուն մտանիցէք՝ ի նմա ագանիջիք։ Բազումք ի ծննդեան նորա խնդասցեն։ Կացեալ Պաւղոսի յԵփեսոս՝ քարոզէր յատենի Արիսպագոսին։ Առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն ասէ. Երթ այսօր գործեա յայգւոջ։ Որդին անառակ յինքն եկեալ՝ (զգաստանալով) դարձաւ ի հայրենիս և բնակէր ի տան հօր իւրոյ։ Հասին զինուորք քաղաքին յանդաստանս (արտ) տնանկաց։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 213. Նախդր. վերջահոլով տրականը յոգնակի կրնա՞յ գործածուիլ։

Հերովդէս կալեալ զՅովհ. Մկրտիչ՝ կապեաց զնա և եդ ի բանտի, վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա: Որ ի փոքունն հաւատարիմ է՝ եւ ի բազմին հաւատարիմ է, և որ ի փոքունն անիրաւ է՝ եւ ի բազմին անիրաւ է:

Բ. — Դանիէլ ի դեռաբոյս (մատաղ) հասակի մանկութեանն գերի վարեցաւ ի Բաբելոն: Կղէովպաս ասէր ցՅիսուս. Դու միայն կաս յԵրուսաղէմ՝ որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ: Բազում ամք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցանն երկինք զերիս ամս և զվեց ամիս: Յակոբայ և Յովհաննու Թողեալ վազվազակի զնաւն և զհայր իւրեանց ի նաւին՝ գնացին զհետ Յիսուսի: Որ միօրինակ խնամ ունի ամենեցուն՝ Աստուած, փրկէ զփրկելիս իւր ի վտանգաց և կերակրէ զնոսա ի սովի: Յաշխարհին Գերգեսացւոց պատահեաց երբեմն Յիսուսի դիւահար ոմն, որ զցայգ և զցերեկ ի գերեզմանս և ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք: Բանակն Յունաց երբեմն ի հիւսիսակողմն Ասիոյ միջամուխ (մէջ մտած), չգիտէր ընդ ո՞ր (ո՞ր կողմէն) դառնալ ի հայրենիս:

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Ծոյլը ձեռքերը ծոցը կը պահէ և կը դանդաղի բերանը տանելու: Մարկոս Հռոմի մէջ գրեց իր Աւետարանը: Թագաւորին մահուան լուրը քաղաքին մէջ խռովութեան պատճառ եղաւ: Անոր մեծ որդին ագարակն էր: Ծերութեան ատեն մարդուս աչքերուն տեսութիւնը կը տկարանայ: Հոմերոս Իլիականին մէջ կ'երգէ Աքիլլէսն ու Հեկտորը: Գրիգոր Լուսաւորիչ 15 տարի օձերու բազմութեան մէջ կը կենար: Յովսէփ սովի ատեն բոլոր Եգիպտոսը կերակրեց: Նափոլէոն Ս. Հեղինէ կղզին աքսորուեցաւ: Զե՞ս լսեր, ասոնք վրայովդ ո՞րչափ կը չարախօսեն: Երբ մեռնելու ըլլամ (յաւելուցում առ հարս իմ), զիս այս գերեզմանին մէջ թաղեցէք: Ս. Յովհ. Աւետարանիչ երբ



աքսորանքէն դարձաւ Եփեսոս, նոյն քաղաքին մէջ բնակեցաւ և գրեց իր Աւետարանը: Շուները ոչխարներու հօտին չորս կողմը կը պտըտին (շրջիմ):

Բ. — Այն օրերն արեգակը պիտի խաւարի, աստղերը երկինքէն պիտի թափին (թօթափիմ), երկիրս պիտի շարժի և լուսինն իր լոյսը պիտի չտայ: Յիսուս համր և խուլ դեւին (այս պիղծ) որ տղայ մը բռնած էր՝ սաստելով ըսաւ. Համր և խուլ սատանայ, քեզի կ'ըսեմ, ել ատկէ, և այլ ևս ատոր մէջ չմտնես: Ձեզմէ ո՞ր մէկն՝ եթէ ոչխար մ'ունենայ և շաբաթ օրը գուբ (խորխորատ) իյնալու ըլլայ, արդեօք չի՞ բռներ չի՞ վերցըներ զանիկա: Յովսէփ երբ լսեց թէ Արքեղայոս թագաւորեց իր Հերովդէս հօրը տեղ (փոխանակ), վախցաւ Հրէաստան երթալ, և եկաւ Նազարեթ կոչուած քաղաքը բնակեցաւ: Պատմութենէ գիտենք թէ Յունաց գաղթականներէ շատերն Իտալիոյ հարաւակողմն անցնելով՝ ծաղկեցուցին այն գաւառները: Շատ առաքինի մարդիկ աղքատ են. բայց առաքինին իր աղքատութեան մէջ գոհ կ'ապրի, և մեռնելու ատեն՝ (դարձուր մահ բառով վերջ. տր.) իր բարեգործութիւններով պիտի պսակուի: Հերովդէս թագաւորին օրերը Յիսուսին ծնանելու ատեն՝ արեւելքէն մոգեր եկան և ըսին. Ո՞ւր է Հրեաներուն ծնած թագաւորը:

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

Տաբիթա

Ի Յոպպէ էր կին ոմն աշակերտեալ՝ անուն Տաբիթա, որ անուանեալ կոչի Այծեմնիկ: Սա էր լի գործովք բարեօք և ողորմութեամբք զոր առնէր: Եւ եղև յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և մեռանել: Եւ աշակերտացն լուեալ եթէ Պետրոս ի Լիւդդա է՝ առաքեցին երկուս արս առ նա, աղաչել զի մի դանդաղեսցի գալ առ նոսա: Յարուցեալ Պետրոս եկն ընդ նոսա. զոր՝ իբրև եկն՝ հանին ի վերնատունն, և կային շուրջ զնովաւ այրիքն ամենայն, լային և

ցուցանէին զձորձս և զհանդերձս՝ որչափ առնէր նոցա Այծեմնիկն։ Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի՝ եդ ծունր, եկաց յաղօթս և ասէ. Տաբիթա, արի՛ կա՛ց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ նա եբաց զաչս իւր, և տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն։ Ձեռն ետ նմա և յարոյց զնա. կոչեաց զուրբս և զայրիս և առաջի կացոյց զնա կենդանի։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Այծեմնիկ – Պզտիկ վայրի այծ | Արի՛ կա՛ց – Ոտքի՛ ելի՛ր |
| Զի մի՛ դանդաղեսցի գալ առ նոսա – Որպէս զի իրենց գալու չուշանայ | Նստաւ կանգուն – Շիտակ նըստաւ։ |

## ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

### ԱՌ Նախդիր

214. *Առ նախդիրը սեռականի, վերջաւորով տրականի, գործիականի և անորոշ հայցականի հետ կը գործածուի մէկմէկէ տարբեր իմաստներով։*

*Սեռականի հետ (քիչ անգամ նաև բացառականի և հայցականի հետ) կը նշանակէ համար կամ պատճառաւ, զոր աշխարհաբար բացառականով ալ կը բացատրենք։ Օրինակ.*

| | |
|---|---|
| Առ երկիւղի | Վախի համար կամ վախէն |
| Առ ատելութեան | Ատելութեան պատճառաւ |
| Առ ի չգոյէ մարդոյ | Մարդ չըլլալուն համար |
| Առ սէր մեր | Մեր սիրոյն համար |
| Առ նախանձու | Նախանձի համար, և այլն։ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 214. Առ նախդիրը ո՞ր հոլովներու հետ կը գործածուի, և ի՞նչ կը նշանակէ սեռականի հետ։



215. *Առ նախդիրը եզակի վերջաւորով տրականի հետ՝ կը նշանակէ անձի մը կամ բանի մը քով։ Զոր օրինակ.*

| | |
|---|---|
| Կայր առ խաչին | Խաչին քով կամ ոտքը կեցած էր |
| Առ նմա ագան | Անոր քովը կամ տունը մնացին |
| Եկաց առ դրան | Դրան քովը կամ առջևը կեցաւ |
| Առ որում գտանիցի | Որուն քով որ գտնուի, և այլն։ |

*Ծանօթ.* — Բայց յոգնակի նոյն նշանակութեամբ վերջաւորով տրականն՝ անորոշ հայցականի կը փոխուի։ Օրինակ.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Անոր քով – Առ նմա | Անոնց քով – Առ նոսա |
| Դրան քով – Առ դրան | Դռներու քով – Առ դրունս |
| Որուն քով – Առ որում | Որոնց քով – Առ որս, և այլն։ |

216. *Առ նախդիրն անորոշ հայցականի հետ թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի՝ դէպ ի անձ մը շարժում կը նշանակէ։ Զոր օրինակ.*

| | |
|---|---|
| Եկին առ նա և ասեն | Անոր եկան և ըսին |
| Եկայք առ իս | Ինծի եկէք |
| Առաքեցէք առ նոսա | Անոնց ղրկեցէք |
| Գնացից առ հայր իմ | Իմ հօրս երթամ |
| Գրեաց առ եղբարս իւր | Եղբայրներուն գրեց։ |

217. *Առ նախդիրը գործիականի հետ՝*

1°. *Անձի մը կամ բանի մը առնելը կը նշանակէ։ Ինչպէս.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 215. Առ նախդիրը վերջաւորով տրականի հետ ի՞նչ կը նշանակէ. — 216. Առ նախդիրն անորոշ հայցականի հետ ուրիշ ի՞նչ կը նշանակէ. — 217. Առ նախդիրը գործիականի հետ քանի՞ բան կը նշանակէ։

Ա. Աբրահամու — Աբրահամու տանն
Ա. աշտարակաշինութեամբ — Աշտարակաշինութեան տանն
Ա. կործանմամբ Երուսաղեմի — Երուսաղեմի կործանման տանն
Ա. կենդանութեամբ Դաւթի — Դաւիթի ողջութեան տանն:

2°. Կը նշանակէ բանի մը քովը կամ քովէն: Օրինակ.

Ա. պարսպաւ — Պարսպին քովը
Ա. ափամբ — Ափունքին քովէն կամ քովը
Ա. գետեզերբ — Գետեզերքին քովը կամ քովէն
Ա. ստորոտով լերին — Լերան ստորոտին քովը:

3°. Կը նշանակէ նայելով, քովը: Օրինակ.

Փոքր է երկիր առ արեգակամբ — Աշխարհս արեգակին քով կամ արեգակին նայելով՝ պզտիկ է.

Զի՞նչ է մարդ առ Աստուծով — Մարդս ինչ է Աստուծոյ քով.

Երազ են կեանս այս առ հանդերձելովք — Այս կեանքս հանդերձեալին քով երազ է, և այլն:

ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

## Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Սա խօսքերուն մէջ ԱՌ նախդիրին առջև հոլովուած շեղագիր բառերուն քերականական բացատրութիւնը տալ:*

Ա. — Ո՞չ ինչ է մարդ առ Աստուծով: Կոյսն Մարիամ և Ս. Յովհաննէս կային առ խաչին: Զի՞նչ է յարդ առ ցորենով: Ի վարձու կալեալ էր զտունն առ կենդանութեամբ առն իւրոյ: Առ Աբգարու և առ Տրդատաւ եղև մուտք քրիստոնէութեան ի Հայաստան: Առ այնու ժամանակաւ յարոյց Դեկոս հալածանս ընդդէմ Եկեղեցւոյ: Յամայութիւն դառնան քաղաքք առ ի չգոյէ (չըլլալուն համար) բնակչաց:



Առաքեցաւ հրեշտակ Աստուծոյ առ կոյս խօսեցեալ (նշանուած) առն: Այսուքիկ առ ի խրատ գրեցան մեզ: Պիղատոս ոչ կամէր դատապարտել զՔրիստոս, քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն: Ս. Փլաբիանոս չոգաւ առ կայսրն Թէոդոս: Իբրև տեսին Առաքեալքն զՅիսուս զի զգնայր ի վերայ ծովուն՝ խռովեցան, և առ ահին՝ աղաղակեցին:

Բ. — Բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէիւ մարգարէիւ. և ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ՝ բայց միայն Նէեման Ասորի: Առ ամենայն ազինս մեծեղեան յանցուած համարեալ է ապերախտութիւն, այլ ոչ առ ումեք դատապարտեալ: Կոյրք երկու կային առ ճանապարհաւն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. Ողորմեաց մեզ որդի Դաւթի: Փախուցեալ ի հայրենի տանէն՝ ձիավար (ձին քշելով) արշաւէր առ ստորոտով լերինն: Յարուցեալ Մարիամ գնաց յողջոյն Եղիսաբեթի, և կացեալ առ նմա իբրև ամիսս երիս՝ դարձաւ ի տուն իւր: Առ Աբրահամու՝ որ զկնի ջուրցն հեղեղաց, եղև կործանումն Սոդոմայ և Գոմորայ: Մի յերկոտասանից, անուանեալն Յուդա, չոգաւ առ քահանայապետսն և ասէ. Զի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից ձեզ զՅիսուս: Վիշտք և աղէտք ժամանակեան համեմատեալք յոչ ինչ համարին առ յաւիտենական երանութեամբ:

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Նաւը ծովուն եզերքէն կ'երթար (քերել առ գործիականով): Կապեալը բարկութենէն կը հայհոյէր: Յիսուս Աննայէն Կայիափայի քով ղրկուեցաւ: Գիտէր որ ատելութեան համար (առ սեռականով) անոր վրայօք կը չարախօսէին: Կրետէի քովէն կ'անցնէինք: Իր սիրելի որդին ղրկեց անոնց: Խաչին քով կը կենային Յիսուսի մայրն և իր սիրած աշակերտը: Կայէն իր Աբէլ եղբայրը նախանձէն սպաննեց: Երբ արթնցան՝ զանիկա իրենց քով տեսան: Իր հանգստութեան (անձնդիւրութիւն) համար

ամէն բանի մէջ շահ փնտռողը՝ շատ անգամ վնասներու կը հանդիպի։ Ով որ խնդրի քով կը կենայ՝ կը խնդրենայ (անմտանամ)։ Ամէն տան քով պահապան կեցուց։ Սողոմոնի ատեն արծաթը ոչինչ համարուած էր։ Ռագուելի կինն ու աղջիկը՝ Տուբիան տեսնելով՝ ուրախութենէն լացին։ Անձրև չըլլալուն համար չորութիւն եղաւ, և չորութեան պատճառաւ ալ սով եղաւ։ Պարսպին քովէն պզտիկ գետ մը կը վազէ (հոսի)։

Բ. Արծաթի պնակը որուն քով գտնուի՝ անիկա պիտի մեռնի։ Գէշ անձերու քով յաճախողը գէշ կ'ըլլայ։ Կաթիլ մը ջուրն ինչ է ովկիանոսին քով։ Իմաստուն մարդոց քով կեցիր, անոնց խորհրդով շարժէ ամէն գործերուդ մէջ։ Դեկոս և Դիոկղետիանոս ամբարիշտ կայսրերուն ատեն քրիստոնեաներէն շատ արիւն թափուեցաւ։ Հրեաները տեսնելով որ Յիսուս մաքսաւորին տունը մտաւ, կը տրտնջէին ըսելով թէ մեղաւոր մարդու քով մտաւ պահքն աւրելու (լուծանեմ)։ Աստուած ոմանց հարկաւորը տուած է ապրելու համար, ոմանց ալ մխիթարութիւն՝ լաւ մեռնելու համար։ Հին ժամանակները մարդիկ ոսկի և արծաթ դրամներ չէին գործածեր (ի կիր արկանեմ), այլ սոյն մետաղներուն կտորները վաճառքի (տուրեւառ) մէջ կը փոխանակէին։ Սոկրատ հացկերոյթի մէջ տեսնելով որ քովը նստողներէն մէկը հաց չէր ուտեր, բարձր ձայնով հարցուց բազմականներուն թէ այն առանց հացի միս ուտողն արդեօք մա՞րդ էր թէ գազան։

| | |
|---|---|
| Շատ անգամ – Բազում այն է զի | Չորութիւն – Երաշտութիւն |
| Ամէն – Մէն մի | Գէշ – Ժանտաբարոյ |
| Պնակ – Անօթ | Հացկերոյթ – Խնջոյք։ |

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

## Տեսիլ Յակոբայ

Արձակեաց Իսահակ զՅակոբ, և գնաց ի Միջագետս Ասորւոց։ Հասեալ ի տեղի մի՝ ննջեաց անդ, քանզի արեւն ի մուտս էր։ Եւ առ ի քարանց տեղւոյն և եդ ընդ սնարս



իւր, և ննջեաց ի տեղւոջն յայնմ։ Եւ ետես տեսիլ. սանդուղք հաստատեալ յերկրի՝ որոյ գլուխ իւր հասանէր մինչև յերկինս. հրեշտակք Աստուծոյ ելանէին և իջանէին ընդ նա, և Տէր հաստատեալ կայր ի նմա։ Եւ ասէ. Ես եմ Տէր Աստուած Աբրահամու, մի երկնչիր, զի երկիրդ յորում դուդ ննջեցեր՝ քեզ տաց զդա և զաւակի քում. և օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի։ Զարթեաւ Յակովբ ի քնոյ անտի իւրմէ և ասէ. Տէր է ի տեղւոջս յայսմիկ։ Յարեաւ ընդ առաւօտն, առ զվէմն զոր եդ ընդ սնարս իւր, և կանգնեաց զնա արձան, ուխտեաց և ասէ. Եթէ եղիցի Տէր Աստուած ընդ իս, և տացէ ինձ հաց ուտելոյ և հանդերձ զգենլոյ, և դարձուսցէ զիս ողջութեամբ ի տուն հօր իմոյ, վէմս՝ զոր կանգնեցի՝ եղիցի ինձ տուն Աստուծոյ։

Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Արեւն ի մուտս էր – Արեւը մարը մտած էր | Եդ ընդ սնարս իւր – Գլխուն տակ դրաւ |

Տէր հաստատեալ կայր ի նմա – Տէր Աստուած անոր վրայ կեցած էր։

# ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

## ԸՆԴ եւ ԸՍՏ նախդիրներ

218. *Ընդ նախդիրը կը գործածուի Սեռականի, Վերջաձայնով Տրականի, Գործիականի և Անորոշ Հայցականի հետ՝ այլ և այլ նշանակութեամբ։*

*Սեռականի հետ կը նշանակէ փոխանակ, տեղը։* Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Թագաւորեաց ընդ նորա | Անոր տեղ թագաւորեց |
| Երթ դու ընդ իմ | Դուն գնա իմ տեղս |
| Ծառայեցից ընդ հօր իմոյ | Հօրս տեղ պիտի ծառայեմ։ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 218. Ընդ նախդիրը ո՞ր հոլովներու հետ կը գործածուի և սեռականի հետ ինչ կը նշանակէ։

219. *Ընդ նախդիրը եզակի վերջահոլով տրականի հետ՝ կը նշանակէ հետ, մէկտեղ։ Ինչպէս.*

| | |
|---|---|
| Երթ ընդ նմա | Անոր հետ գնա |
| Գամք և մեք ընդ քեզ | Մենք ալ հետդ կու գանք |
| Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի | Աստուած Մովսէսին հետ խօսեցաւ |
| Ընդ իս ո՛չ խօսիս | Ինծի հետ չես խօսիր, և այլն։ |

Ծանօթ. — Ինչպէս այս վերջին օրինակէն կը տեսնուի, անձն. դերանուան Ա. դէմքին համար անորիշ հայցականով ընդ իս կ'ըսուի՝ փոխանակ ընդ ինձ ըսելու։ Ընդ նախդիրն այս նշանակութեամբ յոգնակիի մէջ ալ անորիշ հայցականի հետ կը գործածուի սովորաբար։ Օրինակ.

| | |
|---|---|
| Դու ընդ նոսա էիր | Դուն անոնց հետ էիր |
| Գնացին ընդ եղբարս իւրեանց | Իրենց եղբայրներուն հետ գնացին |
| Ուրախ եղէց ընդ բարեկամս իմ | Իմ բարեկամներուս հետ պիտի ուրախանամ, և այլն։ |

220. *Ընդ նախդիրը թէ եզակի և թէ յոգնակի անորիշ հայցականի հետ կը գործածուի՝*

1°. *Երբ բայը նշանակէ տեղէ մը անցնիլ, կտրել անցնիլ։ Օրինակ.*

| | |
|---|---|
| Մտէք ընդ դուռնն | Դռնէն մտէք |
| Հայէր ընդ պատուհանն | Պատուհանէն կը նայէր |
| Գնացին ընդ այս ճանապարհ | Այս ճամբէն գնացին, և այլն։ |

2°. *Երբ նշանակէ բան մը ուրիշ բանի հետ կցել, միացնել։ Օրինակ.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 219. Ընդ նախդիրը վերջահոլով տրականի հետ ի՞նչ կը նշանակէ. — 220. Ընդ նախդիրը թէ եզակի և թէ յոգնակի անորիշ հայցականի հետ քանի՞ բան կը նշանակէ։



| | |
|---|---|
| Կապեցին զնա ընդ սիւնն | Զանիկա սիւնին կապեցին |
| Վարսեցին զայրն ընդ որմն | Մարդը պատին զարկեցին |
| Գան եհար զնա ընդ ոտս | Անոր ոտքերուն ծեծ մը քաշեց, և այլն։ |

3°. *Երբ նշանակէ տեղէն անդին քալել, տարածուիլ։ Ինչպէս.*

| | |
|---|---|
| Շրջէր ընդ քաղաքս և ընդ գիւղս | Քաղաքներ և գիւղեր կը պտըտէր |
| Արշաւեա ընդ ամենայն կողմանս | Վազէ գնա ամէն կողմ |
| Ել համբաւ ընդ ամենայն գաւառն | Ամբողջ գաւառին մէջ լուր տարածուեցաւ, և այլն։ |

4°. *Կը նշանակէ անձերու կամ իրերու մէջտեղը։ Օրինակ.*

| | |
|---|---|
| Ընդ երկինս և ընդ երկիր | Երկնքի ու երկրի մէջտեղը |
| Ընդ իս և ընդ քեզ | Իմ ու քու մէջդ |
| Խտիր մեծ է ընդ բազումն և ընդ սակաւ | Մեծ տարբերութիւն կայ շատին ու քիչին մէջ։ |

Ծանօթ. — Զարմանամ, խնդամ, հայիմ, խառնիմ, նախանձիմ, ցաւէ (ինձ, քեզ, նմա) և ուրիշ շատ բայեր ընդ նախդրով անորիշ հայցական բնութեան խնդիր կ'առնեն, զորոնք գրաբար ընթերցումով և վարժութեամբ պէտք է սորվիլ։

221. *Ընդ նախդիրը գործիականի հետ կը նշանակէ մէկուն ձեռքին տակ, բանի մը տակ։ Ինչպէս.*

| | |
|---|---|
| Ունիմ ընդ ինև զինուորս | Ձեռքիս տակ զինուորներ ունիմ |

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 221. Ընդ նախդիրը գործիականի հետ ի՞նչ կը նշանակէ։

| | |
|---|---|
| Այր մի եմ ընդ իշխանութեամբ | Իշխանութեան տակ մարդ մ՚եմ |
| Ճեմէին նոքա ընդ ծառովք | Ծառերուն տակ կը քալէին |
| Մտին ընդ յարկաւ | Տանը ծածքին տակ մտան |
| Ճանապարհ ընդ երկրաւ | Երկրի տակէն ճամբայ: |

222. *Ըստ* նախդիրը գլխաւորապէս վերջահոլով տրականի և անորոշ հայցականի հետ կը գործածուի:

Վերջահոլով տրականի հետ կը նշանակէ համեմատ, նման: Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ըստ այսմ օրինակի | Այս օրինակին համեմատ |
| Ըստ պատկերի մերում | Մեր դէմքին նման |
| Ըստ հրամանի թագաւորին | Թագաւորին հրամանին համաձայն: |

Անորոշ հայցականի հետ՝ կը նշանակէ տեղէ մը կամ բանէ մը անդին, դուրս: Օրինակ.

| | |
|---|---|
| Ելանել ըստ քաղաքն | Քաղաքէն դուրս ելնել |
| Անցանել ըստ չափ | Չափէն անդին անցնիլ |
| Ջերծանել ըստ վտանգս | Վտանգներէ զերծ ըլլալ: |

223. *Ց* նախդիրը երկու նշանակութեամբ կը գործածուի: — 1°. Իբր նախդրիւ տրական՝ Ասեմ և Հարցանեմ բայերուն առջև, ինչպէս տեսանք վերև (համար 35): — 2°. Մինչև բառին առջև և յաճախ առանձին՝ նոյն մտքով: Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Երթիցուք մինչև ցանդր | Երթանք մինչև հոն |
| Ցայդ վայր եկեսցես | Մինչև այդ տեղը գաս: |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 222. Ըստ նախդիրը ո՞ր հոլովներու հետ կը գործածուի և ի՞նչ կը նշանակէ վերջահոլով տրականի և հայցականի հետ. — 223. Ի՞նչ գիտելիք կայ ց նախդրին գործածութեան վրայ:



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Յետագայ խօսքերուն մէջ ընդ, ըստ նախդիրներուն խնդիրները ու միւս դարձուածները լուծել քերականօրէն:*

Ա. — Իմաստունք համեմատեն զխօսս ընդ արծաթոյ և զլռութիւն ընդ ոսկւոյ: Կոչեցաւ Մատաթիա ընդ Յուդայի յաջորդութիւն, և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն: Ազգք բազումք անկան ընդ լծով տիրապետութեան Պարսից: Աննիբաղ էանց ընդ Ալպեան լերինս մեծամեծ վտանգօք անձին և զօրաց իւրոց: Մեղացիք ի պատերազմել իւրեանց ընդ գերիս՝ խարազան ի վար արկանէին (գործածել) ընդ սուսերի: Զարմանամք ընդ կորովութիւն բանից Դեմոսթենեայ և Կիկերոնի ճարտարախօսաց: Թռչունք երկնից բոյն դիցեն ընդ հովանեաւ ծառոց: Պատմէր անուն քաջութեան նորա ընդ ամենայն կողմանս գաւառին: Յիսուս մերձեցեալ յաչս կուրացն՝ ասէր. Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ: Մարիամ խռովեցաւ ընդ բանս հրեշտակին, և խորհէր ընդ միտս թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս: Աշխարհականք յաւէր դարձուցանեն զչինաւանս (բնակութիւն) ընդ որս անցանեն, որպէս բոց զի ծախէ զանտառս:

Բ. — Արքայք Եգիպտացւոց զմահապարտս և զգերեալս ի պատերազմէ առաքէին ի մետաղսն՝ որ ընդ սահմանս Եգիպտոսի և Եթովպիայ: Քրիստոս յանդիմանէր զանհաւատ Հրեայսն ասելով. Դշխոյն Հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեսցէ զսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սողոմոնի: Ոչ ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ կարասեաւ (կաճ) կամ ընդ մահճօք, այլ ի վերայ աշտանակի դնէ,

զի որ մտանեն զլոյս տեսցեն։ Կեսարու անցեալ ընդ գեօղ մի Ալպեանց՝ ասէր առ խորսն. Ընտրելագոյն է ինձ առաջին լինել յայսմ գեղջ՝ քան երկրորդ ի Հռովմ։ Գետն Պադոս անցեալ ընդ մէջ հիւսիսային նահանգաց Իտալիոյ՝ հոսի յԱդրիականն ծով։ Հարիւրապետն եկեալ երկիր պագանէր և ասէր ցՅիսուս. Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես, այլ ասա բանիւ և բժշկեսցի մանուկն իմ։ Ի միում աւուրց դէպ եղեւ շրջել Դեմոսթենեայ ընդ վաճառանոց քաղաքին, և իբրև ազդ լինէր (լուր կը տրուէր) նմա թէ կին ոմն յամբոխէ անտի ձայն բարձեալ գրուատէ (գովել) զնա, կարի զարմացաւ ընդ այն։

## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Դաւիթ պատուհանէն ելաւ ու փախաւ։ Ով որ իմ հետս կու գայ՝ պիտի չկորսուի, ըսաւ Յիսուս։ Նոյ ձեռքը երկնցուց (ձգեմ), և առաւ նորէն (անդրէն) աղաւնին իր քովը տապանին մէջ։ Նեղ դռնէն մտէք։ Թագաւորին մահուան լուրը բոլոր քաղաքը տարածուեցաւ (ելանեմ)։ Յիսուս կը պտըտէր քաղաքներն ու գիւղերը։ Այս ճամբէն գացէք որ հասնիք։ Երանելի վկան սիւնին կապեցին և սաստիկ ծեծեցին (գան հարկանեմ)։ Հրեայք Մովսիսի օրէնքին համեմատ կ'երթային (գնամ)։ Ձեր և մեր մէջը մեծ տարբերութիւն (խտիր) կայ։ Ստակի (արծաթ) տեղ անոնց կերակուր տուին։ Կայծակի ատեն (հարկանել չանթից) ծառերու տակ պէտք չէ կենալ։ Ականջը (ունկն) երկու դուռ ունի, առաջին դուռէն ընդունած խօսքը երկրորդէն ներս չառներ՝ մինչև լաւ չքննէ։ Աստուած չընէ որ չար (չարասիրտ) մարդու իշխանութեան տակ իյնանք։ Կոյսն Մարիամ այսպէս պատասխանեց Գաբրիելի. Ահա պատրաստ եմ (ահաւասիկ կամ), թող ըլլայ ինծի քու խօսքիդ համեմատ։

Բ. — Ատլանտեան ովկիանոսէն Միջերկրական ծովը իջնող ամէն նաւերը Հերակլեան նեղուցէն պէտք է անց-



նին։ Կալիգուլա երբ որոտման ձայն լսէր՝ վախէն կը փութար մահիճին տակ կը պահուըտէր։ Թէ որ հոգին մահկանացու ըլլար, մարդուս և անբաններու մէջ տարբերութիւն պիտի չըլլար։ Պատմիչներու խօսքին համեմատ՝ Կասպից ծովուն ջրերը միւսերուն ջրերուն չափ աղի չեն, և անոր մէջ նոր տեսակ ձկներ կը գտնուին։ Պիւռհոն՝ Սկեպտիկեանց նախահայրը՝ որ ամէն բանի վրայ կը տարակուսէր, վիճաբանութեամբ կը ջանար ցուցնել թէ մահուան ու կեանքի մէջ ամենևին տարբերութիւն չկայ։ Եթէ կեանքէ զուրկ արձաններ շինող արուեստաւորին ճարտարութեան վրայ կը զարմանանք, ո՞րչափ ևս առաւել պէտք է սքանչանանք ամենակարողութեան վրայ Անոր՝ որ ամէն օր կեանք և միտք ունեցող էակներ ոչընչէն կը ստեղծէ։

| | |
|---|---|
| Նոր տեսակ — Նորատեսիլ | Կեանք և միտք ունեցող — Կենսունակ և մտաւոր։ |
| Կեանքէ զուրկ — Անշունչ | Արձան — Դրոշեալ։ |
| Գէշ լուր — Բօթ | |

## Գ

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Սամարացին*

Այր մի ելանէր յԵրուսաղեմէ յԵրիքով և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ և գնացին։ Դէպ եղև քահանայի միոջ ելանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց արար։ Նոյնպէս և Ղևտացի ոմն եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես և զանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա գթացաւ։ Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ և գինի, և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, և դարմանեաց զնա։ Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ. Դարման տար դմա, և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։

*Բառագիտութիւն*

| | |
|---|---|
| Վէրս ի վերայ եղին – Վիրաւորեցին | Պանդոկի – Պանդոկ |
| Կիսամահ – Կէս մեռած | Ի վաղիւ անդր – Յաջորդ օրը |
| Գրաստ – Ձի | Ծախել – Ծախսել։ |

## ՅԻՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

### Հոլովառու բառեր

224. *Հոլովառու կ'ըսուին այն բառերը՝ որ որոշեալ հոլովով խնդիր մը կ'ունենան միշտ։ Ասոնք երեք կարգ կը բաժնուին ու կը կոչուին*

1°. *Նախադաս անունք՝ որ իրենց խնդիրէն առաջ կը դրուին։ Օրինակ.*

*Իբրև զգառն, գառնուկի պէս. – Որպէս փայլակն, փայլակի պէս. – Քան զամենեսին, ամենքէն աւելի. – Յետ այսորիկ, ասկէ ետքը. – Առանց անխայելոյ, առանց խղճալու. – Բաց ի դոցանէ, ատոնցմէ դուրս։*

2°. *Յետադաս անունք՝ որ իրենց խնդիրէն վերջը կը դրուին։ Օրինակ.*

*Ի սկզբանէ հետէ, սկիզբէն ի վեր. – Ի թիկունս կոյս, դէպ ի կռնակը. – Ի կինն կողմն, դէպ ի կինը. – Մահու չափ, մինչև մահ, և այլն։*

3°. *Եւ կրկնակարգ անունք՝ որ խնդիրէն թէ՛ առաջ կրնան դրուիլ և թէ՛ վերջը։ Օրինակ.*

*Վասն սիրոյ, սիրոյ համար. – օրինակի վասն, օրինակի համար. Առաջի աչաց, աչքի առջև. – իմ առաջի, իմ առջևս Զկնի մեր, մեր ետևէն. – չարին զկնի, չարին ետևէն։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 224. *Ի՞նչ տեսակ բառեր հոլովառու կ'ըսուին, և որո՞նք կը կոչուին Նախադաս Յետադաս ու Կրկնակարգ։*



225. *Կրկնակարգ հոլովառուներու գլխաւորներն ասոնք են.*

| | |
|---|---|
| Վասն, Սակս, Յաղագս } համար | Ընդդէմ, դէմ |
| Աղագաւ, պատճառաւ | Առընթեր, քովը, մօտը |
| Առաջի, Հանդէպ, Յանդիման } դիմացը | Արտաքոյ, դուրս, դուրսը |
| Փոխանակ, տեղը | Ի ներքոյ, ներս, ներսը |
| Զհետ, Զկնի } ետևէն, ետքը | Մեկուսի, զատ, մէկդի |
| Ի վերայ, վրայ, վրան | Հեռի, հեռու |
| Ի ձեռն, ձեռքով | Ուրոյն, առանձին |
| | Հանդերձ, մէկտեղ, հետը |
| | Շուրջ, չորս կողմը |
| | Մերձ, Մօտ, Հուպ } մօտ, քովը։ |

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել հետևեալ հրահանգի մէջ շեղագիր հոլովառու բառերուն կարգը և բուն նախդիրներուն խնդրառութիւնը։*

Ա. — *Որդեակ, դիր զիմաստութիւն իբրև մանեակ ոսկի ի պարանոցի քում։ Որպէս զանօթ բրուտի՝ այնպէս փշրեսցէ զնոսա։ Ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ։ Որ ինչ ծանր է քան զքեզ՝ մի՛ բառնար։ Մի՛ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Լերինք փոփոխեսցին ի ձայնից մերոց, եթէ ունիցիմք հաւատս քան զհատն մանանխոյ։ Մշակք վաստակեն յայգւոջ՝ յայգուէ մինչև ցերեկոյ։ Յետ նորա յարեաւ Յուդաս Գալիլեացի յաւուրս*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 225. *Կրկնակարգ հոլովառու բառերուն գլխաւորները որո՞նք են։*

աշխարհագրին։ Առանց իմ ոչ կարէք զայդ առնել։ Բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք։ Որդին Աստուծոյ եառ զկարիս (տկարութիւն) մեր՝ քաւ ի մեղաց։

Բ. — Դաւիթ և Յովնաթան ոգւով չափ սիրէին զմիմեանս։ Մարտիրոսք և կուսանք մահու չափ ճգնէին առ սէր հաւատոց։ Մարիամ դարձաւ ի թիկունս կոյս և տեսանէ զՅիսուս զի կայր։ Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի։ Ծառայք պարտին հնազանդ լինել տերանց իւրեանց մարմնաւորաց, ծառայել իբրև Աստուծոյ և մի իբրև մարդկան։ Քահանայապետք Հրէից և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ զի սպանանիցեն զնա և ոչ գտանէին. զի բազում սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց ոչ էին վկայութիւնքն։ Զի՞ք ինչ դժուարբերելի (անտանելի) քան զկենակցութիւն ընդ անձինս՝ որք խօսել ևեթ կամիցին անդադար, առանց լսելոյ։

Բ

Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Երկու կոյրեր Յիսուսի ետևէն կ'երթային։ Քաղաքին մօտ դաշտ մը կար։ Յիսուսի աշակերտները Հոգւոյն Սրբոյ գալուստէն ետքը զօրացան միտքերու մէջ։ Տղոց համար դպրոցներ շինուեցան (կառուցանիմ)։ Քաղաքին չորս կողմը պահապան դրաւ։ Գիտութիւնը առանց առաքինութեան՝ խաբէութիւն է և ոչ իմաստութիւն։ Տանը առջև ջրհոր (մը) բացաւ։ Բանակը քաղաքին դիմացը դրաւ։ Քրիստոնէութիւնն այնչափ հալածանքներէ ետքը՝ բոլոր աշխարհ տարածուեցաւ Առաքեալներու ձեռքով։ Մովսէս և Ահարոն փարաւոնի դիմացը ելան։ Զանիկա անոր առջև դատեց։ Դանիէլ իր բարեկամներէն աւելի փառաւոր էր։ Ով որ յաւիտենական կեանքը կ'ուզէ մտնել, պէտք է Յիսուսի Քրիստոսի մեր տիրոջ խօսքերուն ետևէն երթայ։ Առաջինը թևաւոր մատակ առիւծի նման (էր), անոր թևերը արծուի թևերու պէս (էին)։



Բ. — Սուրբ մարգարէին ձեռքով (ի ձեռն) անոնց գործերն յաջողեց։ Յորդանանու միւս կողմը (յայնկոյս) շատ ժողովուրդ կար։ Հերովդէս իր զօրականներով մէկտեղ (հանդերձ) արհամարհեց Յիսուսը, և ծաղր (այպն) ընելով՝ անոր ճերմակ զգեստ հագցուց (արկանեմ զ ճախրով գործիակն) և Նորէն Պիղատոսի տանել տուաւ։ Նախ ձեր ամենուդ համար շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծոյս Յիսուսի Քրիստոսի ձեռքով, որ ձեր հաւատքն ամէն աշխարհ պատմուած է։ Նախնեաց վրայ (յոգն. ճախր. տր.) պարծողն այն անխելքին կը նմանի որ ծառին պտուղները ճիւղերուն վրայ փնտռելու տեղ՝ արմատին վրայ կը փնտռէ։ Առաքինութենէ զատ (բաց յ...) ամէն բան երազի պէս կ'անցնի։ Նոր ճամբայ գտնող չկայ, քեզմէ առաջ ուրիշներն անցեր են, քեզմէ ետքն ալ ուրիշները պիտի անցնին նոյն տեղէն։ Գիտութիւնն՝ ուսումնասէրին համար է, հարստութիւնն՝ աշխատողին, իշխանութիւնը՝ քաջութեան, արքայութիւնն՝ առաքինութեան։

խօսք – Բան | Նորէն – Անդրէն
Տեղ – փոխանակ։

Գ

ԾԱՂԿԱՔԱՂ

Տնտեսն անիրաւ

Այր մի էր մեծատուն՝ որոյ էր տնտես. և եղև զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա։ Կոչեաց և ասէ ցնա. Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն. տո՛ւր զհամար տնտեսութեան քոյ, զի ոչ ևս կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս. գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ. գիտեմ զի՛նչ արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս ի տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ի պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում։ Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ։ Ասէ ցնա. Կա՛ զգիր քո,

և Նիստ գրեա՛ վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ասէ ցմիւսն․ Դու քանի՞ ինչ պարտիս։ Եւ նա ասէ․ Հարիւր քոռ ցորենոյ։ Եւ ասէ ցնա․ Կա՛ռ զգիր քո, և Նիստ գրեա ութսուն։ Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար․ զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց։

**Բառագիտութիւն**

Տուր զհամար տնտեսութեան քո – Տնտեսութեանդ հաշիւը տուր
Մի ըստ միոջէ – Մէկիկ մէկիկ
Քանի՞ ինչ պարտիս – Ո՞րչափ պարտք ունիս

Մար – Չափ հեղուկներու
Կա՛ռ զգիր քո – Գիրքդ կամ տետրակդ ա՛ռ, բռնէ
Քոռ – Չափ ընդեղէններու

## ՅԻՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

### Հոլովառու բառերուն խնդրառութիւնը

226․ *Հոլովառու բառերէն սեռական հոլով խնդիր կ'առնեն հետևեալները․*

Վասն մեր, վասն սիրոյ․ մեզի համար, սիրոյ համար
Սակս նորա, սակս աղօթից․ անոր համար, աղօթքի համար
Յաղագս իմ, յաղագս յանցանաց․ ինծի, յանցանքի համար
Ո՞յր աղագաւ, սորին աղագաւ․ որո՞ւն, ասոր համար
Առանց քո, առանց պարտեաց․ առանց քեզի, պարտքի
Յետ այնորիկ, յետ գալստեան․ անկէ, գալէն ետքը
Առաջի քո, առաջի աչաց․ քու առջևդ, աչքի առջև
Հանդէպ իմ, հանդէպ տանն․ իմ դիմացս, տանը դիմաց
Յանդիման ծեր (կամ ձեզ)․ ձեր դիմացը
Զհետ նորա, զհետ Փրկչին․ անոր ետևէն, փրկչին ետևէն

ՀԱՐՑՄՈՒՆՔ․ — 226. Հոլովառու բառերէն որո՞նք սեռական հոլով խնդիր կ'առնեն։



Զկնի մեր, չարին զկնի․ մեր ետևէն, չարին ետևէն
Ի վերայ սեղանոյն, խաչին․ սեղանին, խաչին վրայ
Ի ձեռն մարդոյ, Մովսեսի, մարդու, Մովսեսի ձեռքով
Փոխանակ հացի, ջրոյ․ հացի, ջուրի տեղ
Ընդդէմ մեր, թշնամեաց․ մեզի, թշնամիներու դէմ
Առընթեր սորին, սեանն․ ասոր, սիւնին քով
Ի ներքոյ երկնից, սեղանոյն․ երկնքի, սեղանին տակ
Յետոյ դրանն, նորա․ դրան, անոր ետեւ
Արտաքոյ դրան, քաղաքին․ դռնէն, քաղաքէն դուրս։

227․ *Մերձ, Մօտ, Հուպ, Կողմն, Կոյս հոլովառու բառերը խնդիր կ'առնեն Նախդրիւ տրական հոլով։ Օրինակ․*

| | |
|---|---|
| Մերձ ի տունն, ի գաւիթն | Տանը, գաւիթին մօտ |
| Մօտ ի քաղաքն, ի տեղին | Քաղաքին, տեղին մօտ |
| Հուպ յարմատն, յառնուլ | Արմատին, առնելու մօտ։ |
| Ի կլինն կողմն, յայս կողմն | Դէպ ի կինը, դէպ այս կողմը |
| Յափն կոյս, յայս կոյս | Դէպ ի ծովեզերք, դէպ ի այս կողմը, և այլն։ |

228․ *Հանդերձ և Զափ խնդիր կ'առնեն գործիական հոլով․ իսկ Շուրջ կ'առնէ զ Նախդրիւ գործիական։ Օրինակ․*

| | |
|---|---|
| Հանդերձ մարբն, կնաւն | Մօրը, կնոջը հետ մէկտեղ |
| Մահու չափ, միջովք չափ | Մինչև մահ, մինչև մէջքը |
| Շուրջ զինև, զքաղաքաւ | Իմ, քաղաքին շուրջը։ |

229․ *Մեկուսի, Հեռի, Որոշն, Բաց կամ Բայց և Հետէ բացառական հոլով խնդիր կ'առնեն։ Օր․*

ՀԱՐՑՄՈՒՆՔ․ — 227. Ի՞նչ խնդիր կ'ուզեն Մերձ, Մօտ, Հուպ, Կողմն, Կոյս հոլովառու բառերը․ — 228. Ի՞նչ հոլով խնդիր կ'առնեն Հանդերձ, Զափ, Շուրջ հոլովառու բառերը․ — 229. Ի՞նչ հոլով խնդիր կ'առնեն Մեկուսի, Հեռի, Որոշն, Բաց կամ Բայց և Հետէ հոլովառուները։

| | |
|---|---|
| Մեկուսի յամբոխէն, ի մէնջ | Բազմութենէն, մեզմէ մէկդի |
| Հեռի ի տանէն, ի ձէնջ | Տունէն, ձեզմէ հեռու |
| Ուրոյն ի նոցանէ, ի կռոցն | Անոնցմէ, կուռքերէն զատ |
| Բաց կամ բայց յինէն | Ինձմէ զատ |
| Յադամայ հետէ, ի նախնեաց հետէ | Ադամէն ի վեր, նախնիներէն ի վեր, և այլն։ |

230. *Իբրև, Որպէս, Քան, պարագայից համաձայն՝ ամէն հոլով խնդիր կրնան առնել։ Այսպէս տեղին և իմաստին համեմատ՝ կարելի է ըսել.*

Իբրև քաջ, քաջի, ի քաջ, քաջիւ, ի քաջէ, զքաջ
Որպէս մարդ, մարդոյ, ի մարդ, մարդով, ի մարդոյ, զմարդ
Քան բարի, բարւոյ, ի բարի, բարեաւ, ի բարւոյ, զբարի։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Շեղագիր հոլովառու բառերուն խնդրառութիւնները լուծել քերականօրէն։*

Իբրև մերձ եղեն ի Բեթփագէ՝ մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց իւրոց։ Վիշապ ձուկնն խաղայ երբեմն յափն կոյս։ Յիսուս դարձաւ ի կինն կողմն։ Եկն առ նա հանդերձ մարբն և եղբարբ իւրով։ Ոգւով չափ հակառակ կացէք մեղացն։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և ասեն. Եթէ դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ։ Գիւղն այն հեռի էր յԵրուսաղեմէ հարիւր և վաթսուն ասպարիզաւ։ Մեք զայլ ոք ոչ գիտեմք արարիչ՝ բաց ի Տեառնէ Աստուծոյ մերմէ։ Յօրէ յորմէ հետէ եկի այսր, ոչ ոք ի ձէնջ կարօտացաւ իմիք։ Իբրև ի վերայ աւազակի՞ ելէք սուսերօք և

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 230. *Իբրև, Որպէս, Քան հոլովառու բառերն ի՞նչ հոլով խնդիր կ՚առնեն։*



բրօք։ Երկերուք, եղբարք, ի կեղծաւորութենէ՝ որպէս յանհաւատութենէ։ Սակաւք ոմանք ի խորհրդոց քրիստոսական կրօնիցս ի վեր են քան զամենայն հասողութիւն մտաց, այլ ոչ հակառակամարտք նոցին։ Ընկալ, որդեակ, զգիտութիւն քան զոսկի ընտիր։ Աստուած խոստացաւ առ Նահապետս բազմացուցանել զզաւակս նոցա իբրև զաստեղս երկնից և իբրև զաւազ առ ափն ծովու։ Մոգքն իբրև տեսին զմանուկն Յիսուս հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, անկեալ երկիր պագին նմա և մատուցին պատարագս (նուէր)։ Զոյլոս որ գրեաց ընդդէմ Հոմերոսի և Պղատոնի և այլոց գերահռչակ մատենագրաց, էր աշակերտ Պոլիկրատեայ։ Զիք հաստատուն բարեկամութիւն քան ծնողաց առ որդիս և որդւոց առ ծնողս։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Մեղքէ փախիր ինչպէս օձի երեսէն (երեսք)։ Մուրացիկ կոյր մը տաճարին դրան առջեւ նստած ողորմութիւն կը խնդրէր։ Ամէն բան Աստուած մարդոց համար ըրաւ։ Պզտիկը չտուլին, անոր համար մեծը չեն առներ։ Ահաւասիկ բովանդակ երկիրը առջևդ է։ Ետևէս եկէք և զձեզ մարդկան որսորդներ պիտի ընեմ։ Փարաւոնի գնա և անոր դիմացը կեցիր։ Աստուած մարգարէներու ձեռքով խոստացաւ Մեսիայի գալուստը։ Ձեր ծառայութեանց տեղ՝ այդ է ձեր վարձքը։ Յիսուս յարութենէն ետքը շատերուն երեւցաւ։ Իսրայելացիք բանակնին Կարմիր ծովուն մօտ դրին։ Ղովտին կինը դէպ ի ետեւ դարձաւ և աղի արձան եղաւ։ Խաչակիրները դէպ ի արևելք ճամբայ ելան (անկանիմ ի չու)։ Այդ տեղը նստեցէք՝ այդ իշուն հետ մէկտեղ։ Ժողովուրդն անոր շուրջը կը կենար։ Անոնք Աստուծոյ պատիժներէն ազատ չեն։ Ցամաքէն հեռու չեն։ Սովորութիւն ունէր անոնցմէ զատ (մեկուսի) աղօթքի կենալ։ Առաքեալներէն զատ ամէնքը ցրուեցան։ Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ։ Անօրէնութիւններս գլխուս մազերէն շատ եղան (բազմանամ)։ Թշնամիդ քեզի մօտ մի կեցըներ որ զքեզ չկործանէ

ու տեղդ անցնի։ Կիկերոն ազատութիւնը կը սիրէր՝ ինչպէս Կատոն, բայց անոր հաստատամտութիւնը չունէր։ Հռովմայեցիք մեծ փոս բացած էին (խրամ հատանեմ) այն տեղին շուրջ՝ ուր Հռոմ քաղաքը պիտի կանգնուէր։

### Գ.

### ԾԱՂԿԱՔԱՂ

*Հարիւրապետն և ծառայ իւր*

Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ մերձ էր ի վախճանել, որ էր նմա պատուական։ Իբրև լուաւ զՅիսուսէ՝ առաքեաց զծերսն ի Հրէից, աղաչել զնա զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ առ Յիսուս աղաչէին զնա ստէպ և ասէին, թէ արժանի է որում շնորհես զայս առնես, զի սիրէ զազգս մեր և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։ Եւ Յիսուս գնայր ընդ նոսա։ Իբրև ոչ ինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս և ասէ։ Տէր, մի՛ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես, վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ և բժշկեսցի մանուկն իմ։ Իբրև լուաւ զայս Յիսուս, զարմացաւ. դարձաւ առ ժողովուրդն՝ որ երթային զհետ նորա և ասէ։ Ամէն ասեմ ձեզ թէ և ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, և գտին զծառայն հիւանդ բժշկեալ։

**Բառագիտութիւն**

| | |
|---|---|
| Իբրև ոչ ինչ կարի հեռի էր ի տանէն – Երբոր տունէն շատ հեռու չէր | Յղեաց – Ղրկեց<br>Մի՛ աշխատ լինիր – Մի՛ յոգնիր. |

---

# ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

## ՄԱԿԲԱՅ

---

### ՅԻՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Մակբայ ընդհանուր եւ Տեղականներու գործածութիւն

231. *Մակբայ կ'ըսուին այն անփոփոխ բառերը՝ որ բայերու քով կը դրուին՝ անոնց իմաստը լրացնելու և խօսքին պարագաները ցուցնելու համար։ Ասոնք իրենց կերպ կերպ նշանակութեանց համաձայն՝ կը վերածուին ութ գլխաւոր խումբերու. Տեղական, Ժամանակական, Հարցական, Հաստատական, Բացասական, Երկբայական, Քանակական և Որակական։*

332. *Տեղական կ'ըսուին այն մակբայները որ տեղի գաղափար կը յայտնեն։ Օրինակ.*

Աստ կամ Այսր, հոս, այս տեղ. – Այդր, հոդ, այդ տեղ. – Անդ կամ Անդր, հոն, այն տեղ. – Աստի, ասկէ, այս տեղէն. – Այտի, ատկէ, այդ տեղէն – Անտի, անկէ, այն տեղէն. – Ուր, ուր. – Ուրեք, տեղ մը. – Ուստի, ուրկէ. – Ուստէք, տեղէ մը. – Արտաքոյ կամ Արտաքս, դուրսը։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 231. Ո՞ր բառերը Մակբայ կ'ըսուին և քանի՞ տեսակ են. — 232. Մակբայներէն որո՞նք տեղական կ'ըսուին, ցոյց տուր օրինակներով։

233. ***Աստ, Այդր, Անդ, Աստի, Այտի, Անտի* մակբայներն *Այս, Այդ, Այն* ցուցական ածականներուն տեղ կը գործածուին՝ երբ խօսքը տեղի վրայ է։ Ուստի.**

| Սովորաբար կ'ըսուի | Փոխանակ ըսելու |
|---|---|
| *ի տան աստ* | *ի տանս յայսմիկ* |
| *ի տաճարի անդ* | *ի տաճարին յայնմիկ* |
| *ի տեղւոջէ աստի* | *ի տեղւոջէս յայսմանէ։* |

***Աստ* և *Անդ* դադարում ցուցընող բայերուն առջև կը դրուին՝ նախդրիւ վերջահոլով տրականի իմաստով. իսկ *Այսր* և *Անդր*՝ շարժում ցուցընող բայերու առջև կը գործածուին նախդրիւ տրականի իմաստով։ Օրինակ.**

| Դադարում | Շարժում |
|---|---|
| *Նիստ դու աստ կամ անդ* | *Երթա՛յք այսր կամ անդր* |
| *Կացջիք ի քաղաքի աստ* | *Եկին ի քաղաք այսր* |
| *Աղօթէր ի տաճարի անդ* | *Եմուտ ի տաճար անդր, և ն.։* |

**Ծանօթ. Ա.** — **Աստ** և **Անդ**, որ ցուցական ածականներու Ա. և Գ. դէմքերուն կը համապատասխանեն, ունին նաև **Այսր** և **Անդր** ձևերը՝ շարժումի պարագային գործածելի, ինչպէս վերև տեսանք. բայց Բ. դէմքի համապատասխանող տեղական մակբայի մէկ ձև միայն կայ, **Այդր**, թէ շարժում և թէ դադարում ցուցնող։ Ուստի կ'ըսուի հաւասարապէս. Եկից ես **այդր**, Նստարո՛ւք **այդր**, Ե՛րթ ի տուն **այդր**, Կացցէ ի տան **այդր**, և այլն։

**Ծանօթ. Բ.** — **Ուր** տեղական մակբայն ալ՝ դադարումի կամ նախդր. վերջահոլով տրականի մտքով միայն կը գործածուի։ Շարժում յայտնուելու պարագային, մանաւանդ հարցական ձևով, անոր տեղ կը դրուի միշտ *ո* յարաբերականին նախդր. տրականը՝ *յո՞* կամ *յո՞վ*, որ ըսել է դէպի *ո՞ւր*։ Օրինակ.

*Յո՞ կամիք գնալ, դէպի ո՞ւր կ'ուզէք երթալ. — Ոչ գիտեմք յո՛վ երթաս, չենք գիտեր դէպի ո՞ւր կ'երթաս. — Զգէ տանի յո՛ և կամի, կը քաշէ կը տանի դէպ ի ո՛ւր որ կ'ուզէ. — Հողմ ո՛ւր կամի շնչէ, այլ ոչ գիտես ուստի՞ գայ կամ յո՞ երթայ, հովը ուր ուզէ կը փչէ, բայց չես գիտեր ուրկէ՞ կուգայ կամ դէպ ի ո՞ւր կ'երթայ։*

234. ***Աստի, Այտի, Անտի* մակբայներն *Այս, Այդ, Այն* դերանուանց բացառական հոլովներուն իմաստով կը գործածուին, մանաւանդ երբ խօսքը տեղի վրայ ըլլայ։ Օրինակ.**

*Ե՛լ յերկրէ աստի, այսինքն՝ յերկրէս յայսմանէ։ — Բերէք ինձ ի ձկանց այտի, — ի ձկանցդ յայդոցիկ կամ յայդցանէ։ — Եկին ի քաղաքաց անտի, — ի քաղաքացն յայնոցիկ կամ յայնցանէ։ — Ի բանից աստի մերոց, — ի բանիցս յայսցանէ կամ յայսոցիկ։ — Ոմանք ի Փարիսեցւոց անտի, — ի Փարիսեցւոցն յայնցանէ, և այլն։*

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել տեղական մակբայները ու լուծել քերականօրէն։*

*Նստարո՛ւք այդր հանդերձ իշովդ։ Ուր մարմին է՝ անդր ժողովեսցին արծուիք։ Ի քաղաքի անդ էին թագաւորն և մեծամեծք իւր։ Մեկնեցարո՛ւք յազգէ աստի խոտորելոյ*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 233. Ո՞ր դերանուանց տեղ **Աստ, Այդր, Անդ, Աստի, Այտի, Անտի** կը գործածուին. և ե՞րբ **Աստ** և **Անդ** ձևերուն տեղ՝ **Այսր** և **Անդր** կը գործածուին։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 234. **Աստի, Այտի, Անտի** մակբայներն ի՞նչ իմաստով կը գործածուին։

յայտմանէ։ Զօդան աշակերտքն ի գիւղ անդր և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս։ Ելէք ի տեղւոջէ այտի և փախերո՛ւք, զի կորուսանելոց է Տէր զքաղաքդ։ Երկուք ի նոցանէ մտին ի տուն անդր, և անդէն օթևանս կալան (հոն կեցան) զայն գիշեր։ Ասա առ մեզ ազերուք, քանզի ընդ երեկս է և աւազակք կալեալ ունին զճանապարհդ ընդ որ գնալոց էք։ Ի ձայնէ անտի հրեշտակին խռովեցան պահապանքն և եղեն իբրև զմեռեալ։ Տեսի զկալանաւորսն շուրջ պատեալ ի զինուորաց, և աչք նոցա այսր անդր յածէին։ Խռնեցաւ ամբոխն ի հրապարակ անդր համբուրել զդրօշակն հանդերձից երանելւոյն։ Ելեալ Յիսուս ի տանէ անտի՝ քարոզէր առ ծովեզերբն։ Ասէ Եղիա ցԵղիսէէ. Նիստ դու աստ, զի Տէր առաքեաց զիս ի Յորդանան։ Ասէր Աստուած ցորդիսն Իսրայելի. Հանից զձեզ ի տեղւոջէ այտի և տարայց յերկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր։ Տէր այգւոյն առաքեաց զմիածին որդի իւր, և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իբրև ածաւ Յիսուս ի տուն Աննա քահանայապետին, Պետրոս կայր առ դրան արտաքոյ. իսկ միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին, ասաց ցդռնապանն և եմուծ ի ներքս զՊետրոս։

## Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Հոս փեսայ կամ որդիներ ունի՞ս։ Տրտում է իմ անձս մինչեւ ի մահ, հոս կեցէք ու հետս հսկեցէք։ Այս գիշեր հոս մեր քով կեցէք (ագանիմ)։ Տղաքն այն հրապարակը վազեցին։ Յիսուս այն տունէն ելաւ և ծովուն եզերքին քովը (ծովեզր առ ճխղր․ գործականով) կը քարոզէր։ Այս քաղաքիս իշխաններն երէկ մեզի եկան։ Դուրսը դրան առջեւ կեցող աղքատներուն առատ ողորմութիւն տուաւ։ Հոս է համբերութիւն և սրբոց հաւատքը։ Այն քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար (եմ)։ Երբ այն լեռնէն կ՚իջնէին՝ Յիսուս պատուիրեց որ այն տեսիլը մէկու մը չըսեն։ Անոնք այս աշխարհէս են, բայց դուք այս աշխարհէս չէք։ Բարիզ Գաղղիոյ մայրաքաղաքն է (մայր քաղաքաց), մարդիկ ամէն կողմերէ հոն կը վազեն։ Քաղաքապետն այն պահապան զինուորներէն երեքը քովը կանչեց։ Հոս ի՞նչպէս մտար, պատմէ ինծի։ Դանուբ գետին վրայ շինուած է Պուտափեշտ՝ Հունգարիոյ ընդարձակ և բազմամարդ քաղաքը. անկէ հոն երեք օրուան ճամբայ է։ Միթէ այն մարդն հոս պիտի գա՞յ. չեմ կարծեր, պէտք է մենք երթանք մինչև իր այն բնակարանը։



Բ. — Հոս ինծի եկէք (մատչիմ) Իսրայելի ամէն ցեղեր։ Ո՞ւր է Սառա կինդ. ահա այն վրանին մէջ է։ Տղայ, իմ հոս գալէս առաջ ո՞ւր էիր։ Բայց երբ Յիսուս այն լեռնէն իջաւ, շատ ժողովուրդ ետևէն գնացին։ Մեր այն հաւատարիմ ծառաներէն երկուքն աւազակներէ սպանուեցան։ Հոս մի՛ մօտենար վասն զի կեցած տեղդ սուրբ երկիր է։ Ելիր այդ երկրէն և եկուր այն երկիրը զոր քեզի պիտի ցուցնեմ։ Տանտէրը բարկանալով ծառային՝ ըսաւ. Շուտով քաղաքիս հրապարակներն ու փողոցները գնա, և աղքատները, հաշմանդամները (խեղ), կաղերն ու կոյրերը հոս մըտցուր։ Այս աշխարհէս ելլալու ատեն՝ ստիպուած է ամէն մարդ մահուան դռնէն անցնելու, որ միակ խորոցն է ժամանակի և յաւիտենականութեան մէջ։ Իմաստունք կը քննեն թէ ո՞րն է մարդուս ծագումն և ի՞նչ է անոր ճակատագիրը, ուստի՞ կու գայ և ո՞ւր կ՚երթայ. ինչո՞ւ համար դրուած է աշխարհիս մէջ, և ի՞նչպէս իր պարտքերը պիտի կարենայ կատարել։

## Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Համան

Փառաւորեաց արքայ Արտաշէս զՀաման և բարձրացոյց զնա յառաջին աթոռ քան զամենայն սիրելիս իւր. և ամենեքին՝ որ միանգամ էին ի տան թագաւորին, երկիր պագանէին նմա, զի այսպէս հրամայեաց թագաւորն առնել։ Այլ Մուրթքէ ոչ պագանէր նմա երկիր։ Եւ յորժամ գիտաց Համան եթէ ոչ պագանէր նմա երկիր, բարկացաւ

*յոյժ. և խորհուրդ արար զի կորուսցէ զՀրեայն որ ընդ Թագաւորութեամբն Արտաշեսի արքայի իցեն։ Եմուտ ի տուն իւր, և կոչեաց զսիրելիս իւր և զկին իւր, և եցոյց նոցա զմեծութիւն և զփառս իւր, և ասէ. Արդ այս ոչ թուի ինձ հաճոյ՝ յորժամ տեսանեմ զՄուրթքէ ի տան Թագաւորին։ Ասէ ցնա Զովսարրա կինն իւր. Հրաման տուր հատանել քեզ փայտ մի յիսուն կանգուն, և ասասցես արքայի և կախեսցի Մուրթքէ զփայտէն։ Հաճոյ թուեցաւ Համանայ բանն, և պատրաստեցին զփայտն։*

**Բառագիտութիւն**

*Փառաւորեաց* — փառօք և պատուով մեծարեց

*Երկիր պագանէին նմա* — Անոր առջև կը խոնարհէին, գլուխ կը ծռէին

*Կախեսցի Մուրթքէ զփայտէն* — Մուրթքէ այն փայտէն թող կախուի.

## ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍ

### Մակբայներուն ուրիշ տեսակներն ու ձևերը

235. ***Որակական*** *կ'ըսուին այն մակբայները որ ինչ կերպով ըլլալ կը նշանակեն։ Օրինակ.*

***Այսպէս, Այդպէս, Այնպէս, Որպէս, Կողմնակի, Ուղղակի, Արմատաքի, Լռելեայն, Գլխովին, Իմաստնաբար, Միանգամայն, Ուժգնօրէն, Ընդհանրապէս, Հարևանցի,*** *և այլն։*

***Ժամանակական*** *կ'ըսուին անոնք՝ որ ժամանակի գաղափար կու տան։ Ինչպէս.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 235. *Ո՞ր մակբայներն որակական կ'ըսուին և որո՞նք ժամանակական։*



***Այժմ, Ապա, Յայնժամ, Յորժամ, Մինչդեռ, Այն ինչ*** *(նոր, հազիւ թէ),* ***Միշտ, Երբեմն, Երբեք, Յաճախ, Առժամայն*** *կամ* ***Անդէն*** *(մէկէն)։*

**Ծանօթ.** — *Յորժամ, Մինչդեռ, Այն ինչ մակբայներով կազմուած խօսքերը կրնան Անորոշ և Անցեալ դերբայներով բացատրուիլ, ինչպէս ըսած ենք վերև 196 համարին մէջ։*

*Երբեմն, Երբեք, Յաճախ մակբայներուն տեղ ալ՝ սովորաբար է զի կամ էր զի, է ուրեք, և բազում այն է զի ձևերը կը գործածուին։ Օրինակի համար.*

| *Փոխանակ ըսելու* | *Սովորաբար կ'ըսուի* |
|---|---|
| *Երբեմն յաղթեցաք թշնամւոյն և երբեմն նոքա մեզ յաղթեցին. այլ յաճախ յաղթող եղեալ եմք և ոչ յաղթեալք։* | *Է զի յաղթեցաք թշնամւոյն և է զի նոքա մեզ յաղթեցին. այլ բազում այն է զի յաղթող եղեալ եմք և ոչ յաղթեալք։* |

236. ***Քանակական*** *կ'ըսուին չափ և քանակութիւն ցոյց տուող մակբայները։ Զոր օրինակ.*

***Այսքան, Այդչափ, Նոյնքան, Երիցս, Քանիցս, Յոյժ, Կարի, Շատ, Բաւական, Միայն, Եւեթ, Դարձեալ,*** *և այլն։*

***Հարցական*** *կ'ըսուին հարցումի համար գործածուածները։ Օրինակ.*

***Զի՞, Ե՞ր, Հի՞մ, Ընդէ՞ր, Զիա՞րդ, Զմէ՞, Առ ինչ, Է՞ր վասն*** *(ինչո՞ւ, ի՞նչ պատճառաւ), և այլն։*

**Ծանօթ.** — *Միայն, Եւեթ հոմանիշ են, բայց միևնոյն կերպով չեն գործածուիր։ Առաջինն իրեն պատկանող բառէն թէ առաջ թէ ետքը կրնայ դրուիլ, մինչ Եւեթ յետադաս է միշտ։ Օրինակ.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 236. *Քանակական և հարցական մակբայ որո՞նք կ'ըսուին։*

| | |
|---|---|
| Օրէն է առնել միայն զատելութիւն կամ զատելութիւն միայն. | Օրէն է առնել զատելութիւն ևեթ. |
| Ջինուորի պարտք են միայն հնազանդել կամ հնազանդել միայն. | Ջինուորի պարտք են հնազանդել ևեթ. |
| Մի՛ խորհիք միայն զանձանց կամ զանձանց միայն. | Մի զանձանց ևեթ խորհիք, և այլն։ |

237. *Հաստատական կ'ըսուին Այո, Արդարև, Այսպէս (իրաւցընէ, ի հարկէ), և նման մակբայներ՝ որ խօսք մը կը հաստատեն։*

*Բացասականները խօսք մը կը ժխտեն կամ կը մերժեն։ Ինչպէս. Ո՛չ, Մի՛, Քա՛ւ (չըլլա՛յ, հեռո՛ւ), Բնա՛ւ, Բնաւին, Համբուն (երբե՛ք, ո՛չ)։*

*Իսկ երկբայականները տարակոյս մը կը յայտնեն։ Օրինակ.*

*Գուցէ, Թերևս, Միթէ, Արդեօք, և այլն։*

*Ծանօթ.* — Ոչ մակբայը ոք և ինչ բառերու հետ միացած ատեն երբ բայէն ետքը դրուի՝ և շաղկապը կ'առնէ։ Օրինակ.

Այրն այն ոչինչ գիտէ կամ Այրն այն գիտէ և ոչ ինչ.
Ոչ ոք լուաւ զձայն նորա կամ Լուաւ զձայն նորա և ոչ ոք։

238. *Բուն մակբայներէ զատ, հասարակապէս կը գործածուին նաև գրաբարի յատկաբանութեան վերաբերող կարգ մը բառեր կամ բառաձևեր՝ մակբայակերպ անունով, որոնք երեք խումբի կը բաժնուին իրենց ձևական տարբերութեամբ. Հոլովուած, Կրկնուած և Ածական բառեր։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 237. Մակբայներէն որո՞նք հաստատական, որո՞նք բացասական և որո՞նք երկբայական կ'ըսուին. — 238. Ի՞նչ տեսակ բառեր մակբայակերպ կ'ըսուին և հոլովուածները որո՞նք են, ցոյց տուր օրինակներով։



*Հոլովուած մակբայակերպներուն գործածականներն են հետևեալները.*

*Ի հարկէ, հարկաւ. — ի կարճոյ, կարճ կերպով, ի մօտոյ, քիչ ատենէն, ի վերջոյ, վերջապէս. — ողջամբ, ողջ կերպով, բնաւիմբ, բոլորովին, աղագունիւք, համառօտ կերպով. — ի զուր, զուր տեղ, ի նանիր, աւելորդ տեղը, ի սպառ, մինչև վերջը, ի ներքս կամ ի ներքոյ, ներսը կամ ներքև. — գիշերի, գիշեր ատեն, ձմերանի, ձմռան մէջ, ի տուէ, ցերեկ ատեն. — այգուն կամ այգուցն, առտուանց, վաղուց, առաջուց, մերկուց, մերկ մարմնով. — յանիրաւի, անիրաւ տեղ, յակամայս, չուզելով, յանզգաստից, անգիտակցաբար, ի տարապարտուց, փուճ տեղը. — զառաջինն, ի սկզբան, զարդիս, ներկայապէս, զճանապարհայն, ճամբուն վրայ, զտեղեաւն, նոյն տեղը. — առ խարխափ, ասդին անդին երերալով. — ընդ աղօտ, աղօտ կերպով, ընդ հուպ, մօտերս, ընդ փոյթ, շուտով. — առ իմէ՞, ինչո՞ւ, զմէ՞, ի՞նչ բանի համար, և այլն։*

239. *Մակբայի տեղ գործածուող կրկնուած բառերուն և պարզ ածականներուն սովորականներն ասոնք են.*

Կրկնուած բառեր

*Իսկ և իսկ, մէկէն ի մէկ. — բացէ ի բաց, ոչ մէկ կերպով. — վեր ի վերոյ, սանկ նանկ. — լու ի լու, ամենուն լսելովը. — բերան ի բերան, երես երեսի. — բան առ բան, բառ առ բառ, խօսքին խօսք, բառին բառ. — ճակատ առ ճակատ, դիմացէ դիմաց. — ուրեք ուրեք, տեղ տեղ. — ուրոյն ուրոյն, զատ զատ. — հուպ ընդ հուպ, քիչ ետքը. — մերձ ընդ մերձ, մօտերս. — ոտն ոտն, կամաց կամաց. — կարճ ի կարճոյ, համառօտիւ. — խառն ի խուռն, խառնակ կերպով. — յօշ յօշ, կտոր կտոր. — դամու դամու, շատ անգամ. — դամ քան զդամ, երթալով կամ հետզհետէ, աւելի. — կարգ ըստ կարգի, կարգ կարգ. —*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 239. Օրինակ տուր մակբայական կրկնուած բառերու և ածականներու։

ճեպ ի ճեպոյ կամ ճեպ զճեպի, անդադարանքով կամ վազն ի վազ, և այլն։

### Ածականներ՝ մակբայի տեղ

*Արդար* խօսել, այսինքն արդարապէս. — *համկիրճ* ասել, համառօտ կերպով. — *մեծաձայն* կարդալ, բարձր ձայնով. — *մազապուր* զերծանել, հազիւ. — *գեղեցիկ* իմն պատմել, աղուոր. — *մտադիր* իմն անսալ, յօժար կամքով. — *մեծաբանս* բարբառել, մեծ մեծ խօսքերով. — *քաջասիրտս* տարածանել, արի սրտով. — *մեծամեծս* կոտորել, մեծ մեծ ջարդել. — *ճշմարտագոյնս* գիտել, աւելի ստուգութեամբ. — *գոչաւորագոյնս* աղդել, աւելի ճնշուն կերպով. — *հզօրագոյնք* կռուել, աւելի սաստկութեամբ, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Ա.

### Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շեղագիր մակբայներուն տեսակները*
*և քերականօրէն լուծել խօսքերուն միւս մասերը։*

Ա. — Մինչդեռ գնային նոքա և վիճէին՝ երևեցաւ նոցա Յիսուս։ Այժմ իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է։ Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ։ Յիսուս յետ յարութեանն երևեցաւ աշակերտաց իւրոց, փչեաց ի նոսա Հոգի սուրբ և ասաց լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի։ Էր երբեմն զի ոչ էին արեգակն և լուսին և աստեղք։ Այն ինչ ելեալ ձկան ի ջրոյ՝ մեռանի։ Ասէ Յիսուս ցայրն որոյ ձեռն գօսացեալ (չորցած՝ ընդարմացած) էր. Ձգեա՛ (երկնցնել) զձեռն քո. և նա ձգեաց, և առժամայն ողջացաւ ձեռն նորա։ Անդէն և անդ անկաւ զնովաւ ախտ դժնդակ, և փախեան ի նմանէ ամենայն ձեռնասուն ծառայք նորա։ Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա։ Եհարց Պետրոս ցԱփփիրա.



Ասա ինձ, ա՞յնչափ գնոց զգեօղն վաճառեցէք, և նա ասէ. Այո՛, այնչափ։ Բարեկամ, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց։

Բ. — Որչափ ոք սիրէ զԱստուած՝ նոյնչափ առաւելու սէր նորա։ Արդարև մի յերկոտասան Առաքելոց էր Յուդա՝ որ մատնեացն զՔրիստոս, այլ ո՞չ ապաքէն փոխանակ նորա ընտրեցաւ Մատաթիաս ի Հոգւոյն սրբոյ։ Յարեաւ Փիլիպպոս ի կառս նորա, և լուեալ զի ընթեռնոյր նա զԵսայի մարգարէ, եհարց և ասէ. Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուդ։ Յորժամ արկան թշնամիք Դանիէլի ի գուբ անդր, անդէն գէշ գէշ (կտոր կտոր) պատառեցան յառիւծուց։ Ո՜հ յիմաստասիրաց այսպէս ասէր առ բռնաւոր ոք. Դու զիս դատապարտես ի մահ, սակայն ոչ գիտես թէ վաղուց (շատոնց) դատապարտ արարեալ է զքեզ բնութիւն։ Բազում ազգք տնկոց աճեն յԱմերիկա, որոց նմանիք չերևեցան ցարդ ուրեք յԱսիա և յԵւրոպէ։ Յո՞ր կողմն երթիցես երկրի, գտցես և ոչ ուրեք մարդ զերծ իսպառ յագահութենէ և ի փառամոլութենէ։ Որ ամենեցուն կամիցի ընդ միտ մտանել (հաճելի ըլլալ), հաճոյասցի նա և ոչ ումեք։

### Բ

### Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Մարդս այսօր կը ծնանի և վաղը կը մեռնի։ Ժամերն ու օրերը երբեմն ուրախութիւն և երբեմն տրտմութիւն կը բերեն։ Միշտ մահդ մտածէ, և պիտի չմեղանչես։ Հիմա պիտի փառաւորուի որդի մարդոյ։ Նախ խոտը, ետքը հասկը, և յետոյ ցորենը լեցուն հասկին մէջ։ Հազիւ թէ լսեց Բելայ գալուստը, մէկէն Հայկայ քով (դարձուր դէպ ի Հայկ) փախաւ։ Հիմա կը տեսնէ համարձակ անիկա՝ որ առենօք կոյր էր։ Աստուած գիտէ գաղտնապէս մխիթարել զմեզ մեր վիշտերուն մէջ։ Գիշեր ատեն նաւահանգստին մէջ կրակ ձգեցին։ Ի՞նչ բանի համար կ'աշխատցընես (աշխատ առնել) զմեզ։ Իրաւցընէ Տէրն յարութիւն առաւ և Սիմոնին երևցաւ։ Անշուշտ պիտի ըսէք ինծի այս առակը. Բժիշկ, քու անձդ բժշկէ։ Ես ընաւ

բան մը սորված չեմ։ Թագաւորն աթոռէն ելաւ ու քուրձ հագաւ. Նոյնը պատուիրեց բոլոր ժողովուրդին ըսելով. Կարելի է թէ ողորմի մեզի Աստուած և չկորսուինք։ Լեռը փախիր (զերծանիր), չըլլայ թէ անոնց հետ բռնուիս։

Բ. — Անոնցմէ ամէն մէկը զատ զատ երեք արկղերու մէջ դրաւ (զետեղեմ)։ Այդ (բանը) շիտակ ըսիր, ես առաջուց լսած էի՝ թէ ինչպիսի մեկն է այն մարդը։ Շուտով ելէք փախէք այս երկրէս, վասն զի Աստուած այս քաղաքներն իրենց բնակիչներով մէկտեղ պիտի կործանէ։ Յիսուս զՆաթանայէլ տեսնելով ըսաւ. Ահա իրաւցընէ Իսրայէլացի մարդ մը՝ որուն մէջ նենգութիւն չկայ։ Պարտքն առաւօտանց կանուխ (վաղ քան ընդ առաւօտն) հացագործէն առաջ տուն կը մտնէ։ Եթէ մէկն ուրիշներուն կարգ կանոն դնէ (սահմանեմ) (իր) անձին վրայօք անփոյթ ըլլալով, դրսուանց (արտաքոյ) ազատ ու ներսէն (ի ներքոյ) գերի է։ Անառակ որդւոյն հայրը երէց որդւոյն կ'ըսէր. Տղաս, դու միշտ հետս ես, և ամէն ունեցածս քուկդ է. բայց պէտք է ուրախանալ (խնդալ), զի այս եղբայրդ մեռած էր և ողջացաւ (կեամ), կորսուած էր ու գտնուեցաւ։ Հռովմայեցւոց քով հայրասպաններն ամենէն աւելի վնասակար անասուններու հետ քրձի մէջ փակուած (արգելափակ) ողջ ողջ (կենդանւոյն) Տիբերիս գետը կը ձգուէին։ Պատմիչներէն ոմանք կը կասկածին Աղեքսանդրի վրայօք՝ թէ իր հօրը Փիլիպպոսի սպանման դաւակից եղած ըլլայ, բայց մէկը չի հաստատեր այդ (բանը)։

Լեցուն — Ատոք | Մէկէն — Իսկ և իսկ.

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Համան

(Շարայարութիւն)

Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն, և ասէ ցդպրապետն իւր՝ բերել առաջի իւր զգիր հրովարտակին և կարդալ։ Եւ եգիտ նա զհրովարտակն՝ զոր գրեալ



էր վասն Մուրթքէի, եթէ որպէս պատմեաց վասն երկոցունց ներքինեացն նորա, յորժամ պահէին զապարանսն թագաւորին և կամէին սպանանել զարքայ Արտաշէս։ Ասէ թագաւորն. Եւ զի՞նչ շնորհս և կամ փառս տուաք Մուրթքէի։ Եւ ասեն սպասաւորքն արքայի. Չարարեր և ոչ ինչ նմա՝ յորժամ հասեր ի վերայ խնամոյ հաւատարմութեան նորա առ քեզ։ Եւ ընդ առաւօտն եկին ի գաւիթ թագաւորին. և ասէ արքայ. Ո՞վ է ի գաւիթս։ Եւ Համան եկն եմուտ՝ հրաման առնուլ ի թագաւորէն, զի կախեսցէ զՄուրթքէ զփայտէն զոր պատրաստեաց։ Եւ ասեն սպասաւորքն արքայի. Ահաւասիկ Համան արտաքոյ է։ Ասէ արքայ. Կոչեսցի ի ներքս։ Ասէ թագաւորն ցՀաման. Զի՞նչ արարից ես առնն՝ զոր ես կամիմ փառաւորել։ Խորհեցաւ Համան և ասէ ի միտս իւր. Զո՞վ կամի արքայ փառաւորել, եթէ ոչ՝ զիս։

### Բառագիտութիւն

Յորժամ պահէին զապարանսն թագաւորին — Երբոր թագաւորին պալատին պահպանութիւն կ'ընէին | Զի՞նչ շնորհս և կամ փառս տուաք — Ի՞նչ շնորհք կամ պատիւ տուինք
Ի վերայ հասեր — Տեղեկացար
Կոչեսցի ի ներքս — Ներս թող կանչուի։

բան մը սորված չեմ։ Թագաւորն աթոռէն ելաւ ու քուրձ հագաւ. Նոյնը պատուիրեց բոլոր ժողովուրդին ըսելով. Կարելի է թէ ողորմի մեզի Աստուած և չկորսուինք։ Լեռը փախիր (զերծանիմ), չըլլայ թէ անոնց հետ բռնուիս։

Բ. — Անոնցմէ ամէն մէկը զատ զատ երեք արկղերու մէջ դրաւ (զետեղեմ)։ Այդ (բանը) չիտակ ըսիր, ես առաջուց լսած էի՝ թէ ինչպիսի մեկն է այն մարդը։ Շուտով ելէք փախէք այս երկրէս, վասն զի Աստուած այս քաղաքներն իրենց բնակիչներով մէկտեղ պիտի կորսնցընէ։ Յիսուս զՆաթանայէլ տեսնելով ըսաւ. Ահա իրաւցընէ իսրայէլացի մարդ մը՝ որուն մէջ նենգութիւն չկայ։ Պարտքն առաւօտանց կանուխ (վաղ քաջ ընդ առաւօտն) հացագործէն առաջ տուն կը մտնէ։ Եթէ մէկն ուրիշներուն կարգ կանոն դնէ (սահմանեմ) (իր) անձին վրայօք անփոյթ ըլլալով, դրսուանց (արտաքոյ) ազատ ու ներսէն (ի ներքոյ) գերի է։ Անառակ որդւոյն հայրը երէց որդւոյն կ'ըսէր. Տղաս, դու միշտ հետս ես, և ամէն ունեցածս քուկդ է. բայց պէտք է ուրախանալ (խնդալ), զի այս եղբայրդ մեռած էր և ողջացաւ (կեամ), կորսուած էր ու գտնուեցաւ։ Հռովմայեցւոց քով հայրասպաններն ամենէն աւելի վնասակար անասուններու հետ քրձի մէջ փակուած (արգելափակ) ողջ ողջ (կենդանւոյն) Տիբերիս գետը կը ձգուէին։ Պատմիչներէն ոմանք կը կասկածին Աղեքսանդրի վրայօք՝ թէ իր հօրը Փիլիպպոսի սպանման դաւակից եղած ըլլայ, բայց մէկը չի հաստատեր այդ (բանը)։

| | |
|---|---|
| Լեցուն – Ատոք | Մէկէն – Իսկ և իսկ. |

Գ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Համան

(Շարայարութիւն)

Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն, և ասէ ցդպրապետն իւր՝ բերել առաջի իւր զգիր հրովարտակին և կարդալ։ Եւ եգիտ նա զհրովարտակն՝ զոր գրեալ



էր վասն Մուրթքէի, եթէ որպէս պատմեաց վասն երկոցունց ներքինեացն նորա, յորժամ պահէին զապարանսն Թագաւորին և կամէին սպանանել զարքայ Արտաշէս։ Ասէ Թագաւորն. Եւ զի՞նչ շնորհս և կամ փառս տուաք Մուրթքէի։ Եւ ասեն սպասաւորքն արքայի. Զարարեր և ոչ ինչ նմա՝ յորժամ հասեր ի վերայ խնամոյ հաւատարմութեան նորա առ քեզ։ Եւ ընդ առաւօտն եկին ի գաւիթ Թագաւորին. և ասէ արքայ. Ո՞վ է ի գաւիթս։ Եւ Համան եկն եմուտ՝ հրաման առնուլ ի Թագաւորէն, զի կախեսցէ զՄուրթքէ զփայտէն զոր պատրաստեաց։ Եւ ասեն սպասաւորքն արքայի. Ահաւասիկ Համան արտաքոյ է։ Ասէ արքայ. Կոչեսցի ի ներքս։ Ասէ Թագաւորն ցՀաման. Զի՞նչ արարից ես առնն՝ զոր ես կամիմ փառաւորել։ Խորհեցաւ Համան և ասէ ի միտս իւր. Զո՞վ կամի արքայ փառաւորել, եթէ ոչ՝ զիս։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Յորժամ պահէին զապարանսն Թագաւորին – Երբոր Թագաւորին պալատին պահպանութիւն կ'ընէին | Զի՞նչ շնորհս և կամ փառս տուաք – Ի՞նչ շնորհք կամ պատիւ տուինք<br>Ի վերայ հասեր – Տեղեկացար |

Կոչեսցի ի ներքս – Ներս թող կանչուի.

# ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

## ՇԱՂԿԱՊ ԵՒ ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

---

### ՅԻՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Շաղկապ, Ձայնարկութիւն եւ անոնց տեսակները

240. *Շաղկապ կ'ըսուին այն անփոփոխ բառերը՝ որ բառ բառի և խօսք խօսքի հետ կապելու համար կը գործածուին։ Օրինակ.* **Եւ, Կամ, Արդ, Եթէ, Իսկ, Բայց, Սակայն,** *և այլն։*

*Երկու խումբի կը բաժնուին անոնք. պարզ՝ երբ մէկ բառ են, ինչպէս վերինները, և ածանցեալ՝ երբ երկու կամ աւելի բառերէ կը ձեւանան։ Այսպէս.*

**Թէպէտ և, Քանզի, Վասն զի, Մինչ զի, Բայց եթէ, Բայց միայն, Թող թէ, Ապա թէ ոչ, Ապա ուրեմն, Իսկ արդ,** *և այլն։*

**Ծանօթ.** — Եւ շաղկապը խօսքի մէջ երբ բայէն ետքը դրուի՝ ալ, նաև, եւս ըսել է. իսկ վրան շեշտով բառերու հետ կրկնուելու պարագային՝ աս ալ, ան ալ կամ թէ այս՝ թէ այն կը նշանակէ։ Օրինակ. Իբրև անարգի միոջ՝ երևեցաւ և ինձ, ինծի ալ երևցաւ. — Զայդ ասելով՝ թշնամանես և զմեզ, մեզ ալ կը նախատես. — Ծառայք հնազանդել պարտին

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 240. Ի՞նչ տեսակ բառեր Շաղկապ կ'ըսուին և պարզ ու ածանցեալ կոչուածները որո՞նք են։



տերանց, և՛ բարեբարոյից և՛ խստասրտաց, աղէկ վարուողներուն ալ՝ խստասիրտներուն ալ (թէ աղէկ թէ գէշ վարուողներուն), և այլն։

241. *Ձայնարկութիւն կամ Միջարկութիւն կը կոչուին այն բառերը կամ ձայները՝ որ կիրք կամ զգացում կը յայտնեն, ինչպէս՝ բաղձանք, զարմանք, ցաւ, ուրախութիւն, հեգնութիւն։ Օրինակ.*

*Բաղձանք.* — **Իցի՜ւ, Իցէ՜ թէ, Ցանկա՜մ, Ո՜հ, Ո՜հ թէ.** *կը նշանակեն՝ ո՜ւր էր թէ։* — *Զարմանք.* — **Ո՜, Ո՜վ, Բա՛հ, Վա՜շ.** *(աշխ. պա՛, ըհը՛, հա՛յ)։* — *Ցաւ.* — **Ո՛հ, Ո՛, Է՛հ, Վա՛յ, Աւա՛ղ, Եղո՛ւկ.** *կը նշանակեն՝ ա՛հ ա՛խ, ափսո՛ս (աշխ. եազը՛ք)։* — *Ուրախութիւն.* — **Վա՛շ, Վա՛շ վա՛շ, Ո՛հ ո՛հ.** *(աշխ. հէ՛յ, խօշա խօշա)։* — *Հեգնութիւն.* — **Վա՛հ, Ա՛յ, Է՛,** *(աշխ. իշհ, փիշհ, Եուշհա)։* — *Խրախուսանք.* — **Ա՛յ, Ո՛վ, Ի՛շտ, Հո՛ւշտ, Տի՛ր, Տի՛.** *(աշխ. հօշա, պրէ).* — *Քաջալեր.* — **Աղէ՛, Հա՛պա, Օ՛ն, Հա՛,** *(աշխ. տէ՛, հայտէ), և այլն։*

### ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

#### Ա.

Գրաբարէ աշխարհաբար

*Նշանակել շաղկապներուն ու ձայնարկութեանց տեսակները, և խօսքերն ամբողջութեամբ լուծել քերականօրէն։*

Ա. — Բորոտն եկեալ պագանէր Յիսուսի և ասէր. Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել։ Պաւղոս ոչ պարծէր՝

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 241. Ո՞ր բառերը Ձայնարկութիւն կ'ըսուին, թուէ զանազան տեսակներն օրինակներով։

բայց եթէ ի տկարութիւն իւր. ապա մեք յի՞նչ յուսացեալ եմք։ Արդ թագաւորք զայս ի միտ առէք, խրատեցարուք ամենեքեան որք դատիք զերկիր։ Պետրոս մեծամեծս խոստանայր Յիսուսի ասելով. Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց։ Գաւազանա՞ւ եկից առ ձեզ, եթէ սիրով Հոգւոյն հեզութեան և խաղաղութեան։ Ադամ յետ պատուիրանազանցութեանն անբասիր առնէր (արդարացընել) զանձն առաջի Տեառն ասելով. Լուայ զձայն քո և երկեայ, և զի մերկ էի՝ թաքեայ։ Պիղատոս երկնչէր դատապարտել զՔրիստոս, քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն և իշխանք Հրէից։ Պարտ է մեզ հսկել և պատրաստ գտանել ի մահ՝ ըստ պատուիրելոյ Տեառն, զի մի՛ գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զմեզ ի քուն։ Նինուէ, Բաբելոն, Իլիոն, բա՛րէ որպիսի՛ քաղաքք և որպիսի՛ անուանք, որքանի՛ բարձրութիւն և որպիսի՛ անկումն։

Բ. — Դանիէլ ի յանդիմանել իւրում զչարածերսն՝ ասէր միում միում ի նոցանէ. Ա՜յ հնացեալ աւուրբք չարութեան։ Ո՜ տայր ինձ տեսանել զքեզ, Երուսաղէմ, քաղաքդ Աստուծոյ։ Որդեակք, ո՜րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ. դիւրին է մալխոյ (հաստ չուան) ընդ ծակ ասղան անցանել՝ քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։ Աղէ՛ քանի՞ ինչ են հերք գլխոյդ և թիւ աստեղաց երկնից ո՞րչափ իցէ, տուր ինձ պատասխանի թէ գիտիցես։ Վա՜յ անձանց նոցա զի թողուն լքանեն զօրէնս Տեառն։ Վա՜յ անօրինին, չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա (պիտի հանդիպին իրեն, գլխուն պիտի գան)։ Հա՛պա, առաքինիք, եհաս ժամ զի խորտակեսցուք զզօրութիւնս աներևոյթ թշնամւոյն զինուք հաւատոյ։ Յիսուս ելաց ի վերայ Երուսաղեմի և ասէ. Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո, բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց. զի եկեսցեն աւուրք ի վերայ քո և պատեսցեն զքև թշնամիք քո պատնէշ, և պաշարեսցեն զքեզ և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց, փոխանակ զի ոչ ծաներ զժամանակ այցելութեան քո։



## Բ

## Աշխարհաբարէ գրաբար

Ա. — Իսկ Յովհաննէս երբոր լսեց Յիսուսի գործերը, (լուր) ղրկեց անոր իր՝ աշակերտներուն ձեռքով և ըսաւ. Դո՞ւ ես որ պիտի գաս, թէ ուրիշի սպասենք։ Որովհետև չարերուն վերջը կորուստ պիտի ըլլայ; մի՛ նմանիք անոնց։ Ուստի ամէն ազգեր Աբրահամէն մինչև Դաւիթ տասն ու չորս ազգեր (են)։ Զքեզ պիտի բազմացընեմ, միայն թէ դու իմ ուխտս պիտի պահես։ Բայց (անիկա) որ փուշերուն մէջ ցանուեցաւ (սերմանիմ) պտուղ չտուաւ։ Վասն զի զձեզ տրտմեցուցած ալ ըլլամ այն թղթով՝ չեմ զղջար։ Աղեքսանդրէ, ո՞ւր էր թէ դու ալ իմ որդիս ըլլայիր, որպէս զի քեզմով ազգերու իշխէի։ Դամոն ոտքով կաղ էր, երբ կօշիկները գողցուեցան՝ ըսաւ. Ո՜ւր էր թէ գողցողին յարմարէին։ Ո՜վ կին, քու հաւատքդ մեծ է։ Ա՜յ համբոյր խորամանկութեան և մահուան առիթ։ Ո՜հ, ինչպիսի՜ բարութեամբ լեցուն է այս ողջոյնը։ Վա՜յ անոնց՝ որոնք չիտակ ճամբան թողուցեր են։ Է՜, դու որ տաճարը կը քակէիր և երեք օրուան մէջ կը շինէիր, ազատէ՛ զքեզ։ Ո՜րչափ աղէկ է ինծի այս, որովհետև տաքցայ (ջեռնում)։

Բ. — Հա՛պա, ելէք երթանք ասկէ։ Բայց հիմա Աստուծոյ հարցուր, որպէս զի իրեն կամքը գիտնանք։ Երբ Հերովդէս Յիսուսին գործերը լսեց՝ զարմանալով կ՚ըսէր. Յովհաննէսը ես գլխատեցի, իսկ ասիկա ո՞վ ըլլալու է՝ որուն վրայօք այսպիսի բաներ կը լսեմ։ Ճշմարտութիւնը մեզի հետ ծնած է, ուստի՝ առանց մեր բնութեան վրայ բռնութիւն ընելու՝ չենք կրնար զինքը թողուլ և ստութեան ետևէն երթալ։ Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը ջարդէիր (կոտորեմ) և քեզի ղրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ ուզեցի ժողվել քու տղաքդ՝ ինչպէս հաւն իր ձագերը թեւերուն տակ կը ժողվէ։ Պետրոս դուրսը գաւիթին մէջ կը նստէր, աղախին մը մօտեցաւ իրեն և ըսաւ. Դուն ալ գալիլիացի Յիսուսին հետ էիր. բայց նա ամենուն առջև ուրացաւ՝ ըսելով թէ չեմ գիտեր ի՞նչ կը

խօսխ։ Մարդս բաւականապէս պիտի չըմբռնէ երբեք թէ Աստուած ինչպիսի բարիքներով լեցուցեր է զինք և ինչպիսի գթով իր ամէն պէտքերը հոգացեր է։

### Գ

### ԾԱՂԿԱՔԱՂ

### Համան

(Շարայարութիւն)

Եւ ասէ ցարքայ. Բերցեն զպատմուճանն զարքունի և զերիվարն՝ յորում արքայ հեծանէր, և զգեցուսցեն զպատմուճանն առնն այնմիկ զոր արքայն սիրէ, և հեծուսցեն զնա յերիվարն արքունի, և քարոզ կարդասցի ընդ հրապարակս քաղաքիս և ասասցէ. Այսպէս եղիցի ամենայն առն՝ զոր արքայ փառաւորէ։ Եւ ասէ արքայ ցՀաման. Բարւոք խօսեցար, զայդ արասցես Մուրթքէի։ Եւ առ Համան զպատմուճանն և զերիվարն արքունի, և զգեցոյց զՄուրթքէ, և հեծոյց զնա յերիվարն. և անց նա ընդ փողոցս քաղաքին, և քարոզն աղաղակէր և ասէր. Այսպէս լիցի ամենայն մարդոյ՝ զոր արքայ կամի փառաւորել։ Եւ դարձաւ Մուրթքէ յապարանս արքունի, և Համան գնաց ի տուն իւր գլխարկեալ լի տրտմութեամբ։ Եւ ասէ մի ի ներքինեաց անտի ցարքայ. Ահա Համան և փայտ մի կազմեաց Մուրթքէի սիրելւոյ արքայի, և ասէ թագաւորն. Խաչեսցի ի վերայ նորա։ Եւ կախեցին զՀաման զփայտէն՝ զոր պատրաստեաց Մուրթքէի։

#### Բառագիտութիւն

Զպատմուճանն զարքունի — Թագաւորական զգեստը | Քարոզ կարդասցի — Թող հրատարակուի

Գնաց ի տուն իւր գլխարկեալ — Գլուխը կախ՝ իր տունը գնաց։

---

## ԵՐՐԵԱԿ

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՐԵՐՔ

## ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ

Հայ Պատանի,

Մ ի Ն Չ Ե Ի հոս քիչ շատ զբաղեցանք մեր Նախահայրերուն լեզուով, ու բաւական աշխատեցանք, ես՝ աւանդելով եւ դուն՝ սորվելով։

Հիմա կը մտնենք վերջին բաժնի մը մէջ, որ իրօք առաջին կրնայ ըսուիլ թէ կարգի եւ թէ կարեւորութեան տեսակէտով։ Այս «Լրացուցիչ Տարերք»ը ո՛րքան համառօտ տեսականօրէն, նո՛յնքան դժուարին ու երկար կըրթութեանց կարօտ են գործնականին մէջ, վասն զի լեզուին տիրանալէ ետքն է որ պիտի ստացուին ատոնք, եւ դասատետրիս վերջը դրուելնուն պատճառն այդ եղած է արդէն։ Եթէ համբերութեամբ ու ջանքով իւրացուցիր նախորդ դասերուն մէջ աւանդուածները, անկասկած եմ որ աւելի գիտակցաբար պիտի սերտես ուղղագրական ու բառագիտական այս թելադրութիւններս, եւ հրահանգի տեղ ներկայացուած գրաբար ու աշխարհաբար հատուածները պիտի թարգմանես՝ առանց դժուարութեան։ Այսով հասած պիտի ըլլամ միակ նպատակիս, որ էր՝ *ծանօթացնել հին հայերէնը իր պարզութեան մէջ։*

---

Ա.

# ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

Նմանաձայն տառերու գործածութիւն

242. *Լեզուի մը բառերն ուղիղ կամ անսխալ գրելն Ուղղագրութիւն կ՚ըսուի։*

*Ուղիղ կամ անսխալ գրելու համար երկու բան պէտք է* — 1°. *Բառերն իրենց յատուկ գրերովը գրել.* — 2°. *Ըստ իմաստին իրարմէ զատել։*

243. *Բառերն իրենց յատուկ գրերով գրելու համար՝ պէտք է իրարմէ զանազանել սա նմանահնչիւն տառերը.*

*Ձայնաւորներու մէջ՝ ե — է, ո — օ*

*Բաղաձայններու մէջ՝ բ — փ, գ — ք, դ — թ, ձ — ց, չ — ջ, հ — յ, ռ — ր, վ — ւ։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 242. Ի՞նչ է *Ուղղագրութիւնը և խօսք մը ուղիղ կամ անսխալ գրելու համար քանի՞ բան պէտք է.* — 243. *Բառերն իրենց յատուկ տառերով գրելու համար ի՞նչ բաներ իրարմէ պէտք է զանազանել, և նմանահնչիւն տառերուն գլխաւորները որո՞նք են։*

Բայց կան նաև ասոնց գործածութիւնը դիւրացնող գիտելիքներ թէ՛ գրաբարի թէ՛ աշխարհաբարի համար։

244. Սկզբնատառ ե և է իրենց հնչումով կը տարբերին արդէն։ Բառերու մէջ միշտ ե կը գործածուի։ վերջին վանկի նէն կամ ուրիշ բաղաձայն գրէ մը առաջ՝ ընդհանրապէս է կը գրուի։ Իսկ վերջաւորութիւնները միշտ եով կ'ըլլան, և գիրը բնաւ բառի մը վերջը չի գրուիր։ Օրինակ.

Բառերու սկիզբը. — Երբ, երագ, եղանակ, եբրայեցի, երանութիւն — էջ, էր, էակ, էութիւն, էակից։

Բառերու մէջ ու վերջը. — Աներկմիտ, գերեզման, խեչերանք, հետեւեալ. — ամէն, ապաւէն, յունարէն, ապօրէն, Աբէլ, Գնէլ, Դանիէլ, Յովսէփ, Ասանէթ, Եղիսաբէթ — բաղէ, մարգարէ, փորձանքներէ, կը բուէ, թող լսէ, և այլն։

Ծանօթ. — Բացառաբար եով կը գրուին գեհեն, ատեն, դեն բառերը, և Բ. Լծորդութեան բայերուն յոգն. Գ. դէմքերն ու Անորոշ դերբայները. գիտեն, կատարեցեն, տեսանիցեն, կ'իմացնեն, պիտի գործեն — կատարել, գործել, իմացնել, և այլն։ — Այս հնչումով վերջաւորութիւններ թէև ուրիշ բաղաձայն գրերու հետ ալ ընդհանրապէս էով կը գրուին ըսինք, բայց կան նաև բազմաթիւ եով գրուածներ՝ զորոնք կարդալով ու վարժութեամբ պէտք է սորվիլ։

245. Ո և օ գիրերու մասին պէտք է գիտնալ որ աւելի կը գործածուի ո քան թէ օ։ Արդէն շատ բառերու սկիզբը ո գրին հնչումն օէն կը տարբերի։ Օրինակ. ո՛, որ, որպէս, որքան, որդի, ոչ։ — Բառերու վերջը օ բնաւ տեղի չունի մեր լեզուին

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 244. Ի՞նչ գիտելիք կայ ե և է ձայնաւոր գիրերուն վրայ։ — 245. Ո և Օ ի՞նչպէս կը գործածուին։



մէջ. այս ձայնով վերջաւորութիւններ ու գրաբար ձևեր ոյ պէտք է գրել։ Օրինակ. Արգոյ, համագոյ, արքոյ, մարդոյ, երկնայնոյ, սիրելոյ, և այլն։ — Ուրիշ պարագաներու մէջ, երբ ո և օ յայտնի չեն զանազանուիր, ո գործածելու է՝ քիչ սխալելու համար։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Գրաբարէ աշխարհաբար

### Գլխատումն Յովհաննու Մկրտչի

*Հետեւեալ հատուածներուն մէջ նշանակել շեղագիր բառերուն նմանահնչիւն տառերը և ե — է, ո — օ ձայնաւորներուն ուղղագրական պատճառները։*

Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա և եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա. քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո։ Եւ Հերովդիայ ոխացեալ էր ընդ նմա, և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր. զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէ, քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ, և լուեալ ի նմանէ բազում ինչ՝ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա։ Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս՝ յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց մեծամեծաց գալիլեացւոց, և ի մտանել դստերն Հերովդիայ և ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և բազմականացն։ Ասէ թագաւորն ցաղջիկն. Խնդրեա յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ։ Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խնդրեսցես դու յինէն, տաց քեզ՝ մինչև ցկէս թագաւորութեան իմոյ։ Նա ելեալ ասէ ցմայր իւր. Զի՞նչ խնդրեցից։ Եւ նա ասէ.

Զգլուխն Յովհաննու Մկրտչի։ Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ. Կամիմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի։ Տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա, և առաքեաց վաղվաղակի դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա։

| | |
|---|---|
| Կաքաւել – Պարել, խաղալ | Անդրէն փութանակի – Նորէն շուտ մը |
| Օր պարապոյ – Գործէ դադրելու օր | |

Սկուտեղ – Պնակ (տճկ. թէփսի)։

## Աշխարհաբարէ գրաբար

### Գայլն ու Գառնուկը

Ոչխարները իրենց փարախին մէջ ապահովութեամբ պառկած էին. շուները կը քնանային, և հովիւը բարձրաբերձ կնձնիի մը հովանիին տակ նստած՝ մերձակայ հովիւներուն հետ սրինգ կը զարնէր։ Սովալլուկ գայլ մը եկաւ ցանկապատին պատառուածքէն հօտին վիճակը դիտելու։ Անփորձ գառնուկ մը, որ բան մը տեսած չէր բնաւ, սկսաւ անոր հետ խօսիլ։ Ի՞նչ կը փնտռես հոս, հարցուց շատակերին։ Փափուկ և նոր ծլած խոտ, պատասխանեց գայլը։ Յիրաւի չկայ այնպէս քաղցր բան՝ ինչպէս կանաչազարդ և ծաղկաւէտ մարգագետնի մէջ խոտ ճարակել, և երթալ ականակիտ վտակէ մը ծարաւն անցընել. ես հոս երկուքն ալ գտայ, ալ ի՞նչ բանի կը կարօտիմ. կը սիրեմ փիլիսոփայութիւնը որ քիչով գոհ ըլլալ կը սորվեցընէ։ Ուրեմն ստո՞յգ է, աւելցուց գառնուկը, որ դու կենդանիներու միս չես ուտեր, և քիչ մը խոտ բաւական է քեզի. թէ որ այդպէս է իրաւցընէ, եկուր եղբայրաբար ապրինք ու արածինք մէկտեղ։ Այս խօսքը հազիւ լմնցուց գառնուկը, փարախէն դուրս ելաւ ու իջաւ մարգագետինը, ուր մեր ժուժկալ իմաստասէրը կտոր կտոր պատռեց զանիկա ու կերաւ։



Զգուշացէք չխաբուիլ խօսքերէն այն մարդոց՝ որոնք առաքինութիւնը կը կեղծեն (կերպարանիմ զ..). իրենց գործերէն դատեցէք այնպիսիները և ոչ խօսքերէն։

| | |
|---|---|
| Գառնուկ – Գառն | Ապահովութեամբ – Յապահովի |
| Պառկած – Մակաղեալ | Փնտռել – Խնդրել |
| Շատակեր – Որկորաժէտ | Նոր ծլած – Նորածիլ, դեռափթիթ |
| Գոհ ըլլալ – Շատանալ | Այս խօսքը հազիւ լմնցուց – Այն ինչ ասացեալ զայս։ |
| Կտոր կտոր – Յօշ յօշ | |

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Նախընծայ արտասուք Յիսուսի մանկան

Արտասուէ Յիսուս
  Մայրենին ի ծոց,
  Մըթագնի զըւարթ
  Երեսաց իւրոց
  Արփիագեղ լոյս։
Ցոլացեալ յերկնէ
  Սերաբիին հրեշտակ,
  Զարտասուաց նորա
  Ցօղեղէն բաժակ
  Ըզչիթս ամփոփէ։

Եւ վերասլացեալ
  Նըւիրէ Հօր զայն,
  Արդ սովաւ, ասէ,
  Լիցի քաւութեան
  Մահացուաց յուսալ։
Իսկ Հայրն երկնաբնակ՝
  Բաւէր արդեօք զա,
  Այլ որդեակն իմ ինձ
  Զարիւն իւր ցանկայ
  Զօնել փըրկանակ։

#### Բառացիտութիւն

| | |
|---|---|
| Մըթագնի – Կը մթըննայ | Արփիագեղ – Արեւու գեղեցկութիւն ունեցող |
| Ցոլացեալ – Ցայտելով | Երկնաբնակ – Երկինքը բնակող |
| Սերաբիին – Սերովբէական | Զօնել – Նուիրել, ընծայել |
| Չիթ – Կաթիլ | Փրկանակ – Փրկանք, գին։ |

## ՈՒՍՄԱՆԵԼԻ ԴԱՍ

### Ցարունակութիւն նախորդին

246. *Նմանահնչիւն բաղաձայններէն կան, որ երեք աստիճան ունին և կը տարբերին այսպէս.*

*Նուրբ.* — *պ, կ, տ, ծ, ճ*
*Միջակ.* — *բ, գ, դ, ձ, ջ*
*Թաւ.* — *փ, ք, թ, ց, չ:*

*Այսոնց միջակներն ու թաւերը, ինչպէս նաև զ—ս, հ—յ, ռ—ր, վ—ւ տառերն, անշփոթ ներկայացնելու համար՝ պէտք է կանխաւ քիչ շատ տեղեակ ըլլալ մեր լեզուին կազմական օրէնքներուն ու գործադրել յետագայ գիտելիքները:*

247. *Զ և ս գիրերը վերի բաղաձայններէ մէկուն քով գրուելու պարագային, զ-ին միշտ կը յաջորդեն միջակները և ս-ին՝ նուրբերն ու թաւերը: Օրինակ. Զգալի, զգուշաւոր, զբաղանք, զբօսանք, — սքանչելի, սփոփիչ, ստէպ, ստոյգ — ազգ, հասկ, ազդ, աստ, զգաստ, սկիզբն, և այլն:*

*Ծանօթ.* — Գրեթէ նոյն կանոնին կը հետևին երբեմն նաև ժ և շ, բաղաձայնէ թէ առաջ թէ ետքը: Օրինակ, Աժդահակ, աշտանակ, աշխարհ, դժուար, թշուառ, և այլն: Խ գրին ալ սովորաբար տ կը յաջորդէ և ոչ դ: Օր. Ախտ, ուխտ, բախտ, պանդուխտ:

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 246. *Նմանահնչիւն բաղաձայններէ ոմանք քանի՞ աստիճան ունին, և ի՞նչ ընելու է անսխալ գրելու համար.* — 247. *Ի՞նչպէս կը գործածուին զ և ս գիրերն այս նմանահնչիւն բաղաձայններուն հետ:*



248. *Հ և յ գիրերը բառերու սկիզբը շատ մօտ հնչում ունենալով՝ կրնան շփոթուիլ: Ձայնաւորէ առաջ՝ յ գիրը գրեթէ հ-էն չի տարբերիր, մանաւանդ նմանահնչիւն բառերու մէջ: Օրինակ.*

*Համար՝ յամառ, համր՝ յամր, հարթ՝ յարդ, հարկ՝ յարկ, հառաչ՝ յառաջ, հոյլ՝ յոյլ, հորթ՝ յորդ, հաղնիլ՝ յաղենալ, հասուն՝ յիսուն, հատոր՝ յորդոր, հատու՝ յատուկ, հանդէպ՝ յանդիման, հետևորդ՝ յետագայ, և այլն:*

*Բաղաձայնէ առաջ՝ այս հնչումը հ-ով կը ներկայացուի միշտ, և միայն ղ-էն առաջ յ կը դրուի: Օր. Հզօր, հլու, հնար, հպարտ, հմայիչ, հռչակ, հսկայ, հրդեհ, և այլն. բայց միշտ՝ յղել, յղանալ, յղկել, յղփանալ, և այլն:*

*Այս երկու տառերն անսխալ գրելու համար՝ պէտք է վարժութեամբ սերտել ձայնաւորի կից յ սկզբնատառով սկսող բառերը՝ որ քիչ են արդէն:*

249. *Յ գիրը բառերու մէջ՝ ընդհանրապէս կէս ի-ի պէս կը հնչուի: Օրինակ. Կայուն, բայարմատ, գոյութիւն, մայրավանք, հայթայթել, գոյնզգոյն, կայնիլ, իյնալ, և այլն:*

*Բացառաբար հ-ի հնչում կ'ունենայ միայն այն պարագային՝ երբ ածանցական կամ բարդ բառի մը լրացուցիչ մասին սկզբնատառն է: Օրինակ. Անյատուկ, անյարմար, բարեյաջող, բարձրայօն, անյիշատակ, ամենայարմար, և այլն:*

250. *Այս գիրը ա և ո վերջացող հասարակ*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 248. *Սկզբնատառ հ և յ ի՞նչպէս կը գործածուին ձայնաւորէ ու բաղաձայնէ առաջ.* — 249. *Յ գիրը բառերու մէջ ի՞նչ հնչում ունի.* — 250. *Ի՞նչպէս կը գործածուի այս գիրն ա և ո վերջացող բառերուն ծայրը:*

գոյականներուն և բայերուն ձայնը կը գրուի՝ բայց չի կարդացուիր։ Օրինակ.

Ընծայ, տղայ, քահանայ, — կուգայ, կ'երթայ, պիտի հասնայ, — Աստուծոյ, սիրոյ, մարդոյ, և այլն։

Սակայն ա վերջացող յատուկ գոյականները, դերանունները և բայերու հրամայականները — գրաբար ո վերջացողներն ալ մէջն ըլլալով — ամենևին յ չեն առներ ու կը գրուին՝ ինչպէս որ են։ Օրինակ. Անանիա, Արա, Մարթա, Վիրգինիա, Անգլիա, Ռումանիա, Ամերիկա — սա, դա, նա, սորա, դմա, քո, ասիկա, ատիկա, անիկա — գնա՛, կարդա՛, հաւատա՛, մատո՛, անցո՛, կորո՛, և այլն։

Ծանօթ. — Այս տեսակ անուններ երբ հոլովուին կամ ածանցուին՝ յ գիրը կ'առնեն դարձեալ. Օրինակ. Արա՝ Արայի, Յուդա՝ Յուդայական, Ատանա՝ Ատանայէն։ Նոյնպէս կ'ըլլան նաև եան վերջացող մականունները. Արա՝ Արայեան, Թովմա՝ Թովմայեան, Կեփա՝ Կեփայեան, Եղիա՝ Եղիայեան, Արօ՝ Արօյեան, Մալօ՝ Մալօյեան, Յովսօ՝ Յովսօյեան և այլն։ — Բացառութեամբ յ գիրը միայն այս բառերուն ձայնը կէս իի պէս կը հնչուի. այ, բայ, հայ, նայ, վայ։ — Բայերու հրամայականները միշտ շեշտով կը ներկայացուին, ինչպէս կը տեսնուի վերի օրինակներէն։

251. Ձ - ց և ջ - չ գիրերն ալ ամենամօտ հնչում ունենալով ուղղագրութեան դժուարութիւն կը պատճառեն։ Անոնց անվրէպ կիրառութեան համար՝ պէտք է. — 1°. Գիտնալ որ ց և չ աւելի կը գործածուին քան իրենց նմանաձայն տառերը. — 2°. Որ ց գրով կը ներկայացուին միշտ ածանցներու, գրաբար հոլովներու և բայերու այս հըն-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 251. Ի՞նչ գիտելիք կայ ձ - ց և ջ - չ գիրերուն գործածութեան մասին։



չումով վերջաւորութիւնները։ Օրինակ. Ակնոց, բազմոց, հանոց, պոլսեցի, տեղացի, հարսնացու, փեսայացու, աղքատաց, բանից, գետոց, առիւծուց, տեսից, գիտասցեն, մի՛ սասանեցայց, և այլն. — 3°. Մտադրութեամբ սերտել այս նմանահնչիւն տառերուն միջակներէն կազմուած սակաւաթիւ բառերը։

252. Ձ և ջ տառերէն կազմուած ուսանելի արմատական բառերն ասոնք են.

Ձ սկզբնատառ. — Ձագ, ձախ, ձաղել (ծաղրել), ձայն, ձանձրոյթ, ձառագէմ (շատ տգեղ), ձետ (պոչ), ձեր, ձէթ, ձի, ձիգ (ձգել), ձիւն, ձմեռն, ձող, ձոյլ (ձուլել), ձոր, ձորձ, (զգեստ), ձու, (հաւկիթ), ձուկն, ձրի, ձօն (նուէր)։ — Ձ վերջնատառ. — Բարձ, դարձ, բաղձանք, անձն, առանձին, մերձ, իղձ, գեղձ, կինձ, սոսինձ, որձ, ձորձ, փորձ, խուրձ, օձ։

Ջ սկզբնատառ. — Ջահ, ջամբ, ջայլամն, ջախջախ, ջանք, ջատագով, ջատուկ, ջարդ, ջեռուցիչ, ջեր, ջերմ, ջիլ կամ ջիղ, ջինջ (ջնջել), ջնար, ջոլիր, ջոկատ, ջով, ջորի, ջութակ, ջուր։ — Ջ վերջնատառ. — Աջ, քաջ, գաղջ, արջ, լանջ, տանջանք, մարմաջ (եռք), պահանջ, երինջ (պզտիկ կով), ջինջ, եղջիւր, գոնջ (տճ. քէլ), խոնջ (յոգնած), ունջ (գետին), մրմունջ (մեղմ ձայն), ուրջու (խորթ զաւակ), մունջ, դունջ, կամուրջ, քուրջ։ — Այս կրկնակ միջակներէն դուրս մնացած բոլոր նմանահնչիւնները ցով ու չով կը գրուին։

Ծանօթ. — Ձորձ և ջինջ բառերուն մէջ, ինչպէս կը տեսնուի, ձ և ջ թէ՛ սկզբնատառ են և թէ՛ վերջնատառ։ — Ա-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 252. Որո՞նք են ձ և ջ տառերէն կազմուած ուսանելի արմատական բառերը։

ռանձին մակբայը պէտք չէ շփոթել առանց հոլովառու բառին հետ՝ որ միշտ ցով կը վերջանայ: — Ձախ և ձող բառերը ցով ալ կը գրուին՝ բայց տարբեր նշանակութեամբ. ցախ (աւելին թուփը), ցող (շաղ, ջուրի բարակ կաթիլներ):

253. Հայերէնի մէջ ռ և ր գիրերով սկսող քանի մը բառ միայն ունինք, մնացածը օտար լեզուներէ առնուած, և սովորաբար գործածուածներն ասոնք են. Ռազմ (պատերազմ), ռակայ (խենդ), ռահ (ճամբայ), ռետին (ռոճիի խէժ), ռիշտ (կծծի), ռամիկ, ռոճիկ, ռումբ, ռունգն, ռուս — րաբունի (վարդապետ), րամ (երամ), րենական (աստուածային), րաբին (տրուպ), րոք (աղէկատ), րոպէ (վայրկեան):

254. Ռ և ր գիրերու գործածութեան համար պէտք է գիտնալ որ բառերու մէջ՝ 1°. Ն բաղաձայնէն առաջ միշտ ռ կը գրուի: Օրինակ. Գառնուկ, բեռնակիր, դռնապան, ըմբռնել, կռնակ, մեռնիլ, ձմեռնային, և այլն: — Այս կանոնէս չեն վերաբերիր սակայն բարդ. ածանցեալ ու այլն. յոգնակի բառերը՝ որոնց առաջին մասը րով կը վերջանայ և ն գիրը պատահմամբ կը գրուի անոր քով: Օրինակ. Գարուն՝ գարնան, վերին՝ վերնական, վարին՝ վարնոց, կարենալ՝ կրնալ, բերան՝ բերնուց, կամար՝ կամարներ, պատուէր՝ պատուէրներու, դպիր՝ դըպիրներով, աղբիւրներէ և այլն: 2°. Միւս ամէն բաղաձայն գիրերէ առաջ ր կը գրուի: Օրինակ. Արբունք, երգիչ, արդար, մարզանք, զուարթ, մերժումն, պարծանք, երկիր, արձան, հակիրճ, զար-

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 253. Ռ և ր գիրերով սկսող բառ ո՞րչափ կայ մեր լեզուին մէջ և գործածականները որո՞նք են. — 254. Ռ և ր գիրերը բառերու մէջ ի՞նչպէս կը գործածուին, ցոյց տուր օրինակներով:



մանք, չարչարել, կերպարանք, արջային, հարանիւթ, քարտէս, հարցարան, լուսարփի, արքայական, և այլն: Բացառիկ են միայն՝ ուռկան, հռչակ, խռչակ, կառչիլ, խռպոտ, ուռճանալ (ծլիլ ծաղկիլ), յուռթի (բարեբեր) և քանի մը ածանցական կամ բարդուած բառեր՝ որոնց առաջին մասն արդէն ռով կը վերջանայ: Օրինակ. առ՝ առժամայն, կառ՝ կառք, փառ՝ փառք, կուռ՝ կուռք, կռուփ՝ կռփել, թիռ՝ թռչիլ, ծուռ՝ ծուռբերան, ծռվիլ, և այլն:

Ծանօթ. — Ռով վերջացող այս տեսակ արմատական բառեր կրկնուելով իրենց վրայ բարդուելու պարագային՝ առաջին մասին ռն րե կը փոխուի: Օրինակ. բառ՝ բարբառ, կառ՝ կարկառ, գլռ՝ գրգլռ, թլռ՝ թրթռալ, սառ՝ սարսուռ. սարսռալ: — Բացառիկ են միայն՝ կռկռալ, տռտռալ, վռվռալ, վռվռուն:

255. Գրաբար հոլովուած բառերու մէջ ռ երբ նէն զատուի՝ րէ կը փոխուի: Օրինակ. Դուռն՝ դրան, դրունք, դրանց, — ամառն՝ ամարան, ամարունք, ամարանց, — ձմեռն՝ ձմերան, ձմերունք, ձմերանց, — լեառն՝ լերին, լերինք, լերանց և այլն: Ընդհակառակն՝ երբ րով վերջացող բառի մը ն գիրն հանդիպի, ռէ կը փոխուի: Օրինակ. Այր՝ առն, յառնէ, — տէր՝ տեառն, ի տեառնէ և այլն:

Ծանօթ. — Ն գիրն ալ երբ բէ առջև գայ՝ շատ անգամ մէ կը փոխուի: Օր. Ամբիծ, Անձամբ, Մանկամբ, և այլն:

256. Վ և ւ նմանաձայն գիրերու մասին պէտք է գիտնալ որ 1°. Այս հնչումով բառերը միշտ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 255. Ռ և ր ի՞նչպէս զիրար կը փոխանակեն գրաբարի մէջ. — 256. Ի՞նչպէս կը գործածուին վ և ւ նմանաձայն գիրերը:

վ՚ով կը սկսին, ւ՚ով սկսող բառ գրեթէ չկայ մեր լեզուին մէջ։ 2°. Բառերու մէջն ու վերջը՝ ո ձայնաւորին վ կը յաջորդէ, իսկ ա, ե, ի ձայնաւորներուն՝ միշտ ւ։ Օրինակ. վարդ, վիճակ, վնաս, վսեմ, վտակ, վրէժ. – բովանդակ, ժողովուրդ, հովանի, սովաւ, նովաւ. – ժողով, հոլով, գորով, սիրով, մարդով, ծովով, սովով։ — Աւազ, Նաւակ, աւետիս, համբաւ, տեւական, երեւոյթ, արեւ, մըշտատեւ, դիւական, անիւ, հաշիւ, պատիւ, և այլն։

Ծանօթ. — Սակայն ա, ե, ի ձայնաւորներուն քով պատահաբար կրնայ դրուիլ վ գիրը, երբ ասիկա բառի մը սկզբնատառն ըլլալով հանդերձ՝ ուրիշի մը միացուած է բարդ կազմելու համար։ Օրինակ. Մայրավանք, կառավար, բանավէճ, մարդավայել, դեղավաճառ, նաւավար, – բարեվիճակ, կարեվէր, տարեվերջ. – վազնիվազ, զառիվեր և այլն։ — Ո գրին վի հնչումով ւ չյաջորդելուն բուն պատճառն այս է՝ որ վերջինս այդ ձայնաւորին քով դրուելուն պէս՝ կը կորսնցնէ իր բաղաձայնի հանգամանքը և անով ու ձայնաւոր հնչումը կը կազմէ։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Գրաբարէ աշխարհաբար

### *Մուտք Քրիստոսի յԵրուսաղէմ*

*Այս և յաջորդ աշխ. հատուածին մէջ՝ ցոյց տալ շեղագիր բառերը բաղկացնող նմանահնչիւն բաղաձայններուն ուղղագրական պատճառները։*

Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ էր ի տօնն, իբրև լուան եթէ գայ Յիսուս յԵրուսաղէմ, առին ոստս արմաւենեաց և ելին ընդ առաջ նորա. աղաղակէին և ասէին. Ովսաննա, օրհնեալ որ գաս յանուն Տեառն՝ թագաւորդ Իսրայէլի։ Եւ գտեալ Յիսուսի էշ մի՝ նստաւ ի վերայ նորա, որպէս և գրեալ է. Մի՛ երկնչիր, դուստր Սիովնի, ահաւասիկ թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ։ Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս՝ յայնժամ յիշեցին եթէ այն էր որ գրեալն էր վասն նորա, և զայն արարին նմա։ Եւ ժողովուրդն վկայէր, որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց ևեթ ի գերեզմանէն և յարոյց զնա ի մեռելոց։ Եւ վասն այնորիկ ընդ առաջ եղև նմա ժողովուրդն, զի լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա։ Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէ՞ք զի ոչինչ օգտիք, ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց։ Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոցն անդր, զի երկիր պագանիցեն ի տօնին։ Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեդսայիդա Գալիլեացւոց էր, աղաչէին զնա և ասէին. Տէր, կամիմք զՅիսուս տեսանել։ Գայ Փիլիպպոս և ասէ ցՅիսուս։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ։



### Աշխարհաբարէ գրաբար

### *Բարերարութիւն*

Լիոն քաղաքին մէջ ժամանակաւ հարուստ մարդ մը վարձու տուած էր իր տան ձեղունն աղքատ արհեստաւորի մը, որ չորս հինգ որդւոց տէր էր։ Տեսնելով յետոյ որ երկու անգամ արհեստաւորն իր տան վարձքը չի բերեր, կ՚ելնէ անոր քով կ՚երթայ՝ որ խօսի հետն ու պատճառը հասկնայ։ Եւ ահա կը գտնէ արհեստաւորը հիւանդ ինկած անկողնի մէջ, և իր կինն ու որդիքը տրտում տխուր շուրջը նստած։ Քանի մը հարցմունք ընելէն ետքը՝ կ՚իմանայ անոնց խեղճ վիճակը, կը դառնայ կ՚ըսէ արհեստաւորին. Ասկէ վերջը դու ալ հոս չես կրնար կենալ։ Արհեստաւորը կը կարծէ թէ տանտէրն իր պարտքին համար կ՚ուզէ զինքը տնէն հանել։ Բայց նա մէկէն վրայ կը բերէ. Այս տեղս շատ նեղուածք է ձեզի համար, վասն զի շատուոր էք.

ելէք իջէք տանս երկրորդ յարկը ու հոն եղած սենեակներէն երկուքը ձեզի ըլլան, և վարձքն ալ նոյն մնայ՝ ինչ որ առաջ էր, այն ալ երբ ուզես՝ այն ատեն վճարէ։

## ՏԱՂԿԱՔԱՂ

### Աղօթք տէրունական

Ո՛ Հայր մեր գթած,
Որ գկայս եթերաց
Երանաւէտես
Փառաց քոց ի տես.
Անուն քո լիցի
Սուրբ և պաշտելի,
Եւ ծանիցեն զայն
Տիեզերք համայն։
Զարքայութիւն քո
Մեզ երևեցո.
Եւ աստուածային
Կամք քո եղիցին՝
Որպէս ի յերկինս
Նոյն և ի ստորինս։

Զհաց մեր առօրեայ
Եւ այսօր շնորհեա.
Թող ըզպարտիս մեր,
Որպէս և մեք, Տէ՛ր,
Տամք ամենեցուն
Պարտեաց թողութիւն։
Մի՛ զտկարութիւն մեր
Ի փորձանս ածեր.
Այլ կացո ի բաց
Յամենայն չարեաց.
Զի արքայութիւն
Քո միշտ է միայուն,
Քեզ փառք վայելեն
Յաւիտեանս, ամէն։

---

## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

### Կէտադրութիւն

257. *Բառերն ըստ իմաստին իրարմէ պէտք է զատել ուղղագրական մէկ քանի նշաններով՝ որ կէտ կ՚ըսուին։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 257. Բառերն ըստ իմաստին ի՞նչ կերպով իրարմէ պէտք է բաժնել, և ո՞րոնք են գլխաւոր կէտերը։



*Հայերէնի մէջ հարազատ ութ կէտ ունինք, և ասոնք են.*

*Բութ* (՝), *Ստորակէտ* (,), *Միջակէտ* (·), *Վերջակէտ* (։), *Ապաթարց* (՚), *Ենթամնայ* կամ *Գծադարձ* (-), *Չակերտ* (« »), *փակագիծ* ( )։

258. *Բութը կը դրուի բառի մը վրայ՝ ուր ընթերցողին ձայնը շունչ առնելու չափ կ՚ընդհատի՝ յաջորդ բառէն զատելու համար, ինչպէս այս խօսքին մէջ իսկ կը տեսնուի արդէն։*

*Ստորակէտ կը գործածուի՝ զատելու համար անջատ բառեր ու միջանկեալ նախադասութիւններ, որոնք ամբողջ խօսք մը պիտի լրացնեն՝ առանց և շաղկապով իրարու հետ միացած ըլլալու։*

*Օրինակ.*

Հրեայ, հեթանոս, սկիւթացի, խուժ, դուժ, ամենքն ալ պարտական են Աստուծոյ առջեւ։ — Ո՛վ պատանի, մի՛ մոռնար որ ապրիլն, աւա՜ղ, դէպի գերեզման վազել կը նշանակէ։ — Ինչպէս չքնաղագեղ շուշան մը, որ սայրասուր խոփէն հնձուելով կ՚իյնայ դաշտին մէջ, առանց իր ձիւնափայլ պայծառութիւնը կորսնցնելու, առանց իր գեղեցկութենէն բան մը պակսեցնելու, բայց սնունդ չառներ հողէն ու այլևս չապրիր, այսպէս Իգումենեան զաւակը կորսուելով կ՚իյնար իր սկզբնաբոյս հասակին մէջ։

Ծանօթ. — Ուր որ երկու կամ աւելի բայեր առանց – և, կամ – շաղկապներուն բովէ բով գան մի և նոյն միտքը բացատրելու համար, գրաբար մէջերնին ստորակէտ հարկաւոր չէ։ Օր. Ձգեա խաղայր Մատաթի եղբայրքն և բարեկամօքն հանդերձ. հասանէր հարկանէր աւերէր զմեհեանսն, կործա-

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 258. Ո՞ւր կը դրուի բութը և ո՞ւր ստորակէտը, և ե՞րբ կը գործածուին ասոնք։

նէր զբազինսն։ — Նկն նհաս Յուդա իւրով գնդաւն, կարգե-ցաւ կազմեցաւ ճակատեցաւ պատերազմեցաւ յարձակեցաւ ի դիմի հարաւ գնդի Թագաւորին։

259. *Միջակէտ կը դրուի՝ — 1°. Լրացած նախադասութեան մը՝ առջև՝ որ ամբողջ խօսքին մէկ մասը կը կազմէ. — 2°. Երբ պատմական գրութեան մէջ մէկու մը կամ ոմանց խօսքը մէջ կը բերուի։ Օրինակ.*

*Յիսուս տեսնելով ժողովուրդը՝ լեռ ելաւ. ու երբ հոն նստաւ, աշակերտներն իր քովը եկան։ — Դուք էք երկրիս աղը. ապա թէ որ աղն իր համը կորսնցնէ, ինչո՞վ աղելու է։ — Իմաստասէր մը իր ծառային՝ որ յանցապարտ գտնուած էր՝ այսպէս ըսաւ. Պիտի ծեծէի քեզ՝ թէ որ բարկացած չըլլայի։*

*Վերջակէտ կը դրուի՝ երբ ամբողջ խօսքը կը լմննայ, շունչը կը հանգչի և յաջորդ նոր խօսք մը կը սկսի գլխագրով, նման գրաբար ու աշխարհաբար մեր հրահանգներուն։*

260. *Գլխագրով պէտք է սկսիլ*

1°. *Գրուածի մը առաջին բառը.*

2°. *Վերջակէտին անմիջապէս յաջորդող բառը.*

3°. *Յատուկ և պատուոյ անունները.*

4°. *Միջակէտով մէջ բերուած խօսքը.*

5°. *Ոտանաւոր ամէն տողի առաջին բառը։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 259. Ե՞րբ և ի՞նչպէս կը գործածուին միջակէտն ու վերջակէտը. — 260. Քանի՞ դէպքերու մէջ բառ մը գլխագրով պէտք է սկսիլ։



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Գրաբարէ աշխարհաբար

### Յովսէփ յայտնէ զանձն եղբարց իւրոց

*Այս և յաջորդ աշխ. հատուածին կետադրութեանց պատճառները տալէ ետքը, նոյնները տետրակի մէջ ներկայացնել՝ ուսուցչին բերանացի թելադրութեամբ։*

Եւ ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել (դիմանալ, ինքզինքը բռնել) առաջի ամենեցուն՝ որ շուրջ զնովաւն կային, այլ ասէ. Հանէք զամենեսին արտաքս յինէն։ Եւ չկայր ևս ոք անդ առ նմա՝ յորժամ ետ ծանօթս եղբարցն իւրոց։ Եւ ձայն բարձեալ լալով հանդերձ՝ ասէ ցեղբարս իւր. Ես եմ Յովսէփ. արդարև տակաւին կենդանի՞ է հայր իմ։ Եւ ոչ կարէին եղբարքն նորա տալ նմա պատասխանի, զի խռովեցան յերեսաց նորա։ Ասէ Յովսէփ ցեղբարսն. Մօտ եկայք առ իս։ Եւ չոգան մօտ, և ասէ. Ես եմ Յովսէփ եղբայրն ձեր, զոր դուք վաճառեցէք յԵգիպտոս. բայց մի ինչ տրտմիք, զի այս երկրորդ ամ է սովոյս ի վերայ երկրի. և այլ ևս հինգ ամ՝ յորս ոչ լինիցի վար և ոչ հունձք. և զիս առաքեաց Աստուած առաջի ձեր՝ առ ի թողլոյ ձեզ զաւակ յերկրի, և կերակրել զձեր մնացորդս մեծամեծս։ Եւ արդ ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աստուած. և արար զիս հայր Փարաւոնի և տէր ամենայն տան նորա, և իշխան ամենայն երկրիս Եգիպտացւոց։ Արդ փութացեալ ելէք առ հայրն իմ և ասացէք ցնա. Այսպէս ասէ որդի քո Յովսէփ, արար զիս Աստուած տէր ամենայն երկրիս Եգիպտացւոց. արդ եկ էջ առ իս և մի հեղգար. և բնակեսցես յերկրիս Գեսեմ. և եղիցիս մօտ առ իս դու և որդիք քո և որդիք որդւոց քոց, և որ ինչ քո իցէ, և կերակրեցից զքեզ անդ։ Եւ անկեալ ի վերայ պարանոցի նոցա, և համբուրեաց զամենայն եղբարսն իւր, և լաց ի վերայ նոցա. յետ այնորիկ խօսեցան եղբարքն նորա ընդ նմա։ Եւ հնչեաց

*նէր զրագիրնն։ — Նկն ենաս Յուդա խուով զնդաւն, կարգեցաւ կազմեցաւ ճակատեցաւ պատերազմեցաւ յարձակեցաւ ի դիմի ճարաւ գնդի Թագաւորին։*

259. *Միջակէտ կը դրուի՝* — 1°. *Լրացած նախադասութեան մը առջև՝ որ ամբողջ խօսքին մէկ մասը կը կազմէ.* — 2°. *Երբ պատմական դրութեան մէջ մէկու մը կամ ոմանց խօսքը մէջ կը բերուի։ Օրինակ.*

*Յիսուս տեսնելով ժողովուրդը՝ լեռ ելաւ. ու երբ հոն նստաւ, աշակերտներն իր քովը եկան։ — Դուք էք երկրիս աղը. ապա թէ որ աղն իր համը կորսնցնէ, ինչո՞վ աղելու է։ — Իմաստասէր մը իր ծառային՝ որ յանցապարտ գտնուած էր՝ այսպէս ըսաւ. Պիտի ծեծէի քեզ՝ թէ որ բարկացած չըլլայի։*

*Վերջակէտ կը դրուի՝ երբ ամբողջ խօսքը կը լրանայ, շունչը կը հանգչի և յաջորդ նոր խօսք մը կը սկսի գլխագրով, նման գրաբար ու աշխարհաբար մեր հրահանգներուն։*

260. *Գլխագրով պէտք է սկսիլ*

1°. *Գրուածի մը առաջին բառը.*
2°. *Վերջակէտին անմիջապէս յաջորդող բառը.*
3°. *Յատուկ և պատուոյ անունները.*
4°. *Միջակէտով մէջ բերուած խօսքը.*
5°. *Ոտանաւոր ամէն տողի առաջին բառը։*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 259. *Ե՞րբ և ի՞նչպէս կը գործածուին միջակէտն ու վերջակէտը.* — 260. *Քանի՞ դէպքերու մէջ բառ մը գլխագրով պէտք է սկսիլ։*



## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Գրաբարէ աշխարհաբար

### *Յովսէփ յայտնէ զանձն եղբարց իւրոց*

*Այս և յաջորդ աշխ. հատուածին կէտադրութեանց պատճառները տալէ ետքը, նոյները տետրակի մէջ ներկայացնել՝ ուսուցչին թելադրութեամբ։*

*Եւ ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել (դիմանալ, ինքզինքը բռնել) առաջի ամենեցուն՝ որ շուրջ զնովաւն կային, այլ ասէ. Հանէք զամենեսին արտաքս յինէն։ Եւ չկայր ևս ոք անդ առ նմա՝ յորժամ ետ ծանօթս եղբարցն իւրոց։ Եւ ձայն բարձեալ լալով հանդերձ՝ ասէ ցեղբարս իւր. Ես եմ Յովսէփ. արդարև տակաւին կենդանի՞ է հայր իմ։ Եւ ոչ կարէին եղբարքն նորա տալ նմա պատասխանի, զի խռովեցան յերեսաց նորա։ Ասէ Յովսէփ ցեղբարսն. Մօտ եկայք առ իս։ Եւ չոգան մօտ, և ասէ. Ես եմ Յովսէփ եղբայրն ձեր, զոր դուք վաճառեցէք յԵգիպտոս. բայց մի ինչ տրտմիք, զի այս երկրորդ ամ է սովոյս ի վերայ երկրի. և այլ ևս հինգ ամ՝ յորս ոչ լինիցի վար և ոչ հունձք. և զիս առաքեաց Աստուած առաջի ձեր՝ առ ի թողլոյ ձեզ զաւակ յերկրի, և կերակրել զձեր մնացորդս մեծամեծս։ Եւ արդ ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աստուած. և արար զիս հայր Փարաւոնի և տէր ամենայն տան նորա, և իշխան ամենայն երկրիս եգիպտացւոց։ Արդ փութացեալ ելէք առ հայրն իմ և ասացէք ցնա. Այսպէս ասէ որդի քո Յովսէփ, արար զիս Աստուած տէր ամենայն երկրիս եգիպտացւոց. արդ եկ էջ առ իս և մի հեղգար. և բնակեսցես յերկրիս Գեսեմ. և եղիցիս մօտ առ իս դու և որդիք քո և որդիք որդւոց քոց, և որ ինչ քո իցէ, և կերակրեցից զքեզ անդ։ Եւ անկեալ ի վերայ պարանոցի նոցա, և համբուրեաց զամենայն եղբարսն իւր, և ելաց ի վերայ նոցա. յետ այնորիկ խօսեցան եղբարքն նորա ընդ նմա։ Եւ հնչեաց*

համբաւն ի տուն փարաւոնի, և ասեն. Եկին եղբարք Յովսեփու: Ելին յԵգիպտոսէ և չոգան յերկիրն քանանացւոց առ Յակովբ հայրն իւրեանց: Եւ պատմեցին նմա և ասեն. Որդի քո Յովսէփ կենդանի է, և նա է իշխան ամենայն երկրին եգիպտացւոց: Եւ զարմացաւ ի միտս իւր Յակովբ, զի ոչ հաւատայր նոցա. և խօսեցան ընդ նմա զամենայն ինչ՝ զոր ասաց Յովսէփ: Եւ ասէ Իսրայէլ. Մեծ է ինձ՝ եթէ արդարև տակաւին կենդանի իցէ որդի իմ Յովսէփ. երթայց տեսից զնա մինչ չև մեռեալ իցեմ:

## Աշխարհաբարէ գրաբար

### Բանտարկեալներու այցելութիւնը

Իշխան մը դատապարտեալներու բանտը մտնելով, ուզեց հարցնել այն թշուառներուն թէ ինչ յանցանք ըրած էին՝ որ զիրենք այն վիճակին հասուցած էր: Առաջինն ըսաւ. Զարասիրտ մարդոց նախանձն և սուտ ամբաստանութիւնք կործանեցին զիս: Ուրիշ մը դատաւորին անիրաւութիւնը պատճառ կը բերէր (պատճառեմ), որ միշտ իւր անձին ու տանը թշնամի եղած էր: Ուրիշ մ'ալ ամբաստանեց ապերախտ մը բռնութիւնը՝ որ զինքը կը նեղէր: Մէկ խօսքով, մէկն այս բանը պատճառ կը բերէր՝ մէկն այն բանը. իրենց խօսքին համեմատ՝ ամենքն ալ անմեղ էին, յանցաւոր մը չկար: Մէկ հոգի միայն տեսնուեցաւ հոն՝ որ գլուխը վար ծռած և աչքը նայելով՝ պատասխանեց. «Զկայ չարիք որուն ես արժանի չըլլամ. ձեռք համբուրելով ընդունած եմ այս դատապարտութիւնս, որովհետև իմ յանցանքներս աւելի մեծ պատիժներու արժանի էին»: Իշխանն ի գութ շարժելով ասոր խոնարհ խոստովանութենէն, «Այսչափ բարի մարդոց մէջ պէտք չէ որ մնայ այդ անզգամը, ըսաւ. հապա դուրս թող ելնէ ատիկա, որ կէս խնձորի պէս այս բոլոր անմեղները չապականէ»: Եւ այս շնորհալից հեգնութեամբ զանիկա ազատեց:



Խոստովանէ անկեղծութեամբ յանցանքդ, և մի՛ արդարացներ զայն սուտերով:

Գլուխը վար ծռած – Գլխակոր | Աչքև նայելով – Ակն ի խոնարհ.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Գարունը

Ընդ վարդին հրավառ,
Մանկիկ զուարթուն,
Բերէ քեզ գարուն
Ըզշուշան պայծառ.
Եւ ի ծակ վիմին
Նորուն սուրհանդակ
Պարկեշտ մանուշակ
Զըգէ զտես քոյին:
Պանդուխտ ծիծեռնիկ
Գայ օդովք ջերոտ՝
Կազմել ի ծըղոտ
Վարանաց բունիկ:
Ի մարգ սիզաւէտ
Գառանց և ուլուց
Հօրանք կաթնածուծ
Խայտան խընդաւէտ:
Ի սոցին վայել
Կարդայ քեզ հրաւէր
Զեռամբ ծաղկաբեր
Զըւարճն Ապրիլ:
Յառաքինազարդ
Թէ զընաս ուղիղ,
Որդեակ, ընդ շաւիղ,
Անմահ քաղես վարդ:
Թէ սիրտ քո մատաղ
Իցէ անըստգիւտ,
Ո՜հ, չիք քան ըզքոյդ
Շուշանիկ չըքնաղ...
Եւ թէ դաշտք համբուն
Ոչ պըճնին ի զարդ,
Այլ սըրտիդ դըրախտ
Միշտ տեսցէ զգարուն...:

### Բառագիտութիւն

Հրավառ – Կրակի պէս վառող
Զուարթուն – Ուրախ, ժպտադէմ
Ջերոտ – Տաք
Ծղօտ – Յօդուն, բուն
Սիզաւէտ – Կանաչազարդ
Ուլ – Այծի ձագ
Հօրան – Հօտ, ոչխարներու խումբ
Կաթնածուծ – Կաթ ծծող
Շաւիղ – Ճամբայ
Անստգիւտ – Անմեղադրելի
Համբուն – Բոլոր, ամենևին.

## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

### Ճարունակութիւն նախընթաց դասին

260. *Չակերտը* « » *մէջ բերուած խօսքի մը՝ կամ պարբերութեան մը սկիզբն ու վերջը կը դրուի մատնանիշ ընելու նպատակով, ինչպէս կը տեսնուի նախորդ դասին աշխարհաբար հրահանգին մէջ և այլուր։*

*Փակագիծ* ( ) *կը գործածուի՝ դուրսէ դուրս կամ օտար յաւելուածներ խօսքին բանաձևերէն զատելու համար, զոր քերականութեանս ընթացքին մէջ տեսանք շատ տեղեր։*

*Ապաթարցը* (') *կը դրուի բառի մը այն տեղն ուր ձայնաւոր գիր զեղչուած է։ Օրինակ. կ'իմանամ, կ'ըսէի, բան մ'՚ըսել կ'ուզէ, և այլն։*

261. *Ենթամնան կամ Գծադարձը* (-) *կը դրուի տողի մը ծայրը՝ երբ հարկ ըլլայ բառին մէկ մասը յաջորդ տողն անցընել։ Ասոր համար քանի մը կանոններ կան։ — 1°. Միավանկ բառերը չեն կիսուիր, այլ կամ վերի տողին ծայրը կը գրուին կամ վարի տողին սկիզբը։ — 2°. Քովէ քով հանդիպած ձայնաւոր գրերէ մին կարելի է յաջորդ տողին անցընել։ Օրինակ. Է-ակից, մի-ածին, լի-ազօր, առնու-լին, և այլն։ — 3°. Տողի մը ծայրը կամ յաջորդ տողի սկիզբը մէկ բաղաձայն գիր բնաւ չի կրնար կենալ, և վանկ կազմող մէկէն*

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 260. Ո՞ւր և ի՞նչպէս կը գործածուին Չակերտը, փակագիծն ու Ապաթարցը. — 261. Ո՞ւր կը դրուի Ենթամնան և որո՞նք են գծադարձի կանոնները։



*աւելի բաղաձայններն ալ՝ միշտ քովերնին ձայնաւոր մը կ'ուզեն, ասոր համար ը գրին հնչումը գծադարձի մէջ նիւթապէս պէտք է գրել։ Օրինակ.*

Մը-կըրտութիւն, տը-կար, տըր-տընջել, ըղ-քեղ, ըս-կըզ-բնական, մըչ-տընջենաւոր, և այլն։

4°. *Եթէ երկու ձայնաւորներու մէջ մէկ բաղաձայն գիր ըլլայ, այս բաղաձայնը միւս տողին պէտք է անցընել. և եթէ մէկէն աւելի բաղաձայններ հանդիպին՝ վերջինը միայն յաջորդ տողին կը տրուի։ Երկու կերպին ալ օրինակ.*

Բա-րի, ա-ռա-գին, նո-րա-ծին, ա-րա-րած, ծա-րա-ւի, դա-տա-ւոր, և այլն։

Աշ-խարհ, եր-կիր, ան-գիր, ըն-տիր, մար-դա-սէր, ինք-նին, Թարգ-ման, հանգ-չիմ, և այլն։

*Ծանօթ.* — Իսկ եթէ մէկէն աւելի բաղաձայններու վերջինն ըլլայ ռ կամ ր, իր նախընթացին հետ պէտք է յաջորդ տողին անցընել։ Օրինակ.

Ն-գուաւ, պա-տրանք, մա-քրիմ. ըն-տրեմ, եր-կրորդ, բեր-կրական, և այլն։

5°. *Բայց երբ բառի մը յաջորդ տողն անցնելիք մասն՝ ինքիր մէջ նշանակութիւն մը ունենայ, ինչպէս որ է՝ կրնայ գրուիլ, առանց վերի կանոններուն միտ դնելու։ Զոր օրինակ.*

Ան-արգել, ան-երկիւղ, ան-իրաւ, ան-ողորմ, տար-աշխարհ, մեծ-անձն, նոր-եկ, նոր-ընծայ, նորա-նշան, վերնա-խնամ, լուսա-ծնունդ, ան-շնորհ, ան-բնական, ան-տրտում, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Գրաբարէ աշխարհաբար

### *Այլակերպութիւն Քրիստոսի ի Թաբոր լերին*

*Գործածութիւն նախորդ դասի հրահանգներուն, և յատկապէս՝ գրաբարձի կանոններուն։*

Յետ վեց աւուր առնու Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս եղբայր նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն, և այլակերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս։ Եւ ահա երևեցան նոցա Մովսէս և Եղիա որ խօսէին ընդ նմա։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս. Տէր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիայի։ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա. ձայն եղև յամպոյն և ասէ. Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։ Իբրև լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար զնոցանէ և ասէ. Յոտն կացէք և մի երկնչիք։ Ամբարձին զաչս իւրեանց, և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։ Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս և ասէ. Մի ումեք ասիցէք զտեսիլդ, մինչև որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Հարցին ցնա աշակերտքն և ասեն. Զիա՞րդ դպիրքն ասեն եթէ Եղիայի նախ պարտ է գալ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եղիա գայ և հաստատեսցէ զամենայն. այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է, և ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա՝ զոր ինչ կամեցան, նոյնպէս և որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ։ Յայնժամ ի միտ առին աշակերտքն թէ վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա։



### Աշխարհաբարէ գրաբար

### *Ճշմարիտ բարեկամութիւն*

Պատմութիւնը կ'աւանդէ թէ ժամանակաւ երկու բարեկամներ եղան՝ իրարու շատ մտերիմ և սիրելի. մէկուն անունը Դամոն, միւսինը Փիդիաս։ Դամոն մահուան դատապարտուած ըլլալով, խնդրեց թագաւորէն որ մեռնելէն առաջ թողու զինքն՝ որ երթայ գործերը կարգի դնէ և հրաժարական ողջոյն մը տայ իր սիրելի ընտանեաց։ Եւ անողոքելի բռնաւորն համոզելու համար՝ իր Փիդիաս բարեկամը ցուցընելով՝ կ'ըսէր. «Ահա իմ ամենասիրելի բարեկամս այս վայրկենէս պատրաստ է իմ տեղս բանտ մտնելու, և մեռնելու՝ թէ որ սահմանեալ ժամուն ես հոս չգտնուիմ»։ Եւ թագաւորն հաւանեցաւ և Փիդիաս իր բարեկամին տեղ բանտ մտաւ։ Սակայն հասաւ այն որոշուած օրն, և Դամոն դեռ չէր երևնար։ Բռնաւորն ինքզինքը նախատուած համարելով՝ սաստիկ բարկացաւ և հրաման տուաւ որ շուտով Փիդիասը սպանութեան տեղը տանին։ Արդէն բազմութիւն մարդկան դիզուած էր հոն, և դահիճը մահառիթ գործիքին ձեռք զարնելու մօտ էր, և ահա հեռուէն խղդուկ ձայն մը լսուեցաւ՝ որ կը պոռար։ Դամոնն էր՝ որ փոշիով և քրտինքով ծածկուած՝ կը վազէր ու մեռնիլ կը խնդրէր։ Ասոր վրայ բոլոր բազմութեան սիրտը մորմոքեցաւ, և թագաւորն այսպիսի չլսուած բարեկամութեան վրայ զարմացած՝ Դամոնի ներեց, և աղաչեց անոր որ Փիդիասի հետ զինքն ալ անկէ ետքն իրեն բարեկամ ընդունի։

Կարգի դնել – Օրինաւորել | Խղդուկ – Հեղձամղձուկ
Չլսուած – Անլուր։

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Վախճան ամպարշտաց*

Երանեալ այր որ ոչ գնաց
Ի ճանապարհս ամբարշտաց.

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Գրաբարէ աշխարհաբար

### *Այլակերպութիւն Քրիստոսի ի Թաբոր լերին*

*Գործադրութիւն նախորդ դասի հրահանգներուն, և յատկապէս՝ գրադարձի կանոններուն։*

*Յետ վեց աւուր առնու Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն, և այլակերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս։ Եւ ահա երևեցան նոցա Մովսէս և Եղիա որ խօսէին ընդ նմա։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս. Տէր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիայի։ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա. ձայն եղև յամպոյն և ասէ. Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։ Իբրև լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար զնոցանէ և ասէ. Յոտն կացէք և մի՛ երկնչիք։ Ամբարձին զաչս իւրեանց, և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։ Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս և ասէ. Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչև որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Հարցին ցնա աշակերտքն և ասեն. Զիա՞րդ դպիրքն ասեն եթէ Եղիայի նախ պարտ է գալ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եղիա գայ և հաստատեսցէ զամենայն. այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է, և ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա՛ զոր ինչ կամեցան, նոյնպէս և որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ։ Յայնժամ ի միտ առին աշակերտքն թէ վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա։*



### Աշխարհաբարէ գրաբար

### *Ճշմարիտ բարեկամութիւն*

*Պատմութիւնը կ'աւանդէ թէ ժամանակաւ երկու բարեկամներ եղան՝ իրարու շատ մտերիմ և սիրելի. մէկուն անունը Դամոն, միւսինը Փիդիաս։ Դամոն մահուան դատապարտուած ըլլալով, խնդրեց Թագաւորէն որ մեռնելէն առաջ թողու զինքը՝ որ երթայ գործերը կարգի դնէ և հրաժարական ողջոյն մը տայ իր սիրելի ընտանեաց։ Եւ անողոքելի բռնաւորն համոզելու համար՝ իր Փիդիաս բարեկամը ցուցընելով՝ կ'ըսէր. «Ահա իմ ամենասիրելի բարեկամս այս վայրկենէս պատրաստ է իմ տեղս բանտ մտնելու, և մեռնելու՝ թէ որ սահմանեալ ժամուն ես հոս չգտնուիմ»։ Թագաւորն հաւանեցաւ և Փիդիաս իր բարեկամին տեղ բանտ մտաւ։ Սակայն հասաւ այն որոշուած օրն, և Դամոն դեռ չէր երևնար։ Բռնաւորն ինքզինքը նախատուած համարելով՝ սաստիկ բարկացաւ և հրաման տուաւ որ շուտով Փիդիասը սպանութեան տեղը տանին։ Արդէն բազմութիւն մարդկան դիզուած էր հոն, և դահիճը մահաբեր գործիքին ձեռք զարնելու մօտ էր, և ահա հեռուէն խղդուկ ձայն մը լսուեցաւ՝ որ կը պոռար։ Դամոնն էր՝ որ փոշիով և քրտինքով ծածկուած՝ կը վազէր ու մեռնիլ կը խնդրէր։ Ասոր վրայ բոլոր բազմութեան սիրտը մորմոքեցաւ, և Թագաւորն այսպիսի չլսուած բարեկամութեան վրայ զարմացած՝ Դամոնի ներեց, և աղաչեց անոր որ Փիդիասի հետ զինքն ալ անկէ ետքն իրեն բարեկամ ընդունի։*

Կարգի դնել – Օրինադրել | Խղդուկ – Հեղձամղձուկ
Չլսուած – Անլուր։

## ԾԱՂԿԱՔԱՂ

### *Վախճան ամպարշտաց*

Երանեալ այր որ ոչ գնաց
Ի ճանապարհս ամբարշտաց.

Ձեղև չարին նա ուղեկից,
Եւ ոչ յաթոռս Նըստաւ ժանտից։
Այլ ի հրամանս աստուածատուր
Հաճ են և գոհ միտք և կամք իւր.
Եւ զամենայն գործըս նորա
Յաջողեսցեն երկինք նըմա։
Ոչ այսպէս ո՛չ է ամպարիշտ,
Այլ երբեմն ի յերկրի միշտ,
Որպէս փոշի զի հողմավար
Այր անդր հոսեալ հալածի յար։
Վասն այսորիկ ի յաճաւոր
Դատաստանին մեծի աւուր,
Եւ ըզգիշեր և զտիւն ի բուն
Խորհի անդուլ յօրէնս ի նոյն։.
Զի որպէս ծառ նորաբողբոջ
Տընկեալ զառուիւ ջուրցն ի խոխոջ,
Տացէ ըզմիրգ իւր ի ժամու
Մըշտադալարթ պըճնեալ զարդու.
Մի՛ յարիցէ զըւարթերես
Ընդ արդարոց չարն ընդ հանդէս,
Զի Տէր ծանեաւ զարդարոյն ուղ,
Զարացն ուղիք ածցեն ի մահ։

## Բառագիտութիւն

Ժանտ – Դաժան, զարշելի
Աստուածատուր – Աստուծմէ տրուած
Հողմավար – Քամիէ մղուած
Յար – միշտ
Անդուլ – Անդադար
Նորաբողբոջ – Նոր ծլած
Խոխոջ – Ջրի ձայն
Միրգ – Պտուղ
Մշտադալարթ – Տերևները միշտ կանանչ
Ընդ արդարոց չարն ընդ հանդէս – Զարն արդարոց խումբին հետ
Ուղ – Ճամբայ
Ուղի – Ճամբայ, անցք.

Բ

# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

### Ուղիղ ընթերցում

262. Գրուած մը ճիշդ և վայելչապէս կարդալն *Ընթերցանութիւն* կամ *վերծանութիւն* կ'ըսուի։ Ասոր համար երկու պայման կայ, — 1°. Բառերն ու վանկերը քերականական կազմութեանց համեմատ հնչել և զատել. — 2°. Ամէն բառերու և վանկերու պարտուպատշաճ ոյժը տալ՝ ձայնի յարմար ելևէջով։

*Առաջինն՝ Ուղիղ ընթերցում* կ'ըսուի, երկրորդն՝ *Արտասանութիւն* կամ *Առոգանութիւն*։

Ուղիղ ընթերցման համար կը պահանջուի գիտնալ. — 1°. Նմանահնչիւն տառերուն ստուգաբանական արտաբերումը. — 2°. ըւ. հնչումին ո՛ւր և ինչպէս գործածութիւնը. — 3°. ուա, ուե, ուի

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 262. Ի՞նչ է Ընթերցանութիւնը, որո՞նք են ասոր համար կրկնակ պայմանները, և ուղիղ ընթերցման համար ինչե՞ր կը պահանջուին։

երկբարբառներուն և այ, ոյ, ով, իւ զուգադրութեանց հնչական փոփոխութիւնները։

Ծանօթ. — Նմանաձայն տառերէն Նուրբերը (պ, կ, տ, ծ, ճ) շրթունքի կամ լեզուի կամ քիմքի մեղմ հպումով միայն կ'արտաբերուին, առանց շնչափողի մասնակցութեան. Միջակները (բ, գ, դ, ձ, ջ)՝ քիչ մ'աւելի ուժգին ու կիսովին մասնակցութեամբ կոկորդի. իսկ Թաւերը (փ, ք, թ, ց, չ) կը հնչուին շատ աւելի սաստկութեամբ ու բոլոր շունչով։ Լ, ղ, մ, ն, ր, ռ Նայ տառեր կ'ըսուին, այսինքն է կակուղ կամ թոյլ գիրեր, վասնզի միւս բաղաձայններէն աւելի դիւրահնչուն ու սահուն են։

263. Վանկ կազմող երկու կամ աւելի բաղաձայններու միջև, ինչպէս յայտնի է, ը ձայնաւորը կը հնչուի՝ առանց գրուելու։

Եթէ բառ մը մէկէ աւելի բաղաձայն գիրերով սկսի, ըի հնչումն անմիջապէս առաջին տառին կը յաջորդէ։ Օրինակ. Բ(ը)ռնի, կ(ը)րկին, թ(ը)շնամի, փ(ը)րկութիւն, ծ(ը)նունդ, մ(ը)տերիմ, և այլն։

Բարդ, ածանցական ու գրաբար հոլովուած բառերու մէջ ը կը հնչուի այն տեղ՝ ուր երկու բաղաձայններ քով քովի եկած են ձայնաւորի մը կորուսման պատճառով։ Օրինակ. Հանգիստ՝ հանգ(ը)ստարան, ամբարիշտ՝ ամբար(ը)շտական, պանդուխտ՝ պանդ(ը)խտավայր, խնդիր՝ խնդ(ը)րուած, պղինձ պղ(ը)նձոյ, մատնիչ՝ մատն(ը)չի, կնդրուկ՝ կնդր(ը)կի (ազնիւ խունկ), ստգիւտ՝ ստգ(ը)տանել։ Բայց զեղչուած ձայնաւորին նախորդ վանկն ի բնէ արմատ կամ ձայնաւոր ունենալու պարագային (թէ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 263. Ո՞ւր և ի՞նչպէս կը գործածուի ըի հնչումը։



և չի գրուած), ձայնաւոր ըի հնչումն անոր տեղ կը դրուի։ Օր. Գլուխ՝ գ(ը)լխաւոր, պտուղ՝ պ(ը)տղատու, մրրիկ՝ մր(ը)րկալից, կտրիչ՝ կտ(ը)րչի, և այլն։

Իսկ եթէ զեղչուած ձայնաւորին պատճառով միացած բաղաձայններէ մէկը Նայ տառ ըլլայ, ըի հնչում չի մնար այլեւս։ Օրինակ. Անգիր՝ անգրագէտ, արթուն՝ արթնամիտ, պատիժ՝ պատժապարտ, հանուր՝ հանրային, յատուկ՝ յատկապէս, երկպառիկ՝ երկպառկի, սկնդուկ՝ սկնդկի (այրէն լքուած կին), և այլն։

264. Երբ զ, ս, շ գիրերը բառի մը սկզբնատառ ըլլան կից բաղաձայնի հետ բնականօրէն կցուած ըի ձայնը իրենցմէ առաջ է միշտ, այսինքն՝ ըզ, ըս, ըշ կը հնչուին. իսկ եթէ պատահաբար կցուած ըլլան ձայնաւորի մը կորուսման հետեւանքով, ըը իրենցմէ ետքը կը դրուի ու զը, սը, շը կը հնչուին։ Երկու ձևերուն ալ օրինակ. (Ը)զբաղանք, (ը)զգալ, (ը)զգուշութիւն, (ը)սթափիլ, (ը)սկսիլ, (ը)սպասել, (ը)ստիպել, (ը)ստոյգ, (ը)սփոփանք, (ը)սքանչելի, (ը)շտապ, (ը)շտեմարան, և այլն։ — Զուտ՝ զ(ը)տել, զիղջ՝ զ(ը)ղջալ, զիրկ՝ զ(ը)րկել, սին՝ ս(ը)նանկ, սուտ՝ ս(ը)տել, սուգ՝ ս(ը)գալ, շուն՝ շ(ը)նագայլ, շուփ՝ շ(ը)փել, շուք՝ շ(ը)քեղ, և այլն։

Ծանօթ. — Գրաբար զ նախդիրը որ և է բաղաձայնէ առաջ միշտ ըզ կը հնչուի։ Օրինակ. (Ը)զբան, (ը)զգործ, (ը)զբարի, (ը)զչար, և այլն։ — Սպրդիլ, սկրդել ու սփռել բայերն ալ բացառութեամբ պէտք է կարդալ ս(ը)պրդիլ, ս(ը)կրդել, ս(ը)փռել. բայց այս վերջինին գոյականն (ը)սփիւռ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 264. Ըի հնչումը ե՞րբ առաջ ու ե՞րբ ետքը կը դրուի զ, ս, շ գիրերէն, թէ որ ասոնք բառի մը սկզբնատառն ըլլան՝ կից բաղաձայնի հետ։

երկբարբառներուն և այ, ոյ, ով, իւ զուգադրութեանց հնչական փոփոխութիւնները։

Ծանօթ. — Նմանաձայնութեան տառերէն Նուրբերը (պ, կ, տ, ծ, ճ) շրթունքի կամ լեզուի կամ քիմքի մեղմ ճնշումով միայն կ'արտաբերուին, առանց շնչափողի մասնակցութեան. Միջակները (բ, գ, դ, ձ, ջ)՝ քիչ մ'աւելի ուժգին ու կիսովին մասնակցութեամբ կոկորդի. իսկ Թաւերը (փ, ք, թ, ց, չ) կը հնչուին շատ աւելի սաստկութեամբ ու բոլոր շունչով։ Լ, ղ, մ, ն, ր, ռ Նայ տառեր կ'ըսուին, այսինքն է կակուղ կամ թոյլ գիրեր, վասնզի միւս բաղաձայններէն աւելի դիւրահնչուն ու սահուն են։

263. *Վանկ կազմող երկու կամ աւելի բաղաձայններու միջև, ինչպէս յայտնի է, ը ձայնաւորը կը հնչուի՝ առանց գրուելու։*

*Եթէ բառ մը մէկէ աւելի բաղաձայն գիրերով սկսի, ըի հնչումն անմիջապէս առաջին տառին կը յաջորդէ։ Օրինակ. Բ(ը)ռնի, կ(ը)րկին, թ(ը)շնամի, փ(ը)րկութիւն, ծ(ը)նունդ, մ(ը)տերիմ, և այլն։*

*Բարդ, ածանցական ու գրաբար հոլովուած բառերու մէջ ը կը հնչուի այն տեղ՝ ուր երկու բաղաձայններ քով քովի եկած են ձայնաւորի մը կորուսման պատճառով։ Օրինակ. Հանդիստ՝ հանդ(ը)ստարան, ամբարիշտ՝ ամբար(ը)շտական, պանդուխտ՝ պանդ(ը)խտավայր, խնդիր՝ խնդ(ը)րուած, պղինձ՝ պղ(ը)նձոյ, մատնիչ՝ մատն(ը)չի, կնդրուկ՝ կնդր(ը)կի (ազնիւ խունկ), ստգիւտ՝ ստգ(ը)տանել։ Բայց զեղչուած ձայնաւորին նախորդ վանկն ի բնէ արմատ կամ ձայնաւոր ունենալու պարագային (թէ*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 263. Ո՞ւր և ի՞նչպէս կը գործածուի ըի հնչումը։



*և չի գրուած), ձայնաւոր ըի հնչումն անոր տեղ կը դրուի։ Օր. Գլուխ՝ գ(ը)լխաւոր, պտուղ՝ պ(ը)տղատու, մրրիկ՝ մր(ը)րկալից, կտրիչ՝ կտ(ը)րչի, և այլն։*

*Իսկ եթէ զեղչուած ձայնաւորին պատճառով միացած բաղաձայններէ մէկը Նայ տառ ըլլայ, ըի հնչում չի մնար այլևս։ Օրինակ. Անգիր՝ անգրագէտ, արթուն՝ արթնամիտ, պատիժ՝ պատժապարտ, հանուր՝ հանրային, յատուկ՝ յատկապէս, երկպառիկ՝ երկպառկի, սնդուկ՝ սնդկի (այրէն լքուած կին), և այլն։*

264. *Երբ զ, ս, շ գիրերը բառի մը սկզբնատառն ըլլան կից բաղաձայնի հետ բնականօրէն կցուած ըի ձայնը իրենցմէ առաջ է միշտ, այսինքն՝ ըզ, ըս, ըշ կը հնչուին. իսկ եթէ պատահաբար կցուած ըլլան ձայնաւորի մը կորուսման հետեւանքով, ըը իրենցմէ ետքը կը դրուի ու զը, սը, շը կը հնչուին։ Երկու ձևերուն ալ օրինակ. (Ը)զբաղանք, (ը)զգալ, (ը)զգուշութիւն, (ը)սթափիլ, (ը)սկսիլ, (ը)սպասել, (ը)ստիպել, (ը)ստոյգ, (ը)սփոփանք, (ը)սքանչելի, (ը)շտապ, (ը)շտեմարան, և այլն։ — Զուտ՝ զ(ը)տել, զիղջ՝ զ(ը)ղջալ, զիրկ՝ զ(ը)րկել, սին՝ ս(ը)նանկ, սուտ՝ ս(ը)տել, սուգ՝ ս(ը)գալ, շուն՝ շ(ը)նագայլ, շուփ՝ շ(ը)փել, շուք՝ շ(ը)քեղ, և այլն։*

Ծանօթ. — Գրաբար զ նախդիրը որ և է բաղաձայնէ առաջ միշտ ըզ կը հնչուի։ Օրինակ. (Ը)զբան, (ը)զգործ, (ը)զբարի, (ը)զչար, և այլն։ — Սպրդիլ, սկրթել ու սփռել բայերն ալ բացառութեամբ պէտք է կարդալ ս(ը)պրդիլ, ս(ը)կրթիլ, ս(ը)փռել. բայց այս վերջինին գոյականն (ը)սփիւռ

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 264. Ըի հնչումը ե՞րբ առաջ ու ե՞րբ ետքը կը դրուի զ, ս, շ գրերէն, թէ որ ասոնք բառի մը սկզբնատառն ըլլան՝ կից բաղաձայնի հետ։

կը կարդացուի, Ձմեռին բառը թէ (ը)զմեռին և թէ գ(ը)մեռին հնչողներ կան։ — Իսկ ոտանաւոր գրութեանց մէջ ը նմանապէս կը գրուի ամէն վանկի մէջ՝ ուր այս գիրը՝ կը հնչուի։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Գրաբարէ աշխարհաբար

### Ա. Պաւղոս նաւաբեկ անկանի ի կղզի ինչ

*Այս և հետևորդ աշխ. հատուածներուն մէջ շեղագիր նշանակուած տառերուն հնչական պատճառները ցոյց տալ։*

Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք եթէ Մելիտինէ էր անուն կղզւոյն։ Բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. քանզի լուցին խարոյկ՝ և ընկալան զամենեսեան զմեզ, վասն անձրևին որ ստիպէր և վասն ցրտոյն։ Եւ ի ժողովել Պաւղոսի խռիւ ինչ բազում՝ և դնել ի վերայ խարուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռանէ նորա։ Եւ իբրև տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ուրեմն սպանող է այրս այս, որ թէպէտ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն ոչ ետուն կեալ։ Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն, եղև նմա չար և ոչ ինչ. և նոքա ակն ունէին նմա այտնլոյ, կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. իբրև շատ ակն կալեալ՝ և տեսանէին թէ ոչ ինչ վնաս եղև նմա, դարձեալ դարձուցին զբանսն և ասէին թէ աստուած ոմն է։ Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեօղք գլխաւորի կղզւոյն, որում անուն էր Պոպլիոս, որ առ զմեզ յերաշխի զերիս աւուրս և սիրով ընկալաւ։ Եւ եղև հօրն Պոպլեայ ի ջերմ և յախտ թանչից հիւանդանալ դնել. առ որ մտեալ Պաւղոս, կացեալ յաղօթս՝ եդ ձեռն և բժշկեաց զնա։ Իբրև այս եղև, այլ հիւանդք որ էին ի կղզւոջն գային և բժշկէին, որք և բազում պատուով պատուեցին զմեզ, և իբրև գնացաք, ետուն որ ինչ պէտք էին։



Նաւաբեկ – նաւը խորտակուած
Խարոյկ – վառած կրակ
Խռիւ – Չորցած ճիւղերու թափթըփուք
Այտնուլ – Ուռիլ

Առնուլ յերաշխի – խօսք տալով ապահովցնել
Ախտ թանչից – փորհարութեան կամ արիւներթութեան հիւանդութիւն։

### Աշխարհաբարէ գրաբար

### Պարտք ունեցող ծառան

Եղաւ ատենօք թագաւոր մը՝ որ ուզեց իր ծառաներուն մէջ քննութիւն ընել, և երբ սկսաւ՝ բերուեցաւ իրեն մէկը որ բիւր քանքար պարտք ունէր։ Սա վճարելիք չունենալով, տէրն հրամայեց որ ինքն և իր կինը և իր որդիքն ու բոլոր ունեցածները ծախուին, և վճարէ։ Այն ատեն ծառան անոր ոտքն ինկած երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր. Գթա վրաս և համբերութիւն ունեցիր, և բոլորը կը վճարեմ քեզի։ Տէրը վրան գթալով՝ արձըկեց զանիկա ու պարտքը թողուց։ Ծառան դուրս ելնելով՝ գտաւ իր ծառայակիցներէն մէկը՝ որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր, և անոր վիզէն բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր. Վճարէ ինծի ինչ որ պարտք ունիս։ Արդ ծառայակիցն անոր ոտքն ինկած կ'աղաչէր ու կ'ըսէր. Համբերութիւն ունեցիր և կը վճարեմ։ Բայց նա չուզեց, այլ գնաց զանիկա բանտ ձգեց, մինչև իր պարտքը վճարէ։ Երբ անոր ծառայակիցները եղածը տեսան՝ շատ տրտմեցան, և եկան իրենց տիրոջը պատմեցին ամէն բան։ Այն ատեն տէրը կանչեց այն ծառան և ըսաւ. Անիրաւ ծառայ, քու բոլոր պարտքերդ թողուցի՝ որովհետև աղաչեցիր ինծի. ուրեմն դուն ալ պէտք չէ՞ր որ քու ծառայակցիդ ողորմէիր, ինչպէս ես քեզի ողորմեցայ։ Եւ բարկացած՝ դահիճներուն ձեռքը մատնեց զանիկա, մինչև որ բոլոր պարտքը վճարէ։

Աստուած ալ ձեզի այսպէս պիտի ընէ, թէ որ ձեր եղբարց յանցանքը սրտանց չներէք (թողում)։

Քննութիւն ընել – Համար առնել
Համբերութիւն ունենալ – Երկայնամիտ լինել

Սրտանց – ի սրտից ձերոց
Տաղանդ, Քանքար, Մնաս – Սակի չափեր։

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Գայլ և Գառն

Ի նոյն գետափն հասին վարեալք ի ծարաւոյ գայլ և գառն.
Գայլ ի վերոյ ըզկայ էառ, գառն ի բացեայ՝ ի ստորև։
Հէնն ի հրապոյր յայնժամ դըրդեալ յարինախանձ որկորոյն,
Գըրգիռ ի մէջ էարկ բողոք բառնալով.
«Ընդէ՞ր զալխըդ պըղտորես ինձ ի յումպ»։
Պատասխանի ետ գեղմնաբարձն աճարեկ.
«Ցիս, գայլ, զիա՞րդ կարեմ զոր դուդ բողոքես,
Զ'ի քէն ալիքդ ինձ ի յարբումն իջանեն»։
Յաղթահարեալ փաստիցն ի սաստ գայլն՝ յաւել.
«Այլ անիծեր դու զիս՝ ամիսք են վեցեալ»։
Կըրկնեաց գառնիկն. «Եւ ոչ ծընեալ դեռ ես էի ես յայնժամ»։
Իսկ նա երդուեալ. «Օ՜ն և օ՜ն հայր քո ուրեմն անէծ զիս».
Եւ ժանտաժուտ ժանեօքն ըզնա յօշոտեաց։
Ի ճահ առակս այս այնոցիկ պատահէ,
Որոց զանմեղըս կեղեքեն բարբանօք։

### Բառագիտութիւն

Գետափն – Գետեզերք
Վարեալ ի ծարաւոյ – Ծարաւէ մըղուած
Գայլն ի վերոյ զկայ էառ – Գայլը վերը կեցաւ
Հէն – Աւազակ
Բարբանք – Պատճառանք
Բողոք բառնալ – Բողոքել
Գրգիռ ի մէջ էարկ – Գրգիռ տուաւ
Ումպ – Խում, խմելը
Ի հրապոյր դրդեալ – Հրապուրուելով
Յարինախանձ որկորոյն – Արիւն խմող կոկորդէն
Ամիսք են վեցեալ – Վեց ամիս կ'ընէ
Ժանտաժուտ ժանեօք – Գարշելի ակռաներով
Ի ճահ պատահէ – Կը պատշաճի, կը յարմարի
Գեղմնաբարձ – (Ոչխար) բուրդ կրող
Աճարեկ – Սաստիկ վախցած
Ցիս տէր – Ինծի նայէ, կ'աղաչեմ
Յաղթահարեալ – Յաղթուած
Փաստիցն ի սաստ – Փաստերուն ուժովը
Կեղեքեն – Կը չարչարեն։



## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

### Շարունակութիւն Նախորդին

265. Նայ տառերը (լ, ղ, մ, ն, ր, ռ) և ս, դ, ճ դիմորոշ յօդերը բառերուն բաղաձայն վերջաւորութեանց հետ կէս ըՙ հնչում կ'ունենան, ինչպէս յայտնի է։ Աստ(ը)ղ, արկ(ը)ղ, ակ(ը)ն, այժ(ը)մ, եզ(ը)ն, բարձ(ը)ր, տար(ը)ր. – Մարդ(ը)ս, բան(ը)դ, տէր(ը)ն, և այլն։

Այս տեսակ վերջաւորութեանց թէ որ ձայնաւորով սկսած բառեր յաջորդեն, ըՙ հնչումն այլ ևս չի մնար։ Օրինակ. Աստղ առաւօտու, հիմն արկանել, բանս այս, վասն այսորիկ, յաղագս այսորիկ, վասն որոյ, և այլն։

Իսկ եթէ նայ տառով վերջացող բառի մը դիմորոշ յօդերէ մէկն յաջորդէ, ըթի հնչումը յօդին և նայ տառին մէջ կը դրուի։ Զոր օրինակ. Աստ(ը)ղ—աստղ(ը)ս, հիմ(ը)ն—հիմն(ը)դ, անձ(ը)դ, անձ(ը)ն—անձն(ը)ն, դուռ(ը)ն—դուռն(ը)ս, որդ(ը)ն—որդն(ը)դ, կայս(ը)ր—կայսր(ը)ն, և այլն։

266. Ւ գիրն՝ իբր բաղաձայն՝ վՙ հնչում ունենալէ զատ, ւՙ հետ ալ ու ձայնը կը կազմէ՝ կէս ձայնաւորի հանգամանքով, ինչպէս ըսած ենք վերը (256 և Ծանօթ.)։ Արդ այս ու բաղադրեալ ձայնաւորէն առաջ կուգան ուա, ուէ, ուի, ուո երկբար-

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 265. Ի՞նչպէս կը գործածուի ըՙ հնչումը նայ տառերու և դիմորոշ յօդերու հետ. — 266. Ու բաղադրեալ ձայնաւորէն ի՞նչ երկբարբառներ կը կազմուին և ի՞նչպէս կը հնչուին։

*բառերը, որոնք կը կարդացուին վա, վե, վի, վո։ Օրինակի համար սա բառերուն չեղագիր մասերը պէտք է նոյնութեամբ գրել, բայց կարդալ այնպէս՝ որպէս թէ վով գրուած ըլլային. Աստուած, յունուար, պատուական, նուէր, պատուէր, արուի, կ՚ըսուի, տուիչ, անուոյ, թուոյ, բանուոր, գինուոր, և այլն։*

Ծանօթ. — Կը խոստովին Գ. Լծորդութեան բայերուն անկատարները, ու վերջացող բառերն՝ աշխարհաբարի մէջ և քանի մը օտարազգի անուններ։ Օրինակ. Արգելուի, զենուի, թողուի, արգելուաք, զենուաք, թողուաք – Նուի, գնչուի, կատուի, բանսարկուի – Անթուան, Ֆրանսուա, Սամուէլ, Քրոմուէլ, Լուինի, և այլն։ — Տուիչ բառէն կազմուած է տուչութիւն՝ զոր պէտք է կարդալ տըւչութիւն։ Իսկ տու բայարմատով բարդուած՝ դատատու, փոխատու, քարոզատու և այլն բառերու վրայ երբ, ութիւն ածանցն աւելցուի, նախորդ ու ձայնը ըւ պէտք է հնչել։ Օրինակ. Դատատուութիւն՝ դատատ(ըւ)ութիւն, փոխատուութիւն՝ փոխատ(ըւ)ութիւն, քարոզատուութիւն՝ քարոզատ(ըւ)ութիւն, ևն.

267. *Այ, ոյ զուգադրութեանց մէջ յ գիրը պէտք է կէս ի կարդալ, ինչպէս 249 և 250 համարներով վերը բացատրեցինք։ Միայն՝ ոյ վերջաւորութեան երբ ձայնաւորի տեղ՝ բաղաձայն գիր մը յաջորդէ, ոյն հնչումն ալ ույ կը փոխուի, այսինքն այնպէս կը կարդացուի՝ որպէս թէ ույ գրուած ըլլար։ Օրինակ. Բոյն (բույն), լոյս (լույս), անոյշ (նույշ), հաւաքոյթ (քույթ), ձանձրոյթ (րույթ) – ինչպէս նաև գրաբար գիմորոշ յոդ առնող բոլոր*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 267. Ի՞նչպէս կը կարդացուին այ, ոյ զուգադրութիւնները, և ո հնչումը ինչ բանի կը փոխուի երբ բաղաձայն գիր յաջորդէ։



*ոյ վերջաւորովները. Մարդոյս, գործոյդ, արդարոյն, տարւոյս, թզենւոյդ, եկեղեցւոյն, և այլն։*

Ծանօթ. — Հին յատուկ անուններու մէջ ով զուգադրութիւնը՝ բաղաձայն գիրէ մը առաջ՝ երկար ո պէտք է արտաբերել առանց վը հնչելու։ Օրինակ. Անտովն կարդա՛ Անտոն, Յակովբ՝ Յակոբ, Յովբ՝ Յոբ, Սիմովն՝ Սիմոն, Թովմաս՝ Թոմաս, Յովնան՝ Յոնան, Ովսաննա՝ Ոսաննա, Մովսէս՝ Մոսէս, և այլն։

268. *Ւ տառը ի ձայնաւորին քով գրուելով իւ հնչումը կը կազմէ, ինչպէս վերն ըսինք (256)։ Արդ այս զուգադրութիւնը իվ կը կարդացուի ամէն անգամ որ բաղաձայն գրի մը յաջորդէ։ Օր. Անիւ, կռիւ, հաշիւ, բանիւ, սրտիւ, գանձիւ, հիւանդ, դիւահար, թիւեր։*

*Իսկ երբ իրեն յաջորդէ բառին մաս կազմող բաղաձայն գիր մը, ֆրանսերէն uին պէս կը հնչուի, և երբեմն ալ եու։ Օրինակ. Անկիւն, լալիւն, չաչիւն, հերիւն, քրթմընջիւն, հիւթեղ, հիւծախտ, նիւթական, բիւրաւոր, ձիւնաբեր, սիւնազարդ. — Իւր կարդա՛ եուր. Հարիւր՝ հարեուր, առիւծ՝ առեուծ, արիւն՝ արեուն, կորիւն՝ կորեուն, զօրութիւն՝ զօրութեուն, և այլն։*

Ծանօթ. — Սակայն ուշ դնելու է որ այս զուգադրութիւնը՝ իրեն յաջորդող բաղաձայնը եկամուտ կամ պատահական յաւելում ըլլալու պարագային՝ նորէն իվ կը կարդացուի։ Օրինակի համար, վերի սա բառերը գիր և մասնիկ առնելով հանդերձ՝ հնչումնին կը պահեն. Անիւ՝ անիւներ (անիվներ), կռիւ՝ կռիւք, հաշիւ՝ հաշիւդ, հովիւ՝ հովիւս, զօրաց

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 268. Ի՞նչպէս կը կազմուի իւ զուգադրութիւնը և քանի՞ հնչում ունի։

թիւ՝ զօրաց թիւն, և այլն։ — Միայն գրաբար Պարզ հոլովման Գ ձևին գործիականի յոգնակին բացառաբար եուք կը կարդացուի և ոչ իվք։ Օրինակ. Բանիւ՝ բանիւք (կարդա՛ բանեուք), գանձիւ՝ գանձիւք, սրտիւ՝ սրտիւք, և այլն։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Գրաբարէ աշխարհաբար

### Ա. Պետրոս զերծանի ի բանտէն աղօթիւք հաւատացելոց

*Հետեւեալ գրաբար ու աշխ. հատուածներուն մէջ ցոյց տալ շեղագիր բառերուն հնչական պատճառները։*

Պետրոս ի պահեստի էր ի բանտին, և աղօթք սաստիկ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած։ Իբրև կամեցաւ զնա ածել Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց կապեալ կրկին շղթայիւք, և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն։ Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վերայ, և լոյս ծագեաց ի տանն. և խթեաց զկողս Պետրոսի, յարոյց զնա և ասէ. Արի՛ վաղվաղակի։ Եւ անկան շղթայքն ի ձեռաց նորա։ Եւ ասէ ցնա Հրեշտակն. Ա՛ծ զգօտի քո, և ա՛րկ զհողաթափս յոտս քո։ Եւ արար այնպէս։ Եւ ասէ ցնա. Ա՛րկ զձորձս քո, և ե՛կ զկնի իմ։ Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեն ի Հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել։ Եւ իբրև անցին նոքա ըստ մի պահ և ըստ երկուս, եկին մինչև ի դուռնն երկաթի՝ որ հանէր ի քաղաքն, որ ինքնին բացաւ նոցա. մտեալ անցին ընդ փողոց մի, և վաղվաղակի ի բաց եկաց ի նմանէ Հրեշտակն։ Եւ լեալ ի միտս՝ եկն ի տուն Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս, ուր էին բազումք ժողովեալ և աղօթս առնէին։ Եւ բախեալ զդուրս տանն՝ մատեաւ աղախին մի ունկն դնել, և ծանուցեալ զձայնն



Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ եբաց զդուռնն, ի ներքս ընթացեալ պատմեաց, եթէ Պետրոս առ դրանն կայ։ Նոքա ասեն ցնա. Մոլիս։ Եւ նա ևս պնդէր թէ այդպէս է. և նոքա ասէին. Հրեշտակ նորա իցէ։ Եւ Պետրոս սաստիկ բախէր։ Իբրև բացին՝ տեսին զնա և զարմացան։ Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել. և պատմեաց որպէս և Տէր եհան զնա ի բանտէն, և ասէ. Պատմեցէք Յակովբայ և եղբարց զայս։ Եւ ելեալ գնաց յայլ տեղի։ Եւ իբրև եղև այգ, էր խռովութիւն մեծ ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղև։ Իսկ Հերովդէս իբրև խնդրեաց զնա և ոչ եգիտ, հարցեալ զպահապանսն՝ հրամայեաց սպանանել։

### Աշխարհաբարէ գրաբար

### Կարելի չէ ինծի բանաստեղծ ըլլալ

Դիոնեսիոս բռնաւորը մեծանուն բանաստեղծներու հատուածները կարդալով՝ միտքը դրաւ անոնց նման քանի մը տող շարադրել։ Ամէն անգամ յօրինած երգերը գիտուններու դատաստանին կ'ենթարկէր, և կ'ուզէր որ հաւնին ու գովեն։ Թէպէտ ցուրտ և անալի էին գրածները, բայց անոնք առ երեսս սուտ գովեստներ կուտային, գիտնալով թէ որպիսի բռնաւոր է Դիոնեսիոս։ Փիլոքսենէս միայն եղաւ պալատին մէջ որ չկրցաւ երեսպաշտութեամբ ճշմարտութիւնը ծածկել. վասն զի նա անկեղծ և աներկիւղ սիրտ ունենալով՝ յայտնապէս այն գրուածներուն թերութիւնները կը պախարակէր։ Բռնաւորն այս բանիս վրայ բարկացած՝ հրամայեց թիկնապահներուն որ Փիլոքսենէսը բանտ դնեն։ Բայց քանի մը օրէն բարեկամներուն խնդրանքով բանաստեղծն ազատած էր բանտարգելութենէն։ Օր մը դարձեալ հանեց Դիոնեսիոս իր շինած ուրիշ աւելի անհամ քերթուածները ու հաւնելով սկսաւ կարդալ. և միանգամայն ուրիշներուն համարումն ալ ուզելով չահիլ՝ հարցուց Փիլոքսենեսի. Ի՞նչ կ'ըսես ասոնց համար, գեղեցիկ կերպով հիւսուած չե՞ն արդեօք։ Փիլոքսենէս՝ առանց անոր պատասխան տալու՝ գլուխը թիկնապահներուն դարձուց և ըսաւ. «Նորէն զիս բանտ տարէք»։

Անհամ – Անալի
Հանելով – Անորժ համութեամբ
Բանդ դնել – Ի բանտ արկանել
Ընթարկել – Արկանել (ընդ գործիականով)
Գեղեցիկ կերպով հիւսուած – Գեղեցկահիւս.

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Թագաւորել Քրիստոսի ի վերայ ամենեցուն

Զի՞ խռովեցան ազգք, և ընդէ՞ր ի խորհուրդ
Գումարեցան ի միասին ժողովուրդք.
Եւ պետք երկրի ճակատեցան տարապարտ
Տալ ընդդէմ Տեառն և Օծելոյն Նորին մարտ:
Բամ խըզեսցուք զնորա կապանըն դըժնեայ,
Եւ ընկեսցուք ի մէնջ ըզլուծն ի բացեայ:
Այլ ծիծաղի բնակեալն յերկինս ըզնոքօք,
Արհամարհեալ զաստուածամարտ նոցին ջոկ.
Եւ ի խօսել անդ՝ բարկութեամբն իւկ իւրով
Արկանէ բուռն ի նոսա ահ և խըռով:
Ես ի Սիոն լեառըն կացի Թագաւոր,
Ի լեառըն սուրբ իւր նա Նըստոյց զիս յաթոռ,
Լինել քարոզ և վրէժխընդիր օրինաց,
Պատմել հանուրց ըզպատուիրանս իւր ազգաց:

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Գումարել – Ժողվել | Ջոկ – Խումբ, գունդ |
| Պետ – Գլխաւոր, մեծ | Խռով – Խռովութիւն, շփոթ |
| Տարապարտ – Փուճ տեղ | Խզեսցուք – Փրցնենք, կտրենք |
| Մարտ տալ – Պատերազմիլ | Քարոզ – Հրատարակող |
| Բամ – Թէ, որ | Հանուրց – Ամենուն |
| Դժնեայ – Խիստ, անտանելի | Ի բացեայ – Մէկդի |

Աստուածամարտ – Աստուծոյ դէմ կռուող։



## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

### Առոգանութիւն

269. *Առոգանութիւն կամ Արտասանութիւն* ընթերցանութեան այն մասն է, որ կը սորվեցնէ բառերուն և վանկերուն պարտուպատշաճ զօրութիւնը տալ՝ ձայնի յարմար ելևէջներով։

Ասոր համար երեք նշան ունինք հայերէնի մէջ.

Շեշտ (՛), Պարոյկ (՞), Երկար (´),

որոնք միշտ ձայնաւոր գրի մը վրայ կը դրուին՝ ուր որ պէտք է։

270. *Շեշտը*՝ ձայնին ոյժ տալու կամ զարնելու նշանն է, և նիւթապէս կը դրուի միայն կոչականներու, հրամայականներու, բացասական մակբայներու և ձայնարկութեանց վրայ։ Իսկ ուրիշ տեղեր՝ առանց նշանակուելու՝ միշտ կը հնչուի։

Մեր հայերէն բառերն անջատաբար նկատուելով՝ իրենց վերջին վանկին վրայ կը շեշտուին ընդհանրապէս, և *Շեշտողր* բառեր կ'ըսուին։ — Բայց կան քանի մը բառեր՝ որ կամ վերջընթեր վանկին վրայ շեշտ կ'առնեն և *Յարաշեշտ* կ'ըսուին. կամ վերջընթերի նախնթային վրայ և կ'ըսուին *Նախայարաշեշտ*։ Կան բազմաթիւ բառեր ալ որ ըն-

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 269. Առոգանութիւնն ի՞նչ է և ձայնի յարմար ելևէջի քանի՞ նշան կայ հայերենի մէջ. — 270. Շեշտն ի՞նչ նշան է, մեր հայերէն բառերն ընդհանրապէս ո՞ր վանկին վրայ շեշտ ունին, և ի՞նչ կը հասկըցուի Շեշտողր, Յարաշեշտ, Նախայարաշեշտ և Բուր բառ ըսելով։

*Նաեւ շեշտ չունին և Բութ կամ Ընչեշտ բառեր կ՚ըսուին։ Օրինակ.*

Ճեշտոլոր բառեր. — *Սիրեա՛, սիրեցէ՛ք, արա՛, արարէ՛ք, լուարո՛ւք, տարա՛յք, կալարո՛ւք, ցնծա՛, ցնծացէ՛ք, երթա՛յք, երթիցո՛ւք, արի՛, մատո՛. վարդապե՛տ, տե՛ս որպիսի՛ են քարինքս, և այլն։*

Յարաշեշտ. — *Ա՛յսօր, ա՛յսինքն, ա՛յսպէս, ա՛յնչափ, նո՛յնչափ, ա՛յսքան, նո՛յնքան, յա՛յնժամ, ա՛յլազգ, պէ՛սպէս, գրե՛թէ, թե՛րևս, քանի՛օն, բա՛րէ, հա՛պա։*

Նախայարաշեշտ. — *Ա՛ւասիկ, ա՛ւադիկ, ա՛ւանիկ, ահա՛ւասիկ, մա՛նաւանդ, նո՛յնժամայն, և այլն։*

Բութ կամ Ընշեշտ. — *Աստուած, բարի, բազում, մեծամեծ, առաջներորդ, երկրորդ, վեցերորդ, տասներորդ, մետասաներորդ, քաներորդ, յիսներորդ, հարիւրերորդ, հազարերորդ, դարձեալ, արդարև, աղէ, իբր, իբրև, քան, որպէս (հոլովառու բառ), մինչ, մինչև, վասն, և այլն։*

271. *Վերոյիշեալ բառերն անշեշտ կամ շեշտաւոր են՝ առանձին առնելով. բայց գրութեան մէջ երբ մէկմէկու քով գան, արտասանուելու համար անշեշտ բառերն յաճախ շեշտաւոր կըլլան և շեշտաւորներն՝ անշեշտ. և սովորաբար նախընթացը կը շեշտուի, և հետեւորդն՝ իր շեշտը կը կորսնցընէ։ Զոր օրինակ.*

*Բարերա՛ր տէր, տէ՛ր բարերար, տօ՛ն մեծ, մե՛ծ տօն, մօ՛տ ըրէ՛ք, ունկնդի՛ր լերո՛ւք, երկի՛ր պագէ՛ք, ձե՛ռն տուր, ձե՛ռք տուր, հնազա՛նդ եղիր, ողորմա՛ծ եղէ՛ք, օրինա՛կ առէ՛ք, դո՛ւ ես Աստուա՛ծ իմ, ա՛յդպէս արա, առաւե՛լ ևս, ե՛ս առաւել, մի՛ այդպէս, ո՛չ նոյնպէս, յա՛յնժամ գիտացես, գիտացե՛ս յայնժամ, քեզի՛ կաղաչեմ, ես ըսի քեզի, դո՛ւ մանաւանդ, նա՛ մանաւանդ, Ազարիա՛ եղբայր, եղբա՛յր Ազարիա, Աստուա՛ծ իմ Աստուած իմ, Մարթա՛ Մարթա, սեղա՛ն սեղան, Սաւո՛ւղ Սաւուղ, և այլն։*



*Ծանօթ. — Ո՛վ, ի՛մ, ի՛նչ, ո՛ք, իբրև, որպէս (հոլ. բառ), իբրև, վասն, քան, եթէ, գոնէ, զի, առ, ի, և, ը ձայնորը, ինչպէս նաև աշխարհաբար ու, կը, մը, պիտի, համար՝ ամէն պարագայի մէջ անշեշտ են միշտ։*

272. *Պարոյկը մեր լեզուին հարցական նշանն է, և կը դրուի բառերու այն ձայնաւոր գրին վրայ՝ ուր պիտի զգացուի հարցման գլխաւոր ոյժը։ Օրինակ.*

*Զի՞, ընդէ՞ր, ուստի՞ գաս, կերա՞ր արդեօք, ո՞չ տեսանես. — հասկցա՞ր, ինչո՞ւ կը հարցնես, չե՞ս տեսներ, մինչև ո՞ւր պիտի երթանք, և այլն։*

*Ծանօթ. — Ըստ ուղիղ արտասանութեան՝ իմաստի մը մէջ չի բաւեր պարոյկ ունեցող բառը միայն հարցական ընել, այլ գլխաւոր ձայնի ոյժն անոր տալէն ետքը՝ մի և նոյն գաղափարը բացատրող բառերուն վրայ ևս աստիճանաբար շարունակելու է։*

*Երկարը կը դրուի միջարկութեան մը կամ ուրիշ բառի մը ձայնաւոր գրերու վրայ՝ երբ կերք մը յայտնել ուզենք։ Ինչպէս.*

*Բա՜բէ, վա՜յ, ո՜ անմիտ, տէ՜ր տէր, Երուսաղէ՜մ Երուսաղէմ. – եղո՜ւկ, հազա՜ր ափսոս, մե՜ղք մեզի, երանի՜ ձեզի, իցի՜ւ թէ գիտնային, և այլն։*

273. *Հրապարակային ընթերցման և արտասանութեան համար կը պահանջուի նաև յետագայ կանոններուն գործադրութիւնը.*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 271. *Անշեշտ և շեշտաւոր բառերն ի՞նչ փոփոխութիւն կը ստանան գրութեան մէջ և երկու բառեր քովէ քով եկած ատեն՝ սովորաբար ո՞րը կը շեշտուի։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 272. *Ի՞նչ նշաններ են Պարոյկն ու Երկարը, ո՞ւր կը դրուին և ի՞նչպէս կը գործածուին. — 273. Հրապարակային ընթերցման և արտասանութեան համար դեռ քանի՞ կանոններ կան գործադրելիք։*

1°. Լսարանին ընդաձակութեան համեմատ՝ ձայնի աստիճան. — 2°. Յստակ և հատ հատ հնչում գիրերու և վանկերու. — 3°. Անանջատ արտաբերում քերականօրէն միացած բառերու. — 4°. Պատշաճ դադար ամէն կէտերու առջև. — 5°. Շեշտում և բնական ելևէջ՝ առանց եղանակի, — 6°. Որոշ արտայայտութիւն պարզին ու երկարին. — 7°. Մտային կէտադրութիւն և ձայնի ընդհատում՝ ըստ իմաստին։

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

---

### Գրաբարէ աշխարհաբար

### *Պատուհաս Անանիայ և Սափիրայ*

*Սա և յաջորդ հատուածին շեղագիր բառերը կարդալ ու բացատրել՝ առոգանութեան նշաններու և կանոններու համաձայն։*

Այր ոմն Անանիա անուն, հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ, վաճառեաց ագարակ և խորեաց ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն, և բերեալ մասն ինչ՝ եդ առ ոտս Առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ հոգւոյն սրբոյ, և խորել ի գնոց գեղջն. ո՞չ ապաքէն մինչ կայրն քո էր, և ի վաճառելն ընդ քո իշխանութեամբ էր. զի՞ է զի եդիր ի սրտի քում զիրս զայս. ոչ ստեցեր մարդկան՝ այլ Աստուծոյ։ Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի. և եղև ահ մեծ ի վերայ ամենեցուն որ լուան զայն։ Յոտն կացին երիտասարդքն և ամփոփեցին զնա, և տարան թաղեցին։ Եւ եղև իբրև ժամք երեք անցին, և կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ ի ներքս։ Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ ցնա. Ասա՛ դու ինձ թէ ա՞յնչափ զնոց զգեօղն վաճառեցէք։ Եւ նա ասէ. Այո՛, այնչափ։ Եւ ասէ



ցնա Պետրոս. Զի՞ է զի միաբանեցէք դուք փորձել զհոգին Տեառն. ահա ոտքն որ թաղեցին զայրն քո ի դրան, հանցեն և զքեզ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա և եհան զոգի. մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ, և հանին թաղեցին առ առն իւրում։ Եւ եղև երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն և ի վերայ ամենեցուն որ լուանն զայն։

Խորել — Պակսեցնել, հանել, գողնալ։

### Աշխարհաբարէ գրաբար

### *Անտոն Մուրաթորի*

Մօտենայի դքսութեան Վինեոլա պզտիկ երկրին մէջ 1660ին դպրոց մը կար բազմութեամբ աշակերտաց։ Օր մը տղոցմէ մէկ քանին որ պատուհանին քով էին՝ ոտքի վրայ ելած՝ աչքի ծայրով դուրս կը նայէին. և ուսուցիչը սաստեց որ տեղերնին նստին։ Սակայն երբ տեսաւ թէ երկրորդ ու երրորդ օրն ալ նոյնը կը պատահի, ելաւ և ինք անձամբ կամացուկ մը պատուհանին մօտեցաւ ու պատանեկի մը գլուխը տեսաւ. մէկէն դուրս վազեց և գտաւ ութ կամ ինը տարեկան տղայ մը, պատռտած զգեստներով և գրեթէ ցրտէն սառած. և հարցնելով թէ ի՞նչ բանի համար ամէն օր այն պատուհանին տակ կը կենար, տղան այս կերպով պատասխանեց և ըսաւ. «Հայրս զիս դպրոց ղրկելու բաւական ստակ չունի, և ես շատ կը փափաքիմ բան մը սորվիլ. ասոր համար կու գամ հոս կը կենամ ձեր դասախօսութիւններուն մտիկ ընելու»։ Այն ատեն դասատուն ըսաւ. «Թէ որ ստոյգ է ըսածդ՝ զրուցէ ինծի այս առաւօտ ի՞նչ աւանդեցի»։ Տղան առանց շփոթելու՝ լսած դասն ամբողջապէս կրկնեց հոն, նմանապէս երէկուան և առջի օրուան դասերը։ Վարժապետն ապշելով՝ գրկեց այն սիրուն պատանին և զանիկա իր դպրոցն առաւ։ Քսանուերկու տարուան հասակին մէջ՝ այս պատանիս Միլանու մէջ պատմութեան դասատու կարգուած էր, և իր բազմաթիւ և հմտալից երկասիրութեանց շնորհիւ՝ որոնցմով հայրենի պատմութիւնը լուսաբանեց, Հայր Իտալական Պատմութեան անունն ընդունեցաւ։ — Սոյն պատանիս էր Լուդովիկոս Անտոն Մուրաթորի։

Աչքի ծայրով նայիլ – Ծայրիւք աչաց հայել
Կամացուկ մը – Յուշիկ, մեղմով իմն
Կրկնել – Երկրորդել
Երէկ ու առջի օր – Երէկ և եռանդն
Ապշիլ – Յապուշ կրթել
Գրկել – Ողջագուրել
Սիրուն – Շնորհագեղ։

### ՏԱՂԿԱՔԱՂ

## *Թագաւորել Քրիստոսի ի վերայ ամենեցուն*

(*Շարայարութիւն*)

*Դու ես որդի իմ, Տէր ասաց ցիս, դու ես,*
*Եւ ես այսօր ի յարգանդէ ծընայ զքեզ.*
*Խընդրեա՛ յինէն և տաց քեզ զազգս ի ստացուած,*
*Եւ ծագք երկրի լիցին քեզ ծագք սահմանաց։*
*Հովուել գնոսա գաւազանաւ երկաթի,*
*Եւ խորտակել որպէս զանօթ ինչ բըրտի։*
*Զայս, թագաւորք, ի միտ առէք արդ պատգամ,*
*Եւ ոյք դատիք զերկիր, խըրատ զայս ձեզ տամ.*
*Ծառայեցէք Տեառն երկիւղիւ հանապազ.*
*Զըւարճախառըն դողութեամբ կալ ի սպաս։*
*Հայրագորով լերուք խրատուն իւր հնազանդք,*
*Զի մի ցասման նորին ըզձեօք անկցին չանթք,*
*Եւ ցըրուեսջիք հալածականք ընդ երկիր,*
*Յարդարութեան ճանապարհէն տարագիր։*
*— Ո՜հ, երանի՜ ոյք յուսացեալ են ի Տէր,*
*Ի բորբոքել ցասման նորա ընդդէմ ձեր։*

*Բառագիտութիւն*

Ծագք երկրի – Աշխարհիս ծայրերը
Անօթ – Աման
Բրուտ – Հողէ ամաններ շինող
Կալ ի սպաս – Ծառայել
Հայրագորով – Հօր գութ ունեցող
Շանթ – Կայծակ
Զուարճախառն – Ուրախութեան հետ խառն
Տարագիր – Օտար, հեռու։

---

Գ.

# ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

## ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ

### Բարդութիւն եւ ածանցում

274. *Բառերը՝ կազմութեան տեսակէտով՝ երեք ձև ունին. Պարզ, Բարդ և Ածանցեալ։*

*Պարզ կամ արմատական կ'ըսուին այն բառերը՝ որ ուրիշ բառերու կամ մասնիկներու հետ կապուած չեն։ Օրինակ.*

*Լոյս, ջուր, սէր, հաց, բոց, քար, սիրտ, կոյր, սուրբ, քաղաք, խաւար, և այլն։*

*Բարդ կ'ըսուին անոնք՝ որ մէկէ աւելի արմատական բառերու միութեամբ կը ձևանան։ Օր.*

*Մեծ(ա)տուն, մարդ(ա)սէր, վրէժ-խնդիր, առ-ձեռն-պատրաստ, և այլն։*

*Սակայն բարդ բառեր կազմելու եղանակին,*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 274. *Բառերը քանի՞ ձև ունին կազմութեան տեսակէտով, և որո՞նք կ'ըսուին պարզ կամ արմատական ու բարդ բառեր։*

*տեսակին, կարգին ու հոլովին նկատմամբ՝ քանի մը գիտելիքներ կան։*

275. 1°. *Երկու պարզ բառեր բարդ ըլլալու համար ընդհանրապէս ա գիրով կը միանան։ Օր.*

*Խաչ-ա-փայտ, կարճ-ա-միտ, չար-ա-սէր, դաւ-ա-դիր, տղայ-ա-միտ, դիւ-ա-հար, ըղձ-ա-կաթ, ծանր-ա-ձայն, շատ-ա-խօս, սնոտի-ա-պաշտ, և այլն։*

2°. *Եթէ բարդ կազմող բառերէն առաջինը ձայնաւոր գիրով մը վերջանայ՝ բացի իէն, նորէն կը միանան աով, և ասկէ առաջ յ գիրը կը գրուի՝ երբ նախորդ բառին վերջին ձայնաւորը ա կամ ո ըլլայ։ Օրինակ.*

*Է-ա-կից, ազնու-ա-գութ, հրէ-ա-խումբ, դի-ա-զարդ, լի-ա-ձեռն. — Ընծա-յա-բեր, տղա-յա-սպան, հո-յա-կապ, հաճո-յա-կատար, և այլն։*

3°. *Եթէ բարդ բառերէն առաջինը բազմավանկ ըլլայ և ի վերջանայ, սովորաբար ե կամ է կը փոխուի, և այսով երկու բառերը կը միանան։ Օրինակ.*

*Բար-ե-գործ, հոգ-ե-կիր, ոսկ-ե-սանձ կամ ոսկ-է-սանձ, որդ-ե-գիր կամ որդ-է-գիր, գօտ-է-պինդ, խնամ-ե-խօս, գար-ե-հաց կամ գար-է-հաց, և այլն։*

*Ծանօթ.* — Քիչ անգամ այս ի գիրը կը պահուի և երբեմն ալ ա կը փոխուի։ Օր. Անդրի-ա-գործ, հոգի-ա-նիւթ, սնոտի-ա-պաշտ, հեռ-ա-բնակ, ծիրան-ա-զգեաց կամ ծիրան-ե-զգեաց, թեր-ա-հաւատ կամ թեր-ե-հաւատ, սքանչել-ա-հրաշ, և այլն։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 275. *Բառերն ի՞նչպէս կը բարդուին ընդհանրապէս, և առաջինը ա, ո և ի վերջանալու պարագային ինչո՞վ կը միացուին։*



276. *Եթէ բարդ կազմող երկու բառերէն նախընթացը բաղաձայն գրով վերջանայ և երկրորդը ձայնաւորով սկսի, առանց կապ դրուելու կը միանան։ Ինչպէս.*

*Մեծ-անուն, բազմ-ամբոխ, մարդ-ատեաց, վեր-արկու, ծով-եզր, հաւ-որս, նոր-ընծայ, ձկն-որս, պառաւ-որդի, կենցաղ-օգուտ. որոտ-ընդոստ, և այլն։*

*Ծանօթ.* — Երբեմն երկրորդ բառը բաղաձայնով սկսելու պարագային ալ յօդակապ չի դրուիր, և երբեմն ալ դրուածը կը վերցուի՝ եթէ նոյն բառը վերջադիր ածանցով մը երկարուած ըլլայ։ Օրինակ. Վրէժ-խնդիր, կաթն-կեր, ձեռն-տու, ժոյժ-կալ, ոտն-հար, ջր-բեր, լր-տես, օր-հաս, տն-տես. — Արծաթասէր՝ արծաթսիրութիւն, երկայնամիտ՝ երկայնմտութիւն, շատախօս՝ շատխօսութիւն, անձնանուէր՝ անձնուիրութիւն, և այլն։

277. *Անեզական բառերը բարդուելու ատեն սովորաբար ք գիրը կը ջնջուի, ու երբեմն ալ ս կը փոխուի։ Օրինակ.*

(ք գիրը ջնջուած)

| | | | |
|---|---|---|---|
| *Փառք, սէր* | *բառերէն* | *կը կազմուի* | *փառասէր* |
| *Աչք, գեղ* | » | » | *աչագեղ* |
| *Կամք, կոր* | » | » | *կամակոր* |
| *Դժոխք, կուլ* | » | » | *դժոխակուլ* |
| *Միտք, հաճ* | » | » | *մտահաճ* |

(ք գիրը ս փոխուած)

| | | | |
|---|---|---|---|
| *Կեանք, պարգև* | » | » | *կենսապարգև* |
| *Օրէնք, դիր* | » | » | *օրէնսդիր* |
| *Մեղք, քաւիչ* | » | » | *մեղսաքաւիչ, և այլն։* |

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 276. *Ի՞նչպէս կը միացուին բարդ կազմող երկու բառեր՝ եթէ առաջինը բաղաձայնով վերջանայ ու երկրորդը ձայնաւորով սկսի.* — 277. *Անեզական բառերն ի՞նչպէս կը բարդուին։*

278. Եթէ բարդ կազմող բառերէ մին ածական ըլլայ և միւսը գոյական, սովորաբար ածականն առաջ կը դրուի, և քիչ անգամ գոյականը։ Օրինակ.

Մեծատուն, շատախօս, ծանրաձայն, բարեսիրտ, չարակամ, խստակրօն, յաղթանդամ, քաղցրահամ. — Մտահարուստ, կամայօժար, գլխակոր, և այլն։

Գոյական և ածական բառերէ զատ, կը բարդուին նաեւ բայարմատներ, դերբայներ, բայածականներ, դերանուններ, նախդիրներ ու մակբայներ։ Օրինակ.

Բայարմատ. Դիւրիմաց, աշխարհակեցոյց, զէնընկէց, հեշտընկալ. — Դերբայ եւ Բայածական. Ընտրելակից, ամէնօրհնեալ, բազմերգելի, լսելափակ, շիջելափառ. — Դերանուն. Ինքնաբոյս, նոյնագոյ, իմածին, նայապէս, քոյինաշունչ, իւրաստեղծ. — Նախդիր. Զառիվեր, զառիվայր, առբերեմ, ընդարձակ, ընդաստուն, ըստգիւտ, ստերիւր, ցայգ, ցերեկ. — Մակբայ. Այժմածին, անդրաշխարհեան, դեռաբոյս, ոչէ, և այլն։

279. Ինքնաբարդ կ՚ըսուին իրենք իրենց վրայ բարդուած միևնոյն բառերը։ Ասոնք կը կազմուին ընդհանրապէս ա յօդակապով, երբեմն՝ առանց յօդակապի, և յաճախ՝ երկրորդ մասին մէջ տառի մը փոփոխումով, ձայնաւոր թէ բաղաձայն։ Օր.

Յօդակապով. Դառնադառն, համահամ, զանազան, ժիրաժիր, մեծամեծ, գունդագունդ, չարաչար, դէզադէզ, շեղջաշեղջ. — Առանց Յօդակապի. Պէսպէս, վաղվաղ, բեկբեկ, ծործոր, բաղբաղեմ, գեղգեղեմ, վազվազեմ, փայփայեմ,

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 278. Ի՞նչ կարգով կը բարդուին գոյականն ու ածականը, և ուրիշ ո՞ր բառերը դեռ կրնան միացուիլ բարդ կազմելու համար. — 279. Ո՞ր բառերը կ՚ըսուին Ինքնաբարդ, և քանի՞ ձև ու նշանակութիւն ունին։



կցկցեմ, ձգձգեմ, շրջշրջեմ. — Տառական փոփոխումով. Բարձրաբերձ, ժանտաժուտ, աղջամուղջ, խաժամուժ, խառնիխուռն, հաստամեստ, և այլն։

Այս և ասոնց նման ինքնաբարդ բառեր իրենց նշանակած գաղափարին սաստկութիւնը կամ գերագոյն աստիճանը ցոյց կու տան։

280. Բարդութիւնները թէև աւելի ստէպ ուղղական հոլովով կ՚ըլլան, բայց՝ ի հարկին՝ միւս հոլովներէ ալ բարդ բառեր կը կազմուին, մանաւանդ սեռական ու հայցական։ Օրինակ.

Սեռական. Անուանակիր, ականատես, աստեղաբան, առնակերպ, հօրաքոյր, մօրեղբայր, քեռորդի, կնոջածին, տանէրէց, շանագլուխ, չարեացապարտ, մտացաթեւ, դիցապաշտ, լերանցամէջք, և այլն. — Հայցական. (մանաւանդ յոգնակի). Բանսարկու, կենսաբեր, օրէնսգէտ, օրէնսուսոյց, մեղսասէր, մեղսաքաւիչ. — Տրակ. և Գործ. Առունկնճառ, առձեռնպատրաստ, ընդվայրայած. — Ձերբակալ, մտացածին, մեօքակերպ, և այլն։

281. Ածանցեալ կ՚ըսուին պարզ և բարդ բառերէն անոնք որ իրենց սկիզբը և վերջը գիր կամ մասնիկ մ՚առնելով՝ հակառակ և զանազան նշանակութիւն կ՚ունենան։

Բառերու սկիզբը դրուող սովորական ածանցներն են. ան, ապ, դժ, տ, չ, որոնք իրի մը կամ որպիսութեան մը ներհակը ցոյց կու տան։ Օր.

Բան՝ անբան, կիրթ՝ անկիրթ, իրաւ՝ անիրաւ, երախտ՝ ապերախտ, կար՝ ապիկար, բախտ՝ դժբախտ, գոհ՝ դժգոհ, պատեհ՝ դժպատեհ, գեղ՝ տգեղ, ձեւ՝ տձեւ, քուն՝ տքուն, ազգ՝ չազգ, ինչ՝ չինչ, իք՝ չիք, արժանի՝ չարժանի, են.։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 280. Բարդութիւններն ի՞նչ հոլովով կրնան ըլլալ. — 281. Ո՞ր բառերն Ածանցեալ կ՚ըսուին, և բառերու սկիզբը դրուողները որո՞նք են, ցոյց տուր օրինակներով։

*Ծանօթ.* — Այն ածանցը երբեմն ամ կը փոխուի բ և պ գրերուն առջև ըստ ուղղագրական կանոնին (255 ծն.)։ Օր. Անբաւ՝ ամբաւ, անպարիշտ՝ ամպարիշտ, և այլն։ — Ապ միայն ձայնաւորի առջեւ կը գործածուի և տ բաղաձայնի առջև։

282. **Բառերու վերջը գրուող ածանցները բազմաթիւ են և երկարատև կրթութեան կարօտ։ — Մենք՝ փոխանակ մանրամասնութեանց՝ յաճախ գործածականները միայն կը նշանակենք, ուսանողին ուշադրութեանը յանձնելով յետագայ վերջաւորութիւններն իրենց յատուկ ձևով, նշանակութեամբ և օրինակներով։**

1°. **Ակ, եակ, իկ, ուկ.** — **Փոքրկացում, փաղաքշանք։**
Նաւ-ակ, գետ-ակ, անուշ-ակ, որդ-եակ, պատան-եակ. Հայր-իկ, մանկ-իկ, արև-իկ, ձորձ-իկ, անուշ-իկ. Ողորմ-ուկ. միայն-ուկ, ճնճղ-ուկ, և այլն։

2°. **Ական,ային.** — **Վերաբերում։**
Յուն-ական, վան-ական, նուիր-ական, տէրուն-ական. Խաւար-ային, օդ-ային, մեր-ային, երկն-ային, և այլն։

3°. **Արան, անոց, ոց.** — **Ընդունարան, տեղ։**
Վարժ-արան, հանգըստ-արան, ուստ-արան. Հիւանդ-անոց, վաճառ-անոց, գըլխ-անոց. Բազմ-ոց, ծաղկ-ոց, խոհակեր-ոց, դպր-ոց, և այլն։

4°. **Ատ.** — **Զրկում, հատում։**
Գուն-ատ, ականջ-ատ, ծայր-ատ, պոչ-ատ, և այլն։

5°. **Աւէտ.** — **Առատութիւն։**
Հոտ-աւէտ, երան-աւէտ, շահ-աւէտ, ընչ-աւէտ, ևն.։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 282. Բառերու վերջ գրուող ածանցները ո՞րչափ են, և որո՞նք են յաճախ գործածուածները։



6°. **Աւոր, եոր, ուոր.** — **Ունեցող, կրող։**
Ահ-աւոր, պսակ-աւոր, թուն-աւոր, զօր-աւոր. Հոգ-եոր, տար-եոր, ալ-եոր. Ձին-ուոր, ջր-ուոր, և այլն։

7°. **Եայ.** — **Նիւթի մը, ժամանակի մը և ազգի մը պատկանիլը։**
Աղիւս-եայ. բեհեզ-եայ, մագաղաթ-եայ, քառասնօր-եայ, այժմ-եայ, քրիստոն-եայ, քաղդ-եայ, և այլն։

8°. **Եան.** — **Անձի կամ սերունդի վերաբերում։**
Մամիկոն-եան, գարբին-եան, հայկ-եան ադամ-եան, քրիստոս-եան, և այլն։

9°. **Ենի.** — **Պատճառ, արդիւնք։**
Մայր-ենի, սրբ-ենի, վայր-ենի կամ վայր-ի. Վարդ-ենի, խնձոր-ենի, արջ-ենի, խոզ-ենի, և այլն։

10°. **Եղ.** — **Քանակը մեծ։**
Ձայն-եղ, մարմն-եղ, ականջ-եղ, ընչ-եղ, և այլն։

11°. **Եղէն.** — **Ինչ նիւթէ ըլլալը։**
Արծաթ-եղէն, հող-եղէն, հր-եղէն, մարմն-եղէն, ևն.։

12°. **Ոտ.** — **Ունակութիւն։**
Բոր-ոտ, ծակ-ոտ, երկչ-ոտ, մոռացկ-ոտ, կասկած-ոտ, և այլն։

13°. **Ուտ.** — **Շատ գտնուիլը.**
Ճախճախ-ուտ, վիմ-ուտ, աւազ-ուտ, և այլն։

14°. **Որդ.** — **Արհեստ, գործ։**
Որս-որդ, ժառանգ-որդ, խաղախ-որդ, նաւ-որդ, անց-որդ, բաժան-որդ, և այլն։

15°. **Ացի, եցի, ցի.** — **Հայրենիք, երկիր։**
Քաղաք-ացի, պոնտ-ացի, պոլսե-ցի, արաբկեր-ցի ևն։

16°. **Ցու.** — **Ապագայ պաշտօն կամ վիճակ։**
Քահանայա-ցու, մահա-ցու, ապականա-ցու, պիտանա-ցու, մատաղ-ցու, չապիկ-ցու, և այլն։

*Ծանօթ.* — Ան ածանցը երբեմն ամ կը փոխուի բ և պ գրերուն առջև ըստ ուղղագրական կանոնին (255 ծն.)։ Օր. Անբաւ՝ ամբաւ, անպարիշտ՝ ամպարիշտ, և այլն։ — Ապ միայն ձայնաւորի առջեւ կը գործածուի և տ բաղաձայնի առջև։

282. **Բառերու վերջը գրուող ածանցները բազմաթիւ են և երկարատև կրթութեան կարօտ։ — Մենք՝ փոխանակ մանրամասնութեանց՝ յաճախ գործածականները միայն կը նշանակենք, ուսանողին ուշադրութեանը յանձնելով յետագայ վերջաւորութիւններն իրենց յատուկ ձևով, նշանակութեամբ և օրինակներով.**

1°. **Ակ, եակ, իկ, ուկ։** — **Փոքրկացում, փաղաքշանք։**
Նաւ-ակ, գետ-ակ, անուշ-ակ, որդ-եակ, պատան-եակ. Հայր-իկ, մանկ-իկ, արև-իկ, ձորձ-իկ, անուշ-իկ. Ողորմ-ուկ. միայն-ուկ, ճնճղ-ուկ, և այլն։

2°. **Ական, ային.** — **Վերաբերում։**
Յուն-ական, վան-ական, Նուիր-ական, տէրուն-ական. Խաւար-ային, օդ-ային, մեր-ային, երկն-ային, և այլն։

3°. **Արան, անոց, ոց.** — **Ընդունարան, տեղ։**
Վարժ-արան, հանգըստ-արան, ուետ-արան. Հիւանդ-անոց, վաճառ-անոց, գըլխ-անոց. Բազմ-ոց, ծաղկ-ոց, խոհակեր-ոց, դպր-ոց, և այլն։

4°. **Ատ.** — **Զրկում, հատում։**
Գուն-ատ, ականջ-ատ, ծայր-ատ, պոչ-ատ, և այլն։

5°. **Աւէտ.** — **Առատութիւն։**
Հոտ-աւէտ, երան-աւէտ, շահ-աւէտ, ընչ-աւէտ, են.։

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 282. Բառերու վերջ դրուող ածանցները ո՞րչափ են, և որո՞նք են յաճախ գործածուածները։



6°. **Աւոր, եոր, ուոր.** — **Ունեցող, կրող։**
Ահ-աւոր, պսակ-աւոր, թուն-աւոր, զօր-աւոր. Հոգ-եոր, տար-եոր, ալ-եոր. Ջին-ուոր, ջր-ուոր, և այլն։

7°. **Եայ.** — **Նիւթի մը, ժամանակի մը և ազգի մը պատկանիլը։**
Ազխւս-եայ. բեհեզ-եայ, մագաղաթ-եայ, քառասնօր-եայ, այժմ-եայ, քրիստոն-եայ, քաղդ-եայ, և այլն։

8°. **Եան.** — **Անձի կամ սերունդի վերաբերում։**
Մամիկոն-եան, դարբին-եան, հայկ-եան ադամ-եան, քրիստոս-եան, և այլն։

9°. **Ենի.** — **Պատճառ, արդիւնք։**
Մայր-ենի, սրբ-ենի, վայր-ենի կամ վայր-ի. Վարդ-ենի, խնձոր-ենի, արջ-ենի, խող-ենի, և այլն։

10°. **Եղ.** — **Քանակը մեծ։**
Ջայն-եղ, մարմն-եղ, ականջ-եղ, ընչ-եղ, և այլն։

11°. **Եղէն.** — **Ինչ նիւթէ ըլլալը։**
Արծաթ-եղէն, հող-եղէն, հր-եղէն, մարմն-եղէն, են.։

12°. **Ոտ.** — **Ունակութիւն։**
Բոր-ոտ, ծակ-ոտ, երկչ-ոտ, մոռացկ-ոտ, կասկած-ոտ, և այլն։

13°. **Ուտ.** — **Շատ գտնուիլը.**
Ձախճախ-ուտ, վիմ-ուտ, աւազ-ուտ, և այլն։

14°. **Որդ.** — **Արհեստ, գործ։**
Որս-որդ, ժառանգ-որդ, խաղախ-որդ, Նաւ-որդ, անց-որդ, բաժան-որդ, և այլն։

15°. **Ացի, եցի, ցի.** — **Հայրենիք, երկիր։**
Քաղաք-ացի, պոնտ-ացի, պոլսե-ցի, արաբկեր-ցի են։

16°. **Ցու.** — **Սպագայ պաշտօն կամ վիճակ։**
Քահանայա-ցու, մահա-ցու, ապականա-ցու, պիտանա-ցու, մատաղ-ցու, շապիկ-ցու, և այլն։

*Ծանօթ.* — Մեր լեզուին մէջ միևնոյն բառը կրնայ բարդ և ածանցեալ ըլլալ՝ թէ՛ սկիզբը և թէ՛ վերջը: Օրինակ.
Իմաստասէր՝ անիմաստասէր, տկար՝ տկարամիտ, մեծավայելուչ՝ մեծվայելչական, իմաստասէր՝ իմաստասիրական, անիմաստասիրութիւն, և այլն:

283. *Ան, անի, եան, եար կամ նեար, տի կամ ոտի ածանցական մասնիկները բառերու վերջը գրուելով՝ ք յոգնականին միտքը կու տան: Այսպէս.*

| | | | |
|---|---|---|---|
| Ձի-ան | ըսել | է | ձիք, ձիեր |
| Թղթ-եան | » | » | թուղթք, թղթեր |
| Նամակ-անի | » | » | նամակք, նամակներ |
| Վան-եար | » | » | վանք, վանքեր |
| Բարձկ-նեար | » | » | բարձիկք, բարձիկներ |
| Մանկ-տի | » | » | մանկունք, մանուկներ |
| Ոսկր-ոտի | » | » | ոսկերք, ոսկրներ, և այլն: |

*Ասոնց հետքը աշխարհաբարի մէջ իսկ կը տեսնուի, մանաւանդ եար կամ նեար, որ է եր կամ ներ յոգնակի վերջաւորութիւնը:*

## ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### Գրաբարէ աշխարհաբար

### *Պաւղոս և Շիղա ի բանտի*

*Հետեւեալ հատուածներուն մէջ՝ շեղագիր բառերուն և ածանցներուն նշանակութիւնը ցոյց տալէ ետքը, Գրաբարին բնագրութեամբ վերլուծել բառեր ու նախադասութիւններ՝ ուղղագրական զեղծուածներով հանդերձ:*

Ի մէջ գիշերոյն Պաւղոս և Շիղա կային յաղօթս՝ և օրհնէին զԱստուած. ունկն դնէին նոցա կալանաւորքն:

---

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 283. Ի՞նչ առանձին գիտելիք կայ ան, անի, եան, եար կամ նեար, տի կամ ոտի ածանցական մասնիկներուն վրայ:



Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ, մինչեւ շարժել հիմանց բանտին. և բացան անդէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանքն լուծան: Իբրեւ զարթեաւ բանտապետն և եւես բացեալ զդուրս բանտին, ձգեաց զսուսեր և կամէր երթալ զիւրովին. կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ կոչեաց ի ձայն մեծ Պաւղոս և ասէ. Մի ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին աստ եմք: Խնդրեաց լոյս և դիմեաց ի ներքս, և զահի հարեալ՝ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի. և ածեալ զնոսա արտաքս՝ ասէ. Տեա՛րք, զինչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց: Եւ նոքա ասեն. Հաւատա ի Տէր Յիսուս Քրիստոս, և ապրեսցիս դու և ամենայն տուն քո: Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, և ամենեցուն որ էին ի տան նորա: Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վիրաց անտի, և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի, և ածեալ զնոսա ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան, և ուրախ եղեւ ամենայն տամբն հաւատացեալ յԱստուած: Եւ իբրեւ այգ եղեւ՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն, և ասեն. Արձակեա զարսդ զայդոսիկ: Եւ պատմեաց բանտապետն զբանսն՝ Պաւղոսի, եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք և երթայք խաղաղութեամբ: Իսկ Պաւղոս ասէ ցնոսա. Գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս հռովմայեցիս՝ արկին ի բանտ, և արդ լռելեա՞յն հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի հարան իբրեւ լուան թէ հռովմայեցիք են. և եկեալ աղաչեցին գնալ ի քաղաքէն: Եւ ելեալ ի բանտէն՝ մտին առ Լիդիա, և տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին զնոսա, և գնացին:

Երթալ զիւրովին – Ինքզինքը սպաննել

### Աշխարհաբարէ գրաբար

### *Սուրբ Անթիմոս*

Մաքսիմիանոս կայսր Եկեղեցւոյ դէմ հանած ընդհանուր հալածանքին ատեն՝ քան զինուոր զրկած էր նաեւ Նիկոմիդիա, որպէս զի նոյն քաղաքին նշանաւոր հայրա-

պետ Անթիմոսը փնտռեն բռնեն ու իրեն տանին։ Նշաւ որ զինուորներն՝ առանց զինքը ճանչնալու՝ մտան օր մը տունը, և այն համարձակութեամբ՝ որ յատուկ է այնպիսի անձանց՝ իրմէ ուտելիք խնդրեցին։ — Ամենայն յօժարութեամբ, պատասխանեց սուրբ եպիսկոպոսը. և որչափ որ կրնար՝ պատրաստեց մեծահաց սեղան մը, և անոնց անձամբ ծառայելով՝ այնպիսի սիրալիր և ազնուական խօսքեր աւելցուց՝ որ զինուորներն ապշեցան մնացին. վասն զի իրենց կեանքին մէջ այնպիսի բարեսիրտ մարդ տեսած չէին բնաւ։ Արդ ընթրիքը լմննալու ատեն՝ այն զինուորներն իրենց հիւրընկալին հարցուցին թէ Անթիմոս անուամբ մէկը կը ճանչնա՞ր արդեօք, որովհետև հրաման ունէին զանիկա կապելու և կայսեր տանելու։ Պատասխանեց սուրբը. Ի՞նչպէս կրնամ զինքը չճանչնալ. ես ինքս եմ ձեր փնտռածը, հրամեցէք։ Այն ատեն զինուորները սուրբ հայրապետին սիրոյն հետ անոր աներկիւղ համարձակութեան վրայ զարմացած, մէկտեղ այսպիսի հնարք մը մտածեցին. այսինքն կայսեր իմացնել որ երկայն ատեն Անթիմոսը փնտռելէն ետքը՝ չեն կրցած գտնել. և այս կերպով ազատել իրենց բարերարին կեանքը։ Ոչ, քաւ լիցի, ըսաւ սուրբ եպիսկոպոսը. քրիստոնէից հրաման չկայ բնաւ սուտ ըսելու, և ոչ ուրիշներն առ նոյնը յորդորելու. ելէք երթանք կայսեր, վասն զի աւելի մեռնիլ կ'ուզեմ ես՝ քան թէ դուք ստախօս ըլլաք։ Եւ այս ըսելով՝ անոնց հետ ճամբայ ելաւ և եկաւ Հռոմ, ուր ամենադառն տանջանքներու մէջ կեանքը կնքեց։

| | |
|---|---|
| Որչափ որ կրնար – Որչափ ի կարի իւրում էր | Ծառայել – Պաշտել (զոք) |
| | Հրամեցէք – Աւասիկ եմ։ |

## ԾԱՂԿԱՔԱՂ

### Կոտորած մանկանցն Բեթղեհեմի

Ըզվըկայիցն հաւաքեցէք ըզծաղիկ,
 Զոյս՝ ընդ բանալ զաչս յարփին,
Որպէս ըզվարդ նորափըթիթ խիստ մըրրիկ՝
 Բարձ հալածիչըն Փըրկչին։



Դուք նախընծայ սիրոյ Փըրկչին ողջակէզք,
 Մատաղերամ զոհելոց,
Առ սեղանովըն պըսակեալք, մանկունք հեզք,
 Արմաւենեօք պարէք հոծ...
Մինչ բըռնաւորն ըզչարագործըն լըւաւ
 Թէ արքայից արքայ գայ՝
Հնազանդ առնել ըզժողովուրդն ընդ իւրեաւ
 Եւ տալ Դաւթի զիւրըն գահ,
Ծանրացասումն առ գուժաբերըն գոչէր.
 «Յաջորդ հասեալ զիս վանէ.
Արի՛ դահի՛ճ, յափըշտակեա ըզսուսեր,
 Ներկեա զօրրանս յարենէ»։...
Երթեալ դահիճըն մերկացեալ ըզդաշոյն,
 Եւ խողխողէ յախերկան
Ըզղեռաբոյս մատաղ մարմին մանկըտւոյն...
 Հոգիքն ի վեր նորք դառնան։

### Բառագիտութիւն

| | |
|---|---|
| Արփի – Արեգակն, լոյս | Հոծ – Խիտ, լի |
| Ընդ բանալ զաչս յարփին – Աչքերն արևուն բացածնուն պէս | Խողխողել – Մորթել |
| | Յախերկան – Փուճ տեղը։ |

## ՎԵՐՋ

# ՑԱՆԿ


Էջ

Երկու խօսք երրորդ տպագրութեան առթիւ . . . . . 5

Պատրաստութիւն . . . . . . . . . . 7


## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ԲԱՆԻ

### ԱՆՈՒՆ


ԴԱՍ· Ա· Ցատուկ և հասարակ անուններ . . . . 11

» Բ· Գոյական և Ածական . . . . . . 13

» Գ· Եզակի և Յոգնակի . . . . . . 16

» Դ· Անուններու հոլովները . . . . . . 18

» Ե· Սեռականի կազմութիւն . . . . . 21

» Զ· Շարունակութիւն նախընթաց դասին . . . 24

» Է· Տրականի կազմութիւն . . . . . . 27

» Ը· Գործիականի կազմութիւն . . . . . 31

» Թ· Բացառականի կազմութիւն . . . . . 34

» Ժ· Հայցականի կազմութիւն . . . . . 38

» ԺԱ· Յոգնակի ուղղականի կազմութիւն . . . . 41

» ԺԲ· Յոգնակի սեռականի, տրականի և գործիականի կազմութիւն. . . . . . . . 43

» ԺԳ· Յոգնակի բացառականի և հայցականի կազմութիւն . 47

» ԺԳ· Հոլովելու միջոց մէկ երկու ձայնաւորներու փոփոխութիւնները . . . . . . . . 50

» ԺԵ· Պարզ կամ կանոնաւոր հոլովմունք. . . . 54

» ԺԶ· Պարզ հոլովման երկրորդ և երորդ ձևերը . . 57

» ԺԷ· Պարզ հոլովման չորրորդ և հինգերորդ ձևերը. . 60

Էջ

ԴԱՍ. ԺԸ. Խառն հոլովմունք . . . . . . . 64
» ԺԹ. Անկանոն կամ զարտուղի հոլովմունք . . . 67
» Ի. Շարունակութիւն նախորդ դասին. . . . 71
» ԻԱ. Ածական գոյականի հետ . . . . . . 74
» ԻԲ. Թուական ածականներ . . . . . . 79
» ԻԳ. Նախորդ դասին շարունակութիւնը . . . 84

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

### ԴԵՐԱՆՈՒՆ

» ԻԴ. Դերանուն և գիմորոշ յօդ . . . . . 89
» ԻԵ. Էական կամ անձնական դերանուններ . . . 93
» ԻԶ. Ցուցական դերանուններ . . . . . . 97
» ԻԷ. Ստացական և Յարաբերական դերանուններ . . 103
» ԻԸ. Անորոշ դերանունք . . . . . . 110
» ԻԹ. Շարունակութիւն նախորդ դասին . . . . 116

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

### ԲԱՅ

» Լ. Բայի Սահման. — Տէր բայի և խնդիր բայի . . 122
» ԼԱ. Բայերուն պարագաները . . . . . . 127
» ԼԲ. Էական բայեր . . . . . . . 132
» ԼԳ. Կանոնաւոր բայեր . . . . . . . 139
» ԼԴ. Շարունակութիւն նախորդ դասին . . . . 146
» ԼԵ. Երկրորդ լծորդութիւն . . . . . . 153
» ԼԶ. Շարունակութիւն նախորդ դասին . . . . 157
» ԼԷ. Երրորդ լծորդութիւն . . . . . . 164
» ԼԸ. Ցաւելուածով բայեր. Պարզ և ածանցեալ արմատ . . 170
» ԼԹ. Լծորդութիւն յաւելուածով բայերու. . . . 175
» Խ. Շարունակութիւն նախորդ դասին . . . . 180
» ԽԱ. Շարունակութիւն նախորդ դասերուն . . . 186
» ԽԲ. Ժամանակներուն կազմութիւնը. . . . . 192
» ԽԳ. Անկանոն բայեր . . . . . . . 197
» ԽԴ. Շարունակութիւն նախորդ դասին . . . . 202
» ԽԵ. Շարունակութիւն նախորդ դասերուն . . . 208
» ԽԶ. Պակասաւոր և Միադէմ բայեր . . . . 216



## ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

### ԴԵՐԲԱՅ

Էջ

ԴԱՍ ԽԷ. Դերբայներու սահման և գործածութիւն . . . 222
» ԽԸ. Շարունակութիւն նախորդ դասին . . . . 227
» ԽԹ. Խնդրառութիւն բայերու և դերբայներու. . . 233

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

### ՆԱԽԴԻՐ

» Ծ. Զ Նախդրին գործածութիւնը . . . . . 239
» ԾԱ. Ի Նախդիր . . . . . . . . 244
» ԾԲ. Առ նախդիր . . . . . . . . 248
» ԾԳ. Ընդ և Ըստ նախդիրներ . . . . . . 253
» ԾԴ. Հոլովառու բառեր . . . . . . . 260
» ԾԵ. Հոլովառու բառերու խնդրառութիւնը . . . 264

## ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԲԱՆԻ

### ՄԱԿԲԱՅ

» ԾԶ. Մակբայ ընդհանուր և Տեղականներու գործածութիւն. 269
» ԾԷ. Մակբայներուն ուրիշ տեսակներն ու ձեւերը . . 274

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

### ՇԱՂԿԱՊ ԵՒ ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

» ԾԸ. Շաղկապ, Ձայնարկութիւն և սոնց տեսակները . 282

## ԵՐՐԵԱԿ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՐԵՐՔ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ

### Ա. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈԽՍ. ԴԱՍ. Նմանաձայն տառերու գործածութիւն . . . 290
» Շարունակութիւն նախորդ դասին . . . . 294

| | | Էջ |
|---|---|---|
| ՈԽՄ․ ԴԱՍ․ | *Կէտադրութիւն* . . . . . . . | 302 |
| » | *Շարունակութիւն նախորդ դասին* . . . . | 308 |

## Բ․ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

| | | |
|---|---|---|
| » | *Ուղիղ ընթերցում* . . . . . . . | 313 |
| » | *Շարունակութիւն նախորդին* . . . . . | 319 |
| » | *Առոգանութիւն* . . . . . . . | 325 |

## Գ․ ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

| | | |
|---|---|---|
| » | *Բարդութիւն և ածանցում* . . . . . | 331 |


ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ- ՍՍ. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

— ՆՈՅՆ. աշխ. համառօտ, միջնակարգ վարժարանաց դաս[...]
գիրք. հրդ. Հ. Հ. Պապիկեան, տպ. 1883, էջ 222։ գին Ֆր. 3,50։
— ՆՈՅՆ (Տարերք). աշխ. 3 հատոր. — հրդ. Հ. Մեսրոպ Սահա-
կեան։ Ա. հատ. Նախնական շրջան։ գին Ֆր. 2,50։ — Բ. հատ.
Միջին շրջան։ գին Ֆր. 3,50։ — Գ. հատ. Բարձրագոյն շրջան։
գին Ֆր. 4,50։
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. — Քաղաքական դիպաց 1898 տարւոյ. աշ-
խարհաբ. հրդ. Հ. Մինաս Նուրիխան։ տպ. 1898։ գին Ֆր. 1։
ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Գրաբ. հրդ. Էմմանուէլ Թե-
սաւրոս։ թարգմն. Հ. Վրթանէս Ասկէրեան։ տպ. 1793, 1853,
էջ 626։ գին Ֆր. 5։
ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Աշխ. 2 հատոր. պատկերազարդ հրդ. Հ. Գ.
Գաֆթեան։ տպ. 1895, 1896, 1911։ գին Ֆր. 5։
ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Գրաբ. հրդ. Հ. Եփրեմ Սեթեան։ տպ. 1851,
էջ 656։ գին Ֆր. 5։
ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — հրդ. Հ. Աւգեր, տպ. 1914։ գին Ֆր. 3
ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — Աշխ. թուանշաններով ամէն ազգաց լեզուն
գրելու նոր ոճ մը. հրդ. Հ. Ա. Տիրոյեան, տպ. 1907։ գին Ֆր.
ՀԱՃՈՒԽԳԻՐՔ կամ ՀԱՃՈՒԽՄԱՏԵԱՆ. — Աշխ. առևտրական տետր[...]
բռնելու կերպը կը սորվեցնէ. հրդ. Գերպ. Իգնատիոս Փափ[...]
զեան։ տպ. 1830, էջ 42։ գին Ֆր. 1։
ՀԱՃՈՒԽԵՏՈՒՄԱՐ ՊԱՐԶԱԳԻՐ. — Գրաբ. ընդարձակագոյն ուսուց[...]
հաշուեմատեան բռնելու արուեստին՝ վաճառակ[ա]նաց հա[...]
հրդ. Գերպ. Իգն. Փափազեան, տպ. 1828, էջ [.]2։ գին Ֆր
ՀԻՆ ՀԱԻԱՏՔ ՀԱՅՈՑ կամ հեթանոսական կրօնք հ[ա]յոց. աշխ.
Հ. Ղևոնդ Մ. Ալիշան։ տպ. 1895, 1909։ գին Ֆր. 5։
ՃԱՌ յաղագս հնչման Ղ և Լ տառից գրաբար. հրդ. Հ. Գ[...]
Այվազովսկի։ տպ. 1852։ գին Ֆր. 0,50։
ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — Առձեռն. գրաբ. համառօտ. հրդ. Գե[...]
Հիւրմիւզեան, տպ. 1839, 1850, էջ 159։ գին Ֆր. 2։
— ՆՈՅՆ. Տարերք հռետորական արուեստի. աշխ. հր[...]
մուէլ Գանթարեան, տպ. 1875։ էջ 382։ գին Ֆր. 6,[...]
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅՔ. — Աշխ. հաւաքեց և թ[...]
Հ. Յակոբ Տիրոյեան, տպ. 1919։ գին Ֆր. 5։
ՈՒՍՈՒՄՆ ԲՆԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԲ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ. — հրդ. Յ[...]
տպ. 1915, էջ 532։ գին Ֆր. 6։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑ. — Աշխ. դասագիր[ք]. հ[ր]դ. Հ. Մ[...]
րեան, տպ. 1846, էջ 1131։ գին Ֆր. 5։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԳՂԻՈՅ. — Աշխ. դասագիրք. հրդ[...]
թրգ. Հ. Գրիգոր Ճէլալեան, տպ. 1862, էջ, 34[...]
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ. — Աշխ. հրդ. Հ. Յ[...]
տպ. 1803, 1805, 1873, էջ 559։ գին Ֆր. 4,5[...]
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ արևելեան հին ազգաց և Յունաց.
հրդ. Գերպ. Ներսէս Ճնտոյեան, տպ. 1879, է[...]
ՊԱ[Տ]ՄՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻՈՅ. — Գրաբ. 2 հատ. հրդ.
րեան, տպ. 1849, էջ 1115։ գին Ֆր. 4։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ. — Գրաբ. հրդ. Գերպ
փազեան, տպ. 1848, էջ 1015։ գին Ֆր. 10։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ. — Աշխ. 2 հ[...]
դասագիրք. հրդ. Հ. Յ. Տիրոյեան, տպ. 1897

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ· — Աշխ· 3 հատոր· սկսած 1841էն մինչև 1878։ Հեղ· Հ· Մինաս Նուրիխան· գին ֆր· 36։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հայերէն հին և նոր դպրութեանց· աշխ· 2 հատ· դասագիրք։ Հեղ· Հ· Գ· Զարբհանալեան· գին ֆր· 25։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ· — Աշխ· երկու մասի բաժնուած, համառօտ և ընդարձակ· Հեղ· Հ· Համազասպ Թէրզիմանեան· գին ֆր· 2,50։

— ՆՈՅՆ համառօտ, պատկերազարդ· գին ֆր· 2,50։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՑ· — Աշխ· 5 հատ· դասագիրք· Հեղ· Հ· Ամբրոսիոս Գալֆայեան, տպ· 1849-1851, գին ֆր· 14։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ· ՀՌՈՄ· — Պատկերազարդ դասագիրք· Հ· Սահակ Տէր-Մովսէսեանի, տպ· 1917, գին ֆր· 10։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս· ԳՐՈՑ· — Աշխ· պատկերազարդ· Հեղ· Հ· Գէորգ Պայեան, տպ· 1889, 1893, 1910, գին ֆր· 2։

— ՆՈՅՆՆ, աշխ· ամենահամառօտ· պատկերազարդ· Հեղ· Հ· Ա· Գոնտաքճեան, տպ· 1892, 1899, 1910, 1916, էջ 84, գին ֆր· 1։

ՍԿԶԲՈՒՆՔ ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ· — Աշխ· դասագիրք եւրոպական երաժշտութեան, Հեղ· Հ· Մ· Նուրիխան, տպ· 1882, էջ 67, գին ֆր· 2։

ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ· — Աշխ· Հեղ· Հ· Աթանաս Տիրոյեան, տպ· 1888, էջ 74, գին ֆր· 2։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ· — Աշխ· տղայոց ընթերցարան· Հեղ· Հ· Մ· Բժշկեան, Տպ· 1826, 1860, 1873, 1881, 1888, էջ 174, գին ֆր· 3։

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ· — Աշխ· պատկ· դասագիրք· Հեղ· Հ· Դ· Ստեփանեան, տպ· 1885, 1888 էջ 299, գին ֆր· 5։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԴՐՈՒՆՔ հայ· գրաբար լեզուի· աշխ· Հեղ· Հ· Թ· Թովմաճեան, տպ· 1892, էջ 95, գին ֆր· 2։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ-ԱՆԳՂԻԵՐԷՆ· — Հայ լեզուի ուսումը Անգղիացւոց աւանդելու համար, Հեղ· Հ· Յարութիւն Աւգերեան, օգնութեամբ Լորտ Պայրընի, տպ· 1819, 1832, 1873, էջ 336, գին ֆր· 4։

— ՀԱՅ-ԻՏԱԼԵՐԷՆ· հայ· գրաբ· իտալացւոց սովրեցնելու համար, Հեղ· Հ· Ա· Տիրոյեան, տպ· 1902, էջ 200· գին ֆր· 3,50։

— ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ կամ կրթարան անգղիերէն լեզուի, 2 հատ· աշխարհաբար բացատրութեամբ, ըստ ոճոյ Վէբի, գործնական հրահանգներով, Հեղ· Հ· Յակովբոս Իսավերտենց, տպ· 1881, էջ 471, գին ֆր· 10։

— ԳՈՐԾՆԱԿԱՆ, Ֆրանսերէն լեզուի, Անի ոճով· աշխ· 2 մասն· Հեղ· Թովմաս Թէրզեան։ գին ֆր· 5։

…ՈՐԾՆԱԿԱՆ, իտալերէն լեզուի· Անի ոճով· աշխ· Հեղ· Հ· Յուսիկ …ապեան, տպ· 1886, էջ 136, գին ֆր· 2,50։

…ԷՆ ԼԵԶՈՒԻ· … Օթթօյի ոճով· միջին դասնթացք, աշխ· …արութեամբ· Հեղ· Հ· Ա· Յովսէփեան, տպ· 1907, գին ֆր· 4։

---

Գրմեր՝

…mprimerie-Librairie Arménienne

…Lazare VENISE (Italie)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ. — Աշխ. 3 հատոր. սկսած 1841էն մինչև 1878։ Հեղ. Հ. Մինաս Նուրիխան. գին ֆր. 36։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հայերէն հին և նոր դպրութեանց. աշխ. 2 հատ. դասագիրք։ Հեղ. Հ. Գ. Զարբհանալեան. գին ֆր. 25։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. — Աշխ. երկու մասի բաժնուած, համառօտ և ընդարձակ. Հեղ. Հ. Համազասպ Թէրզիմանեան։ գին ֆր. 2,50։
— ՆՈՅՆ համառօտ, պատկերազարդ, գին ֆր. 2,50։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՑ. — Աշխ. 5 հատ. դասագիրք, Հեղ. Հ. Ամբրոսիոս Գալֆայեան, տպ. 1849-1851, գին ֆր. 14։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ. ՀՌՈՄ. — Պատկերազարդ դասագիրք. Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի, տպ. 1917, գին ֆր. 10։
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ. — Աշխ. պատկերազարդ. Հեղ. Հ. Գէորգ Գայեան, տպ. 1889, 1893, 1910, գին ֆր. 2։
— ՆՈՅՆՆ, աշխ. ամենահամառօտ. պատկերազարդ. Հեղ. Հ. Ա. Գոնտաքճեան, տպ. 1892, 1899, 1910, 1916, էջ 84, գին ֆր. 1։
ՄԿԶԲՈՒՆՔ ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ. — Աշխ. դասագիրք եւրոպական երաժշտութեան, Հեղ. Հ. Մ. Նուրիխան, տպ. 1882, էջ 67, գին ֆր. 2։
ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ. — Աշխ. Հեղ. Հ. Աթանաս Տիրոյեան, տպ. 1888, էջ 74, գին ֆր. 2։
ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ. — Աշխ. տղայոց ընթերցարան. Հեղ. Հ. Մ. Բժշկեան։ Տպ. 1826, 1860, 1873, 1881, 1888, էջ 174, գին ֆր. 3։
ՏԱՐՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ. — Աշխ. պատկ. դասագիրք. Հեղ. Հ. Գ. Ստեփանեան, տպ. 1885, 1888 էջ 299, գին ֆր. 5։
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳՐՈՒՆՔ հայ. գրաբար լեզուի. աշխ. Հեղ. Հ. Թ. Թովմաճեան, տպ. 1892, էջ 95, գին ֆր. 2։
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ-ԱՆԳՂԻԵՐԷՆ. — Հայ լեզուի ուսումը Անգղիացւոց աւանդելու համար, Հեղ. Հ. Յարութիւն Աւգերեան, օգնութեամբ Լորտ Պայրընի, տպ. 1819, 1832, 1873, էջ 336, գին ֆր. 4։
— ՀԱՅ-ԻՏԱԼԵՐԷՆ. հայ. գրաբ. Իտալացւոց սովրեցնելու համար, Հեղ. Հ. Ա. Տիրոյեան, տպ. 1902, էջ 200. գին ֆր. 3,50։
— ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ կամ Կրթարան անգղիերէն լեզուի, 2 հատ. աշխարհաբար բացատրութեամբ, ըստ ոճոյ Վէրի, գործնական հրահանգներով, Հեղ. Հ. Յակոբոս Իսավերտենց, տպ. 1881, էջ 471, գին ֆր. 10։
— ԳՈՐԾՆԱԿԱՆ, Ֆրանսերէն լեզուի, Անի ոճով. աշխ. 2 մասն. Հեղ. Թովմաս Թէրզեան։ գին ֆր. 5։
…ՈՐԾՆԱԿԱՆ, Իտալերէն լեզուի. Անի ոճով. աշխ. Հեղ. Հ. Յուսիկ …ապեան, տպ. 1886, էջ 136, գին ֆր. 2,50։
…ԷՆ ԼԵԶՈՒԻ. Ըստ Օթթօյի ոճով. միջին դասընթացք, աշխ. …րութեամբ. Հեղ. Հ. Ա. Յովսէփեան, տպ. 1907, գին ֆր. 4։

Գտնել՝
…mprimerie-Librairie Arménienne
…Lazare VENISE (Italie)

2013 2605

ՀՀ Ազգային գրադարան

NL0060530